



ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ



ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԳԱՐՈՒԹԵՐ ԱՐԵՎԵԼԻՔ-ԱՐԵՎՄՈՒՏԻՔ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (13-18-րդ դարեր)







ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՎԱՐԴԳԵՍ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ


ՂԻՍԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ
ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՍՈՒՏՔ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
(13-18-րդ դարեր)

A
86/52

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2000



ԴՏՀ 941 (479.25)

ԳՄԴ 63.3 (2Հ)

Մ 780

Գիրքը տպագրվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտխորհրդի ոլոշմամբ

Միքայելյան Վարդգես

Մ 780 Դրիմահայ գաղութը Արևելք-Արևմուտք հարաբերությունների ոլորտում (13-18-րդ դդ.).– Եր.: Գիտություն, 2000.– 192 էջ:

Գրքում լուսաբանված է միջնադարի ղրիմահայ գաղութի մասնակցությունը Արևելք-Արևմուտք առևտրատնտեսական, քաղաքական և հասարակական-կրոնական բազմակողմ կապերին: Այն շարադրված է տարալեզու վավերագրերի և նյութերի քննական հետազոտման հիման վրա և բացահայտում է հայկական այդ ինքնատիպ աշխարհի 14-15-րդ դարերում իր մի հատվածով «Ծովային Հայաստան» հռչակված երկրի, որոշակի գերը ժամանակի միջազգային կյանքում:

0503020913

Մ _____ 2000թ.
703(02)-2000

ԳՄԴ 63.3(2Հ)

ISBN 5-8080-0461-6

Գիրքը տպագրվել է Տ. Մեսրոպ արք. Աշնյանի և «Աուկոն» ատոլիտի խորհրդատվությունների ինֆորմացիայի և վերլուծությունների ՓԲԸ-ի օժանդակությամբ

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2000

ԵՐԿՈՒ ԽՈՍԹ

Միջնադարի (13-18-րդ դարեր) դրիմահայ գաղթօջախների պատմության կարևոր կողմերից մեկը այն մշտական կապերն էին, որ Տավրիկյան թերակղզու տարբեր անկյուններում և հատկապես նրա նշանավոր կենտրոններում՝ Կաֆայում (Թեոդոսիայում), Սուրխաթում (Հին Ղրիմում), Սուդակում (Սուրոժում), Ղարասաքազարում (Բելոգարսկում), Եվպատորիայում (Կեոզլում), Աքմեչիթում (Միմֆերուպոլում) և այլ տեղերում բնակվող հայ համայնքները հաստատել էին դրսի աշխարհի՝ Արևելքի և Արևմուտքի երկրների հետ: Անհնարին է պատկերացնել դրիմահայոց պատմությունը առանց Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և սլավոնական աշխարհի երկրների հետ նրանց ունեցած առնչությունների լուսաբանման:

Միաժամանակ, նշված դարերում Արևելք-Արևմուտք բազմաբովանդակ հարաբերությունների լուսաբանումը շատ կողմերով թերի կմնա, եթե այդ լուսաբանումից դուրս թողնվի այդ կապերում դրիմահայոց ունեցած գործուն, իսկ առանձին ժամանակաշրջաններում հիրավի էական մասնակցության հիմնահարցը: 14-15-րդ դարերում դրիմահայերի ձեռքում էր կենտրոնացված թերակղզու առևտրատնտեսական առաջնությունը, իսկ 15-18-րդ դարերում նրանք շարունակում էին աչքառու դեր խաղալ Արևելյան Եվրոպայի, սլավոնական աշխարհի և համայն Ղվիչադի հետ թերակղզու ունեցած առևտրատնտեսական և քաղաքական կապերում:

13-18-րդ դարերում նշված տարածաշրջանի երկրների հետ դրիմահայոց կապերը և դրանցում ունեցած գործունեությունը, նայած հանգամանքներին և պայմաններին, եղել են տարբեր ուժգնության և ընդգրկումների՝ ապրելով թե՛ վերելքների և թե՛ վայրէջքների պահեր: Մի բան, սակայն, ակներև է՝ առևտրատնտեսական, հաճախ նաև քաղաքական-մշակութային բնագավառներ ընդգրկող այդ գործունեությունը կազմել է դրիմահայոց կյանքի անբաժան

գերքով, ինչպես նաև Կ. Պոլիս-Ղրիմ և Տրապիզոն-Ղրիմ ծովային ուղիներով: Հայ առևտրական դասի հետևից գործնական կապերով «լավ ծանոթ նրա ընտրած տեղերում հաստատվում էր նաև հայ հողագործ դասը»¹, - ասում է Ն. Մառը, և նրա այս հետևությունը լիովին տարածելի է նաև 11-12-րդ դարերում Ղրիմ անցած հայ գաղթականության վրա:

Այս շրջանում Ղրիմը հայերին ձգում էր մանավանդ առևտրին հարմար իր դիրքով: Ղրիմի շատ ծովափնյա կետեր մինչև 13-րդ դարը ներառյալ շարունակում էին մնալ որպես Բյուզանդիային ենթակա շրջաններ, և կայսրության փոքրասիական ու եվրոպական մասերում գործող հայ վաճառականների աչքից չէր վրիպում Ղրիմի թերակղզին՝ որպես սևծովյան ավազանի երկրների հետ կատարվող առևտրի թերևս ամենակարևոր օղակ:

Առևտրական շահախնդրություններով անցնելով Ղրիմ՝ հայ վաճառականները քայլ առ քայլ հաստատվում էին թերակղզու ծովափնյա շրջաններում և, ինչպես նշվեց, նրանց օրինակին էին հետևում հայ հողագործն ու արհեստավորը:

Պահպանված հայերեն վիմագիր արձանագրությունները աներկբա վկայում են 11-14-րդ դարերում թերակղզու հարավարևելյան, ինչպես նաև արևմտյան ծովափնյա վայրերում (Կաֆա, Սուդակ, Խերսոնես) մշտական բնակություն հաստատած հայ համայնքների մասին²: Սուդակ (Սոլդայա, Սուրոթ) նավահանգստում, օրինակ, հայերի զգալաթիվ լինելու մասին է վկայում այն պարագան, որ ըստ հունական հայսմավուրքի լուսանցքում պահպանված զրառման, 1292 թ. այնտեղ սուր վեճեր են ընթացել հայ և հույն համայնքների միջև զատիկը տոնելու օրվա առթիվ. «Այդ օրը 6800 (1292) թվին, - ասված է այնտեղ, - լուսնի շրջանը 17, արևի շրջանը (24), եղավ քրիստոնեական զատիկ: Իսկ հայերը նույն ամսի 16(ին), որովհետև կորցրել

1 М а р р Н. Кавказский культурный мир и Армения. — жур. Мин — ва народного просвещения, 1915, июнь, с. 323 — 324.

2 Տե՛ս Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ. Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 45-48:

էին (ամսահաշիվը), այսինքն 6(ին)»¹: Անհասկանալի է թվում միայն, թե ինչպես է 16-ը դարձել 6:

Ալավոնների առաքյալի կենսագրության մեջ ևս (12-րդ դար) Սուղակի բնակիչների թվում առաջին հերթին նշված էին Հայերը: Հայերին առաջին տեղ հատկացնելով՝ կենսագիրը նկատի է ունեցել քաղաքում նրանց մեծաքանակ լինելու փաստը²: 13-րդ դարի սկզբի արար հեղինակ իրն-ալ-Բիրին ևս Սուղակի բնակիչների թվում առաջինը հիշատակում է ալաններին ու հայերին³:

Բոլոր հիմքերը կան պնդելու, որ հայերին օգնության կանչելու վերաբերյալ Գալիցիայի իշխան Թեոդոր Դմիտրիևիչի 1062 թ. հրովարտակը ևս վերաբերել է Ղրիմի հայությանը: Հրովարտակում ասված էր. «Ահա մեծ իշխան Ֆեոդոր Դմիտրիևիչից կոստխացի հայերին: [Նրանք] ովքեր կցանկանան այստեղ գալ, և ես ձեզ կտամ ազատություն և րեք տարով, իսկ երբ կլինեք իմ հպատակները, ով ուր կամենա, այնտեղ ազատորեն բնակություն կհաստատի»⁴:

Վերը նշված հունական հայսմավուրքի լուսանցքում կատարված մյուս գրառումները ևս վկայում են, որ նշված գրառումից (1292 թ.) առաջ և հետո Սուղակում բավականին ամփոփ հայ գաղութ է եղել: Լուսանցքում հաղորդում կա, օրինակ, Սուղակում ապրած Դավթի որդի Սմբատի (1242 թ.), Սամատի որդի Եփրեմի (1283 թ.) և Սամատի կնոջ՝ Երնիչաի (1306 թ.) մահվան մասին⁵:

Հավաստի տեղեկություններ կան այն մասին, որ մինչև 1330-ական թվականները, երբ Ղրիմ անցավ գաղթա-

1 Записки Одесского общества любителей истории и древностей (ЗООИД), т. V, с. 609.

2 Б р у н Ф. Черноморье, ч. II, Одесса, 1880, с. 129.

3 С ы р о е ч к о в с к и й В. Е. Гости — сурожане, М.—Л., 1935, с. 14.

4 Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ. Ա., Ղրիմահայոց պատմություն, Երևան, 1989, էջ 116-117; М и к а е л я н В. А. К вопросу о граммоте князя Феодора Дмитриевича. — "Археологический ежегодник", за 1964 г., М., с. 11 — 18.

5 ЗООИД, т. V, с. 598 — 603.

կան Հայության նոր և անհամեմատ մեծ հոսանք, Թեոդոսիայում (Կաֆայում) պատկառելի թիվ ունեցող Հայ դադութ կար: Օրինակ, 1305 թ. Ավետիք Խոտաճարակ վարդապետի ջանքերով Կաֆայում կառուցվել է Սբ. Երրորդություն, իսկ քաղաքին մերձակա Քամճակ վանքում՝ Սբ. Աստվածածին եկեղեցիները¹:

Նոտարական աղբյուրների վկայությամբ, Ղրիմի ծովափի Հարավ-արևելյան Հատվածում ջննովացիների Հաստատվելուց (1260-ական թվականներ) առաջ Կաֆայում կային Հայկական մի քանի եկեղեցիներ, որոնցից մեկը նույնիսկ արդեն քանդված վիճակում է եղել: Քաղաքում «Հնուց ի վեր» Հայկական եկեղեցիների գոյության մասին է հաղորդվում Կաֆայի 1316 թ. կանոնադրության մեջ: Այդ կանոնադրությունը քաղաքի ջննովական Հյուպատոսին արգելում էր տնօրինել այն հողը, որի վրա «Հնուց ի վեր զետեղված են Հույների, Հայերի և ռուսների (rossarii) եկեղեցիներն ու այդ եկեղեցիների վանքերը»²: Նշված եկեղեցիներից էր Սբ. Սարգիսը, որը մինչև օրս էլ կանգնած է քաղաքի կենտրոնում և որին առընթեր ամփոփված է Հովհ. Այվազովսկու գերեզմանը:

Թերակղզու Հարավ-արևելյան շրջանում (Սուդակ, Կաֆա և այլն) 13-րդ դարում Հայերի նշանակալից թիվը վկայված է մանավանդ երկու Հանդամանքով. առաջինը այն, որ Հենց այդ պատճառով Թերակղզու այս շրջանն ստացել էր “*Armenia maritima*” կամ Մեծ Հայաստան անվանումը, և երկրորդը այն, որ Կաֆայի Հայերը այդ ժամանակ արդեն Հանդես էին գալիս ջննովացիներին վարկավորողների դերում:

13-րդ դարում Հայ բնակչություն կար Խերսոնեսում և նրանից ոչ հեռու Կիր-Կորում³:

1 «ԺԴ դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 265-266:

2 “*Monumenta historiae patriae*”. *Impositio Officii Gazariae*, t. II, 1838, p. 407-408.

3 Я к о б с о н А. Л. Средневековый Херсонес (XII-XIV), М. — Л., 1950, с. 36, 74.

14-րդ դարի 30-ական թվականները նշանավորեցին նոր փուլ ղրիմահայ գաղթօջախների կյանքում. այդ տարիներին Ղրիմ անցան Ոսկե Հորդայից հեռացած հայ գաղթականները, որոնք թվաքանակով քանիցս գերազանցում էին «հին» ղրիմահայերին: 1290 թ. Ոսկե Հորդայի (Աքսարայի) հայերը դեսպան են ուղարկում Կաֆայի հյուպատոսի մոտ և, նրա հետ ունեցած պայմանավորվածության համաձայն, ղենքի ուժով ճեղքում են թաթարական դիմադրությունը և շարժվում Ղրիմ: Հայերի այս շարժին նպաստում են երկու ազդեակ՝ Ղրիմը Ոսկե Հորդայի ուղուսնորից մեկը լինելը և Կաֆայում ու նրա շրջակայքում հայկական համայնքների գոյությունը: Ոսկե Հորդայի հայերի գաղթը դեպի Ղրիմ տևում է երեք տասնամյակ և ավարտվում, ինչպես պատմում է ղրիմահայոց պատմություն-հիշատակարանի կազմող Դավիթ գրիչը, նրանց հաստատմամբ «ի Ֆեօտոսիա, ի Կադարաթ և ի Սուրխաթ և ի Կողմանս սոցա. այս եղև ՉՀթ (1330) թուին»¹: «Նոր» գաղթականները հիմնեցին «զգիւղս և զգաւառս» Ղարաու-բաղարից մինչև Թեոդոսիա և «ի լեւրինս և ի դաշտս լի» արարին «վանօրէիւք և եկեղեցօք»²:

14-16 և հետագա դարերում Ղրիմը մնում էր սրպես հայ գաղթականների կարևոր հանդիման, ուր նրանք անցնում էին բուն հայրենիքից և հայկական գաղթօջախներից և որտեղից նրանց մի մասը շարժվում էր լեհական և մոլդավական շրջաններ: 17-րդ դարի սկզբին սովի և ջալալիների ասպատակությունների պատճառով մեծաթիվ հայ գաղթականություն մի նկատելի հատված անցնում է նաև Ղրիմ՝ Թեոդոսիա, Կեոզլե (Եվպատորիա), Ղարասուբաղար, Բախչիսարայ և այլուր³:

¹ Երևանի Մատենադարան, ձ. № 7442, թ. 281:

² Նույն տեղը:

³ «Պատմություն Առաքելի վարդապետի Դաւրիժեցոյ», Վաղարշապատ, 1896, էջ 88:

Ղրիմ անցած գաղթականների թիվն այնքան ստվար էր, որ թուրքական սուլթանը հրաման էր արձակել հայ գաղթականներին Հայաստան վերադարձնելու մասին¹:

1608 թ. ծանր սովի պատճառով սկիզբ առած արտագաղթը, ժամանակի ականատես գրչի վկայությամբ, ընդգրկել էր ոչ թե մի առանձին կամ երկու շրջան, այլ դառել էր «ընդհանրական սկսեալ ի դրանէն Հոնաց և Ալանաց և ի Լեռնէն Կովկասու մինչև ի Պոնտոս և յԵփեսոս և ի Կապադովկիայ և մինչև ի Դամասկոս և ի Սիս և ի Միջագետք»²:

Մոնղոլները (թաթարները) Ղրիմ թափանցեցին 13-րդ դարի 30-ական թվականների կեսերին (1237 թ.): Բուլղոր հիմքերը կան պնդելու, որ դրանից շատ ու շատ առաջ թերակղզու այլևայլ շրջաններում վաղուց ի վեր գոյատևում էին հայկական գաղթօջախներ: 13-18-րդ դարերում ղրիմահայ համայնքները գտնվում էին թաթարական, իսկ 1475-1783 թթ.՝ թուրք-թաթարական տիրապետության ոլորտում: 1260-1475 թթ. թերակղզու հարավ-արևելյան ծովափի հայկական գաղութները միաժամանակ վարչական առումով որոշակի կախվածության մեջ էին Զենովայի հանրապետության՝ այստեղ կառավարող գաղութային իշխանություններից: Բնականաբար, գաղութահայ կյանքը շատ ու շատ աղերսներով առնչվում էր մահմեդական և քրիստոնյա այս կառավարողների շահախնդրություններին:

Հայ բնակչության վրա ևս ծանր էին նստում թաթարական ասպատակությունները, թեև դեպի հայերը թաթարների ունեցած վերաբերմունքը համեմատաբար հանդուրժողական էր, վերաբերմունքը, որը պայմանավորված էր ավանդական կապերով: Հայերը ավելի շուտ շփվեցին թաթարների հետ, քան քրիստոնյա մյուս ժողովուրդները: Արդեն 13-րդ դարում հայ թարգմանիչներ կային Ոսկե Հորդանում և Մանգու խանի մոտ՝ Կարակորումում: Ղրիմի հայերը, ի տարբերություն ջենովացիների, լավ տիրապետում էին թաթարերենին, ծանոթ էին թաթար ժողովրդի նիստ ու

1 «Հայերեն ձեռագրերի Ժէ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)», հ. Ա, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1974, էջ 375:

2 «Ժէ դարի հիշատակարաններ», հ. Ա, էջ 289:

կացին, ապրելակերպին: Հայր թաթարների համար լավ արհեստավոր էր, համարձակ վաճառական, բժշկապետ, սրտառուչ գրուցակից: Ղրիմի խանի բժիշկները նույնիսկ շատ հաճախ լինում էին հայերից¹: Հայկական բնակավայրերն ու թաղերը սփռված էին բուն խանության տարածքներում, նրանցում գործում էին հայկական եկեղեցիներ ու վանքեր, և թաթարներն ու նրանց ավագանին հանդուրժողական էին դրանց նկատմամբ՝ հայերից ակնկալվող շահի պատճառով:

Իրենց զարգացման վերջնափուլում թաթարները շատ բանով պարտական էին նաև հարևան հայերի ու հույների հետ ունեցած բազմակողմ և տևական շփումներին: Տվյալ դեպքում նկատի ունենք թաթարներին՝ քոչվոր անասնապահությունից նստակեցություն ու երկրագործություն անցնելը, մի պրոցես, որը տևեց մինչև 16-րդ դարի վերջերը և նույնիսկ 17-րդ դարի առաջին կեսը: Այդ գործընթացին 16-րդ դարի կեսերից նպաստել սկսեցին նաև Ղրիմի խաները, և որքան պակասում էր ռուսական, հյուսիսկովկասյան, լեհական շրջաններ կատարվող ասպատակություններից ստացվող եկամուտը, այնքան թաթարական վերնախավն ու նրա գլխավերևում գտնվող խաները խթանում էին թաթարներէ՝ անցմանը նստակեցության: Առավել ձեռներեց խաները սկսեցին ասպատակությունների փոխարեն գերադասություն տալ նստակեցության անցնելուն, որը ապահովում էր ֆեոդալական ռենտայի ստանալը: Մյուս կողմից, 16-րդ դարի վերջից և 17-րդ դարում հանդիպելով ռուսական, մանավանդ կազակային, զինական հակահարվածին, թաթար ֆեոդալական վերնախավը եկամտի համապատասխան աղբյուրներ որոնելիս ուզեց-չուզեց պիտի նախընտրեր նստակեցության անցնելը՝ երկրագործությամբ զբաղվելը՝ խաշնարած թաթար զանգվածներին բաժանելով մեծ և միջին չափի հողակտորներ: Սահիբ-Գիրեյ խանը (16-րդ դարի 40-ական թվականներին), օրինակ, բռնություններ ջարդել

¹ Кондорак В. Универсальное описание Крыма, т. 3, ч. 9, СПб., 1875, с. 357.

է տալիս քոչվորների սայլերը՝ նրանց զրկելով ընտանիքներով տեղաշարժելու միջոցներից¹։

Հայ բնակչութիւնը Տավրիկիայում տեղաբաշխված էր թերակղզու գրեթե բոլոր նշանավոր քաղաքներում, ինչպէս նաև գյուղական վայրերում։

12-րդ դարի կեսերից, մանավանդ սկսած 13-րդ դարից, մինչև 18-րդ դարի 70-ական թվականները (1778 թ.), ղրիմահայերը շոշափելի թիվ էին կազմում թերակղզու հետևյալ վայրերում՝ Կաֆա, Սուրխաթ (Հին Ղրիմ, էսկի Ղրիմ), Սուդակ, Կեոզլես, Ղարասուբազար (Ղարասու), Աքմեջիթ (Սիմֆերոպոլ), Բախչիսարայ, Բալակլիավա, Օրաբազար (Արմյանսկի բազար, Արմյանսկ), Ինկերման, Խերսոնեսս և այլ քաղաքներում, ինչպէս նաև Կազարաթ հայկական բերդապահ մեծ ավանում և զուտ հայկական մոտ երկու տասնյակ գյուղերում, որոնք գտնվում էին Ղարասուի և Հին Ղրիմի միջև ընկած տարածքներում, ինչպէս նաև Սուդակի և Կաֆայի շրջակայքում։

Հայերը իրենց թվաքանակով Ղրիմում թաթարներից հետո բռնում էին երկրորդ տեղը։ «Թաթարներից հետո, փաստարկում է Ղրիմի պատմության գիտակ գերմանացի Թունմանը, Ղրիմում ամենաշատը հայերն են»²։ Թունմանը նկատի ունի 18-րդ դարը, այնինչ թերակղզու վրա հայոց թիվը անհամեմատ ավելի մեծ էր 14-15-րդ դարերում, թուրքական տիրապետության հաստատմանը (1475 թ.) նախորդած շրջանում։ Նշված դարերում հայերի թիվը թերակղզու վրա հավանաբար ավելի քան 150 հազար էր, որը վկայվում է մի քանի տասնյակ հայկական եկեղեցիների և բազում այլ հավատատեղիների, հայկական լուսավորչական եպիսկոպոսական երկու թեմի, բազմաճիւղ հայ կաթողիկ համայնքի, հայկական մեծաթիվ հուշարձանների գոյությամբ, հայոց ծավալած առևտրատնտեսական ու մշակութային լայն գործունեությամբ և այլ իրողություններով։

1 Смирнов В. М. Крымское ханство под верховенством Османской порты до начала XVIII в. СПб., 1887, с. 414.

2 Тунманн Н. Крымское ханство, Симферополь, 1936, с. 30.

րով: Միայն Կաֆայում 15-18-րդ դդ. միաժամանակ գործում էին ավելի քան երեք տասնյակ հայկական եկեղեցիներ: Կաֆայում, որը 15-րդ դարում ունեւր 70 հազար բնակիչ, հայերը կաղմում էին այդ թվի 2/3 մասը, ավելի քան 46 հազար մարդ, հանգամանք, որ հաստատում են թուրքական և ջենովական աղբյուրները¹: Հայ հոծ բնակչութուն ունեին նաև Հին Ղրիմը, Ղարասուբազարը, Կաղարաթը և Սուդակը: 16-18-րդ դարերում հայ բնակչութուն է հաստատվում Բեչքեկ գետի հովտում, նրա վերին շրջաններում, ինչպես նաև Կերչում, Յալթայում և այլուր: Զգալի թվով բնակչութուն ունեին հայկական մեծ գյուղերը, որոնցից մի քանիսում գործում էին երկուական եկեղեցիներ:

* * *

Ղրիմահայոց զբաղմունքի մեջ մինչև 14-րդ դարի 30-ական թվականները գերակշիռ տեղ էր բռնում առևտուրը. իսկ 14-18-րդ դարերում առևտրին զուգընթաց լայն դարգացում են ապրում նաև արհեստագործութունն ու գյուղատնտեսութունը՝ իրենց բոլոր դրսևորումներով: Այդ հարցերի լուսաբանումը թողնելով առանձին բաժնի՝ այստեղ նախապես միայն շեշտենք, որ միջնադարյան Ղրիմի տնտեսական կյանքի մասին անհնարին է ճիշտ պատկերացում կազմել առանց նրանում հայերի ունեցած հիրավի առաջատար դերի և մասնակցության լուսաբանման, հանգամանք, որը լայն արտացոլում է գտել ժամանակի հայ և օտար աղբյուրներում և որը հաստատում են թերակղզու կյանքին քաջատեղյակ հայ և օտարազգի հեղինակները:

Ղրիմահայության սոցիալական կազմը միատարր չէր. 13-18-րդ դարերում հայ բնակչության սոցիալական շերտավորումը մի նշանակալի չափով աղերսվում էր թերակղզու վրա թաթարական, թուրքական և ջենովական տի-

¹ Atti della societa Ligure di storia patriae (Atti). Genowa, t. V, p. 415.

րակալությունների առկայութեանը: Եթե դրանցից առաջինին և երկրորդին հատուկ էին արևելյան ֆեոդալական հարաբերությունները, ապա երրորդին բնորոշ էր կապիտալի նախնական կուտակման կացութեամբ, բավական զարգացած առևտրական կապիտալի դրսևորած պայմաններով հանդերձ: Ղրիմահայ ազգաբնակչութեան սոցիալական կազմը ուներ մոտավորապես հետևյալ պատկերը՝ խոշոր հողատերեր և վաճառականներ, ռամիկ երկրագործ ազատներ, քաղաքային բանվորներ և քայքայված արհեստավորներ, դրամատեր բանկիրներ և մանրածախ առևտրականներ: Սոցիալական այս խմբերը իրենց ներսում ևս միատարր և միահավասար չէին: Կաֆայում, օրինակ, ջենովական առևտրական գաղութատիրութեան շրջանում (1260-1475 թթ.), սոցիալական սանդուղքի վերին մասը զբաղեցնում էին ջենովացիները (*cives*), ապա քաղաքացիները՝ *burghenses*: *Cives*-ի ձեռքում էր գտնվում քաղաքական իշխանությունը, այսինքն՝ այն մարդկանց ձեռքում, ովքեր ծնվել էին Ջենովայում կամ սերում էին ջենովացի ծնողներից¹: Այս երկու դասերն էլ, թեև ոչ միաչափ, ներկայացնում էին քաղաքի ունեւորներին: Իսկ բնակչութեան ստորին խավերի՝ *habitatores*-ի մեջ մտնում էին քայքայված առևտրականներն ու արհեստավորները, անկարող պարտապանները, սեւագործ բանվորները: Այս դասի, ինչպես նաև *burghenses*-ի գերակշիռ մասը ազգութեամբ հայեր էին, որոնք ջենովական գրագրություններում հանդես էին գալիս կաֆացիներ հորջորջմամբ:

Վաճառականները, վաչխառուները, արհեստավորների գլխավոր վարպետները, որոնք ներկայացնում էին ղրիմահայոց հարուստ դասը, ձեռագրերում հանդես են գալիս խոջաներ, պարոններ, էմիրներ և բեգեր տիտղոսներով: Դասային նշված շերտավորումը ղրիմահայ գաղթօջախներին հատուկ էր ողջ միջնադարում (13-18-րդ դարեր): Ըստ 1744 թ. կազմված մի խնդրագիր-համախոսականի, ամբողջ Ղրիմի ժողովուրդը բաղկացած էր «գլխավորներից» և «հա-

1 Monumenta historiae patriae, t. II, p. 407.

սարակ» ժողովրդից¹: Խնդրագիրը իրենց կնիքներով հաստատել էին Կաֆայի, Ղարասուբաղարի, Աքմեչիթի, Հին Ղրիմի և հայկական գյուղերի համայնքների ներկայացուցիչները: Կնիքների դասավորությունից պարզվում է, որ հարուստ խավը ևս չերտավորված է եղել:

Ջենովական տիրապետության ոլորտում ապրող հայերի մեջ կային ազատ վարձու բանվորներ, որ անշուշտ վկայում էր թերակղզու այդ մասում վաղկապիտալիստական հարաբերությունների առկայության մասին (13-15-րդ դարեր):

Ղրիմահայերը ենթակա էին եռակի հարկատվության՝ հարկեր և տուրքեր վճարելով թաթար, թուրք և ջենովացի իշխանություններին: 13-րդ դարի վերջերին Ղրիմում արդեն հարկեր էին գանձվում հոգուտ Ոսկե Հորդայի: 1299 թ. կաֆացիները սպանում են հարկ հավաքելու համար Կաֆա եկած Նոդայի թոռանը²: Հայերը, հուլյներն ու կարաիմները Ղրիմի խանին վճարում էին ուշուր (տասանորդ բոլոր պտուղներից և դաշտավարությունից), զեքիաթ (անասուններից և թռչուններից՝ եկամտի 1/5-ի չափով), հոգեկոր հարկ՝ պետիր, գլխահարկ³: Այս վերջին հարկը Բախչիսարայում կազմում էր 1-1,25 գրաուն՝ ամեն մի անձի համար⁴: Հայերն ու հուլյները յուրաքանչյուր ոչխարի դիմաց վճարում էին 2 փարա, խոշոր եղջերավոր անասունի դիմաց՝ 6 փարա, իսկ մի օրավար հողի համար՝ 340 ալիչե⁵: Հայերի, հուլյների և կարաիմների հաշվին էին վարձատրվում խանության պաշտոնյաները:

Հարկային լուծը անտանելի էր դառնում հարկերի գանձման կապալային կարգի պատճառով: 18-րդ

1 Մատենադարանի արխիվ, ֆ. Կաթ. դիվան, թղթ. 1, վ. 43.

2 Тизенгаузен В. Г. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. 1, СПб., 1884, с. 111.

3 «Արոր», 1911, № 12, էջ 49:

4 «Հայրենիք», 1950, № 9, էջ 97.

5 Маслов П. В., Миллер М. Б., Никольский П. Н. Крым. Хрестоматия по истории края, ч. 1, Симферополь, 1930, с. 20.

դարում հաճախ միևնույն կապալառուն գանձում էր մի քանի տասնյակ հարկեր¹։ Խանական գանձատունը պիտի պարտադիր կարգով ստանար հարկերը, իսկ կապալառուն՝ իր հասանելիքը, և այդ պատճառով էլ վերջինս ավելի շատ էր գանձում։

1777 թ. Շահին-Գիրեյը, քրիստոնյաներին սիրաշահելու միտումով, քայլեր էր անում հարկատվության հարցում հայերին ու հույներին հավասարեցնելու թաթարներին։ Ղրիմում ռուսական զորքերի հրամանատար Ա. Պրոգորովսկին զգուշացնում է խանին, թե նրա այդ քայլը կարող է առաջ բերել թաթարների դժգոհությունը։ «Ես առաջարկեցի նորին պայծառափայլությունը, այս աղերսով գրում էր նա հունիսի 10-ին Ռումյանցև-Չադունայսկուն, որ թեև դա շատ դյուրալի է, բայց այդ բոլորը կառավարման սկզբում սկսելը թվում է վաղ, որովհետև դրանից մահմեդականները վատ եզրակացություն կանեն»²։

Ծանր էին նաև պարհակները։ Երբեմն թաթարների գլխավորները գյուղերից հավաքում էին հայերին և հույներին և քշում պարհակային աշխատանքի, ստիպում ձրի աշխատել, դեպքից-դեպք էլ՝ փոխարինել քաջող ուժին։ Բախչիսարայում ռուսական ռեզիդենտ Նիկիֆորովի վկայությամբ, 1764 թ. Ղրիմ-Գիրեյը «Աչլամա» պալատի կառուցման վրա անվճար ամեն օր բանեցնում էր 200-300 հայերի և հույների³։

Կապալով էր տրվում նաև մաքսերի գանձումը։ Մաքսերի գանձումն էր, որ խթանում էր թաթար վերնախավի շահագրգռվածությունը առևտրի նկատմամբ։

Սուլթանական տիրակալության հաստատումը Ղրիմում (1475 թ.), երբ խանությունը լիովին վասալական կախման մեջ ընկավ թուրքերից, նշանավորեց թերակղզու քրիստոնյաների դրուժյան առավել վատթարացումը։

1 События, случившиеся в Крыму в царствование Шагин-Гирея хана. Перевод с еврейской современной рукописи сочиненной караимом Рабби-Азаря, сыном Ильи, с. 113.

2 ЗООИД, т. V, 1863, с. 96.

3 «Արոր», 1911, № 12, էջ 50:

Հայերից ու հույներից հարկեր ու տարատեսակ տուրքեր էին գանձվում սուլթանական գանձարանի օգտին: Սուլթանին հարկատու էր ղրիմահայ եկեղեցին: 18-րդ դարում միայն Կաֆայի 21 եկեղեցիների՝ սուլթանական գանձատանը կատարած մուծումներն ունեին հետևյալ պատկերը. «Օսմանցի թագաւորն,- հայտնում է ղրիմահայ ձեռագրերից մեկի հիշատակարանը,- եկեղեցիէ մուխսիթտէ կու խնդրէ. այսքան եկեղեցիէ ըստ կարողութեանն կու ժողովնն Լստամբօլ կու խրկեն տարէց տարի. սբ. Սարգիսէ 19 ոսկի, Հրեշտակապետ 8 ոսկի, սբ. Նիկողայոս 8 ոսկի, սբ. Յարութիւն 10 ոսկի, Սան-Փետրօ 1 ոսկի, Աստուածածին 5 ոսկի, սբ. Օգսենտ 4 ոսկի 1 դուռուշ, սբ. Նիկողայոս 3 ոսկի կես դուռ., սբ. Ահարոն 1 ֆլօրի, սբ. Խոնկ սբ. Մինաստօլը 9 ոսկի, սբ. Օհաննէս 10 ֆլօրի, սբ. Ստեբանոս 5 ֆլօրի, սբ. Օվանէս 4 ֆլօրի ա դուռուշ, Համբարձում 5 ֆլօրի ա դուռուշ, Քաշոտ սբ. Աննայ 6 ֆլօրի, սբ. Առաքել 8 ֆլօրի, սբ. Ուրբաթ 4 ֆլօրի, սբ. Երրորդութիւն 4 ֆլօրի, Կօլի Աստուածածին 6 ֆլօրի: Կուղարկեն Լստամբօլ պատրիարդին, նա (ա)լ կուտար տեղը, կասերքի Ղըրմի եղեղ հայոց աղգի մուխսթենէ»¹:

Թաթարական ասպատակությունների կամ թուրքական պատերազմների նախօրյակին գանձվող հարկերը վերածվում էին ուղղակի բռնությունների՝ հաճախ քրիստոնյա ընտանիքները զրկելով ամբողջ ունեցվածքից:

Հայերից նշանակալի չափերով հարկեր, տուրքեր և մաքսեր էին գանձում ջենավական իշխանությունները: Հայերից նրանք վերցնում էին հողային, աղի և սննդամթերքի հարկեր, գլխահարկ, շինարարության հարկ և տարատեսակ մաքսեր՝ առևտրի դիմաց: 1371 թվականին Կաֆայում ամենաբարձր գլխահարկը տալիս էին հայերը. հուլյնի 749 սոմոյի դիմաց հայը վճարում էր 999 սոմո:

1 Մատենադարան, ձեռագիր № 2939, թ. 471 ա, բ:

* Սոնմ կամ սոմո — Ջենովայի սուրբ Գևորգ բանկի 1459 թ. որոշմամբ սոնմը հավասար էր 200 ասպրի, երբեմն էլ 150 ասպրի: Կանալեի հաշվումներով XIX դարի կուրսով ասպրը հավասար էր 2 սուլի կամ 3 կոպեկի: Սոնմը արծաթի որոշակի քաշ էր, որն հավասար էր 4,5-6 ուռլու:

Շուկայում վճարվող մաքսերի թիվը հասնում էր 15-ի՝ ստորաբաժանված ըստ շուկա բերվող բանջարեղենի և մրգերի քանակի ու տեսակի¹:

Ջենավական գաղութային վարչակարգը ևս մտցրել էր հարկահավաքման կապալատվական կարգը, որն օրինականացված էր 1449 թ. կանոնադրությամբ²:

1475 թ. Կաֆայի անկումը և թուրքական գերիշխանության հաստատումը ճակատագրական եղան Ղրիմի հայկական գաղութի և մանավանդ նրա հիմնական կենտրոն այդ քաղաքի մի քանի տասնյակ հազարի հասնող հայության համար: Սակայն այդ մասին մի փոքր հետո:

Ղրիմում թուրքական տիրապետության հաստատման առաջին շրջանում ծայր առած արտագաղթեցումն ու արտագաղթը որոշ ժամանակ անց դադարում են: Կաֆայի թուրքական փաշան, զգալով հայերին սիրաշահելու անհրաժեշտությունը, շուտով նրանց է վերադարձնում քաղաքի հայկական եկեղեցիներն ու վանքերը³: Եվ չնայած ղրիմահայոց կրած շոշափելի թվական կորուստներին, նրանք 16-18-րդ դարերում ևս, ինչպես նշել ենք, շարունակում էին բնակչության քանակով Ղրիմում թաթարներից հետո բռնել երկրորդ տեղը և կարևոր մասնակցություն ունենալ խանության տնտեսական, որոշ կողմերով նաև քաղաքական կյանքին:

Միջնադարյան ղրիմահայ գաղութը մշտական կապերի մեջ էր մայր հայրենիքի, Հայկական Կիլիկիայի և Մերձավոր արևելքի ու Արևելյան Եվրոպայի հայկական գաղութների հետ: Այդ կապերը արտահայտվում էին հասարակական, եկեղեցական, տնտեսական և կյանքի այլևայլ բնագավառներում, շարունակ խթանում էին տեղի հայ

(XIX դ. երկրորդ կեսի կուրսով): Սոնմ բառացի նշանակում է ծանրություն, արծաթի ձուլածո կտոր (ЗООИД, т. V, стр. 820):

1 ЗООИД, т. IV, Одесса, 1858, сс. 675—679, 712, 720—722, 823, Atti, VI, p. 383.

2 ЗООИД, т. V, с. 648—649.

3 «Հանդես ամսօրյա», 1911, էջ 81:

գաղթօջախների աղգապահականմանը, հայ մշակույթի զարգացմանը:

* * *

15-րդ և 18-րդ դարերի 70-ական թվականներին Ղրիմում տեղի ունեցած ռազմաքաղաքական իրադարձություններ, որոնք խստիվս բացասական ազդեցություն ունեցած թերակղզով մեկ սփռված հայկական գաղթօջախների համար: Նկատի ունենք 1475 թ. թուրքերի կողմից Կաֆայի գրավման և 1778 թ. ռուսական կառավարության կողմից Ղրիմից հայերի և հույների դուրսբերման անցքերը: Եթե առաջին դեպքում միջնադարի ղրիմահայ գաղթօջախները, չնայած կրած ծանր հարվածներին, շարունակեցին գոյատևել, ապա երկրորդ դեպքում վերացան: Ղրիմահայոց պատմության հետ կապված քաղաքական իրադարձություններ էին դրանք, որոնք շրջադարձային էին նրանց պատմության մեջ, որով և թեկադրվում է դրանց լուսաբանման կարևորությունը:

* * *

Նախ՝ Կաֆայի անկման մասին:

1475 թ. հունիսին թուրքական սուլթան Մահմեդ 2-րդի զորքերը հնգօրյա պաշարումից և հրետանային ռմբակոծությունից հետո գրավեցին Ջենովայի հանրապետության սեծովյան առևտրական գաղթավայրերի վարչական կենտրոն Կաֆա քաղաքը: Դրանով էլ Ղրիմում սկիզբ դրվեց թուրքական տիրապետությանը: Կաֆայի անկումը պայմանավորված է եղել ներքին ու արտաքին բազմաթիվ պատճառներով: 15-րդ դարի կեսերից Կաֆայում տնտեսական ծանր կացություն է ստեղծվում, աննախընթաց չափերի է հասնում մասսաների դժգոհությունը՝ թե տնտեսական և թե ազգային հողի վրա: Մյուս կողմից՝ Ջենովայի հանրապետության, հետևապես և Կաֆայի համար գնալով անբարենպաստ էր դառնում արտաքին-քաղաքական դրույթ-

յուէնը, որը պայմանավորված էր ժամանակի միջազգային հարաբերութիւններին ընթացքով և, մասնավորապէս, թուրքական նվաճումների հետեանքով առաջացած ծանր կացութիւնը: Ղրիմի ջենովական առևտրական գաղթավայրերի արտաքին-քաղաքական և ներքին-տնտեսական դրութիւնը բարդանում և սրվում է երկու հանգամանքով. Ղրիմում թաթարների ինքնուրույն խանութիւնը ստեղծմամբ, որի առաջին խան Հաջի-Գիրեյը բացարձակ թշնամանք էր տածում դեպի ջենովացիները, և 1453 թ. թուրքերի կողմից յեղուցների գրավմամբ, որը խոշոր մի հարված էր ջենովական առևտրին:

Սուլթան Մահմեդ 2-րդը սկզբից ևեթ լուրջ խոչընդոտներ հարուցեց ջենովացիների սևծովյան առևտրին, նրանց առջև փակելով յեղուցները¹: Նման իրավիճակը ի վերջո անիմաստ ու անհեռանկար էր դարձնում ջենովական առևտրական տիրակալութիւնը սևծովյան ավազանում: 1454 թ. Մահմեդ 2-րդի և Հաջի-Գիրեյի միջև կնքված պայմանագիրը², որով խանը պարտավորվում էր Կաֆան պաշարել ցամաքից, իսկ սուլթանը խոստանում էր քաղաքին հարվածել ծովից, դրութիւնը դարձնում էր ավելի լուրջ: Գրավվելուց հետո Կաֆան պիտի դառնար խանի սեփականութիւնը, պայմանով, որ նրա բնակիչները համարվեն սուլթանի հպատակներ: Սուլթանն ու խանը խոսքից անմիջապէս անցնում են գործի: Կաֆայի հյուպատոսի քարտուղարի հաղորդման համաձայն, թուրքական նավատորմիղը, կազմված 500 զալերներից, հուլիս ամսին մտնում է Սև ծով և հարձակվում ջենովական Մոնկաստրո (Ակկերման=Աքերման) ամրոցի վրա: Սակայն հակահարված ստանալով թուրքերը ետ են քաշվում և մոտենում Կաֆային: Նույն ժամանակ ցամաքից քաղաքի պարիսպների տակ երևում են Հաջի-Գիրեյ խանի զորքերը: Թուրքական նավատորմիղի հրամանատար Թեմիր-Կայը իր մոտ է կանչում Կաֆայի ներկայացուցիչներին և նրանցից մեծ զիջումներ պահան-

1 ЗООИД, т. 8, 1872, с. 113.

2 Նույն տեղը, էջ 114:

ըում: Կնքվում է պայմանագիր, որի համաձայն, կաֆացիները պարտավորվում են ամեն տարի թաթար խանին վճարել 600 սոմ, իսկ թուրքերին հանձնել պատանդներ¹: Բացի դրանից, թուրքական սուլթանին Կաֆան ամեն տարի տալիս էր 4000-8000 չերվոնեց²:

Ելնելով ստեղծված ծանր կացությանից և առաջին հերթին թուրքերի կողմից նեղուցները փակելու հետևանքով Արևելքի հետ այդ ուղիով առևտրի ընդհատումից³, Սբ. Գևորգ բանկի վարչությունը (1454 թվականից Ջենովայի հանրապետությունը սեծովյան գաղթավայրերի կառավարումը հանձնել էր ջենովական Սբ. Գևորգ մասնավոր բանկի խնամատարներին) 1454 թ. հոկտեմբերին Մահմեդ 2-րդի մոտ է ուղարկում հատուկ դեսպանություն, խնդրելով պահպանել խաղաղություն⁴: Իր հերթին Կաֆայի հյուպատոս Դեմետրիոս դե Վիվալդին ևս պատվիրակություն է ուղարկում Կ. Պոլիս: Ընդ որում, Կաֆայի պատվիրակներ Անտոնիո դե Պինոն և Բատիստա Ալջերոն ավելի շուտ են ժամանում Կ. Պոլիս, որի պատճառով էլ Քրիստ կղզի հասած ջենովական պատվիրակներին կարգադրվում է չմիջամտել Կաֆայի պատվիրակների բանակցություններին թուրքերի հետ⁵: Ըստ երևույթին, մասամբ էլ այս բանակցությունների շնորհիվ էր, որ մինչև 1475 թ. թուրքերը այլևս հարձակումներ չէին գործում Կաֆայի վրա: Թուրքական «խաղաղասիրական» վարմունքի հիմնական պատճառը, սակայն, այլ էր: Զբաղված լինելով Վենետիկի և Հունգարիայի դեմ մղվող պատերազմական գործողություններով՝ թուրքերը, բնականաբար, Տավրիկիան գրավելու իրենց մտադրությունը գերադասում էին թողնել ավելի հարմար ժամանակի:

Տարեկան տուրք ստանալու պայմանով թուրքերը այդ ժամանակ կաֆացիներին թույլ էին տալիս անցնել նե-

1 Նույն տեղը:

2 Atti, t. VI, docum. MCCXXI.

3 Известия Таврической ученой архивной комиссии (ИТУАК), № 54, Симферополь, 1918, с. 157.

4 ЗООИД, т. 8, с. 117.

5 Նույն տեղը, էջ 112:

ղուցներով¹: Դա, իհարկե, չէր նշանակում, թե նրանք վերացրել էին խոչընդոտները և նեղուցներով ազատորեն երթևեկելու իրավունք տվել: Հաճախ ջենովական արագընթաց նավերը ստիպված էին մարտեր մղելով անցնել նեղուցները: Նեղուցների փակ լինելը կաֆացիներին ստիպում էր մետրոպոլիայի հետ կապ պահպանել ցամաքային ուղիով՝ Մոնկաստրո-Լվով-Բուդապեշտ ճանապարհով, որն այդ ժամանակ բավականին բանուկ էր դարձել: Պարզ է, որ այդ ճանապարհը չէր կարող փոխհատուցել նեղուցներով ազատ առևտուր անելու կորուստը: Ինքը Ջենովան էլ գտնվում էր արտաքին անբարենպաստ պայմաններում: Հակամարտությունը Վենետիկի և Իսպանիայի հետ թուլացրել էր Ջենովայի տնտեսական ու ռազմական հզորությունը և նրան թույլ չէր տալիս մեծ ու անհրաժեշտ օգնություն ցույց տալ տավրիկյան իր գաղթավայրերին:

Անբարենպաստ արտաքին պայմանները անդրադառնում են Կաֆայի առանց այդ էլ բարդացող ներքին կյանքի վրա: Նեղուցները փակելու հետևանքով առաջացած առևտրատնտեսական ճգնաժամը առավել սրում է ազգային-հասարակական հարաբերությունները: Առևտրական վերնախավը և ջենովացի պաշտոնեությունը ձգտում էին նախկինում առևտրից ստացվող օգուտի կորուստը այժմ փոխհատուցել տեղական բնակիչներից գանձվող հարկերն ու տուրքերը ծանրացնելու, զանրը բարձրացնելու հաշվին, իսկ դա, ինքնըստինքյան, ավելի էր սրում պայքարը ունեւորների դեմ: Դժգոհությունը սաստկանում էր պաշտոնյաների կաշառակերության, արդարադատության բացակայության և տեղացիների հանդեպ ջենովացի ունեւոր դասի ցուցաբերած վատ վերաբերմունքի պատճառով: Քաղաքում գլուխ է բարձրացնում անարխիան, չկար անձի և գույքի անձնոնմխելիություն: Դրությունն այնքան վտանգավոր էր դարձել, որ շատերը հրաժարվում էին Ջենովայից

1 Секеринский С. А. Очерки истории Сурожа, IX-XV вв., Симферополь, 1955, с. 136.

2 Նույն տեղը:

մեկնել Կաֆա՝ այս կամ այն պաշտոնը ստանձնելու¹, մինչ-
դեռ առաջ այդ պաշտոնները վաճառվում էին: 1455 թ. Կա-
ֆայի Հյուպատոս Թոմասո դե Դոմոկուլտայի հաղորդումից
երևում է, որ ջենովական գաղութներում լիազատար անիշ-
խանություն էր տիրում, նավերի վրա և ավին անընդհատ
ապստամբություններ ու ելույթներ էին տեղի ունենում,
իսկ ջենովացիներին պատկանող Ղրիմի ծովափնյա շերտի
մի շարք ամրոցներ գրավել էին տեղացիները²: Քայքայվել
էին քաղաքի ֆինանսները: Աբ. Գևորգ բանկի ղեկավա-
րությունը Հյուպատոսներին և ֆինանսական ծառայողնե-
րին հաճախ էր մեղադրում չարաչառումների և ապօրի-
նությունների մեջ, նրանց համարելով գաղութային գան-
ձարանի սնանկացման պատճառը³: 1457 թ., օրինակ, քաղա-
քի ղեֆիցիտը, ըստ իտալացի գիտնական Կանալեի հաշ-
վումների, հավասար էր 492 հազար ասպրի⁴:

Դրությունը Կաֆայում բարդանում էր տարբեր ազ-
գությունների միջև եղած հակասությունների պատճառով:
Հայերն ու հույները պայքարում էին ջենովական ճնշում-
ների դեմ, ընդ որում այդ պայքարին մասնակցում էր նաև
հայ և հույն առևտրական ու հարուստ դասի այն մասը, ո-
րին ջենովացիները դիտում էին իբրև իրենց մրցակցի, մյուս
կողմից, ջենովական տիրապետության հիմքերը թուլաց-
նում էին Կաֆայի թաթար բնակիչները, որոնք կապված լի-
նելով դրսի իրենց ցեղակիցների հետ՝ նրանց հայտնում էին
քաղաքի պաշտպանության գաղտնիքները⁵: Այս նկատի ու-
նենալով, տակավին 1449 թ. կանոնադրությունը ընդունում
է նախագգուչական մի շարք օրենքներ, ընդհուպ մինչև
քաղաքի և նրա արվարձանների մահմեդական բնակիչնե-
րին գննք կրելու կամ ունենալու իրավունքից զրկելը⁶:

1 ЗООИД, т. 8, с. 118.

2 Նույն տեղը, էջ 125:

3 Atti, doc. CCVIII.

4 ЗООИД, т. 5, с. 630. Ըստ 19-րդ դարի իտալացի գիտնական
Կանալեի հաշվումների, ասպրը հավասար էր 3 կոպեկի կամ 2 սուլի:

5 Նույն տեղը:

6 Նույն տեղը, էջ 814:

Կաֆայի պաշտոնեություն կամայականությունները իրենց ամբողջ ուժով ծանրանում էին հատկապես հայ և հուլյն զանգվածների ուսերին: Ջենովացի հարուստ վաճառականներն ու ազնվականները «դատավորների կաշառակերություն հետևանքով գրեթե միշտ արդար էին դուրս գալիս, չնայած նրանց աղքատ հակառակորդների արդարացի լինելուն»¹ գրում է Լ. Կոլին՝ հենվելով ժամանակի իտալական փաստաթղթերի մանրագնին ուսումնասիրության վրա: Կաֆայի պաշտոնյաները մշտական թշնամանքի մեջ էին միմյանց հետ, ձգձգում էին գործերը, կաշառքներ վերցնում և վեճերը լուծում ջենովացիների օգտին, մանավանդ, երբ աղքատ հակառակորդը լինում էր հայ, հուլյն կամ թաթար: 1455 թ. Ջենովա ուղարկած իրենց խնդրագրերում Կաֆայի հայերն ու հրեաները հայտնում էին, որ ջենովացի պաշտոնյաները իրենց վերաբերվում են թշնամաբար և ատելությամբ²: Տեղացիների նմանօրինակ բողոքները նկատի ունենալով՝ սբ. Գևորգ բանկի վարչությունը 15-րդ դարի կեսերից մասնակի որոշումներ և հրահանգներ է ուղարկում Կաֆայի իր պաշտոնյաներին՝ հայերի ու հուլյների հետ համերաշխություն հաստատելու ցուցումներով³: Սակայն դրանք չէին կենսագործվում, իսկ քաղաքի հիմնական բնակչության՝ հայերի ու հուլյների բողոքներն ու դժգոհությունները օրըստօրե սրվում էին, մանավանդ որ դրանց առիթ էին տալիս իրենք՝ ջենովացիները, խառնվելով նաև նրանց եկեղեցական ներքին գործերին:

Անմխիթար վիճակում էր գտնվում քաղաքի պաշտպանությունը: Քաղաքը զուրկ էր հրանոթներից⁴, թեև 1470-ական թթ. սբ. Գևորգ բանկը Ասխենից ու Ստրասբուրգից այստեղ էր ուղարկել երկու վարձու հրետանավոր-

1 К о л л и Л. Каффа в период владения ею банком св. Георгия. Симферополь, 1911, с. 22.

2 Նույն տեղը:

3 Նույն տեղը, էջ 35:

4 1448 թ. կանոնադրության համապատասխան կետերը (ЗООИД, т. 5), ինչպես նաև ИТУАК № 52, 1915, с. 168.

5 ЗООИД, т. 5, с. 834.

ների¹: Ըստ երևույթին, բանկը մտադիր է եղել տեղում հրանոթներ արտադրել, բայց այդ նրան չի հաջողվել: Կաֆա են ուղարկվում շատ փոքր թվով վարձու զինվորներ, ինչպես նաև ռազմական ինժեներ Անտոնիո Բոնինոն²: Եվ ընդհանրապես ցամաքով Կաֆա էր ուղարկվել շատ փոքր թվով զորք: Քաղաքի պաշտպանունակությունն ու դիմադրողականությունը բարձրացնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը պարզապես անարդյունք են դուրս գալիս: Այսպես, 1463 թ. Կաֆայի ներկայացուցիչ Գամացոն, Լեհաստանի թագավորի թույլտվությամբ, Պոդոլյեում 500 հոգուց բաղկացած մի ջոկատ է հավաքագրում՝ Կաֆա բերելու համար: Բայց ճանապարհին այս վարձկանները ավերում են Բրացլավ քաղաքը, և մարզային վոեվոդ Միխայիլ Չարտորիյսկին հետապնդում և կոտորում է նրանց³: Դեռևս դրանից առաջ, 1455 թ. Սբ. Գևորգ բանկը փորձել էր երկու նավ ուղարկել Կաֆա, բայց թուրքերը նեղուցների մոտ դրանցից մեկը խորտակում են, իսկ մյուսին ստիպում ետ դառնալ⁴: Անհետևանք մնացին նաև կաֆացիներին օգնելու առթիվ հունգարական, ֆրանսիական, անգլիական և պորտուգալական թագավորներին հասցեագրած խնդրանքները, ինչպես նաև Հռոմի պապի դիմումները՝ ինդուլգենցիաներ շնորհելու առատ խոստումներով⁵:

Մխիթարական շատ քիչ բան կար բուն Կաֆայի վարչություն վարած արտաքին քաղաքականություն մեջ՝ քաղաքի արտաքին կապերը կայունացնելու տեսակետից: Քաղաքի թիկունքը թաթարական կողմից ոչ միայն խարխուլ էր, այլ ուղղակի թշնամական, թեև Հաջի-Գիրեյից հետո խան դարձած Մենգլի-Գիրեյը Կաֆայի խալազցիների հանդեպ բարյացակամ վերաբերմունք ուներ, որովհետև խանական դահի համար ութ եղբայրների մղած պայքարում

1 ИТУАК, № 54, с. 139.

2 Նույն տեղը:

3 М у р з а к е в и ч Н. История генуэзских поселений в Крыму. Одесса, 1837, с. 71.

4 Նույն տեղը:

5 Նույն տեղը:

Կաֆայի ջենովացիները պաշտպանել էին երկար ժամանակ իրենց մոտ դաստիարակություն ստացած Մենգլի-Գիրեյին: Մենգլի-Գիրեյի երդաբայրներն ու նրանց կողմնակիցները և առանձնապես Նորդուլետ-Գիրեյը՝ իր համախոհներով, բացարձակ թշնամական դիրք էին բռնել Կաֆայի և նրա դաշնակից Մենգլի-Գիրեյի հանդեպ և զաղտնի բանակցություններ էին վարում թուրքական վեզիրի հետ: Նորդուլետին աջակցում էին որոշ ջենովացիներ, որոնք այս կամ այն առիթով դժգոհ էին Կաֆայի իշխանություններից: Դրանցից էր, օրինակ, Յակոբո Գրիմալդին, որը, թաքնվելով Թամանում, հարաբերության մեջ մտավ խանի եղբայրների հետ և Նորդուլետին առաջարկեց իր ծառայությունները՝ Կաֆայի և Սուրխաթի վրա հարձակվելու նպատակով դինված ստորաբաժանում կազմելու գործում: Նա Նորդուլետին խոստանում էր այդ քաղաքները գրավելուց հետո նրան ճանաչել խան¹: Առևտրականները անվան տակ թուրքական գործակալները այդ ժամանակ վխտում էին Կաֆայում²:

1468 թ. Հյուպատոս Ջենտիլե դե Կամիլայի և մյուս պաշտոնյաների հրավերով Մենգլի-Գիրեյը, իբրև բարձր Հյուր, ժամանում է Կաֆա: Սրան առիթ էր ծառայել այն, որ խանը իջեցրել էր գաղութային գանձարանից խանությանը վճարվող հարկը³: Նրանց միջև կնքվում է դաշնագիր, որը վերականգնում էր 1381 թ. համաձայնության հոգվածները, խանության և Կաֆայի միջև հաստատում մշտական խաղաղություն և պարտադրում փոխադարձ պաշտպանություն և օգնություն՝ ընդդեմ արտաքին վտանգի⁴: Տվյալ դեպքում երկու կողմերն էլ ակնարկում էին թուրքական սուլթանին: Սակայն ինչպես Մենգլի-Գիրեյի հետ բարեկամական այս կապերի հաստատումը, այնպես էլ բարեկամությունը հարևան Մանգուսլի (Թոդորոյի) հրեա իշխան

1 ИТУАК, № 54, с. 133.

2 Նույն տեղը, էջ 133:

3 Նույն տեղը, էջ 132:

4 Նույն տեղը:

Սահկի (Իսահակի) հետ¹ չնչին պատենչ էին օրավուր մոտեցող թուրքական հեղեղի առջև: Ավելին, հարևանների հետ այդ մերձեցումը, ինչպես և Բալկաններում թուրքերի անհաջողությունները, որոշ չափով ապակողմնորոշում են Սբ. Գևորգ բանկի վարչությանը և թուլացնում Կաֆայի պաշտպանականությունը բարձրացնելու ուղղությամբ նրա ձեռնարկումները: Սբ. Գևորգ բանկի անհոգությունն այնտեղ է հասնում, որ 1471 թ. Կաֆայի իշխանություններին ուղարկած հրահանգում նա պնդում էր, որ եթե նույնիսկ խանը հրաժարվի իր պայմանագրային պարտավորություններից, ապա քաղաքում եղած ուժերով թուրքերին կարելի է ետ չպրտել. «Կաֆայի կողմը կանգնած է Ղրիմի խան Մենգլի-Գիրեյը, բայց պայմանագրի հոգվածները պահպանելուց վերջինիս հրաժարվելու դեպքում՝ բերված ուժերի և միլիցիայի միացմամբ՝ թուրքերից վախենալը ավելորդ է»²: Եվ ապա՝ «Կաֆան, փառք ասածո, պատասպարված նորերս նորոգված իր պարիսպների ետևում և այդպիսի բազմաքանակ վարձկան զորքերով, համարձակորեն կարող է ետ չպրտել ոչ միայն թուրքերի, այլև ամեն մի այլ թշնամու հարձակում»³: Սրանք ինքնահանգստացման վտանգավոր խոսքեր էին, որովհետև վարձկանների թիվը՝ քաղաքում առհասարակ շատ փոքր էր: Բանկի կառավարչության կարգադրությամբ այն կրճատվում և հասցվում է ընդամենը 200 հոգու⁴: Այդ անհեռատես քայլը պատճառաբանված էր նրանով, որ իբր թե Գունիյադի գլխավորած սերբա-հունգարական բանակի կողմից Բելգրադի տակ Մահմեդ 2-րդի զորքերի կրած ջարդից հետո Մենգլի-Գիրեյը պիտի հովանավորություն խնդրի ոչ թե թուրքիայից, այլ Ջենովայից⁵:

Տկարացած Կաֆան ներքին և արտաքին այս անբարենպաստ պայմաններում կանգնում է թուրք-թաթարական միացյալ ուժերի սպառնալիքի դեմ-հանդիման. բավական

1 Նույն տեղը, էջ 155:

2 Atti, t. VII, I, doc. DCCCXLII.

3 Նույն տեղը:

4 ИТУАК, № 54, էջ 154:

5 ЗООИД, т. 8, с. 143.

էր մի հարված և այն կընկներ: Վերահաս աղետը արագացրեց ինքը՝ Կաֆայի ջենովական ապաշնորհ կառավարությունը՝ Կամպանիայի մարզի թաթարական կառավարչին հեռացնելու գործում ունեցած իր բացահայտ միջամտությամբ: Մահմեդ 2-րդը, իհարկե, պատրաստվում էր վաղ թե ուշ պաշարել Կաֆան: 1475 թ. սկզբներին նա արդեն պաշարել էր Մոնկաստրոն¹: Բայց անտարակույս է այն, որ թաթարական կնճռոտ գործերին ջենովացիների միջամտությունը նպաստեց թուրք-թաթարական առանց այդ էլ համակիր ուժերի արագ միավորմանը: Այդ միջամտությունն արտահայտվեց հետևյալ կերպ. 1473 թ. մահանում է Կամպանիայի մարզի պրեֆեկտ (տուգուեն, կառավարիչ) Մամակը: Մահից առաջ նա ցանկություն է հայտնում իշխանությունը հանձնել եղբորը՝ էմինեկին, դրանով իսկ զրկելով իր որդի Սայթաղին այդ պաշտոնը ժառանգելուց²: Էմինեկը ստանձնում է պաշտոնը և իր կառավարման ընթացքին տալիս հակաջենովական ուղղություն, արգելելով մթերքների ներմուծումը Կամպանիայից³ Կաֆա⁴: Սա, իհարկե, չէր կարող դուր գալ ջենովացիներին: Էմինեկի դեմ էր գործում Մամակի այրին՝ փառասեր Ագրիպինան⁵, որը սկզբից ևեթ ձգտում էր տուգուենի պաշտոնում տեսնել իր որդի Սայթաղին: Սրան հաջողվում է կաշառել Կաֆայի գրեթե բոլոր պաշտոնյաներին, այդ թվում՝ հյուպատոս Կաբելային և նրա առաջին ու երկրորդ օգնականներ Օբերտո Սկվարչիաֆիկոյին և Ֆրանչեսկո Ֆինեսկուն⁶: Ագրիպինայից կաշաված նրա գործակալ Կոստանդին Պետրարոսան, ջենովացի տարեգիր Ջուստինիանիի թողած տեղեկություն համաձայն, «սկսում է համոզել Նիկոլո Տորիլին (Կամպանիայի ջենովական կառավարչին), նրան խոստանալով 2000 չեր-

1 Atti, t. VII, I, doc. DCCCXLII.

2 ИТУАК, № 55, с. 155.

3 Կամպանիա էր կոչվում Ղրիմի հարավ-արևելյան ծովափը, որ ենթակա էր ջենովացիներին:

4 Atti, t. VII, II, p. 85.

5 ИТУАК, № 55, с. 155.

6 К о н д о р а к и В. Указ. соч., с. 35.

վոնեց, Օրերտո Սկվարչիաֆիկոյին՝ 2000, և այս կամ այն անձանց և հյուպատոսին տրվող ընդհանուր դրամը հասնում է վեց հազար չերվոնեցի: Եվ բոլորը լինելով աղքատ ու ժլատ՝ կաշառվեցին և միասին պայմանավորվեցին բավարարել այրու ցանկությունը և գլուխ բերել Կամպանիայում Սայթադին կառավարիչ նշանակելը ու նրան հրավիրել Կաֆա»¹:

1474 թ. նոյեմբերին Սայթադը ժամանում է Կաֆա: Նույն ժամանակ Կաֆայի կառավարութայան հրավերով, իբրև հյուր, քաղաք է գալիս Մենգլի-Գիրեյը, որին հրավիրել էին Սայթադին տուգուն դարձնելու համար նրա համաձայնությունը ստանալու նպատակով²: Նոյեմբերի 14-20-ը խանը լինում է Կաֆայում, բայց համառում է էմինեկի փոխարեն նշանակել Սայթադին՝ վախենալով նյութվող գահակալական կռիվների բորբոքումից և Սայթադի հակառակորդներ Կարամուրդայից ու Այդարից: Կաֆայի վարիչները արտաքնապես չհակառակեցին խանին, իսկ վերջինս էլ Շիրինների տոհմի գլխավոր նշանակեց Կարամուրդային: Զգալով իր համար ստեղծվող անբարենպաստ վիճակը, էմինեկը փախչում է անհայտ ուղղությամբ: Կաֆայի բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք կաշառված էին Սայթադի մոր կողմից, շարունակում են ճնշումը խանի վրա՝ սպառնալով Սայթադին չնշանակելու դեպքում չաղատել նրա պատանդ եղբորը: Իսկ դա կսրեր գահակալական պայքարը խանի և նրա եղբայրների միջև: Մենգլի-Գիրեյը ստիպված համաձայնում է Սայթադի նշանակմանը, «որ հուլիս 1-ին վտանգավոր էր և խանի, և գաղութի համար» - իրավացիորեն եզրակացնում է Մ. Մալովիստը³:

Էմինեկը, որը դաստիարակված էր քրիստոնյաների նկատմամբ ատելության ոգով և առանց այդ էլ փայփայում էր ջենովացիներին Ղրիմից դուրս քշելու մտադրությունը, գործում է ամելի վճռական կերպով: Իր մտերիմ ջենովա-

1 ИТЯК, № 55, с. 155.

2 Նույն տեղը, էջ 161-162:

3 Marian Malowist, Kaffa w. drugiej polowie XV - go wiku. Warszawa, 1939, p. 56.

կան պաշտոնյա Անդրեա Ֆատինանտի աջակցությամբ փախչելով Կաֆայից և հենվելով թաթարական պետերի՝ իրեն կողմնակից մասի վրա, նա համաձայնության է գալիս թուրքական սուլթանի հետ՝ միացյալ ուժերով Կաֆայի վրա հարձակվելու համար¹:

Միլանի և Բուդապեշտի արխիվներում պահպանված մի շարք փաստաթղթեր, որոնց մի մասը թարգմանել և հրատարակել է Լ. Պ. Կուլին «Պատմական վավերագրեր Կաֆայի անկման մասին» վերտառությամբ, ստույգ տեղեկություններ են պարունակում Կաֆայի զրավման և նրա բնակչության նկատմամբ գործադրված անօրինակ բռնությունների մասին:

1475 թ. մայիսի վերջերին թուրքական նավատորմը, Կետիկ Ահմեդ փաշայի հրամանատարությամբ, մոտենում է Կաֆային: Հունգարական թագավորի մոտ Վենետիկի դեսպան Սեբաստիան Բադորոյի՝ 1475 թ. հունիսի 10-ի հաղորդումից երևում է, որ թուրքերին են միանում թաթարական բարձրաստիճան զինվորական պետերը, ինչպես նաև «անգրալպիացիները» (նկատի ունի լեհերին ու գերմանացիներին)²: Թուրքական դեսպնտային ուժերի՝ ցամաքից Կաֆային մոտենալու ժամանակ, քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Պասիդինա նավահանգստում, թաթարական վարիչների և թուրքական հրամանատարության միջև կնքվում է համաձայնագիր՝ ռազմական համատեղ գործողությունների վերաբերյալ: Ականատեսներից մեկը, որը գերի էր բերվել Կոստանդնուպոլիս, այնտեղից գրում էր, թե համաձայնություն կնքելու հաջորդ օրը, հունիսի 1-ին, Կաֆան ցամաքից և ծովից լրիվ շրջապատման է ենթարկվում³:

Կաֆան ծովից պաշարել էին տարբեր մեծություն 480 թուրքական ռազմանավեր՝ զինված պաշարողական

1 ИТУАК, № 55, с. 174.

2 Ко л л и А. П., Исторические документы о подении Каффы. Симферополь, 1910, с. 8.

3 Б р у н Ф. Черноморье, ч. I. Одесса, 1879, с. 236—237.

հրետանիով: Հայկական աղբյուրները նշում են 300 նավ¹: Քաղաքի բնակչությունը, զբաղված լինելով հրետանուց և զբաի որևէ օգնությունից, հուսահատական դրություն մեջ ապավինել կարող էր միայն իր անհամեմատ փոքրաթիվ ուժերին: Նա գուրկ էր ոչ միայն բավարար քանակությունը զինապաշարից, այլև երկարատև պաշարման ժամանակ անհրաժեշտ պարենից: Այնինչ թուրքերին էին միացել 60.000 թաթարներ², ինչպես նշված է Մուդավիայի վոեվոդ Ստեֆանի մոտ եկած հունգարական թագավորի դեսպաններ Դոմինիկո դ'Ալբա-Ռեալի և նրա ընկեր Գասպարի հաղորդագրության մեջ: Իսկ Քիոս կղզուց ուղարկված աստորագիր մի նամակից երևում է, որ թուրքերից և իրեն անհնազանդ թաթարներից սարսափած Մենգլի-Գիրեյը, զգալով, որ այլևս անօգնական է պահելու իշխանությունը, 1500 հեծյալների հետ ճողոպրում է Կաֆա³, դրանով իսկ առավել ազատ դործելու հնարավորություն տալով էմինելիին և իր մյուս հակառակորդներին: Այնպես որ սրա հետ Կաֆայի կառավարության ունեցած համաձայնությունը դառնում է առ ոչինչ: Թշնամի ուժերի մեջ էին նաև խանի եղբայրները:

Հինգ օր շարունակ կաֆացիները դիմադրում էին: Մարտնչողները հիմնականում քաղաքի բնակիչ տասնյակ հազարավոր հայերն էին և ապա՝ հույները և ոչ թե ընդամենը 1000 ջենովացիները⁴: «Յայնժամ ընդդիմացան իշխանքն և ազնուականք մեր և ոչ ետուն զբերդն»⁵, - ասում է զրիմահայերի հիշատակարանը: Հինգերորդ օրը, այսինքն՝ հունիսի 4-ին կամ 5-ին (հին տոմարով), գրում էր Քիոս կղզում ապրող Ջենովայի քաղաքացի Ջիակոմո Զուստինիանին 1475 թ. հուլիսի 10-ին, հայերն ու հույները հայտարարում են «լատինացիներին՝ այսուհետև թուրքերին

1 Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281 ր:

2 К о л л и А., Исторические документы, с. 12.

3 Նույն տեղը, էջ 14:

4 Atti, t. VIII, с. 343 և С е к о р и н с к и й С. նշվ. աշխ., էջ 229:

5 Մատենադարան, ձեռ. № 7442, թ. 281 ր:

դիմադրելուց իրենց հրաժարվելու մասին և պահանջում
 հանձնվել¹»։ Բոլորովին սխալ կլիներ, իհարկե, իրերի պար-
 տադրմամբ հայերի ու հույների առաջ քաշած այս ստիպո-
 ղական պահանջը ներկայացնել իբրև դավաճանութուն
 կամ մատնութուն։ Իրողությունն այն է, որ ջենովացիների
 կողմից գրեթե անպաշտպան թողնված քաղաքը հայերն ու
 հույները անկարող էին պաշտպանել թուրք-թաթարական
 «թուփ ու թուֆանք շատ» ունեցող, այսինքն՝ ժամանակի
 ռազմական տեխնիկայով զինված ուժերի հանդեպ, որոնք, ի
 դեպ, քաղաքը գրկել էին պարենից և խմելու ջրից։ Ողբալով
 քաղաքի անկումը՝ Ներսես Կաֆայեցին իր տաղում ասում
 է²։

Ինն ծ հայոց թվին ԻԳ Նէր աւելին,
 Ի յազդմանէ մեղաց չարին.
 Միաբանեցան այն տաճկընին,
 Թաթարն եկաւ ի վերայ Կաֆին,
 Զրերըն գամէնըն կտրեցին.
 Կըռիւ տըւին ի հետ քաղքին,
 Եւ շատ արիւն երկիր հեղին.
 Յետոյ եկին Ղատըր դանին,
 Որ Դժ էր աւելին,
 Եւ միաբանի դուրս ելին
 ԶԿաֆայ քաղաքն բոլորեցին,
 Բազում անթիւ հեծեալ էին
 Թօփ ու թուֆանք շատ ունէին...

.....

Մեծ մեծ թօփերն երբ քաշեցին,
 Երկինք եւ երկիր կու դողային,
 Խիստ շատ վնաս եղև քաղքին,
 Տուն տաճարքըն բլչին:

1 К о л л и Л., Исторические документы, с. 16.

2 Մատենադարան, ձեռ. № 7709, Թ. 57-58:

Օրհասական այսպիսի վիճակը ստիպում է Կաֆայի բնակիչներին հանձնվել թուրք-թաթարական զինված ուժերի ողորմածությանը: Քրիստ կղզուց Զենովա ուղարկած անստորագիր նամակի հեղինակը, որը ուղղակի բացասաբար է տրամադրված դեպի տեղացիները, նշում է ձեռնարկած այդ քայլի դրդապատճառը: «Այս վերջինները (հայերն ու հույները — Վ. Մ.),— գրում է նա,— զգալով, որ պաշտպանվելու համար իրենք քանակապես չափ թույլ են, հայտնում են թուրքական պետին, որ ցանկանում են հանձնվել, այլապես սրախողխող կարվեին այնքան լատինացիներ, որքան կգտնվեր Կաֆայում»¹: Ինչպես վկայում է նամակից մեջբերված հատվածը, հույնիսկ նրա հեղինակը չի կարողացել թաքցնել այն իրողությունը, որ նախ՝ ջենովացիների կողմից անպաշտպան թողնված քաղաքի միակ պաշտպանները եղել են տեղացիները՝ հայերն ու հույները, և որ վերջիններիս կողմից թուրքական զորքերին հանձնվելը ստիպողական մի քայլ էր ապարդյուն դիմադրությունից հետո և, վերջապես, այդ քայլի շնորհիվ ջենովացիները (լատինացիները) հնարավորություն ստացան խուսափել մահից և փախչել Իտալիա:

|

Իսկ ազգն ֆռանկաց առեալ հրաման,
Չուեալ աստուստ գնացին ի Ֆռանկստան²,—
ասում է Մարտիրոս Ղրիմեցին:

Կաֆայի պաշարման ժամանակ իրենց գլուխը կորցրած պաշտոնյաները ստիպված են լինում քաղաքի պաշտպանություն գործը և զորքերի հրամանատարությունը հանձնել տեղացի մի հայի³: Հյուսպատոսն ու մասարնիրը տվյալ դեպքում չեն կարողացել աչքաթող անել այն, որ քաղաքի պաշտպանները հիմնականում հայերն են՝ իբրև բնակչության ճնշող մեծամասնություն: Քաղաքի պաշտպանները խելացի են համարել հանձնվել, քան թե մի երկու

1 К о л л и Л. Исторические документы, с. 14.

2 Ա. Մ ա Ր Տ Ի Ր Ո Ս Յ Ա Ն, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 150:

3 К о н д о р а к и В. X. Указ. соч., с. 37.

օր էլ անգոր դիմադրութիւն ցույց տալ, այն էլ այն ժամանակ, երբ թուրքական հրետանին քաղաքի պարիսպներին մեջ բազմաթիվ ճեղքվածքներ էր բացել¹: Ընդ որում, թուրքերին հանձնվելու որոշումը ընդունվել է այն բանից հետո միայն, երբ ջենովական առանց այդ էլ աննշան քանակի վարձկան զորքերը լիովին բարոյալքվել էին, իսկ նրանց հրամանատարն էլ փախուստի էր դիմել: “Տեսեալ իշխանաց մերոց և զազնուականաց զթուրութիւն իշխանին ջինիւիզաց և զօրացն նոցին, մանավանդ թէ իշխանն փախուստ էառ, անճար մնացեալ ի սովու, առին զերդումն և զքաղաքն ետուն թուրքաց”²:

* * *

Տեր դառնալով Կաֆային, թուրքական զորքերը, թաթարների հետ միասին, իրենց սովորության համաձայն, դրժում են տված խոստումը և քաղաքը կատարյալ սպանդանոցի վերածում: Թե հայկական և թե իտալական աղբյուրները³ վկայում են, որ քաղաքի քրիստոնյա բնակչութունը թուրքերի կողմից անխնա սրի է քաշվում: Թե որքան էր սպանվածների թիվը, այդ մասին աղբյուրները լռում են: Բայց բոլոր աղբյուրներից երևում է, որ հսկայական թվով բնակչություն է սրի քաշվել:

Ապա սպանդին հաջորդում են գերեվարությունն ու հարկերի ծանրացումը: Թուրքական հրամանատարութիւնը նախ կատարում է գուլքագրում և բնակչության հաշվառում. «մանր ու մեծն գրեցին»,— վկայում է Ներսես Կաֆա-

1 "Сын отечества", 1848, N 10, с. 67.

2 Մատենադարան, ձեռ. № 7442, Թ. 281բ:

3 Լ. Խ ա չ ի կ յ ա ն, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 389-390, տես Մատենադարան, ձեռ. № 7442, Թ. 281-282, ձեռ. № 7709, Թ. 57-59: Заседание одесского общества любителей истории и древностей, заседание 269, от 3 марта 1893 г. Письмо настоятеля церкви Алба-Юлия, с. 6—8. "Сын отечества", 1848, № 10, с. 67. «Արոր» 1911, թիվ 10-11, էջ 110 և այլն:

յեցին¹: Սկզբում Կետիկ Ահմեդը հայտարարում է, թե ինքը հրամայել է կազմել քաղաքացիների ունեցվածքի ճիշտ ցուցակ, իբր թե որպեսզի հնարավոր լինի արդարացի կերպով բաշխել հարկերը²: Այնինչ այդ հաշվառումը նրան պետք էր, որպեսզի պարզի, թե ով ինչ ունի և ապա դրանք բռնագրավի: Եվ իրոք, թուրքերը «զամեն ի քաղաքէն ժողովեցին» և «զամենն առեալ կողոպտեցին»³:

Օտարերկրյա վաճառականներից փաշան պահանջեց վճարել 20-25 հազար դուկատ, իսկ ջենովացիներից՝ մի գումար, որը հավասար էր նրանց ունեցվածքի արժեքի կեսին⁴: Ծանր էր տեղացիների վիճակը: Ներսես Կաֆայեցու վկայությամբ՝

Տունն ու այգին դին բռնեցին,
Ջերեք բաժինն կու ուզէին,
Աղաչանօք զկէսն առին:
Խիստ նեղութիւն կայր քաղաքին,
Ամենն ի լաց հառաչէին
Ճանփայ չիքար որ փախչէին...⁵

Ալբա Յուլիա քաղաքի (Տրանսիլվանիայում) եկեղեցու ավագ քահանա, պապական պրոտոնատար Դոմինիկի Կաֆայի անկման մասին 1475 թ. ուղարկած հաղորդման մեջ ասված էր, որ թուրքերին է տրվել 1011 կաշվե տոպրակներով լիքը դրամ, չհաշված թանկագին քարերը, ընդ որում յուրաքանչյուր տոպրակում եղել է 600 դուկատ: Այլ տեղեկությունների համաձայն, թուրքերը վերցրել են քաղաքի գույքի կեսը և 15-100 ասպր՝ յուրաքանչյուր բնակչից⁶:

1 Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 58:

2 "СЫН отечества", 1848, № 10, с. 67.

3 Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 58:

4 "СЫН отечества", 1848, № 10, с. 68.

5 Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 59:

6 Заседание одесского об-ва любителей истории и древностей, заседание 269, 2. III. 1893, с. 8.

Ջենովական աղբյուրներից քաղած նյութերը ամփոփելով՝ Վ. Խ. Կոնդորակին գրում է, որ թուրքերը քաղաքի 40 հազար բնակիչների տեղափոխեցին Կոստանդնուպոլիս: Տղաներին վերցնում են ենիչերուկայան, իսկ գեղեցիկ աղջիկներին՝ հարեմ¹: Թուրքերը չխնայեցին նաև Կաֆայի իտալացի բարձր պաշտոնյաներին. մասար՝ 0. Սկզբում չիաֆիկոյին նրանք կախեցին, իսկ հյուպատոս Կաբելային՝ քչեցին թիպարտուկայան²:

Թուրքական լուծը ծանր նստեց Կաֆայի հայ ազգաբնակչության վրա: Հայերի մարդկային կորուստները և զրկանքները հետագայում պահպանվել ու գրանցվել են ղրիմահայերի պատմություն-հիշատակարանում, որտեղ ասված է, թե խախտելով կնքած պայմանը՝ թուրքերը «Հանապազ հարկադրեցին իշխանաց մերոց ու ազնուականաց՝ դառնալ ի կրօնս մահմեդական. զի դիւրաւ նուաճել զմնացեալ գոհհիկս»: Կետիկ Ահմեդ փաշան ապա հրամայում է «թուրքաց և թաթարաց կոտորել զամենայն ազգս հայոց, որք ի նմին աւուր բազմամարդ քաղաքն Ֆեօդօսիայ սակաւաբնակ արարին. զի զծերս և զտղայս, զարս և զկանայս սրոյ ճարակ ետուն և զարիւնս նոցա յերկիր հեղեղեալ իբրև զվտակս գետոց ընթանայր ի փողոցսն...»³: Գերելով «անթիւ աղջիկք և մանկունք և մատաղ տղայք», թուրքերը նրանց նավերով տանում են Կ. Պոլիս: Ղրիմահայերի հիշատակարանի այս տեղեկությունը նույնությամբ հանդիպում ենք Ներսես Կաֆայեցու «Ողբ մայրաքաղաքին Կաֆայու» տաղում.

Կտրիչ մարդիբըն մորդեցին, զլուստր և որդիքն ժողովեցին,

Զժօրն զլուխն կտրեցին, զորդիքն՝ աւին և գերեցին,
Անխնա ժողովեցին, զերկու եղբայրքն ի մէկ տեղին,

1 Кондорак В. Х. Указ. соч., с. 37.

* Մասաբը ֆինանսական կառավարիչ էր և համարվում էր Կաֆայի հյուպատոսի առաջին տեղակալը:

2 «Արոր», 1911, № 10-11, էջ 110:

3 Մատենադարան, ձեռ. № 7442, Թ. 281բ-282ա:

Զնորայսակ հարսն ու փեսան լալով առին ի նաւ
դրին¹:

Կաֆացիների բախտին արժանացան նաև Կաղարա-
թի և Սուրխաթի հայերը²: Դրիմի երբեմնի զուտ հայկական
գյուղաքաղաք Կաղարաթը, հաւանաբար, այդ ժամանակ է
քարուքանդ դարձել և ավերակների վերածվել, որովհետև
16-18-րդ դարերի ձեռագրերում այդ անվամբ բնակավայր
այլևս չի հիշատակվում:

Դրիմի այս անցքերից մի փոքր ուշ՝ 1476 թ., սուլ-
թան Մուհամեդը «ծովով եւ ցամաքով» հարձակվում է «Ի
Ստեֆան ի վոյվոտային վերայ», այսինքն, Մուղավիայի
վրա³, մտնում է երկիրը, ավերում և կոտորում բնակչու-
թյանը, որից, իհարկե, չէին կարող խուսափել նաև այնտեղ
ապրող հայերը: Մուղավահայերը առավել մեծ զրկանքներ
ու զոհեր են կրում և տեղահանության ենթարկվում Մու-
համեդի հաջորդ սուլթան Բայազետի օրոք: 1484 թ. Դանու-
բի գետաբերանի նավահանգիստ Կիլիան դրավելուց հետո
թուրքերը բազում զորքով հարձակվում են Ակերմանի վրա:
Գրիգոր Դարանաղցու ասելով, սուլթանը «զհոն եղած հա-
յերին սուրկուն արար (այսինքն՝ արտաքսեց — Վ. Մ.), եւ
զհոռոմքն այլ եւ զինչ ազգ որ այնդ կային՝ դամէնքն կնոջ-
մովք և տղայմովք՝ դամէնքն հանեց եւ երեր յԸստամբօլս»⁴:

* * *

Լատինամետ պատմաբանները, անտեսելով 15-րդ
դարի կեսերին եվրոպայում և Մերձավոր արևելքում տեղի
ունեցած իրադարձությունների էությունը, այն միտումնա-
վոր կարծիքն են հայտնել, թե Կաֆայի անկման պատճառ-

1 Մատենադարան, ձեռ. № 7709, թ. 58:

2 Նույն տեղը, ձեռ. № 7442, թ. 282ա:

3 Գ Ր Ի Գ Ո Ր Դ Ա Ր Ա Ն Ա Ղ Կ Ի, Ժամանակագրութիւն, Երու-
սաղեմ, 1915, էջ 11:

4 Նույն տեղը, էջ 12:

ներից մեկը եղել է քաղաքի մի քանի հայ մեծահարուստների դավաճանությունը: Այս կարծիքը առաջ քաշող հեղինակները ուղղակի կամ անուղղակի իրենց այդ պնդումը «հիմնավորել են» հայ եպիսկոպոսական աթոռի թեկնածուի առիթով 1471-1475 թթ. Կաֆայի հայ գաղութում բորբոքված պայքարով:

Հայտնի է, որ տակավին 15-րդ դարի սկզբներից զրիմահայերը, մանավանդ թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շերտում հաստատվածները, սկսում են դիմադիր կանգնել պապական քարոզիչներին, որոնք 1318 թ. Կաֆայում հաստատված եպիսկոպոսությունը¹ դարձնելով հենակետ՝ լայն գործունեություն էին ծավալել այլազգիներին կաթոլիկացնելու ուղղությամբ: Ներհակությունը մի կողմից հայ ազգաբնակչության (որի թիվը, ինչպես ասել ենք, միայն Կաֆայում նրա անկման նախօրյակին հասնում էր շուրջ 46 հազարի)², իսկ մյուս կողմից Ղրիմում գործող կաթոլիկ հոգևորականության ու ջենովական պաշտոնեությունից միջև ափելի բացահայտ կերպարանք է ստանում Կաֆայի անկմանը նախորդող տարիներին (1471-1475 թթ.), երբ քաղաքի ջենովական գաղութային վարչակարգը ուղղակի միջամտում է եպիսկոպոսական աթոռի թեկնածուի շուրջ հայկական համայնքում ծայր առած պայքարին: Վերջինս տեեց մոտ հինգ տարի և քաղաքի հայությունը բաժանեց երկու մասի մի կողմում գործում էր հայ առևտրավաշխառուական վերնախավի ամենից ավելի զորեղ և ջենովական պաշտոնեության ու առևտրական կապիտալի հետ կապված մասը, բանկիր Կուլթուկ-բեյի որդի Կայարեսի գլխավորությամբ, իսկ մյուսում՝ քաղաքի աշխատավոր հայ զանգվածները: Այսպիսով, եպիսկոպոսական աթոռի թեկնածուի առիթով ծայր առած հակամարտությունը ըստ էության սոցիալական էր: Այդ պայքարին Կաֆայի գաղութային իշխանության ցույց տված միջամտությունը, որի մասին մենք վստահելի տեղեկությունների ենք հանդի-

1 Heyd W. Geschichte des Levantehandels im Mittelalter. Stuttgart, 1879, S. 175.

2 Atti, t. VII, II, p. 343.

սլում հենց Կաֆայի բարձրաստիճան սլաշտոնյաների՝ հյուսստոս Կաբելայի և նրա հակառակորդ մասար Սկվարչիաֆիկոյի՝ այդ թվականներին Ջենովա ուղարկած իրարամերժ զեկուցագրերում¹, առավել խտացնում է հայ աշխատավորների դժգոհությունը լատինացիների հանդեպ:

Կաֆայի անկումը չի կարելի պատճառաբանել նաև տեղացի ազգաբնակչության, այդ թվում նաև հայերի՝ դեպի եկվոր ջենովացիներն ունեցած որոշակի հակակրանքով: Որքան էլ մեծ լիներ դեպի ջենովացիները տածած հակակրանքը, այնուամենայնիվ, թուրքական ահ ու սարսափի հանդեպ այն նսեմանում էր, որովհետև թուրքական տիրակալությունը նախ և առաջ նշանակում է մահ և դերություն, ազգային և կրոնական լլկում: Ուրեմն՝ ջենովացիների հանդեպ ունեցած որոշակի դժգոհությունը չէր կարող հայերին մղել դեպի թուրքական կողմնորոշում: Տվյալ դեպքում ջենովացիները, իհարկե, չարիքներից փոքրագույնն էին:

Այնինչ դեպի ջենովացիները հայերի ունեցած դժգոհությունն ու հակակրանքը, ինչպես նշեցինք, որոշ հեղինակներ փորձել են դարձնել հիմք՝ Կաֆայի անկման պատճառը համարելու նաև մի քանի հայ մեծահարուստների դավաճանությունը: Ռուսաստանի կաթոլիկների առաջնորդ Սեստրենցեկիչ-Բոդուշը իր «Տավրիայի պատմությունը» գրքում, հակասելով պատմական իրողությանը, գրում է. «Բայց երբ զորքերի հրամանատար դարձավ հայ ժողովրդի գլխավորներից մեկը, ապա փաշան կարողացավ համոզել՝ ցույց չտալ իսկական դիմադրություն, և շուտով նա հանձնվեց հաղթողի կամքին»²: Նրան հետևելով՝ Վ. Ս. Կոնդորակին գրում է, թե թուրքերը Կաֆան զրավեցին երեք օրվա ընթացքում, ծ հայ վաճառականների օգնությամբ: Նրա ասելով՝ անձնատուր եղողը զորքերի հայազգի հրամանատարն էր³: Առեղծված է մնում այն, թե հեղինակը

1 ИТУАК, № 55, сс. 147, 152, 163.

2 Сестренцевич — Богущ. История о Таврии. СПб., 1805, II, с. 209—210.

3 К он д о р а к и В. Х. Указ., соч., с. 37, 66.

ինչի հիման վրա է այդպիսի հայտարարություն անում: Եթե նա նկատի ունի մեծահարուստ Կայարեսի նման Կաֆայի 8-10 այն հարուստներին ու դրամատերերին, որոնց մասին նշում էր հյուպատոս Կաբելան 1475 թ. փետրվարի 12-ի իր նամակում, ապա դարձյալ հիմնավոր տարակուսանք է առաջացնում այն, թե ինչու հեղինակը նրանց դավաճանություն մեջ է մեղադրում: Չէ՞ որ հյուպատոսը պարզապես նշում էր, որ քաղաքում այդպիսի հարուստներ կան, առանց որևէ ակնարկ անելու նրանց թուրքասիրության մասին: «Ժողովրդի մեծամասնությունը, - գրում էր հյուպատոսը, - Տեր Ոնանեսի (Տեր Հովհաննես - Վ. Մ.) կողմն է, և միայն հարուստների ու անհանգիստների ինչ-որ մի դյուռին պաշտպանում է երկրորդին»¹: Կոնդորակին հետևող հեղինակների այդ կարծիքը իրավացիորեն վիճարկում է 1848 թ. «Сын отечества»-ում տպագրված «Խտալացիների առևտուրը 13-14-րդ դարերում» ուսումնասիրության անանուն հեղինակը: Նա ընդգծում է, որ իտալական աղբյուրներում և ջենովական տարեգրություններում 8 հայ վաճառականների դավաճանության մասին ոչինչ չկա²: Ն. Ն. Մուրզակեիչը հայտարարում է, թե Կաֆան թուրքերը գրավեցին մի քանի հայերի դավաճանությամբ. «Հունիսի 6-ին, - ասում է նա, - Կաֆայի կառավարությունը հանկարծ առաջարկում է քաղաքի անպայման հանձնում հույս դնելով հաղթողի մեծահոգության վրա: Այդ արարքի մեղավորներին համարում են Սկվարչիաֆիկոյին և մի քանի հայերի»³: Նա ևս լռում է, թե ինչ աղբյուրներից է ինքն այդ տեղեկությունը քաղել: Ակնհայտ է, որ երկուսն էլ անճիշտ եզրակացություններ են անում հայ եպիսկոպոսական աթոռի շուրջ ծագած վեճից և անհիմն կերպով նույնացնում վերոհիշյալ վեճը շահելու և քաղաքը թուրքերին հանձնելու բոլորովին այլ բովանդակություն ու խնդիրներ ունեցող միմյանցից տարբեր հարցերը: Ն. Մուրզակեիչը

1 ИТУАК, № 55, с. 164.

2 "Сын отечества", 1848, кн. 10, с. 68.

3 М у р з а к е в и ч Н. Указ. соч., с. 79.

աճեցան և, որ Կաֆայի կառավարութիւնը նախ և առաջ հյուպատոսն էր, և եթե նա ստիպւած է եղել համաձայնել թուրքերի առաջարկութիւններին, ապա դա, բնականաբար, թելադրւում էր ստեղծված իրադրութեամբ:

Այսպիսով, շարադրվածից միանգամայն պարզ է դառնում, որ Կաֆա քաղաքի անկումը անմիջականորեն պայմանավորված էր սոցիալ-տնտեսական և արտաքին քաղաքական այն ծանր կացութեամբ, որ ստեղծվել էր Զենովայի սեծովյան դաղթավայրերի համար 15-րդ դարի կեսերին:

* * *

Արդ, 1778 թ. Ղրիմից հայերի արտագաղթեցման մասին:

Ղրիմը Ռուսաստանին միացնելու պատմութիւնը երկարատեւ պրոցես էր՝ 300 տարի: 1778 թ. թերակղզուց քրիստոնյաների՝ հայերի և հույների դուրսբերումը այդ պատմութեան օղակներից մեկն էր, իսկ 1783 թ. Ղրիմի միացումը Ռուսաստանին՝ նրա վերջին՝ լուծված հանգույցը:

15-րդ դարում Հյուսիսային մերձսեծովյան տարածքները՝ սակավաբնակ «Վայրի տափաստանը» («Ղիչաղյան դաշտը») և սեծովյան առափնյան, նվաճեցին օսմանյան թուրքերը: Փաստորեն դրանով ավարտվեց Օսմանյան կայսրութեան տարածքային ձևավորումը, որ նշանակում էր, թե Արևելյան հարցը դուրս է եկել մերձսեծովյան շրջանակից, և նրա պայքարի ճակատը ընդլայնվել է՝ ներառելով Զիբլարթարից մինչև Վոլգա ընկած տարածքները: 16-17-րդ դարերում թուրքիան դիտարկվում էր որպես թե՛ եվրոպական և թե՛ հեիզե վերընթաց ուղի բռնած Ռուսաստանի թշնամի: Բայց եվրոպական պետութիւնները ի դեմս Ռուսաստանի տեսնում էին իրենց դաշնակցին մինչև այն պահը միայն, քանի դեռ նրանց սպառնում էր թուրքա-

կան վտանգը¹: 18-րդ դարից սկսած, Ռուսաստանի հզորացմանը համընթաց, նրանք պայքարի սլաքը սկսեցին ուղղել Ռուսաստանի դեմ՝ ի պաշտպանություն թուրքիայի: Տարբեր վայրիվերումներով և նպատակադրումներով Արևմուտքի թուրքամետ այդ դիրքը շարունակում է առ այսօր՝ երբեմն-երբեմն նեցուկ ունենալով նաև Ռուսաստանի թուրքադիջող մարտավարական քայլերը:

Նկատենք, որ Սև և Ազովի ծովերի մերձակա տարածքների գրավմամբ Օսմանյան կայսրության աշխարհաքաղաքական խնդիրն այստեղ համարվել էր ավարտված, և նվաճումներից կայսրությունն անցել էր ստրատեգիական պաշտպանության՝ զավթածը պահելու խնդրին համեմատ: Վերջինիս կարևոր օղակներից մեկը Ռուսաստանի դեմ ուղղված պայքարը «Վայրենի տափաստանից» բուն ռուսական շրջաններ տեղափոխելն էր: Դրա համար Օսմանյան կայսրությունը, զինված ուժերից բացի, օգտագործում էր իրենից կախյալ և կիսակախյալ վիճակում գտնվող Ղրիմի, Աստրախանի և Կազանի խանությունները²: Օսմանյան պաշտպանական ստրատեգիան բավական երկար ժամանակ դրսևորվում էր դեպի ռուսական տարածքներ թաթարների ձեռնարկած պարբերական ավերիչ արշավանքների տեսքով:

Համեմատաբար արագ հաշիվ տեսնելով Կազանի (1552 թ.) և Աստրախանի (1556 թ.) խանությունների նկատմամբ, Ռուսաստանը իր առաջխաղացումն ուղղեց դեպի հարավ՝ պաշտպանական սահմանագիծը անընդհատ տեղաշարժելով թուրք-թաթարական սպառնալիքին ընդառաջ: Հյուսիսային սևծովյան տարածքից, որ շուտով պիտի կոչվեր Նովոռուսիա, նվաճված հողերի վրա կառուցվում էին քաղաքներ, ագարակներ: Քաղաքական նման գործընթացը քայքայում էր այս տարածաշրջանում Օսմանյան կայսրության պաշտպանական սահմանը, և Ռուսաստանը դան-

1 Никифоров А. Р., Мальгин А. В., Киселев С. Н. Три проекции крымской идеи. Симферополь, 1995, с. 55–56.

2 Նույն տեղը, էջ 57:

դադ, բայց անշեղորեն մոտենում էր Սև ծովին: Եվ Ղրիմի թերակղզուն տիրանալը գնալով դառնում էր Ռուսաստանի արտաքին-քաղաքական կարևորագույն խնդիրներից մեկը ամբողջ 18-րդ դարում, Արևելյան Հարցի ընկալման և լուծման այդ նոր փուլում: Այն բանից հետո միայն, երբ «Վայրենի տափաստանից» նորերս իրացված տարածքներում ռուսները ստեղծեցին անհրաժեշտ հենակետեր (քաղաքներ, գյուղեր, ավաններ և այլն), հնարավոր դարձավ ձեռնարկելու Ղրիմի միացումը ռուսական կայսրությանը: Բոլորովին էլ պատահական չէ այն, որ Ղրիմ-Գիրեյի վերջին արշավանքն արդեն ուղղված էր այսպես կոչված Նոր Սևրբիեյի (այժմյան Կիրովոգրադի շրջան) դեմ, որը վերաբնակիչները նվաճել էին տափաստանից 18-րդ դարի կեսերին: Միանգամայն ճիշտ է այն կարծիքը, թե Ղրիմի նվաճումը չէր, որ ուղի հարթեց Հյուսիսային մերձսևծովյան տարածքների գաղութաբնակեցման համար: Այդ պահին այդ գաղութաբնակեցումն արդեն սկսված էր: Ռուսական զենքի հաջողությունները պարզապես թույլ տվեցին հաղթահարելու Ղրիմի խանություն և Թուրքիայի զինված դիմադրությունը, որն ուղղված էր հենց այդ պրոցեսի դեմ¹:

Եթե Բալթիկան Ռուսաստանի համար պատուհան էր դեպի Եվրոպա, ապա Սև ծովը, որը փակված էր Բոսֆոր-Դարդանելով, դեպի Եվրոպա տանող դարպասն էր: Ղրիմը դարձել էր Արևելյան Հարցի լուծման բանալին:

1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի և դրան հաջորդած իրադարձությունների բերումով շուրջ 600-ամյա գոյատևումից հետո ղրիմահայ գաղթօջախները հեռացան պատմություն թատերաբեմից՝ դառնալով վերը նշված իրադարձությունների խաղաքարտն ու զոհը:

Դեռ պատերազմը շարունակվում էր, երբ Եկատերինա 2-րդը իր Փափորիտ Գ. Ա. Պոտյոմկինի խորհրդով հղանում է Ղրիմը Ռուսաստանին միացնելու միտքը: Դրա համար պետք էր Ղրիմի խանությունն ազատել նրա 300-ամյա կախվածությունից Թուրքիայից: «Մենք խելամիտ համա-

¹ Նույն տեղը, էջ 58-59:

րեցինք փորձ անել՝ չի՞ կարելի արդյոք խախտել Ղրիմի և
Թաթարական բոլոր ժողովուրդների հավատարմությունը
դեպի Բարձր Դուռը՝ նրանց ներշնչելով իրենց անկախա-
ռավարություններն ստեղծելու միտքը»,- գրում էր կայս-
րուհին կոմս Ն. Ի. Պանինին այդ օրերին:

1774 թ. Քուչուկ-Կայնարջի պայմանագրով Ղրիմի
խանությունը հռչակվեց անկախ: Ռուսական քաղաքակա-
նության առաջին կետը իրագործված էր, քանի որ Թերակղ-
զին միացնելու պրոցեսում այժմ Ռուսաստանը գործ էր ու-
նենալու միայն Գիրեյների հետ՝ չըջանցելով Թուրքիային:
Բայց այդ գործընթացը տևեց զրեթե մեկ տասնամյակ՝
մինչև 1783 թ. և հենց այդ տասնամյակում էր, որ Ղրիմը
Ռուսաստանին միացնելու խնդրից ելնելով՝ ռուսական կա-
ռավարությունը 1778 թ. ձեռնարկեց Թերակղզուց նրա
քրիստոնյա բնակիչներին Ռուսաստան տեղափոխելու ան-
հեռատես քայլը: Գործի գլուխ անցավ Ա. Վ. Սուվորովը, և
տակավին 1775 թ. ռուսական զորքի ուղեկցությամբ Կու-
բանում խան հռչակված Շահին-Գիրեյը, հակառակ Թաթա-
րական ավագանու ցանկության, բերվեց Ղրիմ և բազմեց-
վեց խանական գահին: Թուրքական դրածո Դեվլեթ-Գիրեյը
հարկադրված էր հեռանալ Թուրքիա:

1777 թ. Թուրքիայի սադրանքով և աջակցությամբ
Ղրիմում բարձրանում է խռովություն, հաջորդ տարում
խռովարարները պարտվում են, և Ա. Վ. Սուվորովը նշա-
նակվում է Ղրիմի ու Կուբանի ռուսական զորքերի ընդհա-
նուր հրամանատար²:

ժամանակի բոլոր փաստաթղթերը վկայում են, որ
քրիստոնյա բնակչության հեռացումը Թերակղզուց Թաթար
խանին դնում էր ֆինանսական կախվածության մեջ Ռու-
սաստանից, դարձնում նրա կամակատարը և դյուրացնում
ստանալու խանի համաձայնությունը քրիստոնյաներին Թե-
րակղզուց դուրս բերելու մասին: Ռուսաստանի կայսերա-

1 Смирнов В. М., Крымское ханство под верховен-
ством оттоманской порты в XVIII в. Одесса, 1889, с. 119.

2 Նույն տեղը, էջ 167-168:

կան ակադեմիայի թղթակից-անդամ Ն. Դուբրովինը, որը կազմել և հրատարակել է «Ղրիմի միացումը Ռուսաստանին» փաստաթղթերի չորսհատորանոց ժողովածուն և քաջատեղյակ էր Ղրիմի համար Ռուսաստանին մղած պայքարի ամբողջ գրադրությանը, նշում էր, որ Թուրքիայի դեմ Ղրիմի համար մղված պայքարի եռուն շրջանում ռուսական կառավարությունը կարողանում է քրիստոնյաներին թե՛րակղզուց դուրս բերելու հետևանքով Շահին-Գիրեյին դնել իրենից կախյալ վիճակում: Նա ընդգծում է, որ հայերի և հույների «աշխատանքի արդյունքները կազմում էին խանի եկամուտների գլխավոր հոգվածները», քանի որ քրիստոնյաների ձեռքում էին գտնվում «Ղրիմի ամբողջ լեռնային մասի արդյունաբերությունը, այգեգործությունը և հողագործությունը: Նրանց արտագաղթեցմամբ ամբողջ այդ արտադրությունը թուլանում էր, և խանի եկամուտները սահմանափակվում էին»: Ն. Դուբրովինը հարկավոր է համարել նշել, որ «պատրվակ բռնելով այն վտանգը, որին ենթարկվում էին քրիստոնյաները թաթարների ամեն տեսակի խռովությունների ժամանակ, ռուսական կառավարությունը կարողանում է Ղրիմից Ռուսաստան տեղափոխել 30.000 հայերի և հույների: Սկզբնական շրջանում խանին վճարեցին բոլոր վնասները, իսկ ազդեցիկ անձանց նշանակեցին նվերներ»¹:

Փաստերի լույսի տակ նույն կարծիքին էին բոլոր լուրջ հեղինակները: Օրինակ, Ա. Մարկևիչը գտնում էր, որ քրիստոնյաների արտագրական գործունեությամբ էին ապահովվում խանի եկամուտները, և նրանց հեռացմամբ խանը զրկվում էր այդ եկամուտներից և ընդմիշտ դրվում «Ռուսաստանից կախյալ վիճակի մեջ»:

Սա էր իրողությունը, որի սլառառուով հօդս է ցնդում Եկատերինա 2-րդի իբրև քրիստոնյաների «պաշտ-

1 Присоединение Крыма к России. Рескрипты, письма, реяляции и донесения. М. I-IV, СПб., 1887—1896. Т. 1, 1775—1777, с. V.

2 Екатеринославские губернские ведомости, газета, 1872, № 16.

պանի» և «ազատության» կողմնակցի վերաբերյալ տարածված կեղծ մտայնությանը, ըստ որի՝ կայսրուհին արտագաղթեցումը կատարել է իբր դեպի քրիստոնյա ժողովուրդներն ունեցած սիրուց և բարի զգացմունքներից մղված:

Ղրիմից քրիստոնյա բնակչության արտագաղթեցման լուրջ պատճառ չի կարելի համարել Նովոռուսիայի և Ազովի նահանգների բնակեցումը: Եթե այդպես լիներ, ապա կառավարությունը այդ քայլին կղիմեի դեռևս 1770-1771 թթ., երբ ռուսական զորքը գտնվում էր Ղրիմի գրեթե բոլոր հիմնական կետերում: Հայ և հուլյն համայնքները 1778 թ. օգոստոսին Շահին Գիրեյին հասցեագրած իրենց նամակում հայտնում էին, թե եթե Ռուսաստանի ցանկությունը իրենց տեղափոխելը լիներ, ապա նա այդ կաներ «թուրքական պատերազմի ժամանակ»¹:

Հարցի լուծումը գործնական ընթացք ստացավ միայն 1777-1778 թթ.: Հայ և հուլյն համայնքները, հակառակ իրենց ընդգծված ռուսական կողմնորոշմանը, սկզբնապես չէին ուզում տեղահանվել: Դիմադրում էր նաև Շահին-Գիրեյը: Արտագաղթեցման գործի գլուխ կանգնեցին Ռումյանցև-Ջադուենայսկին, Ա. Վ. Սուվորովը և Ղրիմում ռուսական ռեզիդենտ Ա. Դ. Կոնստանտինովը:

Հայ քահանաների՝ Շահին-Գիրեյին ուղղված խնդրագրի համաձայն, հայերի մեծ մասը դիմադրում էր, չէր ուզում հեռանալ: Միայն 1778 թ. հուլիսի 22-ին Շահին-Գիրեյը ստանում է ռուսական կողմի պաշտոնական ծանուցումը հայերին և հուլյներին Ռուսաստան տեղափոխելու մասին, թեև արդեն հուլիսի 17-ին Սուվորովը ղեկուցել էր, որ վերաբնակեցվողները ցուցակագրված են և պատրաստ են արտագաղթեցման:

Կանգնելով փաստի առաջ՝ խանը, դիվանագիտական ճնշման պայմաններում, ի վերջո զիջում է. դրանում էական դեր են խաղում դրամական խոստումները: Հուլիսի 28-ին խանը հրամանագիր է արձակում Ղրիմի քրիստոնյաների կամավոր տեղափոխության մասին:

¹ Присоединение Крыма к России, т. II, с. 581.

Հայերի կողմից արտագաղթեցմանը դիմադրելը չպիտի շփոթել նրանց ռուսական կողմնորոշման հետ. պատերազմի բռն ընթացքում նրանք ամեն ինչ արել էին օգնելու ռուսական զորքի հաղթանակին: Ղրիմահայոց նպատակը Ղրիմում ռուսական տիրապետության հաստատումը տեսնելն էր, իրենց համար անտանելի թաթարական բռնության վերացումը, բայց երբեք իրենց համար դարավոր հայրենիք դարձած Ղրիմը լքելը: Ռուսական զորքի ներկայութիւնը նրանց մոտ ստեղծել էր այն հիմնավոր մտայնութիւնը, որ միևնույն է՝ վաղ թե ուշ թերակղզին միացվելու է կայսրութեանը: Դա շատ լավ դիտեր մանավանդ քաղաքական իրավիճակին քաջ իրազեկ Ղրիմահայ վաճառականութիւնը, իսկ նրա միջոցով նաև ողջ Ղրիմահայութիւնը, որի հիմնական զանգվածին տեղահանութիւնը բերելու էր լիակատար քայքայում: Դեպքերին ականատես կարաիմ հեղինակ Ռաբի Ազարիան գրում էր. «Գյուղերում ապրող հայերն ու հույները, աղքատներն ու արհեստներով զբաղվողները չէին ուզում վերաբնակեցվել այլ երկիր, որովհետև նրանցից շատերն ունեին բանջարանոցներ, այգիներ և արտեր, որոնք նրանց եկամուտներ էին բերում: Նրանք բոլորը հավաքվել էին խանի մոտ և խնդրում էին չթողնել իրենց և ասում էին, թե ցանկանում են մնալ որպէս նրա հպատակներ»¹: Այս տողերի հեղինակը այն անձն է, որի նույն հաղորդման մեջ լայն տեղ է տրված պատերազմի ժամանակ ռուսական զորքերին հայերի ցույց տված օգնության նկարագրութեանը և նշված է, որ հայերն ու հույները, ռուսների հետ միացած, կռվում էին թուրք-թաթարական զորքերի դեմ²:

Սկզբում տեղահանման հետ չէին համաձայնում նաև հայերի հոգևոր առաջնորդները՝ Պետրոս վրդ. Մարկոսյանը և Հակոբ Վարդերեսեակիչը (հայ կաթողիկոսների առաջնորդը): Սակայն առատ վարձատրութիւնը (կաշառքը) և հորդորներն ու սպառնալիքը, այնուամենայնիւ, վճռա-

1 События случившиеся в Крыму... с. 127.

2 Նույն տեղը, էջ 126:

կան դեր են խաղում: Հռենաց միտրոպոլիտը ստանում է 6550, Պետրոս Մարկոսյանը՝ 2820, իսկ Հակոբ Վարդե-րեսեիչը՝ 1250 ու¹: Սրանց ուղեկցում են այն ահաբեկիչ սուլտ լուրերը, թե իրր ռուսական զորքերը թողնելու են թե-րակղզին, և որ թաթարները խոստացել են կոտորել քրիս-տոնյաներին այն բանի համար, որ նրանք պատերազմի և վերջին խռովության ժամանակ օգնե՞ն ռուսներին: Այս լուրերի առաջին հեղինակներից մեկը ինքը՝ Սուլթորովն էր՝ Ռուսական հանձնարարությամբ:

1778 թ. հուլիսի 16-ին հայ և հույն համայնքների հիմնական մասը ստիպված տալիս է իր գրավոր համաձայ-նությունը Ռուսաստան տեղափոխվելու մասին՝ միաժամա-նակ Ա. Վ. Սուլթորովին ներկայացնելով հետևյալ պահանջ-ները.

1. Բնակության վայր նշանակել Ազովի նա-հանգում Դնեպր, Սամար և Օրել գետերի միջև ընկած տա-րածքը: Վճարել այն շարժական և անշարժ գույքի դիմաց, որ իրենք կորցնելու էին տեղահանման պատճառով: Թույլ տալ հիմնելու քաղաքներ ու գյուղեր զուտ հայ և հույն բնակչությամբ, ազատ կերպով զբաղվելու երկրագործութ-յամբ, առևտրով, արհեստներով, ձկնորսությամբ, անվճար օգտվելու անտառներից:

2. Ծանաչել համայնքների հորդեոր առաջ-նորդներին:

3. Ազատել բոլոր տեսակի հարկերից և պար-հակներից՝ տասը տարի ժամանակով:

4. Ազատել զորակոչից, նշանակել այն հարկա-չափը, որ իրենք վճարելու էին 10 տարի հետո²: Հարկերի գանձման գծով ունենալ իրենց պետերին, որոնք հաշվետու էին նահանգական իշխանության առաջ:

Այս առաջարկությունների հիմնական մասը տարի ու կես հետո պաշտոնական ձևակերպում գտավ 1779 թ. նո-յեմբերի 14-ի հրովարտակում:

¹ Присоединение Крыма к России, т. II, с. 752.

² Նույն տեղը, էջ 556-557:

Սակայն նույնիսկ համաձայնություն տալուց հետո էլ հայ և հույն համայնքների մի մասը շարունակում էր դիմադրել տեղահանությանը: Նրանց քահանաները թաթարների ավագանուն հայտնում են, թե հայերի մի մասը չի ուզում գաղթել և խնդրում է օգնել իրեն: Հուլիսի 18-ի իրենց խնդրագրում հայերը իմիջիայլոց հայտնում էին, թե «Թեկուզ մեզ սրով էլ սկսեն կոտորել, մենք ոչ մի տեղ մտադիր չենք գնալ»¹: Շահին-Գիրեյը այս օրերին Ռումյանցեի տրամադրության տակ է դնում հայերից և հույներից ստացված խնդրագրերի ինքնօրինակները: Կամավորության սկզբունքը խախտելու և հայերից ու հույներից հարկադրանքով տեղափոխման համաձայնություն կորզելու մասին բողոքի մի նամակ թաթարական համայնքը հունիսի 28-ին ուղղել էր Եկատերինա 2-րդին՝ հենվելով հայ և հույն համայնքների այն բողոքների վրա, որոնցով նրանք խնդրել էին կանխարգելել Սուվորովի, ռեզիդենտի և հույների միտրոպոլիտի կողմից իրենց տեղահանելուն ուղղված ձեռնարկումները²: Նամակում թաթարները իմիջիայլոց հայտնում էին, որ «վերաբնակվել չուզողներին» և «իրենց երկրում հպատակ մնալ ցանկացողներին բռնությամբ վերաբնակեցնելու մասին նրանց բոլոր խնդրանքները հաշվի չեն առնվում ռուսական հրամանատարության կողմից»:

Ֆելդմարշալ Ռումյանցե-Ջադուենայսկին հարկադրված էր սեպտեմբերի 7-ին մի շրջաբերականով ռեզիդենտ Կոնստանտինովից պահանջել խուսափել «բռնությունից և հարկադրանքից», գործել օգոստոսի 5-ին Սուվորովին տված իր հրահանգների ոգով, որոնք պահանջում էին հարկադրանքի փոխարեն քրիստոնյաներին վախեցնել թուրք-թաթարական վտանգով, իսկ խանին հասկացնել, որ տեղահանումից առաջացած ֆինանսական վնասը կփոխհատուցվի տասնապատիկ անգամ: Ռումյանցեը իր հրահանգում Սուվորովին խորհուրդ էր տվել խանին և նրա կառավա-

1 Նույն տեղը, էջ 580:

2 Նույն տեղը, էջ 608:

3 Նույն տեղը, էջ 581:

րությանը ներշնչել ու տեսք ընդունել, որ «քրիստոնյաները վերաբնակեցվում են ոչ թե մեր (ռուսական կողմի — Վ. Մ.) դրդմամբ, այլ ահից, որ նրանց սպառնում է թուրքական վրիժառությունը», և որը իբր թե ստիպել է նրանց «Ռուսաստանից ապաստան խնդրել»¹:

Արտագաղթեցվող հայերն ու հույները պահանջում էին տված խոստումները հաստատել հրովարտակով՝ անվատահուլթյուն հայտնելով դրանց նկատմամբ: Օգոստոսի 3-ին (1778 թ.) Ռուսականցւոյ գրում էր Գ. Ա. Պոտյոմկինին, թե «քանի դեռ նրանք (քրիստոնյաները — Վ. Մ.) չեն տեսնի նորին մեծության ձեռքով հաստատված սրբազան հրովարտակը, չեն համաձայնվի այստեղից հեռանալ»²:

Միաժամանակ ավելանում էին ծախսերը: Պետք էր մարել նաև թաթարներից հայերի և հույների կողմից փրկագնած քրիստոնյա գերիների դիմաց գոյացած պարտքերը, հարց, որը ռուսական կառավարության առաջ ծառանում էր նաև բարոյական հայեցակետից: Եվ իսկապես, հոգ էր կարելի «քրիստոնյաներին ազատագրելու» լողունգի ներքո հայերին և հույներին դուրս բերել թերակղզուց, իսկ նրանց կողմից ապառիկով փրկագնած նույն քրիստոնյա գերիներին թողնել գերության մեջ: Այդ դեմքը կազմում էր 10 հազ. ռուբլի: 80 հազար ռուբլի էլ ռուսական կառավարությունը վճարելու էր քրիստոնյաների չհնձած արտերի դիմաց: Սակայն այստեղ կառավարությունը շահում էր. նա ստանում էր այդ արտերի հացահատիկն ու անասնակերը՝ ըստ Սուվորովի հաշվարկների՝ 100 հազար ռուբլու օգուտ³:

Բոլոր դժվարություններով հանդերձ, 1778 թ. օգոստոսի կեսերին սկսվում է քրիստոնյաների վերաբնակեցումը Ղրիմից, և սեպտեմբերի 18-ին Սուվորովը զեկուցում էր Ռուսականցւոյ, թե հայերի և հույների դուրս բերումը Ղրիմից ավարտված է և Ազովի նահանգ է ուղարկվել երկու սե-

1 Նույն տեղը, էջ 618-619:

2 Նույն տեղը, էջ 616:

3 Նույն տեղը, էջ 635-636:

ռի 31.098 մարդ, որից 12598 հայեր¹: Այս թվի մեջ չէին մտնում արտագաղթեցված կաթոլիկ հայերը՝ մոտ 2000 մարդ: Մնում էր անհայտ, թե որքան քրիստոնյաներ էին մնացել Ղրիմում:

Իրականում հայերին արտագաղթեցնելը ավելի հեշտ դուրս եկավ, քան նրանց տեղավորելը: Արտագաղթեցվածներին տեղաբաշխեցին վերը նշված դետերի միջև ընկած կիսաբնակ տարածքներում, տեղացիների տներում: Ազովի նահանգապետ Չերտկովը փորձում էր հայերի վրա դնել 21 հազար ռուբլու մաքս, նպատակ ունենալով անօրինական մաքսադրմամբ լռեցնել դաղթականների բողոքները Ղրիմում թողած իրենց ստանալիք պարտքը մարելու կառավարության խոստացած դրամի մասին: Օրինակ, գանձատուներ պարտավորվել էր հայերին վճարել 100 հազար ռուբլի՝ Ղրիմում տարբեր մարդկանց մոտ եղած պարտքերը նրանց: Սուվորովը պահանջում էր հայերին վճարել այդ պարտքերը: Հուլիսի 25-ին նա գրում էր Գ. Ա. Պոտյոմկինին, թե «վերջին խռովության ժամանակ փախած ու հեռացած թաթար չինովնիկները նրանց (քրիստոնյաներին — Վ. Մ.) պարտքեր են ունեցել, խանը նրանց կալվածքները, որպես խռովարարների դուռքի, վերագրել է իրեն: Այդ պարտքերը խանի փոխարեն պիտի վճարել քրիստոնյաներին»²: Իսկ Չերտկովը չէր ուզում դրանք վճարել, որովհետև գաղթեցումը արդեն կատարված փաստ էր, և քրիստոնյաները այլևս իրենց ձեռքում չունեին արտագաղթեցմանը համաձայնելու այն լծակը, որով կարողանային նրա վրա ազդել:

1779 թ. հունվարին արտագաղթեցված հայերի վիճակը սաստիկ վատթարացավ: Նրանք զգում էին սննդամթերքի մեծ կարիք, չունեին անասնակեր և ոչ էլ դրամ, և ձեռք քաշելով Չերտկովից՝ նրանք իրենց առաջարկների միջոցով հայցում էին հայասեր Գ. Ա. Պոտյոմկինի օգնությունը: Գ. Ա. Պոտյոմկինի ճնշմամբ դրամական օգնությունը ստացվում է, բայց ապրիլին այն դադարեցվում է:

1 Նույն տեղը, էջ 711-713:

2 Նույն տեղը, էջ 588:

1779 թ. ապրիլի 18-ին Սուվորովին հղած բողոք-համախոսականում հայ վերաբնակները հայտնում էին, թե ռուսական իշխանությունների կողմից տրված շատ խոստումներ (տներ հատկացնելը, դրամական նպաստ և սննդամթերք տալը և այլն) չեն կատարվում, որ իրենց հատկացված տեղերում ոչ ջուր կա, ոչ էլ անտառ: Ըստ համախոսականի՝ հայերի դրությունը այնքան էր ծանրացել, որ «անգամ նախկինում լավ վիճակ ունեցողները այժմ աշխարհով մեկ ողորմություն են հավաքում, իսկ մյուսները սովից ստիպված՝ ամենաանշան դրամով կամ հացով վաճառում են իրենց երեխաներին»¹:

Դնեպրի շրջան տեղափոխված հայերը 1779 թ. մայիսին նորից դիմում են Սուվորովին: Ի պատիվ իրեն՝ վերջինս քանիցս միջամտում է Գ. Ա. Պոտյոմկինի առաջ՝ հայերին օգնելու խնդրանքով: Դրությունը սաստկանում է նաև մորեխի պատճառով, որը ոչնչացնելով բերքը, գաղթականներին զրկում է կերակրվելու միջոցներից: Նահանգապետ Ջերտկովը հարկադրված էր կառավարությունից գաղթականների համար խնդրել 77.607 չետվերտ ալյուր և 7275 չետվերտ ձավարեղեն²:

Ամբողջ 1779 թ. ընթացքում ղրիմահայերը խնդրադրեր են ուղարկում Պետերբուրգ՝ իրենց խոստացած վայրերը տեղափոխելու համար: Մայրաքաղաք են գալիս նրանց պատվիրակներ Կարապետ Ոսկանովը և փառակեցի Հարությունը (սա Պետերբուրգում կնքում է իր մահկանացուն): Գ. Ա. Պոտյոմկինը մեծ ուշադրությամբ ունկնդրում է ղրիմահայոց խնդրանքներին: 1779 թ. գարնանը նա համաձայնություն է տալիս նրանց տեղափոխմանը իրենց խնդրած վայրը՝ Դոնի շրջանի Սբ. Դմիտրի ամրոցի շրջակայքի տարածք³: Սակայն այդ համաձայնությունը դործնական ընթացք չէր ստանում, և հայերը շարունակում էին

1 Центральный государственный архив древних актов России, ф. 16, е. х. 588, ч. XII, л. 322.

2 Նույն տեղը, թ. 308:

3 Նույն տեղը, թ. 322:

դիմումները Պոտյոմկինին, Սուվորովին, նաև Հ. Արզումանյանին և Հ. Լազարյանին:

Չնայած Գ. Ա. Պոտյոմկինի համաձայնությանը, Ազովի նահանգապետի օգնական Գերսևանովը ամեն տեսակի խոչընդոտներ էր հարուցում նշված տարածքը հայերին տրամադրելու խնդրում: Ավելին, նա հայ հողագործներին ստիպում էր ծխեր հիմնել Տերս գետի մոտերքը, իսկ իր կարգադրություները կատարելուց հրաժարվողներին հազցրել էր շղթաներ և աշխատեցնում էր փոսեր փորելու վրա: Նրա հրամանով 1779 թ. ապրիլից հայերին վտարել էին այն տներից, որոնցում նրանք ապրել էին 1778-1779 թթ. ձմռանը¹:

Հ. Լազարյանի և Հ. Արզումանյանի մասնակցությամբ ղրիմահայ պատվիրակները մշակում են իրենց «պահանջները» (կոնդիցիաները) և դրանք ներկայացնում Եկատերինա 2-րդին: Առևտրի, մանուֆակտուրայի և երկրագործության զարգացման բնագավառում այդ փաստաթուղթը պարունակում էր բուրժուական ազատ զարգացման միտումներ: Կոնդիցիաներում դրված էր լիակատար ազատության պահանջը՝ ներքին և արտաքին առևտրում, նավարկության, մանուֆակտուրային արտադրության հիմնման և այլ բնագավառներում:

Կանգ չառնելով 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակի ստեղծման պատմության վրա՝ միայն նշենք, որ իրոք այն լայն հեռանկարներ բացեց Ղրիմից ելած, բայց արդեն Դոնի շրջան անցած հայության զարգացման առաջ և հնարավորություն տվեց Նոր Նախիջևանին ու նրա հինգ հայկական գյուղերին որոշ ժամանակ անց դառնալու Հարավային Ռուսաստանի բարգավաճ շրջաններից մեկը:

Սակայն սա հարցի մի կողմն է միայն, և երբեք չի կարող արդարացնել Ղրիմից քրիստոնյաներին տեղահանելու կառավարության քաղաքականությունը: Ժամանակի շրջահայաց պաշտոնյաներից մեկը՝ Պավել Սումարոկովը, ո-

1 Նույն տեղը, թ. 319:

2 Դ ի լ ո յ ա ն Վ. Ա., Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, Երևան, 1966, էջ 144-148:

ըը Ղրիմը Ռուսաստանին միացումից մի քանի տարի անց պաշտոնավարում էր այնտեղ և քաջատեղյակ էր վիճակին, տվել է երևույթի հետևյալ դիպուկ ու ճշգրիտ բնութագիրը. «Ռուսաստանը, չսպասելով քաղաքական հաշիվների փոփոխությանը, խելամոռեն շտապեց Ղրիմից դուրս բերել հայերին և հույներին: Բայց հինգ տարի անց իր տարածքին միացած այս երկրամասը նրա առաջ կանգնեց դրանից (քրիստոնյաների տեղահանումից — Վ. Մ.) խոցված տեսքով: Ռուսաստանը ցնցվեց, տեսնելով, որ գուղերը դարձել են փլատակներ, այգիները՝ ավերակ անտառներ, արդյունագործությունը՝ ձրիակերություն, և համոզվեց, որ իր նոր հպատակներին նախքան որդեգրելը դատապարտել է որբության»¹: Ըստ Պ. Սումարոկովի, քրիստոնյաներին տեղահանելը, իր հետևից թողեց «փլատակներ, ամայություններ և անկում»²:

Այս վիճակը կառավարությանը ստիպեց դանդաղ, բայց այնուամենայնիվ ուղղել սխալը, դիմել գործնական քայլերի: Նախ և առաջ միջոցառումներն ուղղված էին թերակղզին բնակեցնելու խնդրին: Թեոդոսիան հայտարարվեց պորտո-ֆրանկո, հողատարածություններ հատկացվեցին Չերնիգովի և Վորոնեժի նահանգներից ելած վերաբնակիչներին: 1798 թ. փետրվարի 13-ին նույնիսկ մանիֆեստ ընդունվեց Ղրիմը օտարերկրացիներով բնակեցնելու մասին: Տնտեսական արտոնություններից դատ, օտարերկրյա գաղթականները ազատվում էին գինձառայությունից:

Հայերի աչքից չեն վրիպում Ղրիմում վերահաստատվելու և հնամենի գաղութը վերականգնելու նպաստավոր պայմանները: Նախ նշենք, որ տեղահանությունից հետո մոտ 1500-2000 հայեր տարբեր առիթներով խուսափել էին արտագաղթից և մնացել Ղրիմում: 18-րդ դարի վերջին և 19-րդ դարում հայերը մեծ և փոքր զանգվածներով սկսում են անցնել Ղրիմ: Ղրիմահայ այս նոր գաղթօջախ-

1 Павел Сумароков, Досути крымского судьи. Ч. I, СПб., 1803, с. 160.

2 Նույն տեղը, մաս II, 1805, էջ 106:

‘ ների համալրումը տեական պրոցես էր, որ շարունակվեց մինչև Մեծ եղեռնը:

Քննարկված հարցի առթիվ նկատենք հետևյալ պարագան. պատմության մեջ սակավ առ սակավ լինում են նաև դեպքեր, որոնք անկախ դրանց հեղինակների կամքից, հասցնում են բախտորոշ հետևանքների: Տվյալ դեպքում նկատի ունեմ ոչ միայն Նոր Նախիջևանի հզոր հայկական գաղութի առաջացումը, այլև այն, որ ղրիմահայոց այդ հիմնական հատվածը եկատերինա 2-րդի կառավարության վերը քննարկված միջոցառմանն է պարտական իր այսօրվա գոյությունը: Կասկածից վեր է, որ եթե 1778 թ. տեղի չունենար նրանց հեռացումը Ղրիմից, ապա 1944 թ. ապրիլին նրանք անպայման բաժանելու էին Ղրիմի իրենց հայրենակիցների դաժան ճակատագիրը՝ զանգվածային աքսորը դեպի Սիբիր, Ալթայ և Միջին Ասիա:

Պարագոքսալ, բայց միանգամայն ճիշտ հետևություն, որի բարոյականն այն է, թե պատմական դեպքերն ու իրադարձությունները պետք է դիտարկել և քննարկել իրենց ընդհանուր շղթայի մեջ՝ մերժելով որևէ սուբյեկտիվ և միակողմանի մոտեցում:

* * *

Միջնադարի ղրիմահայ գաղթօջախները որոշակի ներդրում ունեցան հայ մշակույթի զարգացման մեջ: Եվ ոչ միայն հայ մշակույթի: Լինելով վերջինիս անբաժանելի մասը՝ ղրիմահայոց մշակույթը միաժամանակ կապող մի կամրջակ էր համայն դիֆադի, սլավոնական աշխարհի և Արևելյան, որոշ առումով նաև Արևմտյան Եվրոպայի երկրների մշակույթների հետ՝ իր արժանի, որոշ դեպքերում նաև առաջատար մասնակցութունը ցուցաբերելով այդ լայնածավալ տարածաշրջանի մշակութային առաջընթացում: Դա նախ և առաջ պայմանավորված էր Եվրոպայի և Ասիայի միջև բուն Ղրիմի ունեցած աշխարհադրական դիրքով, նրա բնակչության ազգային խայտաբղետ կազմով: Հանդես գալով 12-13-րդ դարերից, հայերն այստեղ իրենց առևտրատն-

տեսական և մշակութային ժրաջան գործունեությամբ զգալիորեն սատարեցին Արևելքի և Արևմուտքի միջև թերակղզուն պատմականորեն բաժին ընկած կապող օղակի դերի ծավալումը: Խաղաղության, հույների, ռուսների, լեհերի և այլոց հետ մշտատես շփումները ղրիմահայերին, զարգացման ընթացքի բերումով, անխուսափելիորեն մղում էին արևմտյան մշակութային արժեքների առանձին դրսևորումների ազդեցության հետ մերձեցման, դրանց ներմուծմանը իրենց մշակութային զարգացման գործընթացներում: Ընթանում էր նաև հակադարձ երևույթը՝ հայ մշակույթի առանձին կողմերի ազդեցությունը եվրոպականի և թաթարականի վրա: Տվյալ դեպքում խոսքը մանավանդ վերաբերում էր շինարարական-ճարտարապետական առնչակցություններին:

Միջնադարին հատուկ մշակութային շատ բնագավառներ ղրիմահայ գաղթօթախների գոյատևման ավելի քան 600-ամյա ընթացքում որոշակի զարգացում ապրեցին: Տվյալ դեպքում խոսքը առաջին հերթին վերաբերում է մշակույթի այնպիսի դրսևորումներին, որպիսիք էին ճարտարապետութունը, գեղարվեստական գրականութունը, դիտութունը, ձեռագրական և կրթական գործը, մանրանկարչութունը: Հայաստանից և Հայկական Կիլիկիայից հետո Ղրիմը, հիրավի, միջնադարյան հայ մշակույթի ամենանշանավոր կենտրոնն էր: Թեև Ղրիմը այլազգի ժողովուրդների մի խառնարան էր, որի պատճառով մշակութային փոխազդեցություններն անխուսափելիորեն խաչաձևվում էին, սակայն այդուհանդերձ վերջիններս անկարող գտնվեցին խաթարելու հայոց մշակույթի ազգային դեմքը Ղրիմում:

Ղրիմահայոց կուլտուրական հարուստ ժառանգությունից համեմատաբար քիչ բան է հասել մեզ: Թուրք-թաթարական ասպատակությունները ժամանակի ընթացքում իրենց ավերիչ դերը կատարեցին ղրիմահայերի հոգևոր և նյութական մշակույթի կոթողների ոչնչացման գործում, և տվյալ դեպքում քիչ ասելով նկատի ունենք այն, որ դարերով ղրիմահայոց ստեղծած մշակութային վիթխարի ժա-

ռանգության համեմատությամբ պահպանվածը և մեզ հասածը իրոք քիչ է, բայց այդ քիչը խիստ հարաբերական է, և նույնիսկ այն, ինչ մեզ հասել է այդ ժառանգությունից, ընդհանրապես վերցրած, հսկայական մի գանձ է, որը կարող է պատիվ բերել կուլտուրական ամեն մի ժողովրդի: Մեզ են հասել և մեր ազգային մշակույթի ոսկե անդամատանում իրենց արժանի տեղն են գրավել հարյուրամյակների ընթացքում ղրիմահայ ժողովրդի մտքի ու ձեռքի ստեղծարար բազմաբեղունությունը վկայող հարյուրավոր ձեռագրեր, մանրանկարչական հիանալի գործեր, աշխարհիկ դրականության տասնյակ ու տասնյակ սքանչելի նմուշներ՝ հորինված գրեթե գրական հայերենով, ճարտարապետական բազմաթիվ կոթողներ, ժամանակի գիտական մտքին վայել աշխատություններ:

Փորձենք խիստ համառոտակի, որքան պատշաճում է սույն տիպի պատմագիտական աշխատությունը, տալ միջնադարյան ղրիմահայ մշակույթի ընդհանուր ուրվագիրը:

Ղրիմի հայկական գաղութը հայ գրչության և մանրանկարչության նշանավոր կենտրոններից էր: Ղրիմահայ գաղթօջախներում հայ գրիչները բեղմնավոր գործունեություն են ունեցել: Թուրք-թաթարական «դոդման և երերման» պահերին ծայր առած հրկիզումներից, այնուամենայնիվ, փրկվել և մեզ են հասել ղրիմահայերի ստեղծած շուրջ 300 ձեռագրեր: 1778 թ. Ղրիմից վերաբնակեցված հայերի հետ միասին այդ ձեռագրերից 226-ը փոխադրվում են Նոր Նախիջևան և ցուցակագրվում ռուսահայ թեմի առաջնորդ Հ. Արղուլյանի կողմից: 1920 թ. դրանք տեղափոխվում են Երևան և այժմ պահպանվում են Մաշտոցյան Մատենադարանում:

Ղրիմահայ ձեռագրերը ստեղծվել են 14-18-րդ դարերում: Հայ գրչության աչքի ընկնող կենտրոններ էին Կաֆան, Սուրխաթը, Ղարասուն և այլ վայրեր: Կաֆան առանձնանում է որպես հայ գրչության և մանրանկարչության առանձին մի դպրոց: Ղրիմեցի էին հայ գրչության և մանրանկարչության հայտնի ներկայացուցիչ Նատերը՝ որդիներով և թոռներով հանդերձ: Այս գերդաստանի բեղմնա-

վոր գործունեությունը այնքան զորեղ անդեցություն է ունեցել հետագա գրիչների վրա, որ 1718 թ. Ղրիմի հայկական թուփտի գյուղում Նատերներից 400 տարի հետո գրված մի ձեռագրի հիշատակարանում Ղրիմը հորջորջվում էր որպես «Նատերանց բնակարան»։ «Ի յերկիրս Ղրիմու, որ է բնակարան հինն Նատերանց և իմաստնացեալ գրչաց»¹։ Նույն՝ 14-րդ դարի անվանի գրիչներից էին Նատերի որդիները՝ Ավետիսը, Ստեփանոսը, Հովհաննեսն ու Գրիգորը, նրա թոռ Հավհաննեսը, ինչպես նաև Գրիգոր Սուքիասացը, Սիմոնը և այլք։ 15-րդ դարը նույնպես արդյունավետ էր Ղրիմահայ գրչության համար։ այս շրջանում Կաֆայում ստեղծվում են մի քանի տասնյակ հայերեն ձեռագրեր՝ Քրիստոսատուրի, Թադեոս Ավրամենցի, Օգոստինի և այլոց կողմից, որոնք միաժամանակ ինքնատիպ ծաղկողներ (նկարիչներ) էին։

17-18-րդ դարերում ևս Ղրիմահայ գրիչները ժրաջան գործունեություն են ունենում՝ մեզ են հասել այդ շրջանում նրանց ստեղծած ավելի քան 170 ձեռագրեր։ 17-18-րդ դարերում Կաֆան դարձյալ մնում էր որպես գրչության նշանավոր օջախ։ Երբեմնի հռչակավոր Սուրխաթին, որի Վերին Հողետներ հայկական թաղամասը նաև ժամանակի հռչակ հանած գրիչների նստելավայրն էր, փոխարինել էր Ղարասուն։ Թերակղզու ցամաքային առևտրի կենտրոն դարձած այս քաղաքը իր հայկական հոծ բնակչութամբ և առևտրաարհեստավորական դասերի ժրաջան գործունեությամբ աչքի էր ընկնում նաև մշակույթի ասպարեզում։ 17-րդ դարի Ղրիմահայ գրիչները բազմարդյուն էին և նրանցից ոմանք մեզ թողել են 10 և ավելի ձեռագրեր։ Այս հարյուրամյակում Կաֆայի նշանավոր գրիչներից էին Նիկողայոս Մելանավորը (նկարիչը), Զաքարիա արեղան, Հովակիմ երեցը։ Առաջինից պահպանվել են 20, երկրորդից՝ 13, իսկ երրորդից՝ 6 ձեռագիր։ Հայտնի գրիչ և ծաղկող էր Խասպեկ երեց տաղասացը, որն արտագրել, ծաղկել և նորո-

1 Մատենադարան, ձեռ. № 3343, թ. 338։

գել էր 15 ձեռագիր¹: Այս դարում Ղարասուում բազմաթիվ ձեռագրեր են ստեղծում Հովհաննեսն ու Հովհաննես արեղան: Հաջորդ 18-րդ դարը նույնպես արդյունավետ էր Ղրիմի հայ գրչության համար: Ըստ ցայսօր պահպանված ձեռագրերի այս դարում կաֆահայ գրիչներ Դավիթ Լրեցը, Գրիգոր Երեցը, Քրիստոսատուրը և ուրիշներ արտագրում և կազմում են յուրաքանչյուրը 10-ից ավելի ձեռագրեր:

Ինչպես որ պետք էր սպասել, ժամանակի հոգևոր գաղափարախոսությանը հար և ներդաշնակ՝ ղրիմահայ ձեռագրերի գերակշիռ մասը կրոնական-աստվածաբանական բնույթի էին ավետարաններ, հայսմավուրքներ, ճառոցներ, սաղմոսներ, ճառընտիրներ և այլն: Կրոնական միակողմանի ուղղվածությունը չի բացառում դրանց որոշակի կուլտուրպատմական և արվեստագիտական արժեքը: Նախ, այդ ձեռագրերը կարևոր են ձեռագրական գործի զարգացման ընթացքին հետևելու, մանրանկարչության ուսումնասիրման և ձեռագրերի հիշատակարանների պատմական արժեքուման առումով, հիշատակարաններ, որոնց մի մասը տվյալ ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական անցքերի հակիրճ պատումներ են՝ դրանց հեղինակ և ժամանակակից գրիչների եզրակացություններով և գնահատականներով հանդերձ: Հիշատակարանների արժեքը մանավանդ բարձրանում է, եթե նկատի ենք ունենում այն, որ դրանց ընդգրկած նյութերում արտացոլում են գտել ոչ միայն ղրիմահայ կյանքի տարրեր կողմերը, այլև բուն Հայաստանում, Հայկական Կիլիկիայում, Մերձավոր արևելքում, Եվրոպայում, սլավոնական աշխարհում և Կովկասում ու թաթարական շրջաններում տեղի ունեցած իրադարձությունները:

Ղրիմը հայկական այն օջախներից էր, ուր փայլուն դրսևորում ունեցավ հայ գեղարվեստական խոսքը՝ հանձինս բանաստեղծ-տաղասացների գործերի: Տաղասաց-բանաստեղծների գործերը նպաստում էին հայ գեղարվեստական խոսքի առաջընթացին, ղրիմահայ հոգևոր պահանջմունքների բավարարմանը:

Ղրիմահայ տաղերգուները ըստ մեծի մասին հոգևորականներ էին՝ ժամանակի մտավոր դասի ներկայացուցիչներ: Եվ այդուհանդերձ, նրանց ստեղծագործության մեջ նշանակալից տեղ են զբաղեցնում նաև աշխարհիկ մոտիվները՝ պանդխտության, մարդու և բնության սիրո թեմատիկան: Որոշ տաղասացների մոտ առկա է նաև սոցիալական միջավայրի, պանդխտության, հասարակ ժողովրդի կյանքի և հոգսերի արտացոլումը: Ղրիմահայ առևտրաարհեստավորական դասերը ապրում էին աշխարհիկ կյանքով, և նրանց զվարճասեր առօրյան, նիստն ու կացը իրենց ազդեցությունն էին գործում տաղասացների ստեղծագործության վրա՝ նրան հաղորդելով աշխարհիկ բնույթ: Տաղերգուները կարեկից էին դառնում այն ցավերին ու հոգսերին, որոնք աշխատավոր զանգվածների առօրյայի, նրանց վշտի և ուրախության անբաժան ուղեկիցն էին:

Գեղարվեստական առումով առավել մեծ արժեք են ներկայացնում 17-րդ դարի տաղերգուների գործերը: Փաստորեն մտավոր այն զարթոնքը, որն այդ հարյուրամյակում սկսվել էր բուռն Հայաստանում, իր մեջ ներառել էր նաև ղրիմահայ աշխարհը՝ վկայելով դրանց երկուսի հոգևոր ընդհանրության մասին: Մյուս կողմից, մշտական կապը Եվրոպայի հետ, որ պահպանում էին տավրիկյան հայերը, իր հերթին նույնպես խթանում էր նրանց կուլտուրական առաջընթացը:

Հանրաճանաչ տաղերգու էր Խասպեկ երեցը (Խաչատուր Կաֆայեցի) (1610-1686): Նա ստեղծագործել է Կաֆայում, իսկ 1665-1671 թթ.՝ նաև Պոլսում: Խասպեկը, իր աշակերտ Սիմոն Կաֆայեցու բնորոշմամբ, զարգացած մարդ էր՝ «եբաժշտաց պէտ», հին ու նոր գրվածքների մեկնաբան, մեծ փիլիսոփա և ներհուն ճարտասան: Նրա մի քանի տաղերը, որ կերտել էր 60-ամյա հասակում, գրված են զուտ աշխարհիկ թեմաներով և սիրո ու բնության գեղարվեստական պատկերավոր նկարագրություներով:

Բնիկ կաֆացի էր տաղերգու Սիմեոնը (Խրմպեյօղլին): Աշխատավոր դասից սերված Սիմեոնի ստեղծագործությունը գերազանցապես աշխարհիկ բնույթի է, որ

երևում է նրա տաղերի հենց սկզբնատողերից՝ «եկ պիւլ-պիւլում գարնանային...», «է անց ցուրտ և ձըմեռն և վիշտ աշխարհի», «Սիրուն է վարդն ի մէջ ծաղկանց ամենէ», «Սիրով ուրախութեան ժամ է, գիտացիր», «Սրտիկս խոցեալ է սիրով» և այլն: Ղրիմահայ տաղերգուներից են Վարդան, Վրթանես Կաֆայեցիները, Մարտիրոս Ղրիմեցին, Խն և Ստեփանոս Կաֆայեցիները և ուրիշներ:

Ղրիմահայ կյանքում երգն ու տաղը լայն տարածում են ունեցել աշխատավոր զանգվածների շրջանում, բավարարել նրանց հոգևոր պահանջմունքները: Ասածի վառ վկայութիւնն է այն, որ հայ ժողովրդական երգերի առաջին ձեռագիր հավաքածուն կազմվել է Ղրիմում, Խաչգուղի կողմից. 16 տարեկան հասակում նա 1608 թ. գրի է առել ավելի քան 20 հայկական ժողովրդական երգեր, որոնցից միայն չորսն են պահպանվել այլ ձեռագրերում, իսկ մնացածները մեզ են հասել պատանի Խաչգուղի կազմած այդ ձեռագիր ժողովածուի շնորհիվ: Երգն ու տաղը Ղրիմահայ միջավայրում լայն տարածում ունենալով՝ կատարվել են հանդեսների և տոնախմբութիւնների ժամանակ: Դա պարզ երևում է նույն Խաչգուղի 1620 թ. թողած հիշատակարանից, որտեղ նա պատվիրում էր իր տաղարանի երգերը կատարելիս հիշել իրեն՝ «Ո՛վ եղբայրք, (յ)որում հանդ(ի)պիք տաղերոյս և երգերոյս, եղանակէք, յիշեցէք և զիս» և ասլա՝ «յորժամ որ երգէք քաղցրաձայնիւ, զմեղաւոր Խաչգուղին (յ)իշեք»¹:

Հայոց լեզուն Ղրիմում.՝ Տաղասացների ստեղծագործութիւնն լեզուն ժամանակի գրական հայերենն է, որ անպայման վկայում է մայրենի լեզվի հարատեւութիւնը Ղրիմահայոց մոտ և ինքնին մերժում այն մարդկանց կարծիքը, որոնք անհիմն ենթադրութիւնն են արել այն մասին, որ իբր թաթարական միջավայրում հայերը կորցրել էին մայրենին և խոսում էին թաթարների լեզվով: Ղրիմում 14-18-րդ դարերում հայոց լեզվի պահպանման վկան են այնտեղ ստեղծված հայերեն ձեռագրերը, որոնց հիշատակա-

¹ Մատենադարան, ձ. № 7709, թ. 66ա:

րանները իրենց պատվիրան-ծանուցումներով մայրենի լեզվով են դիմում տեղի հայությանը: Հայերենի պահպանման օգտին են խոսում Ղրիմի հայկական վանքերի և եկեղեցիների վրայի հայերեն բազում վիմագիր արձանագրությունները: Տակավին 17-րդ դարում ռուսական շրջաններում առևտուր անող ղրիմահայ վաճառականները լայնորեն գործածում էին մայրենի լեզուն: 1779 թ. ռուսական կառավարությանը դիմելիս ղրիմահայոց պատվիրակներն իրենց դիմումները գրում էին հայերեն, իսկ ռուսներն օրինակների տակ ստորագրում միայն հայերեն: Ղրիմահայերը հոգ էին տանում մայրենի լեզվի պահպանման համար, որը վկայվում է նաև քերականության վերաբերյալ ձեռագրերի ստեղծման փաստով:

Միջնադարին բնորոշ գիտություն շատ ճյուղեր ղրիմահայոց մոտ բավական զարգացում են ունեցել: Դրանց թվում պիտի հիշատակել աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, հոեւորական արվեստը, բժշկագիտությունը, տոմարագիտությունը, պատմական գիտությունը: Ղրիմի Սբ. Խաչ և Կաֆայի Սբ. Անտոն վանքերի դպրատներում դասավանդող առաջատար առարկաներից էր հոեւորական արվեստը, որը դրանցում դասավանդում էին Տաթևի համալսարանում սովորած ղրիմահայ սաները: Լուրջ տեղ էր տրվում աստվածաբանական-կրոնափիլիսոփայական գործերի ստեղծմանը: Ղրիմահայ մեկնիչների ուշադրության կենտրոնում էին Դավիթ Անհաղթի գործերը: 1348 թ. կաֆացի Յրա (իմա՝ հայ կաթողիկ) Հակոբը շարադրում է իր «Իմաստասիրականք» վերնագրով գործը: Ղրիմահայ ձեռագրերի հիշատակարանների վկայությամբ, նրանք հետաքրքրություն են ցույց տվել նաև Գր. Տաթևացու, Գ. Նարեկացու, հայ և հույն մտածողների ստեղծագործությունների հանդեպ:

Տոմարագիտության զարգացման ասպարեզում ղրիմահայերն իրենց ավանդն ունեն: 14-15-րդ դարերում հայտնի տոմարագետ էր Հակոբ Ղրիմեցին, որը 1416 թ. հեղինակում է «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը: Հմուտ տոմարագետ էր կաֆահայ գրիչ Օգսենը, որը

1445 թ. կազմում է իր «Տումարատեստը»: 1676 թ. տաղասաց Վարդանը կազմում է չափածո տոմարական մի ձեռնարկ՝ ընդգրկելով տոմարական բոլոր հաշվարկները:

Բժշկագիտությունն ու բժշկությունը ևս գտնվել են ղրիմահայոց ուշադրության կենտրոնում: Իզուր չէ, որ իրենց անձնական բժիշկներն ընտրելիս խաները նախապատվությունը տալիս էին հայազգի բժիշկներին: Հակոբ Ղրիմեցու կողմից է ստեղծվել «Լուծմունս մարդակազմութեան» նշանավոր երկը:

Աշակերտներին գրադես դարձնելու, գրչության գործի դրվածքը բարելավելու մղումով գրիչ և մտածող Ստեփանոսը 1357 թ. Կաֆայում արտագրում է Վարդան Կիրիկեցու քերականությունը՝ խարաղանելով մեծամիտ տգետների բրտավազությունը (պնդաճակատությունը): Իր ստեղծած գործի նշանակությունը Ստեփանոսը կարևորել է հետևյալ խոսքերով. «Սա է քանոն և գաղափար ամենայն արհեստից, ևս առաւել որք փութան ձեռնարկել յարհեստս գրչութեան: Զի որպէս անհնար է թռչնոց ի լուծ լծել և ալաւս պատառել ... նոյնպէս առանց աշխատելու ի սմա ոչ ոք կարէ հասու լինել արուեստին գրչութեան»¹: Կաֆահայերից պահպանվել և մեզ են հասել նաև քերականական ինքնուրույն գործեր, օրինակ, «Ժողովածու քերականական նիւթեր»-ի ձեռագիրը²:

Ղրիմահայերից մնացել է պատմագիտական հարուստ ժառանգություն: Նախ, նկատի ունենք ղրիմահայ ձեռագրերի հիշատակարանները, որոնցում գրիչները սոսկ դեպքերի ու անցքերի փաստագրող չեն, այլ շատ հաճախ նաև դրանց մեկնաբանը: Նրանց թողած հիշատակարաններում հարուստ նյութեր կան թաթարական ասպատակությունների, դրանց՝ կաղակների տված հակահարվածների, եկեղեցական շինարարության, հայ համայնքների տնտեսական վիճակի, կրոնական ու դավանաբանական հակամարտությունների, հայ-թաթարական և հայ-ջենովական հարա-

1 Մատենադարան, ձ. № 2371, թ. 292ա:

2 Նույն տեղը, ձ. № 7117, թ. 345բ:

բերությունների, արհեստագործության, առևտրական առնչությունների և շատ ու շատ այլ հարցերի վերաբերյալ: Պատմական կարևոր տեղեկությունների ընդգրկման առումով մանավանդ առանձնանում են 17-րդ դարի հեղինակներ խաչատուր Կաֆայեցու «Տարեգրությունը», Դավիթ գրչի հիշատակարանը (ղրիմահայոց պատմության ընդհանուր շարադրանքով) և Մարտիրոս Ղրիմեցու «Պատմութիւն Ղրիմայ յերկրի» չափածո պատմական երկը:

Ճարտարապետությունը.- Ղրիմում հայերի քրտնաջան աշխատանքով դարերի ընթացքում ստեղծվել են հոգևոր և աշխարհիկ ճարտարապետական բազմաքանակ կառույցներ, որոնց մեջ կան նաև ճարտարապետական առումով գլուխգործոցներ: Միայն Կաֆայում, ինչպես նշվեց, միաժամանակ գործում էին երեք տասնյակից ավելի հայկական եկեղեցիներ: Հայերը շինարարական մեծ գործունեություն են ունեցել նաև Սուրխաթում, Ղարասուում, Սուդակում, Աքմեչիթում, Արմյանսկի Բաղարում և այլ վայրերում:

Ղրիմահայ ամենանշանավոր հուշարձաններից է Սբ. Խաչ վանքը (Սուրխաթից (Հին Ղրիմից) 4 կմ հեռավորության վրա), վանքին մերձակա էր Կաղարաթը: Վանքի եկեղեցին կառուցվել է 1358 թ. սատարություն հովհաննես կրոնավորի «Եւ հարազատ եղբարց նորին»: Կաֆայի և համայն Ղփչաղի պրեֆեկտ ԴԱսկոլին այն համարել է Հռոմին արժանի շինություն: «Հռոմին արժանի այս տաճարը և լայն չափսերի քարե այլ բնակարաններ,- գրում է նա,- կառուցել են հայ-եղբայրները, որոնք թաղված են եկեղեցու մեջ»: Աչքի ընկնող կառույցներ են Թեոդոսիայում մինչև օրս կանգուն մնացած եկեղեցիները՝ Հովհաննես Մկրտիչը (1348 թ.), Հրեշտակապետը (1408 թ.), Սբ. Սարգիսը (12-րդ դար), Սբ. Ստեփանոսը և ուրիշներ: Ըստ վերը հիշատակված ԴԱսկոլու, 1634 թ. Կաֆայում հայերն ունեին 28 եկեղեցի: Սա գրեթե համընկնում է 18-րդ դարում հորինված հայերեն տաղի բերած թվաքանակին:

Քեֆե, կասեն, մեծ քաղաք է,
Թագաւորաց հաստատած է.
Քսանչորս եկեղեցի է.
Քարերն ամեն սրբատաշ է:

Տաղուժ, այնուհետեւ, քառյակ առ քառյակ անվանապէս նկարագրված են քաղաքի հայկական բոլոր քսանչորս եկեղեցիները¹:

Հայկական ճարտարապետական մի կոթող է Բախչեւլի (այժմ Բոգոտոյե) գյուղին մերձակա գտնվող Սբ. Փրկիչ վանքը: Նշանավոր էր Կաֆայում հայերի կողմից 14-15-րդ դարերում կառուցված պարիսպը, որի մի մասը ցայսօր պահպանվել է: Հայկական պարիսպը՝ Հայոց բերդը, կառուցվել է ամբողջ համայնքի ուժերով, կոփածո քարերից, դոթական աշտարակներով: Սկսվելով հարավային ծովածոցից՝ այն հասնում էր մինչև քաղաքի հյուսիսային կողմը, գոտեփակելով քաղաքի ֆռանկհիսար թաղամասը:

Հարավ-արեւելյան Ղրիմում հայերը ջրաշինարարական աչքառու գործունեութիւն էին ծավալել, մի վայրում, որտեղ խմելու ջրի հարցը հնում և այսօր եղել ու մնում է լուրջ խնդիր: 1316 թ. Կաֆայի հայ եպիսկոպոսը անցկացնում է ջրմուղ: Այդ մասին Կաֆայի 1316 թ. կանոնադրութեան մեջ կանոնադրված էր հատուկ հոգւած «Հայերի եպիսկոպոսի ջրմուղի ջրի ուղղութիւնը չչեղելու մասին» վերնագրով, ըստ որի, այդ ջրմուղի ջուրը օգտագործել են Կաֆայում և նրա ենթակա վայրերում: Հոգւածը սպառնում էր 3000 բալիկատ ասպեր տուգանքի ենթարկել բոլոր նրանց, ովքեր կչեղեն ջրմուղի ջրի ուղղութիւնը, միաժամանակ նրանք պարտավոր էին վերականգնել խախտված հատվածը²: Հայերը 15-րդ դարում ջրմուղ էին կառուցել նաև Դվույակլորնի (Երկխարխալյան) ծովածոցում՝ տեղի հայկական վանքը ջրով մատակարարելու համար: Այս ջրմ-

1 Ք ու չ ն ե Ր յ ա ն Ք. Պատմութիւն գաղթականութեան խրիմու հայոց. Ս. Ղազար, 1895, էջ 139-141, Մատենադարան, ձ. № 2933, թ. 468-470:

2 Տե՛ս Մ ի ք ա յ ե լ յ ա ն Վ. «Հայ-խտալական առնչութիւններ», Երևան, 1974, էջ 28-29:

ուղը գոտում էր Բույուկ-Յանի լեռը, ընթանում ձորով, մերթըմներթ սարալանջով: Շարված լինելով կավե խողովակներով՝ իր ընթացքում ջրմուղն ընդունում էր բազմաթիվ փոքր ու մեծ ջրուղիներ, որոնք հարստացնում էին մայր առուն¹:

Ավանդական էր աղբյուր-հուշարձանների կառուցումը: Հայերի կողմից աղբյուր-հուշարձաններ և շատրվաններ են կառուցվել Սբ. Խաչում, Դվույակորնի ծովածոցում, Կաֆայում, Թոփլի գյուղի հայկական եկեղեցու բակում և այլուր: Խիստ տարածված էր խաչքարեր կանգնեցնելը գերեզմանատներում, դրանց ղետեղումը եկեղեցիների պատերի մեջ՝ ներսից ու դրսից որպես առանձին հուշարձաններ:

Կրթական գործը.~ Սկսած 14-15-րդ դարերից ընդհուպ մինչև 18-րդ դարի 70-ական թվականների վերջերը ղրիմահայ եկեղեցիներին ու վանքերին առընթեր որոշ ընդհատումներով գործում էին դպրատուն-դպրոցներ, որոնցում աստվածաբանության և կրոնագիտության կողքին աշակերտներին ուսուցանում էին քերականություն, տրամաբանություն, հռետորական արվեստ, տոմարագիտություն, համարողական արվեստ (թվաբանություն), զրչական գործ, մանրանկարչություն և այլն:

Նշանավոր կրթօջախ էր Կաֆայի Սբ. Անտոն վանքը (15-րդ դարի առաջին կես), որտեղ փիլիսոփայության պատմության դասախոսություններ էր կարդում «քաջ հռետոր» Սարգիս վարդապետը: Վերջինիս աշակերտների թվում էին անվանի գրիչներ և ծաղկողներ Քրիստոսատուրը, Թադևոս Ավրամենյը, Թորոսն ու Սիմեոնը:

14-18-րդ դարերում, գրեթե առանց ընդհատումների, Սբ. Խաչ վանքում գործում էր միջնադարի ղրիմահայ թերևս ամենանշանավոր դպրատուն-ճեմարանը: Դպրոցներ կային Կաֆայի, Սուրխաթի, Ղարասուբազարի և այլ գաղթօջախների եկեղեցիներին կից: 16-18-րդ դարերում այս

¹ Известия географического об— ва, 1939, т. LXXI, вып. 7, с. 1044.

վայրերում անուն հանած և կորովամիտ ուսուցչապետեր
էին Մկրտիչ քահանան, Հովհաննեսը, վերջինիս աշակերտ՝
«մեծ փիլիսոփա», «ներհուն ճարտասան» և «պէտն երաժշ-
տաց» Խասպեկը, Զաքարիա արեղան և ուրիշներ:

ՂՐԻՄԱՀԱՅԵՐԸ ԱՐԵՎԵԼՔ-ԱՐԵՎՄՈՒՏԻ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌՆՋՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

13-րդ դարի երկրորդ կեսից, հատկապես դարի 60-70-ական թվականներից ընդհուպ մինչև 15-րդ դարի 70-ական թվականների կեսերը, մի ամբողջ երկու հարյուրամյակ, միջազգային առևտրատնտեսական կապերում, նաև բուն Ղրիմի տնտեսական կյանքում կարևոր նշանակություն էր ստացել հայերի և ջենովացիների գործունեությունը: Դա հիմնականում աղերսվում էր երկու գործոնի՝ միջազգային առևտրի մեջ Ղրիմի թերակղզու դերի աննախընթաց բարձրացման և Սև ծովի ավազանի տարածքներում, հատկապես Ղրիմի թերակղզու հարավարևելյան ծովեզերքում ջենովական առևտրական դաղութների (ֆալտորների) հաստատման հետ: Այդ երկու գործոններն էլ փոխկապակցված էին և լրացնում էին մեկը մյուսին:

Միջազգային առևտրի մեջ Ղրիմի դերի բարձրացումը, Եվրոպայի և Արևելքի կապերում թերակղզու նշանակություն կարևորումը հանդիսանում էին Առաջավոր Ասիայում տեղի ունեցած քաղաքական փոփոխված իրադրություն հետևանքը: 11-13-րդ դարերում, խաչակիրների վրա հենվելով, եվրոպական առևտրական դասը Միջերկրականի արևելյան ծովափնյա երկրներում՝ Սիրիայում, Կիլիկիայում և Պաղեստինում, առհասարակ համայն Արևելքի հետ լայն գործունեություն էր ծավալել: Սակայն 13-րդ դարի երկրորդ կեսից դրությունը լրջորեն փոխվում է. խաչակիրների կողմից այս տարածաշրջանում մեկը մյուսի հետևից իրենց տիրույթները կորցնելու և դարի 90-ական թվականներին եգիպտական մամեկուկների կողմից սիրիական ափը գրավելու հետևանքով լուրջ խոչընդոտներ են ստեղծվում Լևանտյան (արևելյան) առևտրի առաջ:

Առևտուրը Արևելքի և Արևմուտքի միջև էլ էր կարող ընդհատվել և տնտեսական ուժեղ ազդակների մղումով եվրոպական առևտուրը շարունակում էր պահպանել Արևելքի

Հետ իր գործառնությունների անհրաժեշտությունը և հենց դրանց իրացման համար պետք է սիրիական ծովափի փոխարեն ընտրեր նոր ուղի՝ Կ. Պոլիս-Սև ծով, Տանա (Աղովի ծովափին, այժմյան Դոնի Ռոստովի մոտերքը), իսկ այնտեղից, թաթարներին ենթակա տարածքներով՝ Աստրախան-Սարայ-Միջին Ասիա: Ֆլորենցիացի Պեդոկետի (14-րդ դար) վկայությամբ, իրոք, 13-րդ դարի վերջերից Արևելքի հետ առևտրական ճանապարհները Սև և Աղովի ծովերի շրջաններով կտրոււմ էին Տանա-Միջին Ասիա-Չինաստան ուղին¹: Նկատենք, որ ճանապարհը Տանայից Չինաստան, որն անցնում էր մոնղոլահպատակ շրջաններով, անհամեմատ անվտանգ էր²:

Միջերկրականի արևելյան ծովափը երկրներում 13-րդ դարի երկրորդ կեսերին կատարված ռազմաքաղաքական տեղաշարժերը Կ. Պոլսում և Սև ծովի ավազանի մի շարք վայրերում կյանքի կոչեցին ջենովական առևտրական գաղութները: Դրանք մանավանդ նշանավոր էին Ղրիմում, որոնց կենտրոնը հռչակավոր Կաֆան էր: Սևծովյան ավազանի տարածքներում Ջենովական հանրապետության ներկայացուցիչների հաստատման համար հատկապես նպաստավոր եղան երկու հանգամանք: Նախ այն, որ բյուզանդացի կառավարողները, որոնց ջենովացիները օգնել էին հանձին Միխայել Պալեոլոգ կայսրի վերջ գնելու լատինական կայսրությանը և Կ. Պոլսում վերականգնելու բյուզանդական դահը, 1260 թ. Նինֆեում կնքված պայմանագրով ջենովացիներին շնորհեցին ազատություն՝ հաստատվելու սևծովյան ավազանի երկրներում, բայց նման հնարավորությունից զրկեցին վենետիկցիներին³: Երկրորդ, ջենովացիները Ղրիմի Կաֆա քաղաքում հաստատվեցին թաթար իշխողների համաձայնությամբ, որովհետև այս վերջիննե-

1 *Шу С е к е р и н с к и й* С. Очерки истории Сурожа. Симферополь, 1955, с. 22.

2 *Шу ИТУАК*, № 1(58), 1927, с. 168. *Шу նաև* Peyssonel. Die Verfassung des Handels auf Soharzen Meere. Leipzig, 1788.

3 *Шу М у р з а к е в и ч* Н. История генуэзских поселений в Крыму. Одесса, 1837, с. 3—4.

րը, հանձինս ջենովական վաճառականության, հնարավորություն էին ստանում տեղում ծախելու իրենց հիմնական ապրանքը՝ պատերազմների և ավարառուական արշավանքների ժամանակ վերցրած գերիներին, և, բացի այդ, իրենց անասնապահական մթերքները փոխանակելու անդրծովյան (եվրոպական) ապրանքների հետ: Միաժամանակ, թաթարական ավագանուն մեծ օգուտ էին բերում Ղրիմ ներմուծվող օտարերկրյա ապրանքներից գանձվող մաքսերը¹: Տնտեսական այսօրինակ դրդապատճառները նպաստեցին ջենովացիների հաստատմանը Ղրիմում և հարակից շրջաններում: Կար մի համգամանք ևս. ջենովացիները հուլյսեր էին կապում նաև այն բանի հետ, որ Ոսկե Հորդայի, այդ թվում նաև Ղրիմի տարածքներում եռանդուն գործող պապական քարոզիչների օգնությամբ, իրենց կհաջողվի տակավին մահմեդականության չհարած թաթարներին դարձնել քրիստոնյա: Սա էլ հարցի, այսպես ասած, գաղափարական կողմն էր, և, հարկավ, նրա դրական լուծումը հեղաշրջիչ դեր կխաղար համայն ղիչաղյան տափաստաններում և Միջին Ասիայում հաստատված մոնղոլների հետ հարաբերությունների աննախագեպ սերտացման գործում:

Վենետիկցիներին դուրս մղելով՝ ջենովացիները սևծովյան ավագանի շրջանում մենաշնորհ գիրքեր ստացան: Նրանք Ղրիմ էին ներմուծում եվրոպական, իսկ արտահանում էին ասիական ապրանքներ, որոնց ներկրողը Ղրիմ հիմնականում հայերն էին: Ղրիմում հաստատված ջենովացիները գերազանցապես հայ վաճառականության միջոցով էին գլուխ բերում իրենց առևտրատնտեսական ձեռնարկումները բուն Ղրիմում և թեև առհասարակ Արևելքում, և հենց այդ էր պատճառը, որ տեղի ջենովական վարչակարգը և առևտրական դասը լիովին հանդուրժողական էին հայերի նկատմամբ այն ժամանակ, երբ առևտրական մրցակցության հարկադրանքով նրանք սրախողխող էին անում իրենց ազգակից ու դավանակից վենետիկցիներին: Ընդ սմին, ջենովացիները ուզեին-չուզեին պետք է հաշվի առնեին հայե-

¹ См С е к е р и н с к и й С., նշվ. աշխ., էջ 25-26:

րի մի շատ կարեւոր առավելութիւն՝ թաթարների հետ նրանց վարվելու և շփվելու ավանդական փորձը, արեւելյան լեզուների իմացութիւնը, որոնցից գուրկ էին եվրոպացիները: Հայերի այս առավելութիւնը նպաստում էր այն բանին, որ ասիական ժողովուրդները այցելեն Կաֆա և հանդուրժողաբար վերաբերվեն քաղաքի գրեթե անկախ վիճակին: Այս առումով լիովին ճշմարիտ է միջնադարյան Ղրիմի պատմութեան հանրաճանաչ հեղինակ Վ. Կոնդորակին, որը փաստերի քննական լույսի տակ հանգել է հետեւյալ կարծիքին. «Ամենից ճիշտ կլինե՞ր ասել, — գրում է նա, — որ ջննդական ֆակտորիայի ներկայացուցիչներն էլ խանութիւն մեջ իրենց գործերը իրականացնում էին հայերի միջոցով և դրա համար էլ նրանց (հայերին — Վ. Մ.) արտակարգ հարկավոր և օգտակար էին համարում այնպիսի մի վայրում, որպիսին Տավրիդան էր»¹: Այսօրինակ վիճակի հետեւանքով 13-15-րդ դարերում Ղրիմում հայերի ձեռքում էր կենտրոնացել առևտրատնտեսական առաջնութիւնը:

Եվրոպական ապրանքներ Կաֆա ներմուծող և այնտեղից արեւելյան ապրանքներ Եվրոպա և Մերձավոր Արեւելք տեղափոխող ջննդագիւղները, իրոք, իրենց առևտրական գործունեութիւնը վարում էին առավելապես ապովինած հայ վաճառականութեան վրա՝ որպէս համայն Ղիֆաղի և Արեւելքի հետ կապող օղակի: Ղրիմում ջննդական վարչակարգը, ի դեմս Կաֆայում նստած հյուպատոսի, մասարների, սինդիկների և այլոց, հայերի հետ հաշիւ էր նստում նաև այն պատճառով, որ նրանք այդ քաղաքի և հարակից շրջանների հիմնական քրիստոնյա բնակիչներն էին, և նրանց մասնակցութիւնն էր, որ Արեւելք-Արեւմուտք ապրանքափոխանակութեանը հոսովու խթան էր հաղորդում:

¹ К о н д о р а к и В. Х. Универсальное описание Крыма. Т. 1—4, т. 3, ч. 9, СПб, 1875, с. 64.

² Տե՛ս Աշ. Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ աղատագրական մտքի պատմութեան, գիրք Երկրորդ, Երևան, 1959, էջ 431:

13-րդ դարի 60-ական թվականներից սկսած մինչև 1475 թվականը ոչ միայն Ղրիմի, այլև սևծովյան ավազանի մյուս երկրների ծովափնյա քաղաքների մեջ նշանավորը Կաֆան էր, որը, ինչպես նշվեց, ջենովական սևծովյան գաղութների վարչական և տնտեսական կենտրոնն էր: Նշված ժամանակաշրջանում Ղրիմի թերակղզու հարավ-արևելյան ծովափը, Սև ծովի փոքրասիական և կովկասյան մի շարք այլ քաղաքների հետ միասին հանդիսանում էր Ջենովայի հանրապետության, իսկ 1453-1475 թթ. Ջենովայի Սուլթո Գևորգ բանկի առևտրական գաղութը: Սինոպն ու Տրապիզոնը փոքրասիական ափում, Սևաստոպոլիսը՝ Կովկասում, Լա-Կոպան՝ Կուբան գետի վրա, Տանան՝ Ազովի ծավափին, Կաֆան, Ջեմբալոն և Սուդայան՝ Ղրիմում, ջենովական առևտրի գլխավոր հենակետերն էին: Սևծովյան կենտրոնների նշանակությունը բարձրացել էր թե հոլմքի աղբյուրներին մոտ գտնվելու առնչությամբ և թե, ինչպես նշվեց, հատկապես այն պատճառով, որ քաղաքական հարափոփոխ իրադարձությունների հետևանքով Միջերկրականի արևելյան շրջանները՝ ընդհանուր անվանումով Սիրական ծովեզերքը, զրկվել էին Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի օղակ լինելուց:

Առանձնահատուկ էր Կաֆայի դերը, և Ջենովայի հանրապետությունը այստեղ նստած իր գաղութային իշխանություններին օժտել էր կանոնադրություններով, օրենքներով և հրահանգներով տեղացիներին կառավարելու համար՝ ի շահ ջենովական վաճառականության: Կ. Պոլսում նստած բյուզանդական կայսրերը, ըստ հնարավորության, սատարում էին ջենովացիներին: Սակայն խնդիրն այն է, որ Ղրիմում ջենովացիների գերիշխանության տակ գտնված շրջանների քրիստոնյաների պատկառելի մասը կազմում էին հայերը, և ջենովացիները այստեղ և առհասարակ սևծովյան ավազանում իրենց դործունեությունը ծավալում էին նրանց օգնությամբ, հանգամանք, որը արտացոլում էր գտել ժամանակի ջենովական պաշտոնական և ոչ-պաշտո-

նական փաստաթղթերում, այդ թվում նաև օրենքի ուժ ստացած այնպիսի կանոններում, ինչպիսիք էին 1290 թ., 1316 թ. կանոնադրությունները և Հատկապես «Սև ծովում ջենովական գաղութների կանոնադրությունը՝ հրատարակված Ջենովայում 1449 թվականին»¹:

1449 թ. կանոնադրությունը և առհասարակ Կաֆայում բնակվող մարդկանց վերաբերյալ բոլոր փաստաթղթերը վերջիններիս, ինչպես նշվել է, սովորաբար ներկայացնում են ջենովացիներ (cives) և կաֆացիներ (քաղաքացիներ՝ burghenses) անվանումներով: Կաֆացիները դրանք հիմնականում հայերն էին, որոշ չափով նաև՝ ռուսները, ռուսներն (rossarium) ու կարաիմները: Կաֆացիների մեջ կարող էին լինել նաև որոշ տեղայնացած ջենովացիներ, որոնց թիվը հատուկենա էր, քանի որ ջենովացիները, որպես կանոն, չէին դառնում տեղաբնակ, Ղրիմը նրանց համար հիմնականում շահութաբեր առևտրական գործարքների իրականացման վայր էր, որոնք վերջացնելուց հետո նրանք վերադառնում էին Ջենովա: Առհասարակ ջենովացիների թիվը Ղրիմում աննշան էր. նույնիսկ Կաֆայում՝ ջենովական առևտրական գլխավոր գաղթակետում, 1470-ական թվականներին ընդամենը 1000 հոգի էր՝ քաղաքի 46.500 հայություն դիմաց²:

Կաֆացիներին վերաբերող փաստաթղթերը (13-15-րդ դարեր) ուշագրավ տեղեկություններ են հաղորդում նրանց հիմնական հատվածը կազմող հայերի իրավական, քաղաքական և տնտեսական դրություն վերաբերյալ: Սակայն, չնայած իրենց փոքրաթվությունը, ջենովացիները իրենց ձեռքում էին պահում առևտրի մեջ իշխող դերը, թեև, ինչպես ակնարկվեց, իրենց գործունեությունը իրականացնում էին հայերի օգնությամբ: Եվ իրոք, Կաֆայի առևտրում հայերը վայելում էին մեծ համբավ: Կաֆայի հյուպատոսի և մասարների (ֆինանսական աստիճանավորների) Ջենովա ուղարկած զեկուցադրերում հայերը բնորոշվում էին որպես

1 ЗООИД, т. У, Одесса, 1863, с. 629—837.

2 *Stu Atti*, t VII, II, p. 343.

«լավագուլյն վաճառականներ», որոնք մեծ օգուտ են բերում քաղաքի համայնքին: Կաֆայի՝ Հյուպատոսն ու մասարները 1455 թ. սեպտեմբերին Ջենովայի Սր. Գեորգ բանկի խնամատարներին ուղարկած իրենց ղեկուլյցում, պահանջելով լատին եպիսկոպոս Զիակոմո Կամպորիի հեռացումը, զգուշացնում էին. «Դուք գիտեք, որ այս երկիրը գլխավորապես բնակեցված է հայերով, որոնք մեր ճանաչված հենարանն են և լավագուլյն վաճառականները և քաղաքին մեծ եկամուտ են բերում»¹:

Կաֆայի նոտարական գրասենյակի ակտերը (13-րդ դարի 80-ական թվականներ) վկայում են, որ Ղրիմում ջենովացիների հաստատման առաջին իսկ շրջանից հայերը ակտիվ մասնակցություն են ունեցել թերակղզու վրայով կատարվող թե ներքին և թե արտաքին առևտրին, իրենց վրա վերցնելով Արևմուտք-Արևելք ապրանքաշրջանառության զգալի մասը: Բերենք այդ վիճակն արտացոլող նոտարական փաստաթղթերից մեկը՝ գրված Կաֆայի գրասենյակում, 1289 թ. ապրիլի 23-ին: Նոտարական այդ ակտը վկայում է հայերի և Ղրիմում նորերս հաստատված ջենովացիների համատեղ առևտրական գործունեության մասին՝ սևծովյան ավազանի քաղաքներում: Նոտարական այդ գրառման մեջ ասված է. «Մենք, Անդրեաս Պադանացիս և Օբերտո դի Վինիանոս, հանձնում ենք քեզ, հայ Պարոզա Կադարացու², մեր նավի վարձակալության իրավունքը և տիտղոսը ամբողջությամբ, որպեսզի քո անունով և հայ Կոստայի անունով վարձած մեր գալերան³ ապահովես ջրով, հացամթերքով, նավաստիներով, առաջիկա տաս օրվա ընթացքում գնաս Կոնեստասին⁴ և այնտեղից վերցնես 300 մոդի⁵ ցորեն և 400 մոդի (կորեկ) և այնուհետև դրանք տանես Տրապիզոն, Կոնեստասինից անմիջապես հեռանաս քո կողմից վարձված մեր նավով, հենց որ այն բեռնվի. այնուհետև

1 Տես նույն տեղում, հ. VI, էջ 365:

2 Կադարիացի՝ ղրիմեցի:

3 Գալերա - առագաստա և թիանավ:

4 Հավանաբար, Մոնկասարո, այժմ՝ Բելգորոդ Դնեստրովսկի:

5 1 մոդին հավասար է 9 լիտրի:

պետք է ուղեւորվես Տրապիզոն, երբ նալը խարխսխ դցի Տրապիզոնում ցորենի ու կորեկի բեռով, այդ ցորենը և կորեկը իջեցնել տաս այնտեղի նավահանգիստը մեր բարկայով¹։ Մեր նալը վարձելու և վարձակալի իրավունք ստանալու փոխարեն դու մեզ կտաս 9 մոգի ցորեն՝ բեռնված յուրաքանչյուր 100 ֆունտի դիմաց։ Փոխադարձաբար ես Պարոսիաս (Պարոզա Կազարացիս — Վ. Մ.) խոստանում և համաձայնվում եմ վերևում նշված բոլոր պայմաններին և նույնպես համաձայն եմ ձեզ կամ ձեզանից որեւէ մեկին տալ ցորեն և, վերևում նշվածի համաձայն, ձեզ լրիվ հատուցել վարձակալման փոխարեն, և փոխադարձ պայմանավորվածության և համաձայնության առարկա բոլոր պայմանները պարտավորվում ենք կատարել և հարգել և չխախտել որեւէ բանում, հակառակ դեպքում խախտող որեւէ կողմը կվճարի 1000 ասպեր² տուգանք՝ ըստ մեր պայմանավորվածության։ Վերևում նշված պայմանները հարգելու և նրանց կատարմանը հսկելու նպատակով, մենք, որպես գրավական, փոխադարձաբար տրամադրում ենք մեր ներկա կամ ապագա ամբողջ ունեցվածքը։ Կազմված է 1289 թ. ապրիլի 23-ին Կաֆայում... ներկայությամբ վկաներ Բալդովիա դե Կվարցոյի և Յակոբո դե Բոնիֆաչիոյի»³։

Մենք հատուկ միտումով ամբողջովին մեջբերեցինք նոտարական այդ ակտը, նրա օրինակով ցույց տալու համար, որ ջենովական գաղութներում սկզբնավորվող կապիտալիստական հարաբերությունները, ազատ ձեռներեցության դրսևորումով, իրենց շրջապատւոյտի մեջ էին ներքաշել նաև Սև ծովի նրանց գաղութները, որտեղ առևտրի և առհասարակ ձեռնարկութեան ամեն մի գործունեության հա-

1 Բարկա-գետային, առհասարակ թեթև բեռնանալ։

2 Ասպեր կամ տապր — հունական դրամական միավոր։ Մեկ տապրը հավասար էր երկու սուի կամ երեք կոպեկի (19-րդ դարի 60-ական թվականների արժեքով)։

3 Actes des notaires Genoïs de Pera et de Caffa de la fin du treizieme siècle (1281-1289), Bucarest, 1927, էջ 173-174։ Տես նաև «Հայ-խաչական առնչություններ. ջենովական փաստաթղթերը զրիմահայերի մասին», Կազմեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց Վ. Միքայելյան, Երևան, 1974, էջ 21-22։

մար ստեղծված էր այն ժամանակվա, համար բավական լուրջ իրավական դաշտ, և որ հայ առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչներն իրենց գործունեություն երաշխիքը գտնում էին որոշակի իրավական նորմերի մեջ:

Իրենց ձեռքում ունենալով Կաֆան և մյուս նավահանգիստները, ջենովացիները հնարավորություն էին ստացել խուսափել Արևելքի հետ կապող վտանգներով հղի քաղաքային առևտրից, այն բաժին թողնելով հիմնականում հայ, մասամբ էլ հույն վաճառականներին: Ջենովացիները իրենց առևտուրը գերազանցաբար կատարում էին Արևմուտքի և սեծովյան ավազանի երկրների հետ, առևտուր, որին ժրջան մասնակցություն էին ցուցաբերում նաև հայերը, որոնք, հույների և իտալացիների հետ գործակցած, իրենց առևտրին հաճախ հաղորդում էին «խնտերնացիոնալ» բնույթ: Մեր այս կարծիքը հաստատում են Կաֆայի նոտարական գրասենյակում հայերի հետ կնքված գրեթե բոլոր գրառումները: Ահա, օրինակ, դրանցից մեկը, 1289 թ. հունիսի 26-ին կնքված ակտը, ըստ որի, իտալացի նավատեր դե Վալեն վարձակալի իրավունք է շնորհել Ֆրանչեսկո Սոանեին և հայ Սիմոնին և նրանց հետ միասին ութ այլ վաճառականների: «Ես՝ դե Վալես, — ասված էր ակտում, որը բերում ենք որոշ կրճատումներով, — վարձակալի իրավունք եմ շնորհում ձեզ՝ Ֆրանչեսկո Սոանեիդ և հայ Սիմոնիդ, որ ուզում եք ձեր սեփական անունով և ձեր ընկերների անունով, որոնք ձեզնից բացի 8 անձ են, վարձել իմ տարիդան¹, որը «Սուրբ Անդրիաս» անունն է կրում. այն ներկայումս պետք է ուղևորվի Տրապիզոն: Նշված Տարիդան խոստանում եմ տրամադրել ձեզ... պատրաստ և ապահովված սեփական սարքավորումներով, ջրով, հացամթերքով և նավաստիներով... խոստանում իմ ձեզ համար հարմար ժամանակ... մեկնել Կաֆայի նավահանգստից և դնալ Տրապիզոն... Հասնելով Տրապիզոն, խոստանում եմ նավից իջեցնել ձեզ և ձեր մերձավորներին, ինչպես նաև ձեր բեռները, իմ նավակով և իմ նավաստիներով դրանք ափ իջեց-

¹ Տարիդա—գալիերայի նման տարիդան էլ և թիանավ էր, և առադասաբաբ: Այն կարող էր վերցնել 300 մարդ և 30 ձի:

* Ենել Տրապիզոնում այն պայմանով, որ դուք նավի վարձման և վարձակալի իրավունքի համար ինձ վճարեք 38 բարիքաթ՝ ձեզանից յուրաքանչյուր անձի համար և նույնքան դրամ ձեր յուրաքանչյուր բեռի համար»։ Պայմանները խախտող կողմը պարտավոր էր մյուս կողմին վճարել 500 բարիքաթ։ «Այս նշված պայմանները մեր կողմից լրիվ կատարելու, դրանց մինչև վերջ հարգելու նպատակով մենք վերևում նշված անունները կրողներս, ինչպես նաև մեր նավի վարձակալը փոխադարձաբար համաձայնվում ենք միմյանց տրամադրել մեր ամբողջ ունեցվածքը՝ որպես վերևում նշված պայմանների գրավական։ Կազմված է Կաֆայում, 1289 թ. հունիսի 26-ին, ժամը 8-ի և 9-ի միջև, ներկայությամբ վկաներ Կամուսոո դե Արենձանոյի և Անսալդոյի»։

Նոտարական ակտերը վկայում են, որ 13-րդ դարի վերջերին Կաֆայի արտաքին առևտուրը մեծ չափեր էր ընդունել Սև ծովի փոքրասիական քաղաքներ Տրապիզոնի, Սինոպի և այլնի հետ։ Եվ դա պատահական չէր. 1204 թ. Տրապիզոնում ստեղծված համանուն կայսրությունը (գոյատևեց մինչև 1461 թ.) իր դռները լայնորեն բացել էր հյուսիսային մերձսևծովյան շրջանների վաճառականություն հաշվին։ Ինչպես նկատելի է, Տրապիզոնի հետ առևտրի մեջ հիմնական ապրանքը այս շրջանում հացահատիկն էր։

Արդեն առիթ ենք ունեցել ակնարկելու, որ որոշակի տնտեսական շահագրգռությունից ելնելով՝ թաթարական ավադանին, որը անխնա ասպատակում և հրի ու սրի էր մատնում հյուսիսօղակայան, ռուս-ուկրաինական և լեհական տարածքներն ու դրանց բնակչությունը, դերեվարում տասնյակ հազարավոր մարդկանց, առևտրի մեջ հանդես էր գալիս վաճառականների հովանավորելի դերում, նրանց առևտուրը պաշտպանելով ավադակային հարձակումներից։ Այդպիսի մի հովանավորի դերում մենք տեսնում ենք Ոսկե Հորդայի Ղրիմի ուլուսում նստած կուսակալ խան Արզու-

1 Բարիքաթ-թուրքական պարբերական (փայլուն) բառի աղավաղված ձևը, ինչպես որ զրիմաճայ ձեռագրերում արձայթյա դրամը հաճախ անվանվում էր սալիտակ։

նին, որի նալի սպառազինված անձնակազմը ստիպում էր ծովահեն Յուրգուքին վերադարձնել հինգ հայ և հույն վաճառականներից զավթած ապրանքները: Այդ մասին պատմող վկայութունը հաղորդում է անձի ու գույքի ազատ տնօրինման ապահովմանը ուղղված՝ արդեն 13-րդ դարի վերջալուսին Կաֆայում գործող իրավական որոշակի նորմերի առկայության մասին: 1290 թ. ապրիլի 27-ին Կաֆայի նոտարական գրասենյակում կնքված այդ ակտում ասված էր (բերում ենք քաղվածաբար).

«Մենք՝ Հայերս, Պերա Բոգզա Սևանցի, Վասիլի Իվան Մելիք և Պերքե Ավարյան էվահա, հույներս՝ Թեոդորոս և Կոստա, ընդունում ենք, որ դու՝ Վիվալդո Լավալիոդ, մեզ լրիվ չափով վերադարձրել ես ամբողջ մեր գույքը, որը մեզնից խլել էր ծովահեն Յուրգուքին: Դու մեր գույքը ծովահեն Յուրգուքից ետ ես վերցրել Արդուն խանին պատկանող և նրա սպառազինված զաւերով և մեզնից հափշտակվածը նրանից ետ վերցնելով՝ դու այն լրիվ վերադարձրել ես մեզ: Պաշտոնապես ընդունում ենք, որ քեզնից այլևս ոչինչ չունենք ստանալու, պարտավորվում ենք քեզնից ապագայում ոչինչ չապահանջել և, որպես մեր պայմանագրի գրավական, տրամադրում ենք մեր ամբողջ ներկա ու ապագա ունեցվածքը»: Հետաքրքիր է նաև ակտի կնքման փաստը հավաստող վկա անձանց ցուցակը՝ թե նրանց ազգային պատկանելության և թե տարրեր երկրներ ներկայացնելու առումով: «Ներկա էին հետևյալ վկաները, — ասված էր ակտում: — Ուրսիչինոն՝ Բարգաքսից, Յարկակսին՝ Աբադայից (Աբխազիայից — Վ. Մ.), Զագաթայի և Տամբուղա կայսեր գործակից Բորտագուլը՝ Կազարիայից, առևտրական Յակոբոն՝ Կահիրեից, Սիմոնե Սալվան՝ Սակոնայից, Գվիլելմո Կոտենալին՝ Պրդիից, Մարֆեո Մուսին, Ուգոլինո դե Գրիգորիոն և Թարգման Զիանինոն՝ Սավոնայից»¹: Արևելքի և Եվրոպայի տարբեր երկրներից եկած և տարբեր ազգություններ ներկայացնող առևտրականների խայտաբղետ մի պատկեր, որպիսին դժվար թե ունենար

¹ «Հայ-իտալական առնչություններ», էջ 26 և 272:

13-րդ դարավերջին եվրոպական որևէ նավահանգստային կենտրոն, հանգամանք, որ վկայում է Կաֆայի զբաղեցրած բացառիկ դերը միջազգային տնտեսական կյանքում: Բացի այդ, երևույթը վկայում է նաև այն մասին, որ կապիտալիստական զարգացման մակարդակին միտող առևտուրը ի ծնե արդեն չէր ճանաչում ոչ ազգային և ոչ էլ տարածքային սահմաններ և իր տնտեսական մղումներով ինտերնացիոնալ-կոսմոպոլիտական էր: Վերը թվարկված անձինք առևտրական շահախնդրություններով Կաֆա էին եկել Եգիպտոսից, Հյուսիսային Կովկասից, Արևելքի երկրներից, Իտալիայից և այլ տեղերից:

Կաֆայի առևտրի մեջ որոշակի էր հայ վաշխառուական և բանկային կապիտալի դերը: Քաղաքում հայ վաշխառու-բանկիրներից ոմանք ֆինանսապես այնքան էին զորացել, որ վարկավորում էին նաև ջենովացիներին: 13-րդ դարի 80-90-ական թվականներին նշանավոր հայ դրամատերեր էին Պետրոսը, Կիրակոսը, Օրերվալին և այլք: Կիրակոսն, օրինակ, մեծ գումարի հասնող բարիքալթ ասպրեր էր փոխառել նավատեր Ռաֆաելի Էմբրիկոյին, որը պարտավորվել էր հայ դրամատիրոջը այդ գումարի դիմաց վճարել 2000 սոլդայական ասպր¹ Սիրիայի որևէ վայրում, ուր, հավանաբար, ըստ պայմանավորվածության, Կաֆայից ժամանելու էր նաև հայ դրամատեր-վաճառական Կիրակոսը: Ակտում ասված էր. «Ես Ռաֆելի Էմբրիակոս, ընդունում եմ, որ քեզնից, հայ կաղարիացի Կիլակոզից (Կիրակոսից — Վ. Մ.) ստացել եմ բարիքալթ ասպրեր, որոնք լիարժեք են և ծախսելի, որոնց փոխարեն ես խոստանում եմ քեզ վճարել լիարժեք և ծախսելի 2000 սոլդայական ասպրեր, իմ Սիրիա գալուց 15 օր հետո, երբ կգամ Սիրիայի Սուր² կոչված վայրը իմ նավով և իմ մերձավորներով. այդ գումարը քեզ կարող եմ վճարել Սիրիայում գտնվող որևէ այլ վայ-

1 Մինչև Կաֆային ենթարկվելը (1365 թ.) Սոլդայան (Սուրոժ, Սուզդեյա, Սուզդախ) Ղրիմում ինքնուրույնութունը պահպանած նավահանգիստ էր և հատում էր իր դրամները:

2 Սուր — նավահանգիստ սիրիական ծովափին (այժմ Լիբանանում):

րում, ուր որ դու կցանկանաս: Այլապես խոստանում եմ և պարտավորվում քո պահանջի դեպքում քեզ վճարել նշված գումարի կրկնակին, որպես տուգանք, կատարված ծախսերի վերադարձով, եթե իմ այս պարտքը վճարելու ժամկետն անցնի: Որպես գրավական այս մեր պայմանի կատարման, ես տրամադրում եմ քեզ իմ ներկա և ապագա ունեցվածքը: Փաստաթուղթը կազմված է Կաֆայում ... 1289 թ. Հուլիսի 18-ին, ժամը 1-ի և 3-ի միջև, ներկայությամբ վկաներ Ստեփանոս Սանկտոպետրոարենցու, Հայ Կոստամիրի և կաշեգործ Գաբրիելի»¹:

Ինչպես երևում է, բավական ծանր էին դրամատվոթյան պայմանները՝ խախտելու դեպքում կրկնակի վճարում: Բացի այդ, ակտի տեքստի՝ դրամին վերաբերող «լիարժեք և ծախսելի» բառերը, անշուշտ, վկայում են, որ գործունեություն մեջ են եղել նաև «անծախսելի և ոչ լիարժեք» դրամներ, որի պատճառով էլ ակտում չեղտվել է դրամի պիտանիությունը: Ուրեմն, դեռ կապիտալիզմի զարգացման արշալույսին արդեն կային կեղծ դրամներ՝ որպես այդ զարգացմանը հատուկ ուղեկիցներ:

Մենք դեռ առիթ կունենանք ինչ-որ չափով դարձյալ անդրադառնալ Կաֆայում կնքված նոտարական ակտերին, այժմ, սակայն, նշենք, որ Հայ բանկային-վարկատու կապիտալը Կաֆայում 14-15-րդ դարերում շատ ավելի մեծ չափեր է ընդունում: 1470-ական թվականներին, օրինակ, քաղաքում կային 12 Հայ բանկիրներ: Նրանցից էին, օրինակ, Խուլթալ-բեյն ու նրա որդի Կայարեսը, որոնք եպիսկոպոսական աթոռին իրենց թեկնածուին նստեցնելու համար գործի մեջ էին դրել իրենց ֆինանսական միջոցները և աջ ու ձախ կաշառում էին տեղի ջնեովական բարձրաստիճան պաշտոնյաներին, բացի Հյուսպատոս Կաբելայից²: «Ինձ նողկալի առաջարկություն արվեց ստանալու ևրկու հարյուր ոսկե չերվոնեց, որից ես զգվանքով հրաժարվեցի», - 1475 թ.

¹ «Հայ-խտական առնչություններ», էջ 25:

² *Տես* ИТҮАК, № 55, 1918, с. 164 — 169:

փետրվարի 12-ին գրում էր Կաթեկան Զենովայի Սբ. Գևորգ բանկի խնամատարներին¹:

Անդրադառնա՛նք, սակայն, Ղրիմի ծովափնյա շրջանների ու առհասարակ սևծովյան ավազանի տարածքների վարչական և տնտեսական հարաբերությունները կարգավորող ամենանշանավոր իրավական հուշարձանին՝ 1449 թ. ընդունված «Սև ծովի ջենովական գաղութների կանոնադրությունը»: Նրա ընդունման համար դեռևս 1448 թ. հուլիսի 24-ին Զենովայի հանրապետության դոժի և ավազների կողմից մի խումբ պաշտոնյաների հանձնարարվում է կազմելու կանոնադրություն, քանի որ, ըստ նրանց, Կաֆայում՝

ա) կառավարչական տեղերը կարիք էին զգում նոր վերակառուցման ինչպես հարկերի չափից ավելի լինելու, հավասարապես նաև այն պատճառով, որ գոյություն ունեցող օրենքներով իրենք՝ պաշտոնյաները այլևս «ի վիճակի չեն դեկավարելու և կառավարելու»,

բ) գոյություն ունեցող կանոնադրությունների վերափոխմամբ կարգավորվի այնպես, որպեսզի նոր ընդունվող կանոնները «անխախտ և անձեռնմխելի կերպով պահպանվեն և ծառայեն Կաֆա քաղաքի և նրան ենթակա մյուս տեղերի ազգաբնակչության խաղաղ համերաշխությանը և բազմացմանը» (ընդգծումը Վ. Մ.):

«Կաֆայում և ամբողջ Սև ծովում ու ինքնավարայի թագավորությունում² գործող բոլոր պաշտոնյաները» պարտավոր էին պահպանել և հետևել ընդունվող կանոնադրությանն ու կանոններին³:

Նոր կանոնադրության ընդունման շարժառիթներն ու կանոնադրության բովանդակությունը վկայում են, որ

1 Տես նույն տեղում, № 55, 1918, էջ 164:

2 Զենովական փաստաթղթերում Ղրիմը հաճախ հորջորջվում էր Կադարիայի կամ ինքնավարայի թագավորություն: Այդ անվանումը առնչվում էր, անշուշտ, երբեմնի խաղարական թագավորության (8-9-րդ դարեր) անվան հետ: Ինքնավարա ասելով՝ տվյալ դեպքում նկատի էին առնվում Ղրիմի թագավորական իշխանությունները, իսկ 1428 թ. սկսած՝ Ղրիմի խանությունը:

3 «Հայ-խաղաղական առնչություններ», էջ 38:

դրանք բոլորը նպատակաուղղված էին Սև ծովի ավազանում և հատկապես Կաֆայում և նրա հարակից շրջաններում ջննդակաճան առևտրական կապիտալի ազատ գործառույթյան համար ստեղծելու վարչաիրավական և քաղաքական անհրաժեշտ պայմաններ: Նոր կանոնադրության ընդունումը թելադրվում էր միջազգային օրենքօր վատթարացող դրությամբ, հատկապես թուրքական առաջխաղացող ագրեսիայի սպառնալիքով, որը ստիպում էր ջննդական իշխանություններին մտահոգվել Ղրիմում և մասնավորապես Կաֆայում ապրող «ազգաբնակչության խաղաղ համերաշխության» մասին և կանխարգելել այնտեղի ջննդական պաշտոնյաների ոտնձգությունները հայերի և հույների դեմ, զգուշ վարվել թաթարների հետ:

Կանոնադրությամբ Կաֆայի և Կազարիայի գլխավոր պաշտոնյան համարվում էր հյուպատոսը, որին Ձենդակաճան հանրապետությունը նշանակում էր մեկ տարով: Հյուպատոսին կից ստեղծվել էր մի ամբողջ վարչական պաշտոնակազմ՝ 8 հոգուց բաղկացած Ավագների խորհուրդ, Գլխավոր սինդիկներ, ֆինանսական կառավարիչներ (մասսարներ) և այլն: Կանոնադրությունը հողված առ հողված նշում է բոլոր պաշտոնները, հիմնարկները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Հատուկ ուշադրություն էր դարձված Խազարիայի առևտրական կոմիտեի ընտրությունը, որը կատարում էր հյուպատոսը մասսարների, Ավագների խորհրդի անդամների, գլխավոր սինդիկների, խնամատարության կոմիտեի և դանձատան խորհրդի հետ միասին՝ լիակ քվեարկությամբ: Առևտրական կոմիտեն ուներ հատուկ կանոնադրություն, որտեղ սահմանված էին նրա իրավունքներն ու պարտականությունները: Կոմիտեի անդամները ընտրվում էին չորս ամիս ժամկետով: Առևտրական կոմիտեն պարտավոր էր այդ ժամկետն անցնելուց հետո հաշվետվություն տալ և դանձատան խորհրդին հանձնել իր ժամանակ նշանակված տուգանքների մնացորդը: «Որոշում ենք և հրամայում, — ասված էր առևտրական կոմիտեի մասին հողվածում, — որ ոչ Կաֆայի պարոն հյուպատոսը, ոչ նրա տեղապահը չեն կարող

ունկնդրել ոչ ոքի բողոքներին Առևտրական կոմիտեի դեմ, և այն բանից հետո, երբ կայացել է որոշումը, ոչ ոք չի կարող ոչ խնդրանքով, ոչ էլ այլ կարգով դիմել հյուպատոսին կամ տեղապահին, բայց այն ամենը, ինչ կներկայացվի նրանց, նրանք պետք է կատարեն անպայմանորեն կամ պայմանականորեն նշված խորհրդի (Գանձատան խորհրդի — Վ. Մ.) որոշման համաձայն՝ երկյուղ ունենալով յուրաքանչյուր և ամեն անգամվա համար տուգանվելու 25 սոնմ»¹:

Կանոնադրությամբ քաղաքի բարեկարգմանը հետևում և հարկերը գանձում էր 4 հոգուց կազմված խնամատարական կոմիտեն, իսկ դատական գործերն ու հսկողությունը պաշտոնյաների նկատմամբ իրականացնում էին սինդիկները²: Քաղաքն ուներ մշտական զինվորական պետ, որը շարունակ գտնվում էր հյուպատոսի մոտ և գործում էր նրա ցուցումով, նրա վրա էր դրված քաղաքի պաշտպանութան կազմակերպման խնդիրը³:

Բոլոր օրենքներն ու կանոնադրությունները համապարպես տարածվում էին նաև հայերի վրա, որոնք որպես քաղաքի հիմնական բնակիչներ, ենթարկվում էին դրանց, թեև դրան զուգընթաց իրենց ազգային-եկեղեցական և մշակութային, առհասարակ զաղութի ներքին կյանքի հարցերում օգտվում էին որոշակի ինքնավարությունից: Կանոնադրությունը, օրինակ, հատուկ հոգված ուներ հայերի, հույների և ոչ կաթոլիկ այլ ժողովուրդների իրավունքները տեղի լատին եպիսկոպոսի ոտնձգություններից պաշտպանելու համար (այդ մասին, սակայն, Յրգ գլխում):

Հայերը նյութական ակնառու մասնակցություն ունեին Կաֆայի պաշտոնեությունից վարձատրմանը՝ ելնելով առևտրի և առհասարակ իրենց տնտեսական գործունեություն համար ապահով վիճակ պահպանելու խնդրից: Կաֆայի ոստիկանապետ Բունավենտուրայի ծառայության ժամ-

1 ЗООИД. Т. V, с. 685.

2 Տես նույն տեղում, էջ 655-665, 679-683:

3 Տես նույն տեղում, էջ 712-720:

կետը ևս մեկ տարով երկարացնելու առթիվ 1455 թ. Զենովա ուղարկած իրենց խնդրագրում հայերը, օրինակ, ցավ էին հայտնում, որ թեև մինչև Բուճալենտուրայի սլաշտոնավորումը իրենք զգալի գումար էին ծախսում քաղաքի գիշերային ու ցերեկային պահակազորի վրա, այդուհանդերձ, իրենց դրուժյունը անապահով էր, իսկ ունեցվածքը հափշտակում էին¹:

Նույնպիսի մի խնդրագիր էին ուղարկել նաև հույները: Հայ և հույն առևտրական կապիտալի համար ապահով պայմաններ ստեղծելու ձգտումը հարկադրել էր նրանց մասնակցելու քաղաքի ոստիկանության վարձատրման գործին, որ նաև անպայման վկայում է այդ կապիտալի ընդգրկուն չափերի մասին:

Զգալի էր հայերի դերը Կաֆայի պաշտպանության մեջ: 14-15-րդ դարերում նրանք ողջ համայնքի ուժերով, յուրաքանչյուրն ըստ իր կարողության, քաղաքը պատել էին ամրակուռ պարսպով, որ կոչվում էր Հայոց բերդ: Պարիսպն ուներ մեկ մղոն երկարություն, այն գոտում էր 25 քայլ լայնությամբ քարապատ խրամը: Պարիսպը շարված էր կոփածո քարերից՝ 20, 40 և 60 կանգուն հեռավորության վրա գտնվող գոթական աշտարակներով²:

* * *

13-14-րդ դարերում Ղրիմում իր առևտրական նշանակությամբ խոշոր նավահանգիստ էր Սուդակը: Սուդակի հայերը 12-րդ դարից սկսած քաղաքի հիմնական բնակիչներից էին, որ վկայված է զրավոր մի շարք աղբյուրներով, որոնց թվում են նաև հունական հայսմավուրքի տեղեկությունները, ինչպես և սլավոնական առաքյալի կենսագրութ-

1 *См* Колли П. А. Каффа в период владения ею банком св. Георгия, с. 34.

2 *См* Բ ժ չ կ ե ա ն Մ., Ծանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի հայկազանց, Վենետիկ, 1836, էջ 332-334, 340; *Atti, t. VII, I, p.* 277-278; Երևանի Մատենադարան, ձ. № 7442, թ. 241 բ.; «Հայ-խալական առնչություններ», էջ 81-82:

յան այն հատվածը, որը այլ ժողովուրդների շարքում որպես Սուդակի բնակիչներ առաջինը հիշատակում է հայերին¹: Հայերը Սուդակում զբաղվում էին առևտրով և այդեդործությամբ:

Ռուբրոուկի վկայությամբ, Սուդակում 13-րդ դարի կեսերին կանգ էին առնում Անատոլիայից ժամանած և հյուսիսային երկրներ գնացող, ինչպես նաև Ռուսաստանից և հյուսիսային այլ տարածքներից վերադարձող և հարավ մեկնող վաճառականները: «Նրանք բերում էին,— ասում է Ռուբրոուկը,— կնգումի, սկյուռի և թանկարժեք այլ մորթիղեն. ուրիշները բերում են թանկարժեք գործվածքներ, բուժազե, մետաքսե կտորեղեն և բուրավետ արմտիք»²:

Եվ իրոք, 13-14-րդ դարերում Սուրբ միջնորդ կապող օղակ էր հյուսիսային և հարավային երկրների առևտրական շփումներում, առևտուր, որի մեջ որոշակի էր հայերի մասնակցությունը: Հենց հյուսիսի հետ առևտրի մեջ Սուդակի դերի աննախընթաց բարձրացումն էր, որ 14-15-րդ դարերում Մոսկվայում կյանքի կոչեց առևտրական մի ամբողջ թաղամասի առաջացումը «Սուրբցի հյուրեր» անվամբ³: Սակայն այդ մասին առանձին:

13-րդ դարում Սուդակում խալաացիները հիմնել էին իրենց առևտրական կետերը: Վենետիկցիներն, օրինակ, այստեղ պահում էին նույնիսկ իրենց հյուպատոսը, որի իշխանությունը, սակայն, սուդակցիները չէին ճանաչում և ընդունում էին իրենց ենթակայությունը թաթարական իշխողներից, թեև պահպանում էին ինքնավար վիճակ⁴:

Արաբ հեղինակ Աբուլֆեդը 1321 թվականին Սուդակը համարում էր Կաֆային հավասար առևտրական հանգույց: Մրցակցային վիճակից ելնելով Կաֆայում նստած

1 *Տես* Б р у н Ф. Черноморье. Ч. II, Одесса, 1880, с. 129; ЗООИД, т. У, с. 598, 603, 609:

2 Г и л ь о м д е Р у б р у к. Путешествие в восточные страны (1253—1255), М., 1957, с. 88.

3 *Տես* С ы р о е ч к о в с к и й В. Е. Гости—сурожане, М., 1936, с. 236.

4 *Տես* ЗООИД, т. У, с. 831.

ջենովական վարչակազմը (մինչև 1365 թ. Սուղակը Կաֆային միացնելը) դիմում է մի շարք միջոցների խոչընդոտելու համար Սուղակում կատարվող առևտուրը: 1316 թ. կանոնադրության մեջ, օրինակ, այդ մասին կար հատուկ հոդված. «Սուղայայում ապրանք չվաճառելու կամ գնալու մասին» վերնագրով, որտեղ ասված էր. «նմանապես որևէ անձ, որը հանդիսանում է քաղաքացի (Կաֆայի քաղաքացի — Վ. Մ.) կամ օգտվում է քաղաքացու իրավունքից, չպետք է Սուղայայում գնի կամ վաճառի կամ որևէ մեկին փոխանցի իր կամ ուրիշ անձի միջոցով որևէ ապրանք, այլապես նրանից կգանձվի նշված տույժը: Բացի դրանից, արգելվում է նաև որևէ մեկին 3 օրից ավել մնալ Սուղայայում, նույնիսկ եթե նա այնտեղ չի մնում առևտուր անելու նպատակով: Այն անձը, որը որևէ ձևով կխախտի այս օրենքը, կվճարի տուգանք՝ 100 ոսկե հիպերպերի չափով»¹: Նույն կանոնադրության մեկ այլ հոդվածով արգելվում էր Սուղայայում և Կաֆայի միջև ընկած ծովափնյա որևէ կետում ապրանք բեռնաթափել՝ դրա համար ևս սպառնալով տուգանել 100 ոսկե հիպերպեր»²:

Սակայն առևտրի մեջ Կաֆայի դերի բարձրացմանը զուգընթաց Սուղակը գնալով կորցնում է իր նշանակությունը, թեև Ղրիմից Մոսկվա եկող վաճառականներին ըստ ավանդույթի շարունակում էին կոչել «սուրոթցի հյուրեր»³: «Ղրիմից ելածները, մշտապես հարավային շուկաներ մեկնող վաճառականական խմբերի անդամները, կարող էին այդ ամբողջ խմբին հաղորդել սուրոթցիներ անվանումը»⁴:

14-րդ դարում սուրոթցի հյուրերը հանդես էին գալիս Մոսկվայի վաճառականության ամենաբարձր խմբում և հիմնականում իրենց ձեռքն էին վերցրել Ղրիմի և ընդհանրապես հարավի հետ կատարվող առևտուրը: Ազդային կազմով նրանք միատարր չէին. այդ առումով այն համապատասխանում էր ժամանակի Ղրիմի վաճառականության

1 Monumenta historiae patriae, II, p. 380.

2 Տես նույն տեղում:

3 Сыроечковский В. Е., *н.շ. ավ.*, էջ 236:

աղգային կազմին, այն վաճառականության, որի ձեռքում էր կենտրոնացված առևտուրը. «Հյուրերի» մեջ հիմնականում մտնում էին նախ հայ, ապա նաև հույն վաճառականները: Սուրոթցի հյուրերից էր, օրինակ, 14-րդ դարում Մոսկվայում հաստատված ղրիմահայ վաճառական Աբրահամը, որի տանը բռնկված հրդեհը տարածվում է ամբողջ Մոսկվայով մեկ¹:

* * *

Տարանցիկ առևտրի ցամաքային աչքի ընկնող հանդույցներից էր Սուրխաթը (Հին Ղրիմը), որը ժամանակին, մինչև Ղրիմում առանձին խանության ստեղծումը (1428 թ.), տեղի մահմեդականության կենտրոնն էր և որտեղ, արաբ հեղինակ Իբն Բատտուտայի վկայությամբ, նստում էր Ոսկե Հորդայի խանի տեղապահ էմիրը²:

Սուրխաթը, որպես քարավանային առևտրի կենտրոն և տարանցիկ օղակ, կարևոր դեր էր խաղում լեհ-ռուս-ուկրաինական և առհասարակ Արևելյան Եվրոպայի մյուս շրջանների ապրանքափոխականության մեջ: Սուրխաթը իրեն էր ձգում Կաֆայի վաճառականների ուշադրությունը իբրև արևելյան և ռուսական ապրանքների ձեռքբերման կարևոր շուկա: Կաֆայի վաճառականները այստեղ գնում էին ռուսական մորթեղենը, խորեզմից բերված մետաքսն ու համեմունքները³: «Ղրիմի նահանգային գլխավոր քաղաքը, — գրում է Վ. Հեյդը նկատի ունենալով Սուրխաթը, — զորեղ կապեր ուներ համայն Ղփչաղի մայրաքաղաք Սարայի հետ և քարավանային սայլերով իրեն էր ձգում հյուսիսից և արևելքից բերվող ապրանքները, և քանի որ ինքը դրանց նկատմամբ պահանջարկ չուներ, դրանք հանձնում էր ջենովացիներին, որոնք ապրանքները Կաֆայից արտահանում

1 Տես նույն տեղում, էջ 23:

2 Տես Тизенгаузен В., 4. 2-րդ, էջ 280:

3 Տես Heyd W. նշվ. աշխ., էջ 178:

էին բոլոր ուղղութիւններով, որովհետեւ թաթարներն իրենք ծովագնաց ժողովուրդ չէին»¹:

Սուրխաթի տնտեսական կյանքին շունչ ու եռանդ տվողը հայերն էին, որոնք քաղաքի բնակչության մեջ պատկառելի թիվ էին կազմում: 14-րդ դարում քաղաքում գործում էին ավելի քան 10 հայկական եկեղեցիներ, նրան մերձակա գտնվում էր ղրիմահայոց հոգևոր կենտրոն Սուրբ Խաչ վանքը (կառուցված 1358 թ.)²: Քաղաքում և թե նրա միջոցով կատարվող առևտրում վճռական էր հայերի դերը: Քանի որ հայ և մյուս վաճառականների կողմից Սուրխաթ բերվող ապրանքները մեծ պահանջարկ էին ներկայացնում և շահույթի աչքի ընկնող աղբյուր էին, ապա այստեղ ժամանող վաճառականների թիվը գնալով ավելանում է: Դա մի հայտնի չափով հարվածում էր ջենովական Կաֆայի առևտրական մենաշնորհ վիճակին և սպառնում թաթարական տիրակալության ոլորտում գտնվող այս քաղաքը տեղափոխել առևտրի ծանրության կենտրոնը: Ջենովայի հանրապետության 1316 թ. ընդունած կանոնադրությունը խիստ սահմանափակումներ և արգելքներ է դնում Սուրխաթի հետ ջենովացիների կողմից կատարվող առևտրի վրա: Այդ առթիվ ընդունված հոգվածում ասված էր. «Որևէ քաղաքացի կամ որևէ մեկը, որն օգտվում է քաղաքացու իրավունքից (խոսքը Կաֆայի քաղաքացիների մասին է – Վ. Մ.), չի կարող և չպետք է իր համար կամ ուրիշի համար տանի կամ տանել տա որևէ ապրանք Սուկատ (Սուրխաթ), սակայն որևէ մեկը կարող է այնտեղ գնալ ու մնալ 8 օր և այդ ժամանակամիջոցում գնել ապրանքներ, որոնք 8 օրվա ընթացքում պետք է տանի կամ փոխադրել տա այդ վայրից, և եթե պատահամբ որևէ մեկը դեմ գնա այդ բոլորին, պետք է վճարի տույժ՝ ապրանքների ընդհանուր արժեքի քառորդի չափով: Այս տույժը, ինչպես վերևում նշվեց, կպարտադրվի կաֆացի այն անձանց, որոնք կմնան 8 օրից

1 Նույն տեղում:

2 Տես Տ ա թ ե ի կ Ս ա ր գ ս յ ա ն, Միջնադարյան Սուրխաթի հայերը և նրանց հավատատեղիները, ՊԲՀ, 2000 թ., №1, էջ 107-123:

ավելի նշված վայրում, պարտադրվող տուլժի չափն է 100 ոսկե հիպերպեր»¹:

Ինչպես տեսնում ենք, Սուդակի հանդեպ ընդունած արգելիչ հոգվածի համեմատ այս հոգվածը ահագին լիբերալ էր և այդ մեղմությունը դրսևորվել է նրանում, որ հոգվածը չէր արգելում Սուրխաթում ապրանքներ գնել և 8 օրվա ընթացքում դրանք այնտեղից տեղափոխել: Պարզապես հնարավոր չէր Կաֆայի վաճառականությունը զրկել Սուրխաթի նման շուկայում ապրանքների գնելուց, քանի որ դա կվնասեր ոչ միայն Կաֆայի, այլ առհասարակ Արևմուտքի հետ առևտրի ծավալմանը, որովհետև Սուրխաթը արևելյան և հյուսիսի ապրանքների հայթայթող նշանավոր կենտրոն էր: Միաժամանակ, վաճառականներին արգելելով Սուրխաթ ապրանքներ տանելը, օրենքը ստիպում էր քարավանային առևտրով զբաղվող վաճառականությունը գալ Կաֆա՝ արևմուտքից բերված ապրանքներ գնելու համար:

Սուրխաթը իր առևտրական նշանակությունը պահպանում է մինչև 15-րդ դարի առաջին տասնամյակները, որից հետո, մայրաքաղաքը Բախչիսարայ տեղափոխվելու պատճառով, քաղաքը սկսում է աստիճանաբար անկում ապրել և անշքանալ:

* * *

15-րդ դարի վերջերից իր առևտրական նշանակությունը կորցրած Սուրխաթին փոխարինում են նոր կենտրոններ և դրանց թվում առաջինը՝ Ղարաուսուբաղաբը: Քաղաքի անվան մեջ արդեն արտահայտված էր նրա առևտրական նշանակությունը: Այդ դերը առևտրում քաղաքը պահպանեց ընդհուպ մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին (1783 թ.):

Ղարաուսուբաղաբ էին ներկրվում Ղրիմում արտադրված ապրանքները, որոնք այնուհետև Թևոդոսիայի և Եվպատորիայի միջոցով արտահանվում էին Եվրոպա (Ստամ-

1 Monumenta historiae patriae, t. II, էջ 379; «Հայ-խապական առնչություններ», էջ 27:

բուլով) և կովկասյան շրջաններ: Քաղաքը հիւրավի դարձել էր Ղրիմում արտագրովող այնպիսի ապրանքների շուկա, որպիսին էին բուրդը, կաշին, մասամբ նաև հացահատիկը¹: Արևմուտքից եկած վաճառականը այստեղ ձեռք էր բերում ռուսական մորթեղենը, իսկ արևելյան վաճառականը՝ Արևմուտքից ստացված ապրանքները՝ բուժիչ խոտեր, թանկարժեք քարեր, հայելիներ, մահուղ²:

Քաղաքի բնակչության մեջ զգալի թիվ էին կազմում հայերը, որոնք ամփոփված էին լուսավորչական և կաթոլիկ համայնքներում: Ղարասուում արտագրված մի շարք հայերեն ձեռագրերում այն բնորոշվում է որպես հոյակապ քաղաք³: Հակոբ Ասեցին, որն այստեղ է ապրել 1640-ական թվականներին, չափածո տողով շատ գիպուկ նկարագրել է առևտրի ծաղկուն և աշխույժ վիճակը Ղարասուում, գրելով՝

Ըզքեվրասարոյն Գիւմ գիտի թրւոյն,
Սինն մեծ գոլով անայ պիւմուն,
Եւ շատ խանութներ պազար լի չարսուն,
Տեսնելէր տեսնէր նայ ի Ղարասուն⁴:

Ղարասուի առևտուրը զգալի չափով կատարում էին տեղի հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչները, որոնք զբաղվում էին ոչ միայն ղրիմյան ապրանքների արտահանությամբ, այլև «առանձին երկրներից բերում էին [Ղրիմ] այն ամենը, ինչ անհրաժեշտ էր հարուստի պերճանքի և աղքատ օրամշակի կյանքի համար»⁵:

Ղարասուբազարի հայերի առևտրական ակտիվ գործունեությունը շարունակվեց նաև թերակղզին Ռուսաստանին միացնելուց հետո: Ղրիմի գործերին քաջատեղյակ Պա-

1 Տե՛ս К он д о р а к и В. X., նշվ. աշխ., հտ. 4, մաս 14, էջ 52:

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս Մատենադարան, ձեռ. 6660, Թ. 61:

4 Նույն տեղում, ձեռ. 3441, Թ. 180:

5 К он д о р а к и В. X., նշվ. աշխ., էջ 51:

վել Սուլմարոկովը վկայում է, որ կաթուղիկ հայերը քաղաքում համարվում էին ամենալավ վաճառականները¹:

Մենք դեռ առիթ կունենանք ցույց տալու, որ 17-18-րդ դարերում Թեոդոսիայի և Ղարասուբազարի հետ միասին Ղրիմի աչքի ընկնող առևտրաշահ քաղաքներից էին Պերեկոպն ու Արմյանսկի բաղարը՝ Հյուսիսի հետ, Կերչը՝ Ազովի ծովով, իսկ Եվպատորիան ու Բալակլավան՝ Արևմուտքի հետ կատարվող առևտրում:

* * *

Վերը առիթ ունեցանք շոշափելու 13-15-րդ դարերում տավրիկյան առևտրի մեջ հայերի մասնակցությունը ու դերի հարցը՝ գլխավորապես դրանք մեկնաբանելու առումով: Մինչդեռ ղրիմահայոց առհասարակ առևտրական գործունեությունը, միջնադարում նրանց խաղաղած անուրանալի դերը Արևմուտք-Արևելք ապրանքափոխանակման մեջ կարիք ունի շատ ավելի հանգամանալից լուսաբանման:

Ղրիմահայերը գործունե ու երկարատև առևտրական կապերի մեջ են եղել Եվրոպայի ու Ասիայի այնպիսի երկրների հետ, ինչպիսիք էին Լեհաստանը, Հունգարիան, Թուրքիան, Վենետիկի ու Ջենովայի հանրապետությունները, Կիլիկիան, Փոքր Ասիան, Կովկասը, Ռսկե Հորդան, Ռուսաստանը և այլ երկրներ: Պատահական է, որ ղրիմահայությունը շրջանում լայն տարածում ուներ այն ասույթը, թե՛ «Ուլ որ տարին մեկ անգամ Պոլիս, Իզմիր, Վենետիկ, Մարսել, մինչև Լոնդոն և Լիսաբոն ճանապարհորդություն չի անում, մարդ չէ»²:

Շատ սերտ էին ղրիմահայոց առևտրական կապերը լեհական քաղաքների հետ: Ոչ միայն ջինսովացիների շրջա-

1 *Сбънъ Досути крымского судьи. Второе путешествие в Тавриду Павла Сумарокова. Ч. 1, СПб., 1803, с. 70.*

2 ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Հ. Աճառյանի «Հայ գաղթականության պատմություն» ձեռագիր աշխատությունը, իրիմ ենթաբաժինը, էջ 7:

նում, այլև 16-18-րդ դարերում էլ կաֆաՀայերը առևտրական մշտական կապեր ունեին Լվովի և նրա վրայով ողջ Արևմտյան Եվրոպայի քաղաքների հետ: Հենց առևտրական մշտական կապերն էին, որ Ղրիմահայերին մղում էին իրենց առևտրական գործակալությունները պահել Լեհաստանում, Գալիցիայում, Հունգարիայում, Տրանսիլվանիայում և Բա-նատում¹:

Ղրիմահայոց առևտրական գործունեությունը հաճախ արտացոլում էր գտնում հայերեն ձեռագրերում: Այսպես, օրինակ, 1633-1635 թթ. Կաֆայում արտագրված ձեռագրի հիշատակարանը կարևոր է համարել հիշել երիտասարդ հայ վաճառական մի ոմն Դեմիրի. «յիշեսջիք զստացող սորա առաջի զենլոյն Քրիստոսի զԿաֆայեցի Դեմիրն որ էր տղայական հասակաւ և զնացեալ ի քաղաքն լեհաց վասն վաճառականութեան և եկաց ի քաղաքն, որ կոչի Նաշ»²:

Հայ վաճառականության երևելի գործունեությունը Լվովում և առհասարակ լեհական տիրապետության տակ գտնվող շրջաններում էլ էր վրիպում Ղրիմի թաթար խաների ուշադրությունից: 1509 թ. Մենգլի-Գիրեյ խանը Իվան 3-րդին ղրիմահայ վաճառական Ավետիքի մասին ուղարկած հրովարտակում, նշելով վերջինիս առևտրական գործունեության շրջանները, դրանց մեջ ներառնում է Ռուսաստանն ու Լեհաստանը: Հրովարտակում խանը գրում էր. «Սրանից առաջ Կաֆայում ապրում էր իմ հպատակը, անունը՝ Ավետիք, իմ ենթական և այժմ զնացել է թագավորական երկիր (Լեհաստան — Վ. Մ.) առևտուր անելու, իսկ թագավորական երկրից քո՝ իմ եղբոր, երկիրն է եկել»³:

Ղրիմահայ վաճառականությունը շատ ավելի արդյունավետ և մշտատև գործունեություն ունեւր Լվովում: Դա ունեւր իր պատմական ու տնտեսական պատճառները:

1 Տե՛ս Մատենադարանի արխիվ, Անհատական անձանց ֆոնդ, թղթ. 137, վավ. 68, թ. 2:

2 Երևանի Մատենադարան, ձեռ. № 9489, թ. 589:

3 Сборник русского исторического общества. Т. 95, СПб, 1895, с. 76.

Նախ այն, որ 16-18-րդ դարերում Լվովը դարձել էր Արևմուտքը Արևելքի հետ կապող թերևս ամենանշանավոր ցամաքային հանգույցը, և շատ հաճախ այդ հանգույցի հիմնական դերակատարները լեհահայ և ղրիմահայ առևտրականներն էին: Լվովում ասլորում էր նաև ժամանակին ղրիմահայ գաղթականութունից ելած և շարունակ ղրիմահայերով համալրվող ստվարաթիվ և հզոր հայկական գաղութ, որը տնտեսական և հոգևոր-մշակութային թելերով կապված էր նրանց հետ:

Լվովի դերը առևտրի մեջ 16-18-րդ դարերում բարձրացել էր հատկապես միջազգային քաղաքական կյանքում կատարված լուրջ տեղաշարժերի պատճառով, երբ Կաֆայի անկման հետևանքով (1475 թ.) իտալացիները կորցրել էին իրենց կշիռը, և հենց այդ աղիւսով առաջնային նշանակութուն էր ձեռք բերել Լվովը: Ցամաքային ուղիով առևտուրը Լվովի վրայով խթան է ստանում նաև այն պատճառով, որ գրավելով Կ. Պոլիսը, թուրքերը մշտապես խոչընդոտներ էին կանգնեցնում նեղուցներով կատարվող նավադնացության առջև, և քարավանային երթևեկը Արևելյան Եվրոպայի հետ Լվովով առաջնային էր դառնում: Ղրիմի հայերը կաղմակերպում էին արևելյան ապրանքների վաճառքը, որին մասնակցում էին Լվովի, Գդանսկի, Կրակովի և Նույնիսկ Քյոլնի և Նյուրնբերգի վաճառականները¹:

Միջին դարերում Լվովի և նրան հարակից տարածաշրջանների տնտեսական կյանքում հայերի խաղաղած շոշափելի դերը բարձր է գնահատել ժամանակաշրջանի իրադարձություններին և պատմությունը քաջատեղյակ ուկրաինացի պատմաբան Ի. Լիննիչենիկոն իր «Հայերի հասարակական դերը Հարավ-արևմտյան Ռուսիայի անցյալում» հիմնավոր հետազոտությունում մեջ: Հեղինակը մասնավորապես գրել է. «Եթե միջին դարերում հարավուսական որոշ կենտրոններ հասել էին փառքի և հարստության, ապա նրանք մի նշանակալից չափով դրանով պարտական էին

1 «Հայրենիք», 1929, № 9, էջ 151:

արևելքից եկած, անսովոր աշխույժ, եռանդուն և ձեռներեց ժողովրդին (հայերին), որը դարձել էր արևմուտքի և արևելքի միջև տնտեսական հարաբերությունների միջնորդ...

Այլ պայմաններում հայերին կարող էր տրամադրվել մարդկության էլ ավելի նախանձելի և էլ ավելի երևելի դեր՝ երկու աշխարհների կուլտուրաների միջնորդների, արևելքը քաղաքակրթողների դերը, արևելք, որը սառցե մեծաբեկորի նման քարացել է սարի գագաթին»¹:

16-18-րդ դարերում տավրիկյան առևտրի մեջ որքան թուլանում էր եվրոպացիների դերը, այնքան կարևորվում էր հայերի մասնակցությունը: Նշենք, որ այդ շրջանում Ղրիմի մի շարք քաղաքների առևտրական նշանակությունը բավականին բարձրանում է: 18-րդ դարի հեղինակ, Կաֆայի և Թաթարստանի կաթոլիկ պրեֆեկտ Էմիլիո Դորտելի դը Ասկսիլն իր «Սև ծովի և Թաթարստանի նկարագրությունը» երկում, նկատի առնելով 17-րդ դարի սկզբներին Կաֆայում կատարվող աշխույժ առևտուրը, ականատեսի վկայությամբ, հաղորդում էր հետևյալը. «Կաֆան հարուստ է մսով, գինով, թռչնեղենով, ձկով, կաթնամթերքով և մրգերով, իսկ ձմռանը ածուխով և փայտով: Թաթարական դարպասներով ամեն օր քաղաք են մտնում 500, 600, 900 և մինչև 1000 սայլեր, իսկ երեկոյան նրանցից ոչ մեկի վրա ոչինչ չի մնում վաճառելու համար... քաղաքը բնակեցված է թուրքերով, հույներով, հայերով և հրեաներով: Թուրքերն այնտեղ ունեն մինչև 70 մզկիթ, հույները՝ մինչև 15 եկեղեցի և մետրոպոլիտ. հայերն ունեն մինչև 28 եկեղեցի և եպիսկոպոս, հրեաները՝ երկու սինագոգ»²:

Հնարավորություն ունենալով ազատորեն երթևեկելու թաթարական տարածքներում, թաթարական արք ու բարձր լավ ծանոթ հայ առևտրականները «այնպես էին

1 Линниченко И. Общественная роль армян в прошлом Юго-Западной Руси. Киев, 1895, с. 9.

2 ЗООИД, т. 24, ч. II, с. 118.

վարում իրենց գործերը, որ լուրջ ընդհարումներ գրեթե չունեին»¹, — գրում են Ե. Ս. Զևակինը և Պենչկոն՝ նկատի ունենալով 15-րդ դարը, այնինչ, 1475 թվից հետո չունենալով լուրջ մրցակիցներ առևտրի մեջ, հայերը նվաճել էին թերակղզու ամբողջ առևտուրը²:

Թաթարական ֆեոդալական ավազանին, որոշակի նյութական չահագրգռությունից ելնելով, լիուլի ընդառաջ էր գնում հայերի առևտրին՝ տեսնելով, որ նրանց շնորհիվ խանություն են ներմուծվում արևելյան և արևմտյան ապրանքներ: Այդ ավազանին երբեմն նույնիսկ խրախուսում էր հայերի առևտրական գործունեությունը՝ նրանցից ընտրելով գործակալներ ուրիշ երկրներում առևտրի և այլ գործերի համար: Այդպիսի մի հայ գործակալի հանդիպում ենք 1702 թ. Դուբոսարի մոտերքը կազակ ատաման Շպակից (Ֆյոդոր Բելեցկուց) Ղրիմի խանի համար գերիններով հարկ վերցնելիս. «ընդունվեց (Շպակի կողմից — Վ. Մ.) և կենդանի տուրքով բավարարվեց հայը Ղրիմի այստեղի «օտամանը»³, — հաղորդում է ժամանակի փաստաթղթերից մեկը: 16-18-րդ դարերի ճանապարհորդներ և հեղինակներ Մ. Բրոնեվսկին, Մ. Լիտվինը, էրնստ Կլեմանը, մեզ արդեն ծանոթ Դորտելի դը Ասկոլին⁴, որոնք երկար ժամանակ եղել էին Ղրիմում և իրադարձությունների բերումով լավատեղյակ էին թերակղզու անցքերին, վկայում են թերակղզու ներքին և արտաքին առևտրում հայերի ունեցած գերակա դերի մասին:

Մահմեդական աշխարհի, ռուսական շրջանների, Եվրոպայի, մի խոսքով, Արևելք-Արևմուտք առևտրատնտեսական առնչություններում ղրիմահայ վաճառականների

1 "Исторические записки". 1940, № 7, с. 27.

2 *Sh' u K o n d o r a k i* В. X., *նշվ. աշխ.*, հ. 3, մ. 9, էջ 66:

3 Кочергин В. А. Наброски по истории города Дубоссар и прилегающего Приднестровья. Одесса, 1911, с. IV.

4 Б р о н е в с к и й М. Описание Крыма. — ЗООИД, т. VI, с. 357. Л и т в и н М. Мемуары. — "Киевская старина", 1889, № 25, вып. 1, с. 8 — 15; Д'А с к о л и, *նշվ. աշխ.*, էջ 91-132. Т у н — м а н н. Крымское ханство. Симферополь, 1936, с. 30.

ունեցած երևելի մասնակցության մասին են խոսում այն կնիքները, որ նրանք ունեցել և օգտագործել են զանազան գործարքներ կնքելիս՝ իբրև իրենց ինքնությունը հաստատող ստորագրություններ: Յուրաքանչյուր հայ վաճառականի կնիքի վրա նրա անունը դրոշմված էր անվան հայերեն, ռուսերեն, լատիներեն և արաբերեն սկզբնատառերով, որոնք, բնականաբար, հարկավոր էին արևելյան և արևմտյան տարբեր երկրներում գործածելու համար¹: Գրիգոր Դարանաղցին, որ 17-րդ դարի սկզբներին այցելել էր Ղրիմ, նույնպես հայտնում է, որ ղրիմահայերը ճանաչված վաճառականներ էին²:

Ինչպես նկատեցինք, ղրիմահայոց առևտրական կապերը միջին դարերում անընդմեջ էին Սև ծովի փոքրասիական շրջանների և հատկապես Տրապիզոնի, իսկ վերջինիս վրայով՝ Մերձավոր և Միջին արևելքի հետ: Միաժամանակ, նրանք Տրապիզոն հայթայթված արևելյան ապրանքները փոխադրում էին Ղրիմ և վերջինիս վրայով՝ Եվրոպա: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայությամբ, Տրապիզոնը միջնորդ օղակ էր Առաջավոր Ասիայի, Ռուսիայի և պոլովցիների տափաստանների միջև կատարվող առևտրի համար, և այնտեղ բերված ապրանքները նախ փոխադրվում էին Ղրիմ և ապա՝ հյուսիս³: Արդեն տեսանք ղրիմահայերի գործուն մասնակցությունը Տրապիզոնում և նրա միջոցով կատարվող առևտրին դեռևս 13-րդ դարի երկրորդ կեսում: Այդ մասնակցությունը առավել ընդգրկուն էր 14-15-րդ դարերում, երբ հենց առևտրի պահանջների բերումով ջենովական վարչակազմը այստեղ, ինչպես և հարակից Սինոպում պահում էր հյուպատոսներ⁴:

Ղրիմի հայ առևտրական դասի ներկայացուցիչները այցելության վայրերն էին Կովկասը և բուն Հայաստանը: Իրենց հերթին բուն Հայաստանի վաճառականներն էլ

1 Մատենադարան, ֆ. Կաթողիկոսական դիվան, վ. 4, թ. 43:

2 Տես Դ ա ռ ա ն ա ղ ց ի Գ Ր Ի Գ Ր Ի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 54:

3 "Византийский временник". Т. XXV, 1928, с. 66.

4 Տե՛ս ЗООИД, Т. V, с. 796—801 և 809.

գտնվում էին Ղրիմի և նրա միջոցով Եվրոպայի ու ռուսական շրջանների հետ մշտական առևտրական կապերի մեջ: 18-րդ դարում, գողթնեցի վաճառականները, օրինակ, Կաֆայում մի քանի հյուրանոցներ էին զբաղեցնում¹:

Ղրիմահայ վաճառականությունից ձեռքբերված և Ղրիմի խանությունից ենթակա հյուսկովկասյան այլ շրջաններում վտանգներով հղի առևտուր անելու մենաշնորհը: Եվրոպացի ճանապարհորդ Լա Մոթրեն, որը 1711 թ. եղել էր Ղրիմում (Բախչիսարայում, Կաֆայում, Ղարասուում և այլուր), հայտնում է, թե Ղրիմի խանը միայն հուլյն և հատկապես հայ վաճառականներին է արտոնում այցելել խանությունից ներքին մարզերը, նույնիսկ Ձերքեղիա, որտեղից հայերը արտահանման շուկա էին բերում մորթեղեն, մեղր, մուշտակներ, մոմ և այլ ապրանքներ: Լա Մոթրեն Ղրիմում հանդիպել էր այնպիսի հայ վաճառականների, որոնք 15 անգամ եղել էին Ձերքեղիայում²: Ըստ Լա Մոթրենի, 16-րդ դարում ղրիմահայերի ձեռքում էր ձկնկիթի առևտուրը, որը նրանք թերակղզի էին ներմուծում նույնպես Ձերքեղիայից³: Ջենովացիների ժամանակ և նրանց հաջորդած դարերում էլ (16-18-րդ դդ.) Ազովի մերձափնյա վայրերում ղրիմահայ վաճառականները առևտուր էին անում, և պատահական չէր նշանավոր Տանա քաղաքում հայկական եկեղեցու գոյությունը⁴:

Տրապիզոնի և Կ. Պոլսի վրայով ղրիմահայերը շարունակ առևտրական կապեր էին պահպանում Սիրիայի և Կիլիկիայի հետ: Սիրիա-Ղրիմ առևտրական ուղին նախ մտնում էր Կիլիկիա, ապա ցամաքով Կեսարիայի և Սվասի վրայով հասնում էր Սինոպ կամ Տրապիզոն, իսկ այնտեղից՝ Սև ծովով Ղրիմ՝ Կաֆա և Սուդակ⁵: Հ. Մանանդյանի¹ և Ի.

1 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 1050, Թ. 311:

2 Տե՛ս «Հայրենիք», 1950, № 8, էջ 97:

3 Տե՛ս նույն տեղում:

4 Տե՛ս Ա լ ա ո յ ա ն Ա., Պատմություն հայ դավթականության, Հ. Բ, Գազիրե, 1955, էջ 363:

5 М и к а е л я н Г. Г. История киликийского армянского государства. Ер., 1952, с. 197.

Պետրուշևսկու² կարծիքով, մոնղոլական նվաճումներից հետո Տանա և Կաֆա մտնող առևտրական ուղիները առավել կարևոր նշանակություն են ստանում՝ հավանաբար վաճառականություն հանդես գալիս մոնղոլների ցուցաբերած հանդուրժողական վերաբերմունքի պատճառով:

16-18-րդ դարերում, ինչպես նշվեց, տավրիկյան (սևծովյան) առևտրի գլխավոր ուղղություններից մեկը մտնում էր Կ. Պոլիս, որտեղից այդ ուղին բաժանվում էր երկու մասի՝ մեկը դեպի Արևմտյան Եվրոպա, իսկ մյուսը՝ Կիլիկիա, Սիրիա, Եգիպտոս: Ղրիմահայ վաճառականության այցելությունները Կ. Պոլիս, Զմյուռնիա մշտական բնույթ ունեին, և մասամբ հենց նրա միջոցով խթանվեց նշված վայրերում հայկական գաղթօջախների առաջացումը³:

Կ. Պոլսում Ղրիմահայ վաճառականների գործունեությունը արտացոլվել է 13-րդ դարի նոտարական ակտերում: Այսպես, 1281 թ. հունիսի 7-ին Կաֆայում կնքված նոտարական ակտով Մանվել Բայալանին և գավիացի Բորբորինոն պայմանավորվում են Կ. Պոլսի նավահանգստում ծովի հատակից հանել հայ Պոլիին (Պողոսին) պատկանող 120 ֆունտ (48 կգ) արծաթը, որը սուզվել էր այնտեղ: Դրա համար արծաթատեր հայ վաճառականը պարտավորվում էր նրանց վճարել 200 ոսկե հիպերպեր⁴: Նույն թվականի հունիսի 23-ին Կաֆայում կնքված ակտով հաստատվում էր առևտրական երկկողմանի մի գործարք, որտեղ Ղրիմահայ վաճառականը հանդես էր գալիս ապրանքատիրոջ, իսկ մյուս կողմը՝ նավատեր առևտրական գործակալի դերում, գործողություն վայրը դարձյալ լինելու էր Կ. Պոլիսը (Պերան): Ակտում ասված էր. «Ես Օբերտո Բանքերիոսս՝ որդին

1 М а н а н д я н Я. А. О торговле и городах Армении. Ер., 1930, с. 194.

2 "Известия АН СССР", отделение общ. наук, 1937, № 4, с. 912.

3 Տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1911, էջ 81 (Հ. Գ. Գալեմքեարյանի հոդվածը):

4 Տե՛ս Actes des notaires, էջ 90:

Գլխիկեմոս Բանքերիոսի, ընդունում եմ, որ քեզանից՝ Հայ Պետրոսից, ստացել եմ ապրանք, որի համար պարտավորվում եմ խոստանում եմ քեզ կամ քո կողմից ուղարկված իսկական ներկայացուցչին վճարել ապրանքի գնի համաձայն 29 ոսկե հիպերպեր, երբ իմ նավով Պերա կգամ և իմ գալուց 8 օր հետո: Այլապես խոստանում եմ քեզ (վճարել) նշված գումարի կրկնակին, որպես տուգանք, կատարված ծախսերի վճարումով, եթե իմ պարտքի մոծման նշված ժամկետն անցնի: Այս համաձայնագիրը հարգելու նպատակով ես տրամադրում եմ իմ ներկա և ապագա ունեցվածքը՝ որպես գրավական...»¹:

Կ. Պոլսի վրայով Զենովայի և Վենետիկի հետ ղրիմահայ վաճառականների հետագա գործունեությունը արտացոլում է գտել, օրինակ, 1395 թվականի հունիսի 6-ին կնքված նոտարական մի ակտում, ըստ որի կաֆացի վաճառական Հովհաննեսը իր կնոջը՝ Մարգարիտին, նշանակում է Վենետիկում իրեն փոխանորդ նրան արտոնելով «որևէ անձնե կամ որևէ տեղե և գլխավորապես ղինվորական պաշտոնեությունն կամ սենեկեն» պահանջելու և ստանալու իր առնելիքները²: Վենետիկի հանրապետության պաշտպանական ատյանի մատակարարի դերում հանդես գալը ինքնին վկայում է ղրիմահայ վաճառականի ունեցվածքային բարձր դիրքի մասին մի անգամ ևս հավաստելով Արևելք-Արևմուտք առնչություններում ղրիմահայ կապիտալի գրաված կարևոր դերը:

15-րդ դարի վերջերից, երբ ղրիմահայերի վրա թաթարականի հետ միասին ծանրացավ նաև թուրքական լուծը, և նրանք հարկադրված էին ենթարկվել թուրքերին ու թաթարներին, այնուամենայնիվ, նրանց առևտուրը քայլ առ քայլ վերընթաց է ապրում: 17-րդ դարում Կ. Պոլսում և փոքրասիական քաղաքներում ղրիմահայ վաճառականների առևտրական վերելքը գրավել է ժամանակի հայ տաղեր-

¹ Նույն տեղում, էջ 225, «Հայ-իտալական առնչություններ», էջ 22-23:

² Ա լ ի չ ա ն Ղ., Հայ Վենետ, Ս. Ղազար, 1896, էջ 174:

գութի ուշադրությունը: Կաֆայում գրված մի տաղում աս-
ված էր.

Նաւն ի ծովուն մէջն, խոջայ,
Պագրկաններն շատ կու գա
Հայ և տաճիկ ամիրայ¹:

Նույն դարում Ղրիմը շարունակում էր առևտրա-
կան հանգույցի դեր խաղալ Արևմտյան Հայաստանի, Ուկ-
րաինայի և Ռուսաստանի միջև: 1619 թ. Երզնկայից Սև ծո-
վով «ուռումներից» Կաֆա թանկագին ապրանքներ փո-
խադրելիս մահանում է Երզնկայի վաճառական Պալիի որդի
Ախիջանը, որի մահվանը անդրադարձել է Ստեփանոս Թո-
խատեցին 1619 թ. գրած իր չափածո ողբում²: Պատմաբան
Ի. Ա. Սմիռնովը, ընդհանրացնելով փաստերը, եզրակաց-
նում է, որ 16-17-րդ դարերում թուրքական դրոշի տակ Սև
և Ազովի ծովերում նավարկում էին ոչ այնքան թուրք, որ-
քան հայ և հույն վաճառականները³:

* * *

Միջնադարյան եվրոպային բնորոշ առևտրի կազ-
մակերպման ձևերը հատուկ էին նաև Ղրիմին: Եվ դա հաս-
կանալի է. սերտ կապերի մեջ գտնվելով առևտրի իտալա-
կան և արևելաեվրոպական կենտրոնների հետ՝ ղրիմահայ
վաճառականները պետք է յուրացնեին այդ վայրերի
առևտրական դասի փորձն ու ստեղծած ձևերը:

Ղրիմում հայերը առևտուր էին անում և որպես ա-
ռանձին վաճառականներ, և թե միավորումներով: Վերջին-
ներս առաջացել էին առևտրական ծախսերի կրճատման,
անվտանգության ապահովման, մասնը դրամատերերին

1 Մատենադարան, ձեռ. 7709, Թ. 167ա:

2 Ս ա Ր գ ս յ ա ն Բ., Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վենետիկ, էջ
943:

3 Сми р н о в И. А. Россия и Турция в XVI и XVII
вв. М., 1946, с. 9.

առևտրի մեջ ընդգրկելու և այլ պատճառներով: Ղրիմում առևտրական միավորումների մեջ նշանավոր էին հատկապես ծովային ընկերությունները: Կաֆայի առևտրական ընկերություններին անդամակցում էին նաև հայերը՝ հանդես գալով մի դեպքում դրամատեր վարկավորողի, մյուս դեպքում՝ պարզապես ընկերության անդամի դերում:

Ղրիմում, բնականաբար, հսկայական նշանակություն էր տրվում նավագնացությանը: Կային հայ նավատերեր, բայց իբրև կանոն շատ հայ առևտրականներ հանդես էին գալիս որպես նավի վարձակալ: Առևտրական նավերի հիմնական տեսակները դալերան և տարիդան էին:

Կարևոր դեր էր խաղում քարավանային առևտուրը: Կաֆայում, Ղարասուբազարում, Հին Ղրիմում, Արմյանսկի բազարում և թերակղզու առևտրական մյուս կենտրոններում կային շատ քարավանսարաններ՝ առևտուրը սպասարկող իրենց հարմարություններով, այն է՝ հյուրանոց, պահեստներ, ճաշարաններ: Ժամանակի փաստաթղթերում և ձեռագրերում հիշատակություններ են պահպանվել քարավանսարանների մասին: Դրանց մասին հիշատակվում է նաև 1449 թ. կանոնադրության մեջ¹: Կաֆայում 18-րդ դարում գողթնեցի վաճառականների քարավանսարանների մասին ձեռագրերից մեկում ասված է. «... տնակերտցի Յովհաննէս արհիպատոում եպիսկոպոսն եկեալ էր և հաստատեալ ի ներս խաներոջ, ի մէջ գողթնաց վաճառականաց»²: Ահա թե ինչպիսի սպավորություն էր ստացել, օրինակ, Ղրիմի խանի մոտ Ֆրիդրիխ Մեծի դեսպանորդ Ֆոն դեր Գոլցը Արմյանսկի բազարի առևտրահարմար հնարավորությունից, երբ 1761 թ., այսինքն՝ գյուղաքաղաքի հիմնադրումից ընդամենը 20-25 տարի հետո, եղել էր այնտեղ: «Պերեկոպլից 4 կմ հեռավորության վրա գտնվող Արմյանսկի բազար անունով գյուղում՝ իր շուկայով հռչակ վայելող հայկական ֆակտորիայում, Գոլցը տեսավ այն անընդմեջ ծխացող խողանոցները, որոնց մասին նրան արդեն պատմել էին ճանա-

1 ЗООИД. Т. V, с. 698.

2 Մատենադարան, ձեռ. № 1050, Թ. 311:

պարհին և որոնցում պատրաստվում էին¹ ամենաընտիր կերակուրները՝ այս կողմերն այցելող բազմաթիվ ճանապարհորդների և վաճառականների քաղցը հագեցնելու համար»¹:

Ղրիմի առևտրում շրջանառության մեջ, ինչպես տեսանք, օգտագործվում էին տարբեր տեսակի դրամներ՝ Կաֆայի ասպրը, բյուզանդական հիպերպերը, կամ բեդանդը, ջենովական լիվրը, տրապիզոնյան և սուլդայական ասպրները, ֆլորինը²: Նոտարական ակտերից և 1449 թ. կանոնադրությունից երևում էր, որ ամենագործածական դրամը հիպերպերներն ու ասպրերն էին: Ըստ իտալացի պատմաբան Կանալեի՝ ասպրը հավասար էր արծաթյա 3 կոպեկի (19-րդ դարի երկրորդ կեսի գնահատմամբ)³: Կաֆայում 15-րդ դարում արտագրված «ճաշոցի» հիշատակարանում որպես դրամաչափական միավոր նշված է նաև սոնմը. «Բարեպաշտ տիկինն Ազիզ Մելիքն՝ դուստրն պարոն Ամիրին, և որդին իւր Եսայի կրանաւորն ետուն վանացս սուրբ Անտոնի ձ. /100/ սոմ, ի պանքն եղեալ, անդրդուելի, մնալով անդ ի կումենին գլուխքն, որ է ձ. /100/ սոմ, և զմուտքն նորին յամենայն ամի ուտէ վանքս՝ Ռն /1400/ սպի/տակ/»⁴: Այսպիսով, ըստ ձեռագրի, Կաֆայում գոյություն ուներ բանկ, որը իր փայտերերին որոշակի տոկոսով շահույթ էր տալիս: Ստացվում է, որ 100 սոնմը տարեկան բերել է 1400 արծաթ /սպիտակ/, նշանակում է 1 սոնմի դիմաց բանկը տալիս էր 14 արծաթ:

Կաֆան ուներ իր սեփական դրամը⁵: Կաֆայի դրամների մի մասը երկլեզվանի էր՝ թաթարերեն կամ լատիներեն, կրում էր թաթարական տամգա /կնիք/, շիտակ երե-

1 Теодор Мунд. Крым—Гирей—союзник Фридриха Великого. Симферополь, 1909, с. 11.

2 ЗООИД. Т. I, с. 303, т. IV, с. 387, т. 5, с. 643, 647, 666 և այլ էջեր, տես նաև Actes des notaires, էջ 90, 174, 224 և այլն:

3 ЗООИД. Т. V, с. 820, 823.

4 Ժե դարի հայրեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 414:

5 ЗООИД. Т. V, с. 643.

սից շրջանի եզերքին դրոշմված էին արարական տառեր, իսկ մյուս երեսին պատկերված էր ջենովական դարպասը: Քաղաքի դրամների մի մասն էլ շիտակ երեսին պատկերում էր դարպաս և գոթական չորս տառեր, իսկ մյուս երեսին՝ թաթարական տամգա¹: Հավանաբար, Կաֆայում սկսել են դրամ կտրել 15-րդ դարի կեսերից, 1449 թ. կանոնադրությունից հետո, որովհետև մինչև այդ, 1290 և 1316 թվականների կանոնադրություններով, քաղաքում արգելվում էր դրամ բաց թողնել²:

Վերը նշված դրամները շրջանառության մեջ են եղել գլխավորապես մինչև 1475 թ., դրանց գործածությունը ջենովական տիրապետության վերացման հետ միասին վերանում է: Դրան նպաստում են նաև թաթարական վարչակազմի մի շարք միջոցառումները, որոնք ուղղված էին Ղրիմում սեփական դրամի ղիրքերի ամրապնդմանը: 16-րդ դարի երկրորդ կեսի հեղինակ Մ. Բրոնեևսկու վկայությամբ, խանության մեջ խստիվ արգելված էր օտարերկրյա տալերը, նույնիսկ թուրքական ոսկե դրամը կամ արծաթե ասպրը թաթարական դրամի համեմատությամբ ավելի բարձր կուրսով հաշվարկելը. այդպիսիներին սպառնում էր մահապատիժ: «Առևտրի մեջ,— գրում է Մ. Բրոնեևսկին,— չեն գործածվում ոչ ոսկե, ոչ էլ արծաթե դրամներ, միայն թաթարականն է, որ խանի կարգադրությամբ օտարերկրացիները առանց բացառության ստանում են»³: 16-րդ դարում Ղրիմի խանությունում գործածության մեջ էր նաև պարսկական դահեկանը⁴:

Խանական դրամի արժեզրկման դեմն առնելու համար 17-րդ դարում խաները ուժեղացնում են դրամական շրջանառության սահմանափակումները՝ դրանք տարածելով անգամ թուրքական դրամի վրա⁵:

1 Նույն տեղում, հ. 1, էջ 303, հ. 4, էջ 387, հ. 5, էջ 819:

2 Նույն տեղում, հ. V, էջ 819:

3 Б р о н е в с к и й М. նշվ. աշխ., էջ 359:

4 Մատենադարան, ձեռ. 7997, թ. 521:

5 Д ' А с к о л и, նշվ. աշխ., էջ 115:

Հայ, ռուս և եվրոպացի վաճառականների կողմից Ղրիմ ներմուծվում և այնտեղից արտահանվում էին հետևյալ ապրանքները.

Ներմուծվող ապրանքներ.— տարատեսակ գործ-վածքներ, գորգեր, մետաքս, մորթիներ, գինի, մրգեր, պեր-ճանքի առարկաներ, համեմունքներ և այլն: Այս ապրանք-ները Ղրիմ էին ներմուծվում թե այնտեղ վաճառվելու և թե արտասահմանի՝ Արևելքի և Արևմուտքի սպառողի համար:

Արտահանվող ապրանքներ.— գրավոր. հավաստի աղբյուրների հաղորդմամբ դրանց մեջ մտնում էին.

Ձուկը.— Ղրիմից արտահանվում էր ոչ միայն տե-ղական, այլև Ազովից ու Կուբանից բերված ձուկը, ինչպես նաև ձկնկիթը:

Հացահատիկ.— սա արտահանման հիմնական ապ-րանքներից էր և Ղրիմ էր բերվում Մոսկաստրոյից (Աքեր-ման, Բեսարաբիա) և Հաջի Բեյից (այժմյան Օդեսայի տե-ղը): Թաթարները, որպես քոչվոր անասնապահներ, շատ ուշ ընտելացան նստակեցության և հացահատիկի մշակման:

Աղ.— աղը արտահանվում էր գլխավորապես սևծով-յան ավազանի քաղաքները:

Կաշի.— սա հիմնականում կապված էր թաթարական անասնապահության հետ:

Մորթեղեն.— Ղրիմ էր բերվում ռուսական շրջաննե-րից և, որպես կանոն, գլխավորապես նախատեսված էր ար-տահանման համար:

Մարդ ապրանքի առուծախը: Ստրկավաճառություն-ը ըստ Վ. Հայդի, Ֆ. Բրունի, Գ. Բրատիանուլի լեանտյան առևտրի բնորոշ կողմերից էր: Գերեզնիւմը Տավրիկիայում լայն ծավալ ուներ և կապված էր թաթարների ապրելակեր-պի հետ: Տնտեսական կարիքները հոգալու համար ոչ-ար-տադրողական կյանք վարող թաթարները պարբերաբար առ-պատակում էին ռուսական, լեհական, ուկրաինական, լիտ-վական, մոլդովական և կովկասյան շրջանները, և դրանց հիմնական նպատակը բնակչության գերեվարումն էր՝

գլխավորապես վաճառքի համար: Ասպատակության մեկնելիս թաթարները մեծ նշանակություն էին տալիս մարդկանց գերելու պարագաներ ունենալուն: «Վահան, նիզակ և նման ուրիշ զենքեր (թաթարները) չգիտեն,— գրում էր Մ. Լիտվինը ... բայց դրա փոխարեն նրանցից ոչ ոք ասպատակության չի մեկնում առանց նոր կաշեփոկերի, հատկապես երբ ասպատակություն է ձեռնարկվում դեպի մեր երկրները (Լեհաստան, Լիտվա, Ուկրաինա — Վ. Մ.)։ այդ ժամանակ նրանք ավելի շատ հոգ են տանում մեզ գերելու միջոցների, քան թե սեփական պաշտպանություն մասին»¹:

Թաթարական ասպատակություններին անդրադարձել են նաև ղրիմահայ գրիչները: Օրինակ, Իսլամ-Գիրեյ խանի 1658 թ. դեպի Լեհաստան կատարած արշավանքի մասին գրիչ Հովհաննես երեցը հայտնում է, որ Ղրիմ գերի են բերվել նաև լեհահայեր. «Յայսմ սկսման յամի,— ասում է նա,— մեծ և յաղթող խանն աղեղնաւորաց աղգի ըսլամ Քերեյ՝ ել բազում զաւրաւք և անթիւ անհամար հեծելովք՝ խողաց էանց և գնաց աշխարհն ի լեհխաց և ի գնալն ի ճանապարհին բազում աւճիրս և չարիս գործեաց զոր ոչ ոք կարէ մարդ գրով պատմել կամ ասել զոր արարինն. զգիւղս և քաղաքս թալանել ավերել՝ գերել և այրել հրով և զեկեղեցիսն կողոպտեալ զխաչ և զաւետարան և զամենայն անաւթս եկեղեցայցն աւար արարեալ ի դառնալն որպէս զհաւատս խաչանցն ի հետ մտեալ բերին հազարք հազարաց և բիւրք բիւրոց: Ի յազգէն ընդուսաց՝ մինչև ի մեր Հայոց ազգէս այլ գերեալք բերին: Զոմանս ի հուր արկանէին, զոմանս ի սուր մաշէին, զոմանս ի յոտս ձիոց ձիաթաւալ առնէին ... բերեալ ի բնիկ յաշխարհն իւրեանց (Ղրիմ — Վ. Մ.) վաճառէին, որպէս զարջառս և զոչխարս»²:

Լեհահայերին գերեվարելու փաստը արձանագրել է նաև ղրիմահայ նշանավոր երգիչ ու տաղասաց Խաչգուռը: Նկատի ունենալով 1621 թ. նա գրել է. «Տաւվէթքէրէ

1 Мемуары, относящиеся к истории Южной России. Вып. I, 1890, с. III.

2 Մատենադարան, ձեռ. № 7412, Թ. 495-496:

սուլթան ի Գոռէլ (Լեհական թագավորությունը — Վ. Մ.) սէֆէր էր, նոցա գայալուն աւերել էր, բազում քաղաք տապալել էր, բազում մարդիք այրք ու կանայք մանտր տղայք գերի արել էր և բազում գիրգ նոցա գերի վարել էր և Մ. (50) Հոգի մեր ազգէն Լուսաւորչի, և նոցա ազգէն անթիւ և անհամար գերիք գուգային, ճամփան բռնեց ձիւն և ցուրտն և սառնամանիքն, բազում գերիք ասքէրք մեռան ի ճանապարհին, ցրտոյ և սառնամանեաց, բազում կառք և երիվարք մնաց ի ճանապարհին, բազում ընկերք իւրեանց թողին, բազում ծառայք իւրեանց թողին, բազումք ապրանք իւրեանց թողին, մալ ու խազինայք (գանձերը — Վ. Մ.) ի ճանապարհին»¹:

Անկասկած, այս տեղեկությունները խաչգուռզին հայտնել էին Ղրիմ գերի բերված լեհահայերը: Նկատի ունենալով 1649 և 1650 թվականներին դեպի Լեհաստան ձեռնարկված թաթարական արշավանքը, նույն խաչգուռզը գրում էր. «Ըսլամքէրէյ խանն բազում զօրօք դընաց (1649) [ի] վերայ Գոռելին և բազում յաշխարհ տապալեցաւ Հայոց և մտաւ ի Պար քաղաքն: Քաղաքին տէրն Բոթոսկին (Միկոլայ Պոտոցկին) Ուկրաինայում գործող լեհական զորքերի հրամանատարը — Վ. Մ.) իւր որդովքն և իւր վազիրովն, իւր իշխանօք ըսպուեցաւ և բերին գերի ի իւրիմ և ածին բանդ և երկաթե կապանօք կապեցին և կըտրեցին գին բազում դահեկան»²:

Թաթարները գերիներից զգալի եկամուտ էին ստանում նաև փրկագին վերցնելիս: խաչգուռզի ասած «գին բազում դահեկանը» այն փրկագինն էր, որ պիտի վճարվեր այս կամ այն գերու դիմաց: Նույն 1650 թ. ասպատակությունը նկարագրելիս խաչգուռզը հայտնում է, որ Ղրիմ բերված 300 հայ գերիները փրկագնվել և աղատվել են: «Երկիրն (իմա՝ Մոլդովա — Վ. Մ.) աշարմաշար արաւ (թ)աթարն ու իւրմելն (իմա՝ իմելնիցկու երկիրը, այսինքն՝ Ուկրաինա — Վ. Մ.) մինչև ի Լեհաց երկիր գնաց: Լեհաց

¹ Հ ա կ ո բ յ ա ն Վ., Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 210:

² Նույն տեղում, էջ 225:

տունն մտաւ, գերեցու[ց] ա[նթիւ] ծառայ: ԳՃ (300) հոգի մեր ազ[գէն] Լու[սա]ւորչի: Ամենեքեան գերի յանկան ի [ձեռն անօրին]աց և անհաւատից ... Եկան գերի անկան երկիր մեր, խրիմ և ի Կաֆայ, ի խարա-Սու և ի Պախչայ-Սարայ, Կէզլու և Օրնիրերան, որտեղ մեր քրիստոնէեայք հաւաքեալ են, գնեցին և աղատեցին»¹: Այստեղ շեղվելով նշենք, որ լեհական սահմանների տակ Հիմնականում պետք է հասկանալ արևմտաուկրաինական հողերը, որոնք 1340 թվականից ընկել էին լեհական տիրապետութեան ներքո:

Նկատենք, որ գերիների դիմաց փրկագին ստանալու բազմաթիվ դեպքերի մենք դեռ կհանդիպենք Ղրիմ-մոսկովյան առնչութիւններին ղրիմահայերի մասնակցութիւնը լուսաբանելիս:

Ընդգծենք մի կարևոր հանգամանք. գերեզնմամբ և գերեվաճառութեամբ զբաղվում էին Եվրոպայի, Հիմնականում՝ Վենետիկի և Ջենովայի առևտրականները, որոնց ձեռքում էին կենտրոնացված Արևմուտքի և Եգիպտոսի հետ կատարվող առևտուրն ու նավագնացութիւնը: Եվ դեպի Եվրոպայի վաճառականները թաթարական ավազանու ունեցած հանդուրժողական վերաբերմունքը բացատրվում էր նաև նրանով, որ սրանց ներկայութիւնն էր թաթարներին հնարավորութիւն տալիս վաճառելու իրենց գերիներին: Առանց նրանց ներկայութեան առևտրական ձեռներեցութիւնից և նավագնացութիւնից զուրկ թաթարները բնականաբար չէին կարողանա իրացնել իրենց գերիներին, և գերեվարումն էլ կկորցնէր իր նշանակութիւնը: Այստեղից միաժամանակ հետևում է, որ գերիներին գնելը եղել է գերեվարումը խթանող ազդակ, որովհետև շուկան միշտ էլ խթանում է արտադրութիւնը. թաթարների մոտ «արտադրողական աշխատանքի» ձև էր գերեվարումը, որին հարկավ գերեզնումը պիտի նպաստեր:

Բանն այնտեղ էր հասել, որ գերի գնող վաճառականները ապառիկով վարկավորում էին թաթարներին՝ ապագա գերիների դիմաց: Ընդ որում, գերիներ ունեին ոչ

¹ Նույն տեղում:

միայն թաթարական վերնախավի նեֆկայացուցիչները, այլև շարքային հեծյալները: Ահա թե ինչ է հայտնում 16-րդ դարի հեղինակ, դեպքերին և իրադարձություններին ականատես, լիտվական դիվանագիտական գործակալը Ղրիմում՝ Միխայլո Լիտվինը իր մեմուարներում, նկատի ունենալով 1548-1551 թվականների դեպքերը: Նա գրում է. «Նրանց (Ղրիմի թաթարների – Վ. Մ.) բոլոր շուկաները և նավահանգիստները հայտնի են այդ ապրանքով (գերիններով – Վ. Մ.), որ նրանց մոտ գտնվում է և՛ իրենց, և՛ վաճառքի, և՛ գրավ դնելու, և՛ թե նվիրատվության համար: Նրանցից (թաթարներից – Վ. Մ.) յուրաքանչյուրը, թեկուզ և սովորական հեծյալը, եթե նույնիսկ չունեն անոթաւորուկներ, բայց ենթադրելով, որ նա միշտ էլ հնարավորություն ունի այդպիսիք ձեռք բերելու, պայմանագրով ամեն մի վարկատուին պարտավորվում էր որոշակի ժամկետում գեներ, հագուստի կամ ձիերի դիմաց վճարել մեզ արյունակից կենդանի մարդկանց պայմանավորված քանակը: Եվ նման խոստումները կատարվում էին ճիշտ կերպով, այնպես որ կարծես թե նրանք իրենց անասնաբուհերում մեր գերինների մշտական պաշար ունենային»¹:

Կրկնենք. գերեվարողներին վարկավորողները չահագրգռում էին տակավին կիսանստակյաց կենցաղավարությամբ ունեցող թաթարներին՝ դիմելու ավազակային արշավանքների: Այդ պատճառով էլ Ղրիմի «բոլոր շուկաներն ու նավահանգիստները» լիքն էին այդ ապրանքով: Թուրք հեղինակի վկայությամբ՝ 1475 թ. Կաֆայի գրավման ժամանակ քաղաքում 30 հազար անաղատներ (ստրուկներ) կային²: Իսկ պրոֆ. Ա. Ա. Նովոսելսկու հաշվումներով, 17-րդ դարի առաջին կեսին թաթարները գերի էին վերցրել 150-200 հազար ռուսներ³:

1 Мемуары, относящиеся к истории Южной России. В. I, с. 18 – 19:

2 Б р у н. Ф. Крымский полуостров около половины XVIII столетия. Феодосия, 1867, с. 6.

3 Новосельский А. А. Борьба Московского государства с татарами в XVII веке. М. – Л., 1948, с. 164.

Գերիները մի մասը կլանում էր ներքին շուկան. թերակղզու բնակչությունը նրանց գնում էր և ծանրաբեռնում զանազան ծանր աշխատանքներով: Բայց գերիների հիմնական մասը գնում էր արտաքին շուկա. արտահանվող մարդ-ապրանքը սպառվում էր Եգիպտոսի, Ստամբուլի և Իտալիայի շուկաներում: Մարդավաճառությունը իրավական ձևակերպում էր ստացել 1449 թ. կանոնադրությունը մեջ, որը արգելում էր միայն Կաֆայի բնակիչներին առք ու վաճառքի առարկա դարձնել, բայց չէր արգելում մարդավաճառությունը առհասարակ¹: Դեռ 1421 թ. ջենովացիները եգիպտական սուլթանից պահանջում էին վերադարձնել այն 16 դուկատը, որը նրանցից վերցվել էր Կաֆայի անազատների համար²: 1449 թ. կանոնադրությունը թուլատրում էր մարդավաճառությունը սեծովյան բոլոր գաղթավայրերում: Եգիպտոսում ապրած Նավարիի հաղորդման համաձայն, դեռ 1308 թ. Թոխթա խանը հարձակվում է Կաֆայի վրա այն բանի համար, որ ջենովացի վաճառականները թաթարների երեսաներին գնել ու վաճառել էին մահմեդական երկրներում³:

Եգիպտոսի գերիների այդ լավագույն շուկայում, ջենովացիները նույնիսկ ծառայություն էին մտնում տեղի սուլթանի մոտ՝ որպես գերիներ մատակարարող գործակալներ: 1432 թ. Ջենտիլիե Իմպերիալե անունով մի ջենովացի Դամասկոսում հանդես էր գալիս որպես Կաֆայում ստրուկներ վաճառելու գծով եգիպտական սուլթանի գործակալ⁴:

Կաֆայի շուկա մշտապես գերիներ էին ուղարկում չերքեզ իշխաններն ու թաթար բեկերը, որոնք այդ գերիներին ձեռք էին բերում ռուսական շրջանները ասպատակելու կամ լեռնական առանձին ցեղերի դեմ պատերազմելու ժա-

1 ЗООИД, Т. V, с. 738.

2 Նույն տեղում, էջ 804:

3 Նույն տեղում, էջ 819:

4 См. Старокадомская М. К. Очерки по социально-экономической истории генэзской Каффы конца XIII — первой половины XV вв., М. (Диссертация к. н.), с. 142.

մանակ: Վաճառվող գերիների մեջ երբեմն լինում էին նաև տեղացի հայեր, հույներ ու կարաիմներ:

Ստրուկների (անաղատների) վաճառքը Կաֆայում կատարվում էր հետևյալ կարգով. նախ որոշվում էր գերու տարիքը, հայրենիքը, անունը, նրա պատկանելությունը տվյալ վաճառողին, ապա գինը և հետո նոր կնքվում էր պայմանագիր: Դրանից հետո վաճառողը հրաժարվում էր գերու տերը լինելու իրավունքից¹:

* * *

Ռուս, ուկրաինացի, լեհ և սլավոն մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային կապերն ու մերձեցումը, սկզբնավորելով զարգացած ֆեոդալիզմի ժամանակաշրջանից, իրականացվել են ոչ միայն բուն Հայաստանից, այլ նաև սլավոնական տարածքներում և սլավոնամերձ երկրներում հաստատված գաղթահայության կողմից: Պատմականորեն այդ երևույթի հիմքը սոսկ ռուս, ուկրաինացի, լեհ և մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած ավանդական առնչությունների ամրապնդումը չէր: Հավանաբար, առաջին պլան էին մղվում տնտեսական և քաղաքական կյանքի թելադրանքով հարուցվող շահախնդրությունները, որոնք գաղութահայության սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներին մղում էին կապերի մեջ մտնել այդ ժողովուրդների հետ: Այս առումով առանձնահատուկ է միջնադարի ամենախոշոր հայկական գաղութի՝ Ղրիմահայ գաղթածախների դերը: Գտնվելով մի կողմից բյուզանդական, թուրք-թաթարական, իսկ մյուս կողմից՝ ռուս-սլավոնական հարաբերությունների խառնարաններում, Ղրիմահայերը, պատմական իրադարձությունների և տնտեսական կյանքի բերումով, իրենց ուժերի ներածին չափ մասնակից են եղել այդ հարաբերություններին՝ շարունակ կողմնորոշում ունենալով և համակրանք տածելով դեպի քրիստոնյա սլավոն ժո-

¹ Տես նույն տեղում, էջ 150:

ղովուրդները, հանգամանք, որը լիովին համընկնում էր մայր հայրենիքի ժողովրդական զանգվածների փայփայած իդձերին ու բաղձանքներին:

Ղրմահայերի գործունեությունը 16-18-րդ դարերում հատկապես նկատելի է չափեր է ընդունում Մոսկովյան (ռուսական) պետություն մեջ, ընդ որում այդ գործունեությունը ընդգրկում էր չէ թե միայն առևտրական, այլ հավասարապես նաև քաղաքական-դիվանագիտական բնագավառներ: Եվ քանի որ այդ ժամանակ այդ երկու բնագավառներն էլ գրեթե անբաժան էին միմյանցից, ուստի նպատակահարմար ենք գտել դրանց շարադրանքը տալ միասին, թեև առհասարակ քաղաքական առնչություններին վերաբերող հարցերը քննարկվել են առանձին՝ երրորդ գլխում: Այդ երկու հարցերի համատեղ շարադրման անհրաժեշտությունը թելադրվում է նաև բուն փաստական նյութի բնույթով, որում դրանք արտացոլված են անխզելի կապի մեջ:

1470-ական թվականներից սկսած, երբ հզորացող Մոսկովյան պետություն և Ղրիմի խանություն միջև հաստատվում են դիվանագիտական կապեր, ղրիմահայերը ամենակտիվ մասնակցություն են ցուցաբերում Ղրիմ-ռուսական հարաբերություններին՝ աչքի առաջ ունենալով առևտրից ակնկալվող շահը և թե այն, որ վերելք ապրող հյուսիսի քրիստոնյա պետությունը սկսում էր նրանց ինչ-որ ազատագրական հույսեր ներշնչել: Ղրիմի խանություն և Ոսկե Հորդայի միջև սրվող հակասություններն օգտագործելով՝ Իվան 3-րդը կապեր է հաստատում Ղրիմի խան Մենգլի-Գիրեյի հետ: Նրան ոչ միայն հաջողվում է իր պետության սահմանները կայունացնել հարավից կատարվող Ղրիմի թաթարների հարձակումներից, այլև երբեմն էլ նույնիսկ թաթարական այդ ուժերը օգտագործել Լեհաստանի և Ոսկե Հորդայի դեմ մղվող շարունակական կռիվներում¹:

¹ Сыроечковский В. Пути и условия сношения Москвы с Крымом на рубеже XVI в. — "Известия АН СССР", VII, серия отд. Общ. наук, № 3, 1932, с. 198.

Դիվանագիտական կարգավորված հարաբերութ-
յունները խանության և Մոսկվայի միջև սկսվեցին 15-րդ
դարի 70-ական թվականներից և տևեցին երեք տասնամ-
յակ: Այդ հարաբերություններին նկատելի էր նաև ղրիմա-
հայ վաճառականների մասնակցությունը: Նրանցից էր, օ-
րինակ, մեծահարուստ Պողոսը, որի շուրջը 1498-1502 թթ.
դիվանագիտական երկարատև վեճ տեղի ունեցավ Մոսկվա-
յի և Բախչիսարայի միջև: Կաֆայի թուրքական իշխանութ-
յունների և խանական արքունիքի մոտ որոշակի հեղինա-
կություն արժանացած Պողոսը 5-6 տարի շարունակ
առևտուր էր անում Մոսկովյան պետություն տարածքում,
ուր և մահանում է, և Մոսկվայում մնացած նրա ապրանք-
ները Ղրիմի իր բարեկամներին վերադարձնելու խնդիրը ա-
ռիթ է տալիս դիվանագիտական երկարատև և թեժ մի
քաջքշուկի, որից պարզ երևում են երկու պետությունների
միջև առևտուրը կարգավորող նորմերը: 1498 թ., ընդառա-
ջելով Պողոսի եղբայր խոջա Կուլիի խնդրանքին, Մենգլի-
Դիրեյը հատուկ հրովարտակով իվան Յրդիից խնդրում էր
հիվանդացած Պողոսին խոջա Լուֆտիի միջոցով ուղարկել
Ղրիմ: Հրովարտակում Կուլին հորջորջվում էր որպես խանի
բարեկամ, ասել է թե կաֆահայ այդ գերդաստանը մոտիկ է
կանգնած եղել խանական արքունիքին և Կաֆայի թուրքա-
կան վարչակարգին: Խանն ու Կաֆայի թուրքական փաշան
ընդգծված շահագրգռվածություն են ցուցաբերում Պողոսի
գործի նկատմամբ: «Այդ գործերը, — գրում էր խանը, — ինձ
չատ գլխացավանք են պատճառել: Այժմ եթե դու հիվանդ
խոջային (Պողոսին — Վ. Մ.) հանձնելով խոջա Լուֆտիի
ձեռքը, բաց թողնես, ապա դու, իմ եղբայր, ինձ խայտառա-
կությունից կազատես»¹: Թուրք-թաթարական կողմի շա-
հագրգռվածությունը չի վրիպում իվան Յրդի ուշադրութ-
յունից: 1499 թ. մարտի 16-ին նա դեսպան Ալեքսանդր Գո-
լովոստովի անունով իջեցրած հրովարտակում վերջինիս
հրահանգավորում էր. «Եթե Կաֆայում կամ Ցարգրադում

1 "Сборник русского исторического общества". Т. 41, СПб., 1884, с. 271.

(Կ. Պոլսում — Վ. Մ.) Թուրքական սուլթանի կամ նրա որդու Կաֆայի սուլթանի անունից Պողոսի իրերի մասին հարցնեն, ապա դու նրանց կալատասխանես, որ այդ մարդը եղել է մեր թագավորի հողում, բայց այժմ մահացել է, և մեր թագավորի մաքսահավաքները հրամայել են նրա ապրանքը կնքել և պահել: Եվ եթե այդ մարդը երեխաներ և կամ իրեն ազգից որևէ մեկը ունի, և ձեր թագավորը, արդարությունը հարգելով, մեր թագավորի մոտ որևէ մեկին ուղարկի այդ ապրանքի ետևից, ապա մեր թագավորը կհրամայի այդ ապրանքը նրան տալ»¹:

Խանին չեն բավարարում Իվան Յրդեի հավաստիացումները, քանի որ մաքս չվերցնելու հարցը Իվան Յրդը հեռատեսորեն շրջանցել էր, և վեճը, դուրս գալով մեկ անձին վերաբերող սահմաններից, տարածվում է միջազգային առևտրի մի շարք նորմերի կարգավորման վրա: Իվան Յրդը չէր աճապարում զնալ զիջումների, քանի որ ձգտում էր ձեռք բերել երկուստեք հավասար իրավունքներ առևտրի ասպարեզում: 1499 թ. Կաֆայի սուլթան Մահմեդ Շահզադեն հատուկ դեսպանություն է ուղարկում Մոսկվա և նրա անունով իջեցրած հրովարտակով Պողոսի դործի կապակցությամբ խնդրում է վերջինիս ապրանքները առանց մաքսի հանձնել դեսպան Ալակոզին և դեսպանության անդամ Հայ Բաբելին, խոստանալով նույն կերպ վարվել նման պարագաներում: Նույնն էր խնդրում նաև Մենգլի-Գիրեյը, միաժամանակ հարկավոր համարելով մատնանշել, որ դրանով Իվան Յրդը կբարձրացնի իր Մենգլի-Գիրեյի հեղինակությունը Թուրքական իշխանությունների աչքում²:

Սակայն Իվան Յրդն ու նրա պաշտոնյաները գիտեին Թուրք-թաթարական կողմի հավաստիացումների արժեքը, գիտեին, որ, ամենևին չհոգալով իրենց միջազգային հեղինակության մասին, խանն ու սուլթանը կարիքը ծագած պահին դրժում էին իրենց խոսքը: 1500 թ. Կաֆայի Թուրքական փաշայի մոտ ուղարկված Անդրեյ Կուսուկովի

¹ Նույն տեղում, էջ 282:

² Տես նույն տեղում, էջ 286:

միջոցով իվան 3-րդը բողոքում էր, որ տեղի մաքսահավաքները ռուս դեսպաններից բռնի մաքսեր՝ նն վերցրել և վիրավորանքներ հասցրել ռուս վաճառականներին¹: Իվան 3-րդը պահանջում էր միջազգային կապերում ճանաչել հավասարության սկզբունքը՝ եթե ռուս վաճառականներից թուրք-թաթարական կողմը մաքսեր չգանձի, ապա ինքը Պողոսի ապրանքները կվերադարձնի առանց մաքս վերցնելու, «իսկ եթե ձեր (Կաֆայի փաշայի — Վ. Մ.) մաքսահավաքները մեր մարդկանցից և նրանց ապրանքից մաքս վերցնեն, որը (ապրանքը — Վ. Մ.) դուք կհրամայեք ձեր մաքսահավաքներին վերադարձնել մեր մարդկանց, ապա մենք ևս կհրամայենք մեր մաքսահավաքներին այդ Պողոսի իրերից մաքս վերցնել²: Իվան 3-րդի դիրքորոշումը հաղթում է, և 1502 թ. Պողոսի ապրանքները վերադարձվում են նրա եղբորը, իսկ դեսպանորդ Ա. Կուտուզովին՝ ռուս վաճառականների ապրանքները³:

Իվան 3-րդը խանության հետ դիվանագիտական կապեր էր իրականացնում նաև Կաֆայի իր գործակալ Կոկոսի և Թամանի իշխան Զախարիայի միջոցով, իսկ վերջինս երկար ժամանակ այդ գործերը կարգավորում էր ղրիմահայ վաճառական Աստվածատուրի (Բոգդանի) մասնակցությամբ և ջանքերով: Նախ այս Կոկոսի (Կոկոսի) մասին, որը Կաֆայում 15-րդ դարի 70-80-ական թվականներին Իվան 3-րդի մշտական գործակալն էր: Գրականության մեջ էստաֆետի կարգով մեկը մյուսին հետևելով՝ սրան, առանց հիմնավորման, հրեական ծագում են վերագրել: Մանրագնին քննությունը ցույց է տալիս, որ սա հայ էր և, հավանաբար, Մոսկվայի հետ կապված կաֆահայ ամենաազդեցիկ վաճառականներից՝ խոջաններից մեկը: «Խոջա» մականիւրը երբեք հրեաների նկատմամբ չի գործածվել, մականիւր, որը, բացի վաճառական նշանակելուց, նաև մեծարման իմաստ էր ձեռք բերել: Դա առաջին: Երկրորդը՝ Կաֆայում մեծահա-

1 *См* ЗООИД. Т. V, с. 234.

2 *См* "Сборник русского исторического общества". Т. 41, с. 295.

3 *См* նույն տեղում, էջ 401:

՝ բոլոր վաճառականների թվում (15-րդ դար) հրեաներ չկային: Եվ, վերջապես, Կակոս (Կոկոս) անունը շատ գործածական էր հայերի մեջ թե գաղթաշխարհում և թե բուն Հայաստանում: Իվան 3-րդը Կակոսի հետ սերտ կապեր էր պահպանում թե դիվանագիտական և թե մասնավոր առևտրական գործերով: Կակոսը ազդեցություն ուներ թե Կաֆայում (որպիսին հրեան 15-րդ դարում երբեք չէր կարող ունենալ) և թե Բախչիսարայում: Նա էր գլխավորապես իվան 3-րդին մատակարարում թանկարժեք քարեր, որոնք իշխանը այնքան սիրում էր¹: Բացի վերը նշածից կար մեկ այլ նկատառում. հազիվ թե իվան 3-րդը իրեն գործակալ պահեր ոչ քրիստոնյա ազգի ներկայացուցչին:

Անդրադառնալով, սակայն, Զախարիային և Աստվածատուրին: 1487 թ. Մոսկվա տեղափոխվելու ճանապարհին Զախարիային կողոպտում են և նա, վերադառնալով Չերկաս, Աստվածատուրի միջոցով հատուկ գրություն է հղում իվան 3-րդին խնդրելով օգնել իրեն: Աստվածատուրը Մոսկվայում մնում է երկար ժամանակ: 1488 թ. նա արդեն կատարում էր իվան 3-րդի դիվանագիտական հանձնարարությունները: Նրա միջոցով իվան 3-րդը իջեցնում է երկու հրովարտակ մեկը Մենգլի-Գիրեյ խանի, իսկ մյուսը իշխան Դմիտրի Շեինի անունով: Մենգլի-Գիրեյը իր մարդկանց միջոցով պետք է ապահովեր Զախարիայի անվնաս տեղափոխումը մինչև ռուսական սահմանները, իսկ ռուս իշխանը նրան հասցներ Մոսկվա²:

16-րդ դարի սկզբներից հարաբերությունները խանություն և Մոսկովյան պետություն միջև գնալով վատթարանում են, խաները թեքվում են լեհ-լիտվական կողմը, վերսկսելով ասպատակությունները ռուսական շրջաններում: Լեհաստանի թագավոր Սիգիզմունդը ջանք չի խնա-

1 ИТУАК. Т. II(58), Симферополь, 1927, с. 169. Տես նաև «Բաների Մատենադարանի», № 13, Երևան, 1980, էջ 79-80. — Լ. Խաչիկյանի «Հայերը Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհի վրա» հոդվածը:

2 "Сборник русского исторического общества". Т. 41, с. 72—73.

յում թաթարներին հրահրելու Մոսկվայի դեմ, մի վարքագիծ, որը դառնում է Լեհաստանի և Ռուսաստանի միջև 1512 թ. պատերազմական գործողությունների սկսման դրդապատճառներից մեկը¹: Այս շրջանում ևս ղրիմահայ վաճառականները մասնակցում են դիվանագիտական հարաբերություններին, նաև դառնում դիվանագիտական գրադրությունների նշանակետ: 1509 թ. Մոսկվայի և Ղրիմի միջև դիվանագիտական հանձնարարություններ էին կատարում ղրիմահայեր Սարգիսն ու մեզ արդեն ծանոթ Բաբեկը: Դա արտացոլված է ղրիմահայ վաճառականներ Ավետիքին և Գրիգորին վերաբերող հրովարտականներում, որ Մենգլի-Գիրեյը հղել էր Վասիլի 3-րդին: Ավետիքը առևտրական գործերով գնացել էր Լեհաստան, իսկ այնտեղից էլ Մոսկվա, որտեղ նրան ձերբակալել էին: Մենգլի-Գիրեյը Վասիլի 3-րդից խնդրում էր Ավետիքին, եթե նա անգամ որևէ հանցանք էր գործել, Սարգսի և Բաբեկի հետ ուղարկել իր մոտ: Գրիգորի առիթով խանը հրովարտակում հիշեցնում էր, որ իշխան Միխայլո Լվովիչը նրանից 6 հազար ալթինի կզաքսի մորթի է բռնագրավել և խնդրում էր մորթեղենը վերցնել իշխանից ու հանձնել այն ստանալու համար հատուկ յարլիկով օժտված Սարգսին և Բաբա-Կադիրին²:

16-17-րդ դարերում Մոսկովյան պետություն և Ղրիմի խանություն միջև հարաբերությունների բնորոշ կողմը անկայուն վիճակն էր: Թաթարները մերթ թեքվում էին դեպի Լեհաստան, մերթ դեպի Ռուսաստան, նայած թե ինչ էր թելադրվում Կ. Պոլսից, և թաթարական ավագանին ո՞ր կողմից էր ավելի առատ «նվերներ» ստանում՝ Մոսկվայից, մոլդավական վոյեվոդից, թե՞ Լեհաստանից ու Լիտվայից՝ Ռեչ Պոսպոլիտայից: Դ. Ասկոլու հաշվումներով, օրինակ, 17-րդ դարի 20-30-ական թվականներին Մոսկվայի մեծ իշ-

1 Карпов Г. Отношение Московского государства к Крыму и Турции в 1508—1517 гг. — "Московские университетские ведомости", № 4, 1865, с. 213—214.

2 "Сборник русского исторического общества". Т. 95, 1895, с. 76—77.

խառնի (թագավորի) «նվերներն» (հիմնականում մորթեղեն) արժեքը տարեկան հավասար էր 25 հազար ռուբլու¹: Նույն թիվն է ցույց տալիս սովետական հեռագրոտող Ա. Նովոսելսկին 40-ական թվականների համար²: Թեև Մոսկովյան պետութիւնը շարունակ հասկացնել էր տալիս, որ «նվերը» տուրք է, բայց դա իսկական հարկատվութիւնն էր, որին Լեհաստանի և Ռուսաստանի ազգակից քրիստոնյա թագավորները դիմում էին՝ թաթարներին միմյանց դեմ ուղղելու քաղաքական հաշիվներին ելնելով:

Վիթխարի քանակի «նվերներն» միջոցով Մոսկովյան պետութիւնը «գնում էր Ղրիմի խաների, թագաժառանգների և իշխանների խաղաղութիւնը, դաշինքն ու բարեկամութիւնը և կամ վճարում առանձին ցարեխնների «ծառայութիւնը», նրանց ասպատակութիւնները Լիտվական Ուկրաինայի վրա: Ըստ էութեան, այդ «նվերները», — զարգացնում է իր միտքը Վ. Սիրոեչկովսկին, — հարկ էին, որը Մոսկովյան պետութիւնը վճարում էր Ղրիմին, ինչպես որ դա հասկանում էին Ղրիմում, չնայած այն բանին, որ մոսկովյան դիվանագիտութիւնը հաստատ կերպով պաշտպանում էր այն տեսակետը, թե «նվերները» ոչ թե հարկ են, այլ մեծ իշխանի «կամավոր նվիրատվութիւնը»³:

Ղրիմ-մոսկովյան հարաբերութիւններին 17-րդ դարի կեսերին մասնակցած ղրիմահայերից էր Մուրադը խանի «դեսպանական անձը»: Սա օգտվում էր դիվանագիտական անձնաւորութիւնից, և Ալեքսեյ Միխայլովիչ թագավորի հասցեին հիշոցներ և անարգանքի խոսքեր չպրտելուց հետո էլ նրան չեն պատժում: Մեկ ու կես տարի Մուրադի շուրջը երկու պետութիւնների միջև զրադրութիւններ են կատարվում և նրան վերջապէս բաց են թողնում Ղրիմ⁴:

1 *Сбу* 300ИД. Т. XXIV, 1902, с. 115.

2 *Сбу* Новосельский А. А., *изд. шрифт*, էջ 316:

3 Сыроечковский В. Е. Гости — сурожане, с. 59.

4 Центральный гос. исторический архив древних актов (ЦГАДА). Ф. 123, Сношения России с Крымом, 1656 — 1657 гг., д. 15, лл. 1 — 37.

Այս շրջանում դիվանագիտական իրենց ծառայութ-
յուններով որպես ռուսական ցարի մոտ շուղարկված խանի
դեսպան և դիվանագիտական գործակալ-լրատար աչքի են
ընկնում ազովահայ Այդինը և ղրիմահայ Միկոլայկո (Նի-
կողայոս) Մանսուրովը: 1669 թ. Մանսուրովը իր երկու հայ
ընկերներ Յագյա Բաղդասարովի և Սիմյոն Իվանովի հետ
ժամանում է Մոսկվա՝ ձեռքին ունենալով Ազովի փաշայի
հուշագիրը և բանավոր հանձնարարականը՝ բողոքելու Սև
և Ազովի ծովերում կազակային հարձակումների դեմ: Հու-
շագրում փաշան հայտնում է, որ Դոնի կազակների կողմից
իրեն ներկայացրած վերջնագրի պատճենը ինքը իր հայազ-
գի դեսպան Այդինի միջոցով ուղարկել է ցարին¹: Կասկա-
ծից վեր է, որ Մանսուրովը որոշակի դիվանագիտական ձի-
րքով օժտված անձ էր, որին հանձնարարված էր ռուսական
իշխանությունների հետ բանակցություններ վարել ժամա-
նակի այնպիսի մի կարևոր հարցի շուրջը, որպիսին Դոնի
կազակների հարձակումների դեմ կանխարգելիչ միջոցների
մշակումն էր: Նշենք, որ դրանք պատասխան հարվածներ
էին թաթարական ասպատակություններին, որոնց մասին
չի լուում նաև Մանսուրովը դեսպանական ատյանում բա-
նակցելիս, հայտնելով, թե Ղրիմի թաթարները ասպատակել
են ուկրաինական քաղաքները²: Մանսուրովը մեծ ջանքեր է
թափում հասնելու այն բանին, որպեսզի այդ հարցում
ստանա ռուսական կողմի երաշխիքը՝ ազդելու կազակների
վրա: Այնուհետև նա ներկայացնում է Ազովի փաշայի հու-
շագիրը, որից երևում է, թե մինչ այդ Մոսկվա ուղարկված
հայազգի Այդինը պետք է 40 օր մնալով այնտեղ, հասներ
հարցի լուծմանը³:

Փոխվել էին ժամանակները, և հզորացող Ռուսաս-
տանը պետք է գործուն միջոցներով թաթարական ավերիչ
ասպատակությունների դեմն առներ: Ավարառուական ան-
պատիժ ապրելակերպին սովոր թաթարներն ու թուրքերը,

1 Նույն տեղում. 1669-1671, գ. 12, թ. 1-4, 20:

2 Նույն տեղում, թ. 15:

3 Նույն տեղում, թ. 22-23:

17-րդ դարի 20-30-ական թվականներին, ի զարմանս իրենց, հանդիպեցին ռուսական կողմի պատժիչ միջոցներին, և դրան ի տես խնդրում էին ազդել կազակների վրա, թեպետև իրենք չարունակում էին ասպատակությունները, ռուսական կողմից «նվերներ» պահանջելն ու դերված ռուսներին վաճառելը: Նման պարագայում, բնականաբար, վարվող բանակցություններում, որպես գործող անձինք, առաջին պլան պիտի մղվեին քրիստոնյա մարդիկ, որոնց օգնությամբ թուրք-թաթարական կողմը հույս ուներ իր առաջարկություններին արժանահավատ բնույթ հաղորդել: Հենց այդպիսի դիվանագետներից էին ռուսական շրջաններում ճանաչված հայ վաճառականներ Այդինն ու Մանսուրովը:

17-րդ դարում Ղրիմ-ռուսական կապերում բանակցությունների կարևոր հարցերից մեկը գերիների փրկագնման հարցն էր, որին ղրիմահայ վաճառականները մասնակցում էին տարբեր շարժառիթներով: Փաստաթղթերը վկայում են, որ գերիներին ետգնելու և Մոսկվա տեղափոխելու դեպքերը դրանցվել են միայն այն ժամանակ, երբ առաջ են եկել վեճեր՝ ազատագրված մարդկանց դիմաց վճարումների կատարելիս: Ուրեմն, ղրիմահայ մարդկանց կողմից ռուս գերիներին թաթարական գերությունից ազատագրելու դեպքերը շատ ու շատ ավելի են եղել, քան ատյանում պահպանված փաստաթղթերն են: Մեր ձեռքի տակ եղած գործերը առայժմ վերաբերում են 17-րդ դարին: Սա բնավ չի նշանակում, թե 15 և 16-րդ դարերում այդ պրակտիկան չի եղել: Պարզապես կամ գործեր չեն կազմվել, կամ էլ վեճեր չեն ծագել, ուրեմն՝ կարիք չի դգացվել դրանք կազմելու: 18-րդ դարի թուրք հեղինակներից մեկը, օրինակ, վկայում է, որ Կաֆայի քրիստոնյաները «զբաղված էին ստրուկների փրկագնմամբ և նրանց Ռուսաստան ու Լեհաստան ուղարկելով»¹: 1670 թ. Ղրիմի խանության և ռուսական պետության միջև գերիների փոխանակման վերաբեր-

1 Б р у н Ф. Крымский полуостров около половины XVIII столетия, с. 6.

յալ կնքված պայմանագիրը պահանջում էր «հույներին և հայերին, որոնք սովոր են գերիներ փրկագնելու և հենց այդ պատճառով էլ նրանց հայտնել գերիների վերաբերյալ կնքված պայմանագրի մասին ... որպեսզի նրանք, այդ իմանալով, Ղրիմում և ուղուսներում գերիների փրկագնման մասին հայտարարություններ չանեն»¹: 17-րդ դարում նույնիսկ հատուկ օրենք էր ընդունվել «գերիներին ետգնելու մասին»: Ռուսաստանում մտցվել էր «արորի հարկ», որից առաջացած եկամուտը ծախսվում էր գերիների գնման վրա: Ալեքսեյ Միխայլովիչի օրոք այդ հարկը փոխարինվեց ծխահարկով, որից ստացված տարեկան 150 հազ. ռուբլին դեսպանական ատյանի միջոցով տրամադրվում էր այդ նույն նպատակին: «Փրկագնման գործողությունները» կատարվում էին ռուսական պետության և Ղրիմի խանության սահմանագլխում, որտեղ խանությունը հիմնել էր փոխանակման կետեր²:

1671 թ. Ղրիմից վերադառնալիս դեսպանորդ Վասիլի Յուլչինը իր հետ բերում է Ադիլ-Գիրեյի հրովարտակը գերիներին փոխանակելու մասին: Ըստ այդ պայմանագրի, այն թաթարները, որոնք Ռուսաստանում ունեին ազգական գերիներ, կարող էին իրենց մոտ գտնվող ռուս գերուհի փոխանակել Ռուսաստանում գտնվող իրենց ազգական գերուհի: «Իսկ նրանք, որոնք Ռուսաստանում ազգական գերիներ չունեին, բայց իրենց մոտ ունեին ռուս գերիներ, ապա այդ գերին պետք է գնվեր փոխանակման ժամանակ»³: Թաթարների մոտ գտնվող ռուս գերիների թիվը անհամեմատ մեծ էր, ուրեմն մեծ թվով ռուս գերիներ պետք է նրանց կողմից վաճառվեին, հենց այդ էլ առիթ էր տալիս հայ վաճառականներին նրանց փրկագնել: 1670 թ., օրինակ, ղրի-

1 ЦГАДА, ф. 123, 1670 г., д. 14, л. 4—5.

2 Н а д и н с к и й П. Н. Очерки истории Крыма. Симферополь, 1951, с. 71.

3 ЦГАДА, ф. 123, 1670 г., д. 14, л. 5.

մահայ վաճառականներ Աջիրոլն ու Յակուբ Յակովլկը՝ փրկագնում և Մոսկվա են բերում մի շարք ռուս գերիների՝ բոլորն էլ աղնվականներ: Դեսպանական ատյանում հարցաքննության ժամանակ փրկագնված գերիների տված պատասխանները պարզում են մի շարք կարևոր հանգամանքներ՝ ազատագնման գինը, գերու սոցիալական դրությունը, վաճառականի կողմից նրան փրկագնելու նպատակները, առուծախի պայմանները և այլն: Ահա այդ պատասխաններից մի քանիսը: Անդրեյ Տյուչկովն, օրինակ, հայտարարեց, որ ինքը գերի է ընկել 1669 թ. Կրասնիի և Կոնստոպլի միջև ընկած տարածքում մղված մարտի ժամանակ, Ղրիմում իրեն տվել են զալդա-սուլթանին, իսկ վերջինս 300 ռուբլի պարտքի դիմաց իրեն հանձնել է հայ Աջիրոլին: Այդ գումարի մասին ինքը հային տվել է նամակ և նրա ձիով ու նրա հետ եկել է Մոսկվա: Ա. Տյուչկովը կալվածատեր էր¹: Նկատենք, որ Ղրիմում խանից հետո ամենաբարձրաստիճան անձ հանդիսացող զալդա-սուլթանն անգամ եղել է հայ վաճառականի պարքատերերի թվում և իր այդ պարտքը մարել է գերու միջոցով:

Ազատագրված մեկ այլ գերի՝ Սեմյոն Կոփինի Անդրեևսկը, ինչպես և Տյուչկովը, գերի էր ընկել իշխան Անդրեյ Ռոմոդանովսկու հետ միասին, սկզբում գտնվել էր Բատիր մուրզայի մոտ, այս վերջինը «նրան վաճառել էր զատրղայի (թիապարտության — Վ. Մ.), իսկ զատրղայում, տեսնելով նրա տանջանքները, հայ Յակուբ Յակովլկը իրեն փրկագնել էր և փրկագնման համար տվել 120 ռուբլի»: Բացի այդ, 80 ռուբլի էլ Յակովլկը վճարել էր նրա աշխատանքի դիմաց: Անդրեևսկը ևս կալվածատեր էր, ծառայության համար թագավորը, իբրև ռոճիկ, նրան տվել էր 500 գյուղացիական ընտանիք և 18 ռուբլի²: Յակովլկը 50 ռուբլի վճարել էր Ֆիլատ Ֆոմինի, 200 ռուբ.՝ Իվան Ֆիրսովի և 150 ռուբ.

* Օտարագրի անուն-ազգանունները պարզ դարձնելու համար Ռուսաստանի դեսպանական ատյանում և այլուր գրանք թարգմանելով հարմարեցնում էին ռուսերեն անուններին:

1 ЦГАДА, ф. 123, 1670 г., л. 14, л. 67.

2 Նույն տեղում, թ. 68:

Սեմյոն Կիրիլովի համար¹: Իսկ Տիմոշկա Կիդոշը գերի էլ ընկել ոչ թե թաթարներին, այլ լեհերին, և Լեհաստանի թագավորը նրան նվիրել էր Ղրիմի խանին, իսկ վերջինս էլ Մամանդելեյ մուրզային, որը նրան սաստիկ տանջում էր «ամեն տեսակի տանջանքներով և իր փրկագնման համար պահանջում էր 17000 ռուբլի, և ինքը այդ տանջանքները տանում էր»: Մուրզայի մահից հետո, «տեսնելով իր տանջանքները, այդ մուրզայի երեսաներից հայ Յակուբը իրեն փրկագնել է և իր փրկագնման համար վճարել 220 ռուբլի», այդ մասին վերցնելով ստորագրություն²:

Գրեթե բոլոր գերիները իրենց ցուցմունքներում որպես փրկագնման դրդապատճառ ընդգծում էին հայ վաճառականների մարդասիրությունը, որ նրանք դրաժնորել էին իրենց գերություն տանջանքներից ազատելու գործում: Կարծում ենք, առաջին պլանի վրա այդ մղումը չէր, թեև փրկագնման օբյեկտիվ հետևանքը իրոք մարդասիրական էր: Եվ ոչ էլ փրկագնման դիմաց օգուտ ստանալն էր պատճառը: Օգուտ փաստորեն չկար, եթե թերահավատություն չտածենք պահպանված փաստաթղթերի նկատմամբ, ապա պարտավոր ենք փաստագրել, որ, որպես կանոն, փրկագնված գերուն բերելով Ռուսաստան, հայ վաճառականները պահանջում և ստանում էին միայն այն գումարը, որը նրանք գերու ներկայությունը վճարել էին նրա թաթար տիրոջը: Ուրեմն, հիմնական պատճառը քաղաքական հաշվենկատությունն էր, ռուսական իշխանությունների վստահությունն նվաճումը և առանձնաշնորհումներին արժանանալը, որոնց կարիքը հայ վաճառականությունը խստիվս զգում էր՝ Ռուսաստանում իր առևտրական գործարքները իրականացնելիս և այնտեղից ապրանքներ արտահանելիս: Եվ պատահական չէր այն, որ փրկագնված գերիները ըստ մեծի մասին «ընտրովի» մարդիկ էին՝ ազնվականներ, բարձր և միջին աստիճանի զինվորականներ, մարդիկ, ո-

1 Նույն տեղում, թ. 69-71:

2 Նույն տեղում, թ. 68-73:

րոնց փրկագնումը իշխանությունների աչքում արժեք էր ներկայացնում:

Երբեմն պայմանավորված գումարի ստանալը տեղիք էր տալիս անհամաձայնությունների: Հայ վաճառականներ Յագյա Բաղդասարովի և Սեմյոն Իվանովի հետ միասին Մանսուրովը Մոսկվա դիվանագիտական ուղևորության մեկնելիս միաժամանակ փրկագնել և 1669 թ. Մոսկվա էր բերել չորս ռուս գերիների՝ բոյարական որդի Բուրովին և ստրելեցներ Գրիշա Ֆրոլովին, Իվաչկո Ռադյանկովին և Վասկա Սեմյոնովին: Սրանց համար նա վճարել էր 235 ռուբլի: Մանսուրովն ու իր ընկերները, կատարելով դիվանագիտական հանձնարարություններ, այս գերիներին էլ փրկագնել և Ազով-Լիվնի-Մոսկվա երկար ճանապարհը կտրելով մայրաքաղաք էին հասցրել, հավանաբար, այն պատճառով, որպեսզի իրենց այդ արարքը ինչ-որ չափով օգներ գլուխ բերելու Ազովի փաշայի հանձնարարությունը: Մանսուրովի առաջարկը բերված չորս գերիներին փոխելու չորս զրիմցիների հետ, Ալեքսեյ Միխայլովիչի կարգադրությամբ մերժվում է: Դժվար է նկատել, որ զրիմցի թաթար գերիները, որոնց Մանսուրովը առաջարկում էր փոխանակել, ալեխի «քաշով» անձինք են եղել: Մանսուրովին որպես փրկագին առաջարկում է սամոլյամորթի: Հոկտեմբերին նա առանց փրկագինը ստանալու (որովհետև նրան Ազովի փաշան հանձնարարել էր կատարել գերիների փոխանակում) ետ է վերադառնում և ճանապարհին դառնում է թարգմանչի դանակի հարվածի զոհը¹: Սակայն Մանսուրովի և նրա հայազգի ընկերների գործը այդպես անուշադիր թողնել չէր կարելի, քանի որ նրանք Ազովի փաշայի դեսպանական մարդիկ էին: Թագավորի հրամանով նրա ընկերներին ետ են դարձնում Մոսկվա՝ գործը հետաքննելու համար: Գործին նման կարևորություն հաղորդելը, մի գործ, որին իրազեկ է դառնում նաև դեսպանական ատյանի տնօրեն, հայտնի դիվանագետ Օրդին-Նաշչոկինը, կապված էր Մանսուրովի գլխավորած դեսպանական առա-

1 Նույն տեղում, 1669-1670 թթ., դ. 12, թթ. 1-33, 37-47:

քելության որոշակի նշանակութեան հետ: Ռուսական կողմը գիտեր, որ Մանսուրովի սպանութիւնն ու գերիներին չփոխանակելը վատ նստվածք կտային առանց այդ էլ դեպի ռուսները վատ տրամադրված փաշայի մոտ, իսկ դա հղի էր հետագա բացասական հետեանքներով: Այդ մտավախութիւնը աչքի առաջ ունեւ դեսպանական ատյանի գլխավորներից մեկը՝ Ալեքսեյ Լուժինը, որը Մանսուրովի մեկնելուց անմիջապէս հետո գրում էր. «Այժմ Մոսկովայից Ազով է բաց թողնվել մի հայ (իմա՝ Մանսուրովը — Վ. Մ.), իսկ այդ հայը Ազովում փաշային կպատմի ամեն ինչի մասին, որ նրանց դեսպանները արգելված են, և գերիների դիմաց փոխանակման վայրում նրանց թաթարները (թաթար գերիներ — Վ. Մ.) և վարձատրութիւն չի տրված ... Եվ այդ փաշան տեղեկութիւն կուղարկի Ղրիմ և ... խանն ու (նրա) մերձավորները բարի չեն մտածի և կհրամայեն ռուս գերիներին ամուր շղթայել և մեծ նեղութիւնների ենթարկել: Եվ պետք է, որպէսզի մեծ ինքնակալը կարգադրի փոխանակման կետում ռուս գերիների դիմաց թաթարներ և ծախսագին վճարեն»¹: Այս մտավախութեան նկատառումով Մանսուրովի Մոսկովա վերադարձված ընկերների պահանջը բավարարում են:

Ռուսական կառավարութիւնը մեծ շահագրգռվածութիւն է ցուցաբերում օտարազգի ցարական զնդապետ Ալֆերի Վիքերխին գերութիւնից ազատելու գործում: Վերջինս գերի էր ընկել 1661 թվականին, ինչպէս գրում էր նրա նղբայրը՝ դեսպանական ատյանի թարգմանիչ Յակովը, «Դնեպրից այն կողմ պալատական սեղանապետ Միխայիլ Պիկլոնսկու՝ չերկասյան քաղաքներում թաթարների ... դեմ մղված մարտում և այդ մարտում գերի վերցվել»²: Նա գտնվում էր Շիրինյան իվաս (Այվազ) մուրղայի մոտ: 1662 թ. Ալեքսեյ Միխայիլովիչը հատուկ հրովարտակ է ուղարկում Ղրիմ իր ներկայացուցիչներ Յակով Յակուչիին և

1 Նույն տեղում, թ. 29:

2 Տես Նույն տեղում, թ. 47-48:

3 Նույն տեղում, 1680, գ. 15, թ. 2:

Գալբրիլ Միխայլովի անունով կարգադրելով Վիբերխին փրկագնել, վճարելով 200 ռուբլի և ավելի: Գործը ձգձգվում է մինչև 1669 թ., երբ թագավորը Ղրիմ ուղարկված բոյար Վասիլ Շերեմեևսկին կարգադրում է «ըստ իր հայեցողության պայմանավորվել Ալֆերիի փրկագնման մասին»: Սակայն Ց-ամյա ջանքերը ապարդյուն են անցնում: Վիբերխի կինն ու եղբայրը, հուլյսը կտրած, գործին մասնակից են դարձնում առևտրական գործերով Մոսկվա եկած ղրիմահայ վաճառական Ֆեոդոր Իվանովին, նրան խոստանալով 700 ռուբլի՝ անկախ այն բանից, թե Ղրիմում որքան էր Վիբերխի համար նա վճարելու: Այդ մասին նրան ղեսպանական ատյանում տրվում են գրավոր պարտավորություն և ատյանի հրովարտակը²: Գալով Ղրիմ, հայ վաճառականը տարիներ տևող սակարկումից հետո վերջապես 1673 թ. փրկագնում է Վիբերխին 300 ռուբլով: Երկար ճանապարհ է կտրում հայ վաճառականը Վիբերխին տեղափոխելիս՝ Ղրիմ-Բելգորոդ (Աքերման)-Ցասի-Լադիժին-Կիև-Մոսկվա: Այդ ընթացքում 100 ռուբլի էլ ծախսվում է ճանապարհին: Նրա հետ Մոսկվա էր եկել իր քրոջ որդին՝ 19-ամյա հայ պատանի Վասիլի Մերկուրևը³: Մոսկվայում Վիբերխի եղբայրն ու կինը ձգձգում են հայ վաճառականին վճարել ոչ միայն խոստացած 700 ռուբլին, այլև նրա ծախսած 400-ը: Ֆեոդոր Իվանովը ստիպված դիմում է թագավորին, բողոքելով, որ պարտապանները ոչինչ չեն վճարում և «հինգերորդ ամիսն է ապրում եմ Մոսկվայում և իզուր ծախսեր եմ անում»⁴: Որոշ ժամանակ անց հայ վաճառականը Մոսկվայում մահանում է, և նրա փոխարեն 300 ռուբլին տրվում է Վասիլի Մերկուրևին, և, նա, վերջապես մեկնում է Կաֆա⁵:

Փրկագնված մարդկանց շուրջը ծագած վեճերը կարգավորելու համար Ալեքսեյ Միխայլովիչը և բոյարները

1 Նույն տեղում, թ. 3:

2 Տես նույն տեղում, թ. 10, 26:

3 Տես նույն տեղում, 1673, գ. 24, թ. 4:

4 Նույն տեղում, գ. 15, թ. 10:

5 Նույն տեղում, գ. 24, թ. 21:

1670 թ. ստիպված հատուկ կարգ են սահմանում, ըստ որի՝ գանձարանի հաշվին փրկագինը փոխհատուցելուց առաջ պետք է ավետարանի վրա խոստովանելին դրամի իսկական չափի համար: Եթե փրկագնված մարդու համար փրկագնողի տված գումարը պետական սահմանվածից ցածր էր, ապա այն իսկույն վճարվում էր, իսկ եթե վաճառականի նշած գումարը ավելի բարձր էր փրկագնված մարդու ասածից, ապա վճարվում էր ըստ պետական սակագնի: Երբ գերի ընկած մարդկանց համար փրկագնողը նրա բարեկամների հետ պայմանավորվել էր ստանալ պետական սահմանված սակագնից ավելի մեծ գումար, ապա տարբերությունը պետք է մարեին ազատագրված անձի բարեկամները¹: Կառավարությունը օգնություն էր հասնում այն գերիներին, որոնց բարեկամները նշված տարբերությունը անկարող էին վճարել: Նման դեպքում նրան տրվում էր հարկահավաքման թերթ՝ գյուղերից հարկ վերցնելու համար: Այդպես պատահեց, օրինակ, պարսկահայ վաճառական Մերկուլկո Վարտենեսովի (Սենկագովի) կողմից փրկագնված Տիմոֆեյ Լաշկովի հետ (սա գերի էր ընկել 1661 թ.), որին նա 1675 թ. 400 ռուբլով փրկագնել էր Ղրիմում, տարել Նախիջևան, հետը պայմանագիր կնքել և 3 տարի հետո՝ 1678 թ., իր հետ բերել Մոսկվա: Նրա համար պետական գանձարանից Վարտենեսովը ստանում է 140 ռուբլի: Քանի որ 260 ռ. տարբերությունը Լաշկովն անկարող էր վճարել՝ 1680 թ. կառավարությունը նրան շնորհում է հարկահավաքման թերթ, որը ստանալուն պես Լաշկովը հեռանում է Մոսկվայից: 1681 թ. իշխանություններին ուղղած իր դիմումներից մեկում Վարտենեսովը բողոքում էր, որ թեև Լաշկովը «կալվածքներ և վոտչինա» ունի, բայց դրամը չի տալիս, և ահա չորս տարի է ինքը «ներա ետեից քարչ է գալիս»²: Իհարկե, հայ վաճառականը միայն 260 ռ. համար չէ, որ մնացել էր Մոսկվայում: Հավանաբար, նա այդ տարիներին զբաղված էր առևտրով, մանավանդ, որ դա մի ժամանակաշրջան էր,

1 Նույն տեղում, 1680, գ. 16, թ. 33, 48:

2 Նույն տեղում, թթ. 31, 34, 36, 37, 40, 46, 49:

երբ Գրիգոր Լուսիկովի ջանքերից հետո խստիվ աշխուժացել էին պարսկահայ առևտրաարհեստավորական դասի այցելությունները ռուսական մայրաքաղաք: 1660-1670 թթ. Գրիգոր Լուսիկենցի կնքած համաձայնագրերը նոր փուլ էին նշանավորում նաև հայ վաճառականության գործունեության մեջ Ռուսաստանում, և իրագրությանը իրազեկ հայ առևտրական դասի ներկայացուցիչները, ռուս մարդկանց ազատագրելով, բացի վերը նշված շարժառիթներից, նաև ջանում էին նվաճել ռուսական կառավարության համակրանքը իրենց ժողովրդի և հայրենիքի հանդեպ:

* * *

Ռուսաստանում լայն գործունեություն ծավալած հայ վաճառականներն էին, որ դարձան Իսրայել Օրու գործի նախակարապետները: Ղրիմահայերը, մանավանդ առևտրական դասի գորեղ ներկայացուցիչները, որոնք, իրենց գործունեության թելադրանքով Ռուսաստանի և Մերձավոր արևելքի երկրների մշտական այցելուներն էին ու լավ ծանոթ էին քաղաքական իրագրությանը, աշխատում էին որքան հնարավոր է օգտակար դառնալ Օրու և նրա համախոհների նախագծումների իրագործմանը, նպաստել Ռուսաստանի առաջխաղացմանը Անգրիկովկասում, ուրեմն և՛ հայ ժողովրդի ազատագրմանը:

Վերոհիշյալ ձգտումով էր թելադրված, օրինակ, Ղրիմահայ վաճառականներից մեկի կարևոր հաղորդումը ռուսական իշխանություններին, որը նա արել էր 1723 թ. ապրիլին՝ այսինքն, Պարսկական արշավանքի այն շրջանում, երբ գեներալ-մայոր Մ. Ա. Մատյուշկինի հրամանատարության տակ անցած ռուսական զորքերը նախապատրաստում էին Բաքվի գրոհը: Այդ տեղեկությունը Մինաս վարդապետը հղում է Մ. Ա. Մատյուշկինին, իսկ վերջինս էլ՝ ռուսական ծովակալության կոբեգիայի պրեզիդենտ, գեներալ-ծովակալ Ֆ. Մ. Ապրասկինին: Հաղորդագրության հեղինակ Ղրիմահայ վաճառականը եղել էր էրզրումում, իսկ այնուհետև Դոնի վրայով անցել Աստրախան: Թուրքական

բանակի վիճակի մասին բավական լավ իրազեկություն ունեցած այս լրատուն հայտնում էր, թե թուրքական խարցու փաշան Պարսկաստանի սահմանամերձ քաղաքից բոլոր բնիկերի հետ միասին անցել է Պարսկաստան, ավերել սահմանամերձ գյուղերը և շատ ավար վերցրել, իսկ Կոստանդնուպոլսից Տրապիզոն են ժամանել 13 ռազմանավեր՝ ամեն տեսակի զինամթերքներով և հրետանիով հանդերձված: Տրապիզոնից յոթ փաշաներ ուղարկվել են Պարսկաստան, իսկ հրետանին և մյուս զինամթերքները նավերից բեռնաթափել և ցամաքով տեղափոխել են էրզրում: «Իսկ հիշյալ յոթ փաշաները այդտեղից ռազմարշավի չեն շարժվել, քանի որ սուլթանից հրաման չի եղել, իսկ այն 13 ռազմանավերը, որոնք ուղարկվել էին հիշյալ զինամթերքներով, տակավին գտնվում են Տրապիզոնում, և այժմ թուրքերը սկսել են ամրապնդել էրզրում քաղաքը, իսկ այն լեզգիներին, որոնց ուղարկել են թուրքերից օգնություն խնդրելու իրենց համար, թուրքերը նրանց ոչ մի ընդդիմություն չեն տվել»¹:

Ռուս-պարսկական և թուրք-պարսկական ռազմական առճակատման ժամանակաշրջանում, առճակատում, որը անմիջականորեն կապված էր նաև Կովկասի ու Անդրկովկասի հետ, բնականաբար, վերորեքյալ տեղեկությունը որոշակի կարևորություն ուներ, և հենց այդ պատճառով էլ այն հասցվել էր Պետերբուրգ: Պակաս նշանակություն չունենր նաև զրիմահայ վաճառական Սապերի հաղորդումը, որը գեներալ-մայոր Կրոպոտովի միջոցով 1724 թ. հուլիսի 24-ին հայտնվում է նույն Մ. Ա. Մատյուշկինին: Նշենք, որ այդ ժամանակ Բաքուն, Սվյատոյ Կրեստը, Դերբենդը և այլ կետեր արդեն գտնվում էին ռուսական զորքերի ձեռքում: Ըստ Սապերի հաղորդման՝ Ղրիմից Ազով էին գնացել 60000 զորքեր, այնտեղ Ղրիմի խան Սալթան-Գիրեյի որդին՝ զորքով, նրա հետ էին նաև թուրքական զորքերը, «բայց թե ուր են մտադիր նրանք գնալ» ինքը՝ Սապերը, դա չգիտե, «միայն ընդունում են, որ գնալու են Սվյատոյ

¹ Центральный гос. архив военно-морского флота (ЦГАВМФ), ф. 233, оп. 1, д. 222 — а, л. 124.

կրեստ ամրոցի վրա, իսկ բոլոր լեռնական ժողովուրդները խոսք են տվել միասին գործել»¹:

Այս կապերի լույսի տակ որոշակի հետաքրքրութ-
յուն է ձեռք բերում այն տեղեկությունը, որին հանդիպում
ենք Գաբրիել Պատկանյանի 1879 թ. գրած «Հարյուրամյակ
Նոր Նախիջևան հայաբնակ քաղաքի» ձեռագիր աշխա-
տության մեջ², և որը վկայում է 18-րդ դարի 20-ական
թվականներին Սյունիքում մղված ազատագրական շարժ-
մանը ու այդ աղերսով հայ-ռուսական կապերին ղրիմահա-
յոց ունեցած մասնակցության մասին: Ռուսական, ուկրաի-
նական, կովկասյան, թուրքական և մերձավորարևելյան այլ
չրջաններում տիրող քաղաքական եռուզեռին իրազեկ ղրի-
մահայերը, որոնք գիտեին Ռուսաստանի օգնության հույ-
սով ոտքի ելած Ղափանի և Արցախի հայության պայքարի
մասին և հենց այդ իրազեկությամբ էլ իրենց իմացածը հա-
ղորդում էին ռուսական իշխանություններին, Գ. Պատկան-
յանի հաղորդմամբ, ռազմական ջոկատներ կազմելով, հաս-
նում են օգնության իրենց հայրենակիցներին: Թեոդոսիայի
ավագ քահանա Բարդուղիմեոսը և Եվպատորիայի ավագ
քահանա Մարկոսը, պատմում է Գ. Պատկանյանը, 1720 թ.
Երուսաղեմում Հայաստանից ուխտի եկածներից իմանալով
հայերի կրած նեղությունների մասին, Քրիստոսի գերեզմա-
նի վրա երգվում են Ղրիմ վերադառնալուն պես իրենց
ծխերը հանձնել իրենց կրտսեր քահանա արդիներին և
«ինքյանք երթան օգնության յուրյանց կրոնակից և ազգա-
կից դժբախտ եղբարց»: Թեոդոսիա վերադառնալուց հետո
նրանք Հայաստանից եկած վաճառականներից լուր են
ստանում, որ Սյունիքի և Արցախի հայերի խնդրանքով
վրաց թագավորը նրանց օգնության է ուղարկել Դավիթ-
Բեկին, որ «յուրյանց զորագլուխ դառնա և առաջնորդե, որ
յուրյանց երկրին թշնամիքն հալածեն»³: Այս լուրն՝ առնե-

1 Նույն տեղում, գ. 228, թ. 100:

2 Մատենադարան, ձեռ. № 8815, թ. 25-39: Տես նաև Վ. Ա.
Պ ա ր ս ա մ յ ա ն, Նոր նյութեր Դավիթ-Բեկի ապստամբության մասին
(«Գրական թերթ», 14.11.1964):

3 Մատենադարան, ձեռ. № 8815, թ. 25բ:

լուն պես Բարդուղիմեոսը Թեոդոսիա է կանչում տեր Մարկոսին: Տավրիկյան նահանգի հայերի անկեղծ սերն ու հարգանքը վայելող այս երկու անձինք գաղտնի ժողով են հրավիրում և ժողովականներին հայտնում իրենց ուխտի մասին: Իրենց ազատելով «սեպհական եկեղեցաց և ժողովրդյան ծխական հոգսեն», և ստանալով ղրիմահայ թեմի առաջնորդ Վարդան Աստապատցու գաղտնի համաձայնությունը, նրանք ժողովին մասնակցած առանձին մարդկանց հետ շրջում են Ղրիմի հայաբնակ վայրերը և «հայասեռ երիտասարդաց սրտերու մեջ սկսան վառել բորբոքել ազգի և հայրենյաց սերն»¹: Այս երկու քահանաների և նրանց կուսակիցների պրոպագանդի շնորհիվ մի քանի հարյուր երիտասարդ խոստանում են հավաքվել նրանց մարտական դրոշի տակ: Այդ քայլի ձեռնարկման համար Ղրիմում հանգամանքները նպաստավոր էին. Ղրիմի խանի բազում ժառանգների միջև այնպիսի գծտուլթյուններ և կռիվներ կային, որ «մինչև այն օրն մրզաներն չէին համարձակած նոցա նման աղմկահարուլթյունք մտաբերել անգամ»:

Համեմատաբար բարենպաստ մթնոլորտն օգտագործելով՝ ղրիմահայերը որոշում են շարժվել նախ Տրապիզոն՝ երկու նավով. Թեոդոսիայից՝ Բարդուղիմեոսի և Եվպատորիայից՝ Մարկոսի գլխավորությամբ: Տրապիզոն են ժամանում 285 հոգի: Լազերի և քրդերի միջից ապահով անցնելու համար նրանք հագնում են լազերի զգեստ և բաժանվում առանձին-առանձին խմբերի՝ յուրաքանչյուրում տասնհինգական մարդ՝ իր օնբաշիով (տասնապետով): Գ. Պատկանյանը մեկ առ մեկ նշում է 24 տասնապետներից մի քանիսի անունը, ինչպես նաև թվարկում նրանց հետագա շառավիղներին, որոնք ապրում էին Ղրիմում, ապա նաև Նոր Նախիջևանում: Պատումի այս մասը ինքնին Պատկանյանի հաղորդածը դարձնում է վավերական:

Տրապիզոնից խումբը անցնում է Մուշ, ապա Կարս ու Անի և 1722 թ. վերջապես հասնում Դավիթ-Բեկի բանակ, ճիշտ այն ժամանակ, երբ «քաջագոտի տեր Ավետիքն և

¹ Նույն տեղում, թ. 27ա:

Ագուլիսո անհաղթելի տեր Մկրտիչն (որդի Տերենց կամ տեր Մկրտչյանց նահապետն) եկել էին, և Դավիթ-Բեգն յուր զորաց վերա զորավարությունն հանձնել էր անպարտելի քաջ Մխիթար զորագլխինս և ինքն յուր զորքն կիսուներ և կկազմեր՝ սպասելով Կինուվագո Թորոս իշխանի և Մեղրու Ստեփանոս իշխանի գալստյան, որ միասին ճակատամարտ խմբեն ընդդեմ պարսից զորության»¹։ Դավիթ-Բեկը Բարդուղիմեոսին և Մարկոսին շնորհում է «զորապետության իշխանություն և դրոշակ»։ Նրանց տրամադրության ներքո, ըստ Գ. Պատկանյանի, ղրիմահայերը ազատագրական մարտիկների շարքերում ակտիվորեն մասնակցում են կռիվներին։ Մխիթարի սպանությունից հետո, 1729 թ. նրանք վերադառնում են հայրենիք՝ ծանր վերքեր կրած և շատերն էլ խեղանդամ դարձած։

Դեպքերի ու դեմքերի գրեթե ճշգրիտ նկարագրությունը, Դավիթ-Բեկի շարժմանը մասնակցած ղրիմահայերի հետագա սերունդների թվարկումը և, վերջապես, ձեռագրի հեղինակ, նշանավոր հայագետ Գ. Պատկանյանի և նրա տոհմի պատկանելությունը ղրիմահայ ընտանիքների թվին, որոշ չափով վիպական գունագարդում ունեցող այս պատմության վրա իսկության դրոշմ են դնում։

Այս դեպքերից հիսուն տարի անց, ղրիմահայ մասսաները իրենց ռուսական կողմնորոշումը ցուցադրում են զենքը ձեռքներին։ Ռուս-թուրքական առաջին պատերազմի ժամանակ (1768-1774) և դրան հաջորդած տասնամյակում նրանք թե մարտի դաշտում և թե դիվանագիտական ու այլ բնագավառներում իրենց բոլոր ուժերով նպաստում են թերակղզին Ռուսաստանին միացնելու նպատակով Եկատերինա 2-րդի և նրա նշանավոր Ֆավորիտ Գ. Ա. Պոտյոմկինի ձեռնարկած ռազմաքաղաքական և տնտեսական միջոցառումներին։ Ռաբբի Ազարիան՝ դեպքերին ականատես կարաիմ գործիչը, հայտնում է, որ հայերն ու հույները ռուս-

¹ Նույն տեղում, թ. 30ա։

ների հետ կռվում էին թուրք-թաթարական ուժերի դեմ¹։ Նշանակալից թվով զրիմաՀայեր մտել էին գործող ռուսական բանակի շարքերը։ Օր (Պերեկոպ) անառիկ ամրոցի դռները ռուսական բանակի առաջ բացողները հայերն էին²։ Շոշափելի էր նրանց օգնությունը մանավանդ ռազմական հետախուզություն ասպարեզում. նրանք ռուսական հրամանատարությունը հայտնում էին թշնամու ռազմական գաղտնիքները, ուղեցույցի դեր կատարում։ Այդ շրջանում ռուսական բանակին մատուցած իրենց օգտակար ծառայությունը աչքի ընկան նշանավոր զրիմաՀայեր Մարկոս Կյումուշլին, Կարապետ Մերզինը և ուրիշներ։ Հ. Արղունթյանի միջնորդությամբ նրանցից շատերը պարգևատրվեցին ռուսական կառավարության կողմից³։ Ապագա ծովակալ Լ. Մ. Սերբերյակովի հայր, ռուսական բանակում հարյուրապետ դարձած Մարկոսն էր այն անձնավորությունը, որի վրա էին դրված 1771-1777 թթ. թաթար-թուրքական կապերը հետախուզելու և այդ մասին ռուսական հրամանատարությունը գեկուցելու պարտականությունները։ 1771 թ. ռուսական 2-րդ բանակի կողմից Կաֆան գրավելու օրից Կյումուշլին շատ կաֆահայերի հետ անցնում է ռուսական զորքերի կողմը և մատուցած ծառայության համար, ինչպես ասված է պաշտոնական մի փաստաթղթում, «մի անգամ չէ, որ կանգնում է կյանքից զրկվելու վտանգի առաջ»⁴։ 1776 թ. նա կարողացավ իրազեկել ռուսական հրամանատարությունը թուրք-թաթարական կողմից ռուսական զորքերի դեմ նախապատրաստվող ելույթի մասին։ Այդ տեղեկությունները Մարկոսը ստանում էր զրիմաՀայ իր ազ-

1 "События, случившиеся в Крыму в царствование Шагин — Гирей хана", Перевод с еврейской современной рукописи, сочиненной караимом Рабби — Азария, сыном Илья, с. 126.

2 Երևանի Մատենադարան, արխիվ, անհատ. անձ. ֆ., թղթ. 137, վավ. 68, թ. 3:

3 Նույն տեղում:

4 Крымской областной гос. архив, ф. 49, оп. 1, д. 355а, л.

գականներին¹: Նույն թվականի սեպտեմբերին, եվպատոքիացի Կարապետ Մերզինը, գիտակցելով Ղրիմում Ռուսաստանին ձեռնտու խան կարգելու կարևորությունը, ռուսական հրամանատարությունը ղեկուցում էր, թե՛ 1/ Կուրանից նախկին դալդա Շահին-Գիրեյի ժամանման լուրը անհանգստացրել և տագնապի մեջ է գցել Դեվլեթ-Գիրեյ խանին և թաթարական ավագանուն, 2/ թուրքական սուլթանը, չնայած Ղրիմը անկախ հռչակելուն, շարունակում է այն դիտել որպես իր վասալ, իրեն է վերապահում խան նշանակելու իրավունքը, Դեվլեթ-Գիրեյին ուղարկել է հրովարտակ, կապա, սուր և գրիչ, 3/ Դեվլեթ-Գիրեյի և թուրքիայի միջև սերտ կապեր կան²:

1777 թ. Ղրիմում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Ա. Ա. Պրոգորովսկու ցուցումով վերոհիշյալ Մարկոսը առևտրականի անվան տակ գալիս է Բախչիսարայ: Նրան հաջողվում է հանդիպումներ ունենալ Շահին-Գիրեյի և ռուսական հրամանատարության կողմնակից թաթար իշխանավորների, մանավանդ Շիրինյան բեյի հետ: 1777 թ. հունվարի 20-ին նա ռուսական գլխավոր զինակալանին ղեկուցում է, թե Շիրինյան բեյը խնդրում է Շահին-Գիրեյին անհապաղ գալ Ղրիմ, «որովհետև ինչքան այսուհետև ուշանա նրա ժամանումը Ղրիմ, այնքան ուժեղ կդասավորվեն ընդդիմադիր գործերը»³: Ապրիլի 8-ին նույն Մարկոսը տեղեկացնում էր Կաֆայից, թե թուրքական նավահանգիստներում տեղի է ունենում զորքերի կենտրոնացում՝ նրանց Ղրիմ ուղարկելու համար⁴:

1777 թ. գարնանը ռուսական կառավարության առաջադրանքով Մարկոսը ժամանում է Կ. Պոլիս: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսում էր գտնվում Ղրիմի խանի պատվիրակությունը, որի խնդիրն էր ցույց տալ, թե Շահին-Գիրեյը խան է դարձել թաթար բնակչության ցանկությունը և

1 "Присоединение Крыма к России". Рескрипты, письма, реляция, донесения. Т. I-VI (1887 — 1896), СПб., т. 1, с. 52 — 53.

2 Տես նույն տեղում, էջ 80-81:

3 Տես նույն տեղում, էջ 259:

4 Տես նույն տեղում, էջ 544-545:

գործում է միանգամայն ինքնուրույն: Մարկոսը, կապ պահպանելով այդ պատվիրականների հետ, Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Ալեքսանդր Ստախիևին պետք է տեղյակ պահեր թուրքական արքունիքում կատարվող իրադարձություններին, իսկ թաթար պատվիրականներին էլ հայտներ դեսպանատան միջոցով ստացված հրահանգները: Բայց թաթարական պատվիրակությունը նրա կատարած ամենօրյա այցելությունները հայտնի են դառնում թուրքական իշխանություններին, որոնք արգելում են դրանք: Մարկոսը, սակայն, դեռևս Ղրիմում կանխադգացել էր նման անհաջողությունների հնարավորությունը և Բախչիսարայից իր հետ էր վերցրել մի հայի, որին հագցրել էր թաթարական զգեստ և ծպտյալ մտցրել պատվիրակության կազմում: Իբրև Ղրիմի խանի պատվիրակության անդամներից մեկը՝ սա ամեն ինչ իմանում և հայտնում էր Մարկոսին, իսկ վերջինս էլ Ստախիևի միջոցով Ա. Ա. Պորոգորովսկուն: Կոստանդնուպոլսից Պորոգորովսկուն գրած իր նամակում Մարկոսը հայտնում էր. «Իմ բարերար, թող հայտնի լինի ձեզ, որ մենք Ցար-գրադ հասանք մայիսի 15-ին, դեպուտատներին (իմա՝ Ղրիմի պատվիրակներին, որոնց թվում նաև ծպտյալ պատվիրակ բախչիսարայի հային — Վ. Մ.) բնակարան հատկացրին էսկյուդարում (Սկյուտարում — Վ. Մ.), իսկ ինձ մեր ռեզիդենտ Ալեքսանդր Ստախիևը վերցրեց իր մոտ: Նրա մոտից ամեն օր մի անգամ գնում եմ դեպուտատների մոտ՝ նրանց այստեղի տեղեկությունները պատմելու համար, իսկ նրանցից բերում եմ (տեղեկություններ) նրան՝ դեսպանին: Այստեղ ես գտա մեր թշնամի Դեվլեթ-Գիրեյ խանի հետ փախած բոլոր մուրզաներին: Հենց որ նրանք իմացան իմ գալու մասին և որ ես տեղեկություններ եմ տանում ռեզիդենտից դեպուտատներին, իսկ նրանցից նրան, վեզիրին հայտնեցին, որ ռուսների կողմից մեկը, այստեղ լինելով դեպուտատների հետ, ամեն օր տեղեկություններով դնում է նրանց մոտ, իսկ նրանցից ռեզիդենտի մոտ, որ նա Կաֆայի բնակիչ է և միշտ օգտագործվում է այդօրինակ լրատու-

1 Տես նույն տեղում, էջ 747-748:

րուլթյուններում, որ նա բոլոր մուրզաներին դարձրել է Ռուսաստանի կողմը (ընդգծումը — Վ. Մ.) և որ այստեղ էլ ուրիշ այլ նախատակով չի եկել: Այդ մասին մի մարդ տեղեկացրել է իմ բարեկամ Բեքիր-աղային, իսկ նա ասաց ինձ՝ Մարկոս, եղիր զգուշ, ամեն օր մի դա այստեղ: Այսպիսով, նրանց մոտ այժմ գնում եմ երեք օրը մեկ անգամ և այն էլ թուրք պահակի ուղեկցությամբ, նույնպես և նրանց մոտից էլ մեր ռեզիդենտի մոտ (պալիս եմ) տեղեկություններով... Այստեղի տեղեկությունների մասին, եթե բարեհաճեք հարցնել, այն, ինչ ես տեսել ու լսել եմ, ինձ համար անփայել է գրել, այդ ամենը ես տվել եմ (հայտնել եմ) Ալեքսանդր Ստախիևին, իսկ նա էլ բարեհաճել է գրել ձեզ: Այսուհետև ես այն ամենը, ինչ որ լսեմ ու տեսեմ, նրան կհայտնեմ, ինչ որ կբարեհաճեք իմանալ: Աստծո ողորմածությամբ հանդամանքները այստեղ լավ են, ինձ այդպես է թվում, այն բոլոր մուրզաները, որ եկել են այստեղ, առաջ և հետո, լինելով անազնիվ և ստախոս, գնացել են Ռումելիա և ոչ ոք չի մնացել, բացի Ղազի ասկյար էֆենդուց»¹:

1777-1778 թվականներին Կ. Պոլսում ռուսական դեսպան Ա. Ստախիևի՝ Ա. Ա. Պորոգորովսկուն, կոմս Ն. Ի. Պանինին և Ռումյանցևին (Ռումյանցև-Չադունայսկուն) հղած զեկուցագրերից ակներև է դառնում, որ դրանցում բովանդակված տեղեկությունների հեղինակը Մարկոս Կյումուշլին է²: Վերջինիս եռանդուն գործունեությանը ի տես թուրքերը սպառնում են վերջ տալ նրա կյանքին, և Մարկոսը հազիվ կարողանում է գլուխն ազատել:

«Բոլոր մուրզաներին Ռուսաստանի կողմը դարձնող» Մարկոսի դիվանագիտական հաջողության և այդ ասպարեզում նրա ծանրակշիռ ներդրման վկան էր այն հանգամանքը, որ 1778 թ. փետրվարին նրան գործողում են Ռումյանցև-Չադունայսկու մոտ հանդամանորեն զեկուցելու Ղրիմի հարցում սուլթանական արքունիքում իշխող

1 Նույն տեղում:

2 Տես նույն տեղում, 4. 2, էջ 23, 103, 110-112, 259:

3 Տես նույն տեղում, էջ 103:

մթնոլորտի մասին: Դեսպան Ա. Ստախիւնը, նրան ուղարկելով Ռուսականցի մոտ, հարկ էր համարել հանձնարարական գրությամբ տեղյակ պահել, որ «հայտնի ենիկալեցի՝ հայ հարյուրապետ Մարկոսը» իր «գերազանց նվիրվածությամբ և ջանասիրությամբ արժանի է բարձր հովանավորության և ձեր ողորմածագին խնամածությանը»¹: Ապրիլի 15-ին Մարկոսը Ռուսականցի հանձնարարությամբ մեկնում է Ղրիմ գեներալ Ա. Պրոգորովսկու մոտ՝ «մանրամասն և ճշգրիտ բացատրություններ» անելու համար:

Մարկոս Կյոմուլլու (Սերբերյակովի, Սերբերովի) ծառայությունները բարձր գնահատականի են արժանացել ժամանակի գլխավորական և քաղաքացիական բարձրաստիճան գործիչների կողմից: Մարկոսի ռազմաքաղաքական գործունեությունն ըստ արժանվոյն բնութագրող ատեստատներ են տվել Կերչ-Ենիկալե ամրությունների զորքերի հրամանատար, գնդապետ Ստոկպիշինը, Դնեպրի աջ ափում և Ղրիմում տեղակայված զորքերի հրամանատար, գեներալ-պորուչիկ Ա. Ա. Պրոգորովսկին, Կերչ-Ենիկալե ամրոցների օբեր պարետ, գեներալ-մայոր Բորզովը, Ազովի հետեակային գնդի հրամանատար, փոխգնդապետ Ա. Վենցելը, Շահին-Գիրեյ խանի մոտ ռուսական ռեզիդենտ Ա. Կոնստանտինովը, Ղրիմի և Կուբանի ռուսական զորքերի հրամանատար, գեներալ-պորուչիկ Ա. Վ. Սովորովը, Ղրիմի խանի մոտ ռուսական արտակարգ դեսպանորդ և լիազոր-մինիստր Պ. Վեսելեցկին, Տավրիկյան թերակղզու վրա ռուսական զորքերի հրամանատար, հետագայում նահանգապետ Մ. Կախովսկին և ուրիշներ²: Իր տված ատեստա-

* Մ. Կյոմուլլին բնիկ կաֆացի էր: Այստեղ «ենիկալեցի» է նշված այն պատճառով, որ հատուկ ակոսով թույլ էր տրված ռուսական հպատակություն ընդունած ղրիմահայ ընտանիքներին (որպիսին էր նաև Մարկոսի ընտանիքը) բնակության տեղափոխվել Ենիկալե (որը անցել էր Ռուսաստանին):

1 "Присоединение Крыма к России". Т. II, 259.

2 См. М и к а е л я н В. А. Аттестаты Маркоса Кюмушли (Серебрякова). — "Вестник обществ. наук" НАН РА, 1977, № 2, с. 99—107; см. также Крымский облархив, ф. Таврическое дворянское собрание, оп. 1, д. 355а, л. 1—10.

տում Ա. Վ. Սուվորովը, օրինակ, գրում էր, թե Մարկոսը օգտագործվել է Ղրիմից «Ազովի նահանգ քրիստոնյաներին վերաբնակեցնելու ժամանակ, ինչպես նաև դրանից առաջ տարբեր կարևոր հանձնարարականներ կատարելիս, որոնք կատարել է գերագանց ջանասիրությամբ և հավատարմությամբ»¹:

Մարկոսի, Կարապետի, Իվանեսի և մյուսների գործունեությունը, ինչպես նաև ռուսական բանակի շարքերում թուրք-թաթարական զորքերի դեմ մղված մարտերին ղրիմահայոց մասսայական մասնակցությունը, որի համար թաթարները սպառնում էին ռուսական զորքերի դուրս գալուց հետո նրանցից վրեժխնդիր լինել², սերտ աղերսներ ունեին 18-րդ դարի երկրորդ կեսերին Անդրկովկասում Ռուսաստանի վարած քաղաքականության հետ, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու հեռանկարը ոգեշնչել էր նաև ղրիմահայ համայնքներին և, ակներևաբար, հանդիսացել Ղրիմ և առհասարակ սեծովյան ափեր դուրս գալու նպատակով Ռուսաստանի վարած ռազմաքաղաքական ձեռնարկումներին զանգվածաբար սատար կանգնելու նրանց հեռատես դիրքորոշման հիմնական պատճառներից մեկը:

* * *

Ղրիմահայոց կապերը Մոսկվայի և առհասարակ ռուսական շրջանների հետ ամենաբեղուն դրսևորում են գտել հատկապես առևտրի բնագավառում: Մոսկվայի հետ ղրիմահայերի ունեցած առևտրական կապերին կարելի է հետևել տակավին 14-րդ դարից, երբ Մոսկվայում ապրում էր Ղրիմից ելած վաճառականների մի մեծ բազմություն «սուրոթցի հյուրեր» ("госте — сурожане") անվան տակ: Կասկած չի կարող, որ այս «սուրոթյան հյուրերից» էր հայ վաճառական Աբրահամը, որի տանից 1390 թ. Մոսկվա-

¹ Микаелян В. А. նշվ. աշխ., էջ 104:

² См. "Пресоединение Крыма к России". Т. II, с. 595.

յում տարածվում է հրդեհը: "Загорелся посад за городом от Аврама некоего армянина"¹, — հաղորդում է տարեգրությունը:

Ովքեր էին այս «սուրոթյան հյուրերը» իրենց ազգային կազմով և որտեղից էին նրանք գալիս Մոսկվա: Մի բան ակնհայտ է, որ նրանք այդ անունը ստացել էին Ղրիմի Սուրոթ (Սուգդեա, Սուգակ) քաղաքից: Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե նրանք բոլորը Սուրոթից էին, թեև նրանց մեջ կային նաև բուն սուրոթցիներ: Այս շրջանում Սուրոթի բնակիչների մեջ, ինչպես նշվեց, նշանակալից թիվ էին կազմում հայերը. Ֆ. Բրուսի կարծիքով՝ նրանք քաղաքի բնակչության մեջ մեծամասնություն էին²: Բայց առայժմ խնդիրն այդ չէ, այլ այն, որ երբեմնի վաճառաշահ ծովափնյա քաղաք Սուրոթը իր անունը տվել էր ամբողջ Ղրիմին, կամ գոնե նրա հարավ-արևելյան շերտին, որի մեջ մտնում էին հուչակավոր Կաֆան, Սուրխաթը և այլք: Մի ժամանակ նույնիսկ այդ անունը կրել է նաև Սև ծովը³: Եվգենիոս 4-րդ պապը 1432 թ. օգոստոսի 18-ի իր կոնդակում Ղրիմի վերը նշված հատվածը համարելով «Մեծ Հայաստան», նրանում նստած իր ներկայացուցչին անվանում է Սուլդայայի եպիսկոպոս, իսկ եկեղեցին էլ (հավաքական առումով՝ ինչպես ասում ենք՝ հայ եկեղեցի)՝ Սուլդայայի եկեղեցի: «Հարգարժան եղբայր Ավգուստինին՝ Սուլդայայի եպիսկոպոսին, Մեծ Հայաստանի այն մասերում, որտեղ Սուլդայայի եկեղեցին է գտնվում»⁴, — գրում էր Եվգենիոսը: Չմոռանանք, որ սա հղվում էր մի ժամանակ, երբ Սուլդայան կորցրել էր իր երբեմնի նշանակությունը, բայց եկեղեցա-

1 "Турецкая летопись", с. 436, РСРЛ, т. XVIII, с. 140. Սուրոթցի հյուրերի մասին մանրամասն տես՝ Сыроечковский В. Е. Гости — сурожане.

2 Брун Ф. Черноморье, II, Одесса, 1880, с. 140.

3 Сбс ЗООИД. Т. V, с. 831, տես նաև Веселовский А. Н. Южно-русские былины. СПб., 1884. — Сборник отделения русского языка и словестности Академии наук. Т. XXXVI, № 3, с. 69 — 70.

4 "Крымский сборник", с. 135.

կան թեմը, ուրեմն և նրան ենթակա տարածքը, ավանդաբար շարունակում էր պահպանել իր անվանումը, ճիշտ այնպես, ինչպես դարեր շարունակ, որպես այդպիսին, Ղրիմի եկեղեցին կոչվում էր Գոթֆիալի եկեղեցի, թեև գոթերի հետքն անգամ չէր մնացել: Ուրեմն, թեև Սուրոթը կորցրել էր իր նախկին նշանակությունը, բայց 15-րդ դարում և մի փոքր ավելի ուշ շրջանում էլ «սուրոթցի հյուրեր» անվանումը, հավանաբար, շարունակում էր գործածվել: Այսպիսով, սուրոթցի հյուրերը Սուդակից, Կաֆայից, Սուրխաթից և այլ վայրերից Մոսկվա եկած վաճառականներն էին:

Ազգային կազմով թեպետև խայտաբղետ, բայց «հյուրերի» նշանակալից զանգվածը, հավանաբար, հայեր էին, թեկուզև այն պատճառով, որ լատինական աղբյուրներում Ղրիմի «Մեծ Հայաստան» կոչված այս տարածքի բնակչության շոշափելի մասը հայեր էին, որոնց ձեռքում էր գտնվում նաև թերակղզու առևտրատնտեսական դերազանցությունը՝ 14-15-րդ դարերում: Բացի այդ, պահպանված առատ տեղեկություններն էլ լրացնում են այդ հետևությունը: Սուրոթցի հյուրերից էր ոչ միայն նշված Աբրահամը, այլև Դմիտրի Դոնսկոյին Կուլիկովյան նշանավոր ճակատամարտում զինվորական և դիվանագիտական ծառայություն մատուցած տասը վաճառական «սուրոթցի հյուրերը»¹, որոնք, ամենայն հավանականությունը, դոնե հիմնականում հայեր էին²:

15-րդ դարում Ղրիմ-մոսկովյան առևտուրը հիմնականում ընկած էր նախ հայ, ապա հուլյն և ռուս վաճառականների ուսերին. Պոդոսը, Բաբեկը, Ավետիքը, Գրիգորը, Սարգիսը և ուրիշներ, որոնց մասին այլ աղբյուրով խոսել ենք, ղրիմահայ այն ունեոր վաճառականներից էին, որոնք ճանաչված էին նաև Մոսկվայում և նրա տերություն քաղաքներում:

1 ПСЛ, т. XI, с. 54 (բերում ենք ըստ Լ. Խաչիկյանի նշվ. հոդվածի, էջ 69-71):

2 См. Л. Խ ա չ ի կ յ ա ն, նշվ. հոդվ., էջ 60-76:

16-րդ դարում ևս, չնայած ջենովական առևտրական գաղթականների վերացմանը և թաթարական խժոժություններին, Ղրիմ-մոսկովյան առևտուրը ժամանակ առ ժամանակ աշխուժացման նշաններ է դրսևորում, և այդ աշխուժացման մեջ նկատելի էր հայ և ռուս վաճառականների դերը: 1516 թ. Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Վասիլի Անդրեևը Մոսկվա վերադառնալիս իր հետ է բերում նաև ղրիմահայ վաճառականների¹: Ղրիմից և Թուրքիայից Ռուսաստան անցած և Ռուսաստանից Թուրքական տարածքներ ժամանած վաճառականների ազատ ու անարգելք գործունեության երաշխավորման համար սուլթան Սելիմը հատուկ հրովարտակ է ընդունում, որը 1516 թ. փետրվարին Կորոբովը Թուրքական դեսպան Իտյակ Թարխանի հետ բերում է Մոսկվա: Հրովարտակը պահանջում էր թույլ տալ Թուրքահայատակ և ռուսահայատակ վաճառականներին «առանց որևէ արգելքի և վիրավորանքի, հովանավորության և պաշտպանության ներքո, իրենց ազատ կամքով առևտուր անել» Թուրքական և ռուսական տարածքներում²: Ռուս և ղրիմահայ վաճառականների առևտրական կապերը արդեն այս շրջանում այնքան էին սերտացել, որ նրանք նույնիսկ առևտրական համատեղ քարավաններ են կազմում: 1524 թ. Մոսկվայից Ղրիմ է գալիս 300 հայ և ռուս վաճառականների քարավանը, որը չնայած սուլթան Սելիմի վերը նշված հրովարտակի հավաստիացումներին, ենթարկվում է թաթարների ավազակային հարձակմանը:

Այս շրջանում ղրիմահայ և մյուս վաճառականների կողմից Մոսկվա բերված ապրանքների մեջ գերակշռում էին մետաքսը, մետաքսյա, բամբակյա և բրդյա գործվածքները, ներմուծման ապրանքների մեջ էին մտնում նաև նուշը, հունական ընկույզը, շաքարը, սանրերը, գլխաշորերը, զարդարանքի իրերը, համեմունքները և այլն: Ղրիմ փաստորեն տարանցիկ առևտրի հենակետ էր, և հենց դա էր, որ

1 Տես "Сборник русского исторического общества". Т. 95, с. 236.

2 Տես նույն տեղում, էջ 236-237:

ղրիմաՀայ առևտրական դասին մղում էր առաջին պլան՝ հիմնականում Արևելքի երկրներից և Վալաքիայից բերված այս սպրանքները Ռուսաստան առաքելիս: Ռուսաստանից արտահանվում էին տարբեր տեսակի մորթեղեն և մուշտակներ, ձկան յուղ, սրանց մի մասը սպառվում էր Ղրիմում, իսկ մյուսը արտահանվում էր Թուրքիա և Մերձավոր արևելքի այլ երկրներ¹:

Ալեքսեյ Միխայլովիչի ժամանակ, Աստրախանով և Վոլգայով Մոսկվա անցած պարսկահայ վաճառականութ-
յանը զուգընթաց և դեպքից-դեպք էլ նրա հետ գործակցած Ռուսաստանում ժրաջան առևտուր էին կատարում զրիմա-
Հայերը և Ղրիմի վրայով նրանց թուրքահայ աղագիյցնե-
րը: Այս շրջանում Մոսկվայում հանդիպում ենք բազմաթիվ զրիմահայերի, որոնք, նեցուկ ունենալով իշխանություննե-
րի հովանավորությունը, իրականացնում էին իրենց առևտրական գործարքները: Նրանցից էին, օրինակ, Աջի-
բոլն ու Յակովլևը, Ֆյոդոր Իվանովը, Վասիլ Մերկուրևը, Մանսուրովը, Բաղդասարովը, Իվանովը և շատ ուրիշներ: Նրանցից շատերը, ինչպես վկայում են պաշտոնական փաս-
տաթղթերը, գերադասում էին բերված ապրանքների (այդ
թվում նաև իրենց ազատազրած ռուս մարդկանց) դիմաց
ստանալ մորթեղեն: Վերջինս Ղրիմում և արտասահմանում
դնայուն ապրանք էր և այդ պատճառով էլ զրիմահայ վա-
ճառականները այն գերադասում էին մյուս ապրանքներից:

18-րդ դարում ևս Ղրիմահայ վաճառականության
գործունեությունը հյուսիսի երկրներում և մանավանդ
բուն ռուսական շրջաններում նկատելի չափերի էր հաս-
նում: Հյուսիսի հետ առևտրի զարգացման պահանջն էր, որ
թերակղզու հյուսիսային պարանոցում կյանքի կոչեց զուս
Հայկական մի այնպիսի առևտրական հենակետի ստեղծու-
մը, որպիսին Արմյանսկի Բազարն էր:

1711 թ. ռուսական իշխանությունները Ազով քաղա-
քի մոտ ձերբակալում և իզյում քաղաքն են տեղափոխում

1 Шу С ы р о е ч к о в с к и й В. Е. Гости — сурожане, с.
48 — 60.

8 հայ և 9 հուլյն վաճառականների՝ իրենց բերած ապրանքներով¹։ Սա հարկադրական մի քայլ էր, որին ուզեին-չուզեին պիտի դիմեին ռուսական իշխանությունները Պետրոս 1-ինի՝ Պրուտի արշավանքի շրջանում, երբ Շվեդիայի դրդմամբ Թուրքիան ռազմական գործողություններ էր սկսել Ռուսաստանի դեմ։ Հաջորդ տարում, թեև պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև չէր դադարել, շատ ղրիմահայեր արդեն առևտուր էին անում Կիևի նահանգում։ Սրանց թույլ է տրվում (1711 թ. Թուրքիայի հետ կնքված պայմանագրի համաձայն) վերադառնալ Ազով։ Հետաքրքիր է հայ վաճառականների մոտ ցուցակագրված ապրանքների անվանումը՝ զանազան մորթիներ, ոսկեղեն, մուշտակներ, ծածկոցներ, զենքեր, բյուրեղապակյա բաժակներ, հայելիներ, կաշիներ, տարբեր տեսակի կտորեղեն (այդ թվում նաև մահուղ), դեղորայք, մատանիներ, մոմ, սանրեր և այլն։ Փաստաթուղթը թվարկում է հետևյալ հայ վաճառականների անունները՝ Ղափլանի որդի Իվան Պավլով, Իլյա Միխայլով²։ Վերոհիշյալ ապրանքները, որոնց միայն մի մասը թվարկվեց, նրանք գնել էին արտահանման նպատակով և տեղական արտադրանք էին, հանգամանք, որ մատնանշում է արհեստագործության բավական բազմաճյուղ վիճակը Ռուսաստանում 18-րդ դարի սկզբներին։

18-րդ դարի 20-30-ական թվականներին Ռուսական կայսրության մեջ ղրիմահայ վաճառականության գործարքների բնույթն ու ծավալը այնքան մեծ ընդգրկում ունեին, որ հարկավորություն էր զգացվել բուն խանության տարածքում Արմյանսկի Բազար առևտրական Ֆակտորիայի հիմնադրմանը գրեթե միաժամանակ տարանցիկ առևտրի կարիքներին ծառայող մեկ այլ հենակետ ստեղծել խանության սահմանամերձ ռուսական տերիտորիայի, այն էլ առևտրահարմար այնպիսի մի անցուղու վրա, որպիսին Նեժին քաղաքն էր։ Այդ հենակետը հիմնում է ղրիմահայ վաճառական Կարապետը։ Պահեստաշենքերից, իջևանասեն-

1 Տես ЦГАВМФ, ф. 233, оп. 1, д. 19, л. 35—36.

2 Տես նույն տեղում, գ. 54, թ. 153-158:

յակներից և խոհանոցներից կազմված առևտրական այս համալիրը ղրիմահայ, պարսկահայ և արևմտահայ վաճառականները տարանցիկ առևտրի միջնորդակետ դարձնելով և ապավինելով ռուսական իշխանություններին ծանոթ Նեփինում հաստատված ղրիմահայերի օգնությանը և միջնորդությանը՝ Ուկրաինայում և Ռուսաստանում լայն առևտուր էին կատարում: Կարապետը՝ Ֆակտորիայի տերն ու գլխավորը, Ղրիմի Կոզլով քաղաքից էր, և ամուսնանալով ռուս կնոջ հետ, 20-ական թվականներին հաստատվել էր Նեփինում: Ռուսական իշխանությունների մոտ վայելած վստահության և ծանոթակցական կապերի շնորհիվ նա կարողանում էր այլևայլ վայրերից եկած հայ վաճառականներին պաշտոնական միջնորդի ծառայություն մատուցել, օգնել նրանց անցնել ռուսական սահմանը, իսկ այնտեղից վերադառնալ Ղրիմ և արտասահման: Նեփինը փաստորեն դարձել էր մեծածախ առևտրի նշանավոր մի կենտրոն, ուր հայերի (և առաջին հերթին ղրիմահայերի) բերած ապրանքները կուտակվում էին և ապա նոր բաց թողնվում վաճառքի՝ թե տեղում, թե Կիևում և թե Մոսկվայում և այլուր¹: Իր նման դերով Նեփինի հայկական առևտրական այդ կենտրոնը 18-րդ դարի 20-30-ական թվականներին հայ-ռուսական առնչությունների կարևոր օղակներից էր:

1736 թ. մայիսին հուլյն վաճառական Իվան Յանովսկու միտումնավոր հաղորդումը առիթ է դառնում, որ դենեքալ-Ֆելդմարշալ կոմս Միննիխը հրաման արձակի Կարապետին ժամանակավորապես Գլուխով տեղափոխելու և հսկողության տակ վերցնելու մասին՝ պարզելու համար նրա թուրք-թաթարական գործակալ լինելու վերաբերյալ մեղադրանքի իսկությունը: Սա մի ժամանակաշրջան էր, երբ ռուսական իշխանությունները հարկադրված էին ցուցաբերել դերդուլություն. 1736 թ. ապրիլի վերջերին ռուսական

1 Шу Архив внешней политики России, ф. Сношения России с Арменией, оп. 100, 1736—1738, д. 6, л. 1—31, տես նաև Микаелян В. А., Мартиросян В. М. Материалы по истории армянского купечества в России. — Вестник общ. наук НАН РА, 1978, № 4, с 79—99.

գորքերը, զարգացնելով առաջխաղացումը, գրավեցին Պե-
րեկոպը և արշավեցին թերակղզու խորքերը: Հաջորդ տա-
րում տեղի ունեցավ ռուսական զորքերի երկրորդ արշա-
վանքը դեպի Ղրիմ՝ գեներալ Լասսի հրամանատարութ-
յամբ: Կարապետին ներկայացված մեղադրանքը չի հաս-
տատվում, սակայն երկարատև հարցաքննության նյութե-
րը, և հատկապես նրա մոտ պահպանված հայերեն, հունա-
րեն, թուրքերեն, ուկրաիներեն, լեհերեն և լատիներեն նա-
մակները, որոնց հեղինակները վաճառականներ էին, լույս
են սփռում այդ ֆակտորիայի ծավալուն գործունեության
վրա: Այդ նամակներից և հարցաքննության նյութերից
պարզվում է, որ առևտրական գործերով ռուսական սահմա-
նը անցնելու անցագրերի ձևակերպման և առևտրի նպա-
տակահարմարության մասին անհրաժեշտ տեղեկություն-
ներ ստանալու խնդրանքով Կարապետին դիմել էին
այլևայլ վայրերի հայ վաճառականներ: Նրան էին դիմել, օ-
րինակ, Ղրիմեցի հայ վաճառականներ Ասատուրը, Հովհան-
նեսը, Ղուկասը, Միքայելը, Պողոսը, Թովմասը, թոխատեցի
Աբրահամն ու Մարտիրոսը, էրզրումցի Պետրոսը, պարսկա-
հայ Մարտինն ու Պետրոսը, Մոսկվայում վաճառականութ-
յամբ զբաղված վրացահայ Արտեմն ու շատ ուրիշներ¹: Կա-
րապետի որդի Գրիգորն, օրինակ, 1734 թ. հոկտեմբերի
24-ին Կրեմենչուկից հորը իրազեկում էր, թե պետք է
հայտնել Նեժինում գտնվող բոլոր ղրիմահայ վաճառական-
ներին, որ ճանապարհն ազատ է և Պոլտավայում թույլտ-
վություն վերցնելով՝ նրանք կարող են անցնել սահմանը և
գնալ Ղրիմ: Նույն թվականին ղրիմահայ վաճառական Ա-
սատուրը Մոսկվայից հարցնում էր, թե հնարավո՞ր է արդ-
յոք անցագիր ստանալ Կիևի վրայով արտասահման մեկնե-
լու համար: Ուկրաինական քաղաքներում գինու առևտուր
անող բախչիսարայցի Հովհաննեսը 1735 թ. դեկտեմբերին
Պոլտավայից գրած հատուկ նամակով Կարապետից
խնդրում էր իրեն տեղեկացնել, թե ինչու հունահպատակ և
թուրքահպատակ վաճառականները կարող են ազատ կեր-

¹ Микаелян В., Мартиросян В. նշվ. աշխ., էջ 85-

պով անցնել արտասահման, իսկ Ղրիմեցի վաճառականները ոչ: Ղրիմեցի հայտնի վաճառական Պողոսը, որը առևտուր էր անում Ուկրաինայում, Կարապետից խնդրում էր միջնորդել իշխանությունների առաջ իրեն անցագիր տալու համար: Կարապետը այդ բոլոր նամակների հեղինակներին տվել էր գործնական պատասխաններ, որոնք հավաստում են ռուսական իշխանությունների թույլտվությամբ և հովանավորությամբ գործելու նրա իրավունքները:

Հարցաքննության ժամանակ պարզվում է, որ Ղրիմահայ շատ վաճառականներ 18-րդ դարի 20-30-ական թվականներին ուկրաինական և ռուսական տարածքներում երկարատև և ծավալուն գործունեություն են ունեցել: Նրանցից էին Ասատուրը, Հովհաննեսը, Պողոսը, որը վեց տարի անընդմեջ առևտուր էր անում Նեփինում և այլ քաղաքներում, Սիմոնովը, «նշանավոր վաճառական, Կոզլովի բնակիչ Թովմասը», որը «15 տարուց ի վեր ապրանքներով գալիս էր Մալոռուսիա, որին գիտեին ռուս շատ վաճառականներ» և ուրիշներ:

Այսպիսով, 15-րդ դարի վերջին քառորդից սկսած մինչև Ղրիմի միացումը Ռուսաստանին տավրիկյան հայերը առաջատար դեր են խաղացել սլավոնական աշխարհի և մասնավորապես Մոսկովյան իշխանության (ավելի ուշ նաև ռուսական պետության) միջև եղած քաղաքական և առևտրական կապերում, աչքի ընկած գործունեություն ցուցաբերելով և դիվանագիտական-քաղաքական, և առևտրատնտեսական մարզերում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼԻՔ-ԱՐԵՎՄՈՒՏԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԵՐԸ ՂՐԻՄԱՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽՆԵՐՈՒՄ

Ղրիմի թերակղզին եվրոպայի այն տարածաշրջաններից է, որը պատմական դրեթե բոլոր ժամանակներում աչքի է ընկել որպես տարբեր ազգերի բնակատեղի: Եվ որովհետև հայ բնակչությունը միջնադարյան Ղրիմում տեղաբաշխված էր անխտիր թերակղզու բոլոր հատվածներում և այդ պատճառով մշտական շփման մեջ էր տարբեր ժողովուրդների հետ, ապա, բնականաբար, նրա պատմական զարգացման ընթացքի վրա տարբեր դրսևորումներով իրենց կնիքն էին դնում այդ փոխհարաբերությունները: Խոսքը մանավանդ թաթարների և հույների հետ հայերի ունեցած կապերին է վերաբերում: Հատկապես կարևոր նշանակություն ունեին տնտեսական և կրոնաքաղաքական շփումները թաթարների և ջենովացիների հետ, և այդ կարևորությունը թելադրվում էր նրանով, որ այս վերջինները Ղրիմում «կառավարող» ազգեր էին:

«Կառավարող» ազգ ջենովացիները Ղրիմում հաստատվել էին թաթարների հետ կնքված համաձայնագրով՝ հարկատվության պայմանով, և մինչև առանձին խանության ձևավորումը (1428 թ.) և դրանից հետո էլ (մինչև 1475 թ.) թաթարներին զիջումներ էին անում և հարկեր վճարում այն պահերին, քանի դեռ նրանք ուժեղ էին: Սակայն հաճախ, թերակղզու վրա և բուն Ոսկե Հորդայում գլուխ բարձրացրած երկպառակության և խռովահույզ վիճակի ժամանակ, ջենովացիները հրաժարվում էին թաթար կառավարողներին հարկեր ու տուրքեր վճարելուց, մեկ-մեկ էլ զինված դիմադրություն էին ցույց տալիս նրանց: 15-րդ դարի առաջին կեսին ջենովացիների և թաթարների հարաբերություններն արդեն այնքան էին սրվել, որ 1449 թ. կանոնադրությամբ Ջենովայի հանրապետության կառավարությունը արգելում է կաֆայի քաղաքացիներին հարարե-

րությունների մեջ մտնել, նույնիսկ սովորական շփումներ ունենալ թաթարների հետ, հանգամանք, որը թելադրվում էր ջենովական նշանավոր այդ գաղթականի անվտանգութ-
յան ապահովման պահանջով: «Թաթարների հետ Կաֆայի քաղաքացիների հարաբերությունները ընդհատելու մա-
սին» հոգվածը գտնում էր, որ թաթար խանի և նրա հալա-
տակների հետ ունեցած շփումները քաղաքի պաշտպանութ-
յանը վտանգ են սպառնում, ուստի խստիվս արգելում էր քաղաքի բնակիչներին որևէ թաթարի ընդունել իր տանը կամ հյուրանոցում՝ կարգը խախտողին սպառնալով տու-
գանել 25-100 սոմո: Նույնքան տուգանք պիտի վճարեին նրանք, ովքեր քաղաքի արվարձաններում զրույցի մեջ կմտնեին թաթարների հետ¹:

Ղրիմի ամբողջ քրիստոնյա ազգաբնակչության նման զրիմահայերը ևս ենթակա էին թաթարական բռնութ-
յուններին և պարբերական ասպատակությունների ծանր հետևանքներին: Բայց փաստերը ցույց են տալիս, որ իրենց ընդհանուր գծերով հանդերձ թաթարների վերաբերմունքը դեպի այս կամ այն քրիստոնյա ժողովուրդը ուներ նկատելի տարբերիչ կողմեր, որոնք պայմանավորված են եղել ժամա-
նակի քաղաքական իրադրության վայրիվերումներով, տվյալ քրիստոնյա ժողովրդի հետ թաթարների ունեցած ա-
վանդական կապերով և նրանից ակնկալվող շահի պահան-
ջով: Հայ-թաթարական կապերը Ղրիմում, որոնց մասին վե-
րը արդեն հարեանցիորեն նշել ենք, ունեցել են իրենց զար-
դացման յուրահատկությունները՝ կապված հիմնականում երկու էական հանգամանքներով՝ թաթարների հետ զրիմա-
հայոց ունեցած կապերի երկարատև ավանդույթներով և հայերից ստացվող բազմակողմ օգուտով և շահավետութ-
յամբ: Թաթարները, որոնց հիմնական զբաղմունքը մինչև 16-րդ դարի կեսերը կիսաքոչվոր անասնապահությունն էր, իսկ մինչև 18-րդ դարը՝ նաև ավարառու արշավանքները, խստիվս ունեին հայերի կարիքը որպես արհեստավոր և առևտրական ժողովրդի: Թաթարական ավազանին հան-

դուրժողական վերաբերմունք ունեն հայերի նկատմամբ, և վերջիններիս առանձին ներկայացուցիչներ 18-րդ դարի կեսին նույնիսկ վարում էին Ղրիմի խանության զրամատան տնօրենի պաշտոնը¹:

Դեպի հայերը թաթարական վերնախավի և թե թաթար շարքային ասպատակատենչ զանգվածի բավականին լոյալ վերաբերմունքով պիտի բացատրել նաև այն հանգամանքը, որ նրանք նաև բնակութուն էին հաստատել թերակղզու թաթարական շրջաններում՝ Սուրխաթում, Ղարասուբազարում, Բախչիսարայում, Եվպատորիայում, Զուֆուտ-Կալեում և այլուր: Անշուշտ, հայերից ստացվող տնտեսական օգուտի պատճառով էր, որ թաթարները համեմատաբար հանդուրժողական վերաբերմունք էին ցույց տալիս նրանց հավատի և հավատատեղիների նկատմամբ, թեև առիթ առ առիթ կրոնական հետապնդումների էին ենթարկվում նաև հայերը:

Հայերը եկեղեցիներ ունեին Ղրիմի թաթարների երկու մայրաքաղաքներում էլ՝ և Հին Ղրիմում, և Բախչիսարայում: Բախչիսարայում, օրինակ, հայերն ունեին երկու եկեղեցի՝ զանգակատնով²: Ոսկե Հորդայի Ղրիմի ուլուսի մայրաքաղաք Սուրխաթի (Հին Ղրիմի) կառավարիչների կողմից հայերի նկատմամբ ցուցաբերած վերաբերմունքը չի վրիպել նաև զրիմահայ գրիչների տեսադաշտից: Անվանի Նատերը, օրինակ, Հորդայի Զանիբեկ խանի այստեղի փոխանորդ Ռամատանին (Ռամուտանին) հիշատակության արժանի է համարում «վասն իրավագնացութեան ի վերայ սահմանի ըստ աւրինի քաղաքականութեան», իսկ մեկ այլ գրիչ Նատերից չորս տարի հետո նույն Ռամատանին համարում է «իմաստուն դատաւոր»³: Նշվածը, հարկավ, հայթաթարական կապերի յուրատեսակ արտացոլում էր:

1475 թվականից հետո, երբ Ղրիմի խանությունը ընկել էր վասալական կախման մեջ Թուրքիայից, հայ-թա-

1 Մ. Վ. Բ ժ չ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 245:

2 Сборник актов, относящихся к обозрению истории армянского народа. Ч. II, 1838, с. 45.

3 Ժ Դ դարի հայերին ձեռագրերի հիշատակարաններ, էջ 349-385:

Թարական շփումները Ղրիմում, ըստ փոփոխված Հանդամանքների, կրում են դրանց բացասական կնիքը: Ըստ որում, որքան մահմեդականությունը խոր արմատներ էր գցում տեղի թաթարների մեջ, որքան նրանք դառնում էին մոլեռանդ մահմեդականներ, այնքան հայ-թաթարական հարաբերությունները, մանավանդ կրոնական հողի վրա, ավելի էին լարվում, և հայերի նկատմամբ կրոնական հալածանքները դնալով սաստկանում էին ու հաճախակի դառնում: Այդ են վկայում, օրինակ, մահմեդական մոլեռանդությունը 1509 թ. զոհ դարձած «աննման փիլիսոփա» և «զարմանալի պատկերահան» Ավետիք կրոնավորի օրինակը¹, 1567 թ. տանջամահ արված Պարոն-լույսի «յայսմաւուրք վկայաբանութիւնը»², Սահակի և Փռանկուլի նահատակությունները³, քրիստոնեական բազմաթիվ եկեղեցիների ավերումը 17-րդ դարում, որի մասին վկայում է Ղրիմ շրջագայած ռուս կրոնավոր Յակով Լիզլովը⁴, և այլն:

Եվ այնուամենայնիվ, տեղացի հայ, հույն բնակչության, ինչպես նաև սլավոնական երկրների հետ ունեցած շփումների ազդեցության ներքո թաթարների ապրելակերպում կատարվում էին լուրջ տեղաշարժեր: Դրանք առաջին հերթին վերաբերում էին թաթարների անցմանը քոչվոր անասնապահությունից և անօթևան կենցաղից նստակեցության և երկրագործության, հանդամանք, որը պիտի բացատրել նաև տնտեսական կյանքի հրամայական պահանջներով, երբ սլավոնական աշխարհի և Հյուսիսային Կովկասի շրջանները կատարված ավարառու արշավանքներից ստացվող «եկամուտները» դնալով սահմանափակվում էին: Եվ 16-17-րդ դարերում Ղրիմի թաթարները սկսում են աստիճանաբար անցնել հացահատիկի մշակության և նույնիսկ այգեգործության: Դա տեական պրոցես էր, որը ընթանում էր դժվարությունների և խոչընդոտների հաղթա-

1 «Հայոց նոր վկաներ», Վաղ-պատ, 1903, էջ 346-347:

2 Երևանի Մատենադարան, ձեռ. № 7397, թ. 514-522:

3 Նույն տեղում, թ. 639-641:

4 И. А. Да ни е в с к и й. Очерки истории Инкермана. Одесса, 1855, с. 20.

Հարման ճանապարհով: Պիտի ընդգծել այդ գործընթացում առանձին խաների նախաձեռնող դերքորոշումը. նրանցից առավել հեռատեսները, նկատելով երկրագործության խաղացած կարևոր դերը դրկից հայերի և հարևան մյուս քրիստոնյա ժողովուրդների տնտեսական կյանքում, իրենց հպատակ ազգակիցներին շատ դեպքերում հարկադրանքով ստիպում էին անցնել նստակեցության և զբաղվել դաշտավարությամբ՝ նրանց բաժանելով մեծ ու փոքր հողակտորներ: Սահլը-Գիրեյ խանը, օրինակ, 16-րդ դարի կեսերին բռնությամբ ջարդել էր տալիս քոչվոր թաթարների սայլերը, որպեսզի նրանք զրկվեին տեղափոխություններ կատարելու հնարավորությունից և անցնեին նստակյաց կյանքի:

Բոլորովին այլ բովանդակության էին Ղրիմում հայերի և ջենովացիների կապերը, որոնց մասին տարբեր առիթներով արդեն խոսել ենք: Տնտեսական ու մշակութային աղերսներից բացի՝ դրանք ներառում էին նաև իրավական և կրոնական բնագավառներ:

Նախ՝ իրավական բնագավառի հարցերի մասին: Երկրորդ գլխում մենք արդեն համառոտակի բնութագրել ենք ջենովական օրենքները և առանձնապես 1449 թ. կանոնադրությունը: Այս վերջինը, որը կրում էր «Սև ծովի ջենովական գաղութների կանոնադրություն» անվանումը, հատուկ ուշադրություն էր դարձնում նաև այլազգիներին և մանավանդ հայերին՝ նրանց ներքին կյանքին չմիջամտելու առումով: Ինչպես առիթ ենք ունեցել նշելու, ջենովական բոլոր այն օրենքներն ու կանոնները, որոնք շոշափում էին առևտրատնտեսական, քաղաքական, ընդհանուր վարչական և պաշտպանական հարցեր, լիովին տարածվում էին կաֆահայության վրա: Իբրև Կաֆայի բնակիչներ, այն էլ նրանց մեջ ջախջախիչ մեծամասնություն կազմող, հայերը պարտավոր էին ենթարկվել տեղի ջենովական իշխանություններին: Ջենովայի քաղաքական իշխանությունը հայերի կողմից ճանաչելու մասին են վկայում, օրինակ, հայկա-

1 В. М. Смирнов. Крымское ханство подверховенством Османской порты до начала XVIII в. СПб., 1887, с. 39.

կան այն հուշարձանները, որոնց վրա դրոշմված էր Զենու-
վայի հանրապետության զինանշանը¹:

Բայց քաղաքաբնակ հայերը Կաֆայի վարչական
կառավարման մեջ իրենց ներկայացուցիչներն ունեին:
Նախ նշենք, որ կանոնադրություններում և որոշումներում
Ղրիմում ապրող ջենովացիները դիտարկված են որպես ա-
ռանձին համայնք:

Դեռևս 1316 թ. ընդունված հատուկ հրահանգը ջե-
նովացիներին տարբերում էր տեղական մյուս ժողովուրդ-
ներից, օժտում որոշակի արտոնություններով և պատնեշում
իրավական կարգով: Այդ հրահանգը սահմանում էր, թե ով
կարող է լինել ջենովացի. «Կաֆայի հյուպատոսը, — ասված
էր այդ որոշման մեջ, — չի կարող որևէ մեկին գրություն
կամ թուղթ տալ կամ գրավոր հավաստել այն մասին, որ նա
հանդիսանում է կամ համարվում է ջենովացի, եթե նախա-
պես վստահության արժանի երկու կամ երեք վկաների կող-
մից չի հաստատվել, որ նա ծնվել է Զենովայի ափին կամ
մարզում, կամ թե նրա հայրը եղել է ջենովացի»²: Սակայն
1449 թ. կանոնադրությունը, թուրքական վերահաս ագրե-
սիային դեմ-հանդիման, խստիվս ընդլայնում է կաֆացիներ
ի (նախ՝ հայերի, ապա նաև հույների ու հրեաների) իրա-
վունքները՝ քաղաքի պաշտոնական ատյաններում նրանց
համար ապահովելով ներկայացուցչական հավասար տեղեր:
Բացի Կաֆայի հյուպատոսից, որին նշանակում էր Զենովա-
յի հանրապետության կառավարությունը, բոլոր ատյաննե-
րի պաշտոններում կաֆացիներն ու ջենովացիներն ունեին
համահավասար տեղեր: Դա վերաբերում էր Ավագների
խորհրդին, մասարներին, դլխավոր սինդիկներին, Գանձա-
տան խորհրդին, Խնամատարության կոմիտեին, Առևտրի
կոմիտեին և առհասարակ մյուս բոլոր ատյաններին: Ահա,
օրինակ, ավագների ընտրության մասին կանոնը (կանոն
2-րդ), որն հրահանգում էր. «Որոշում և կարգ ենք հաստա-

1 Л. Меликсет — Бекоев. Старинные армянские надписи в музее общества любителей истории и древностей в Одессе. Тифлис, 1912, с. 15—16.

2 «Հայ-իտալական առնչություններ», էջ 29:

տում, որ Կաֆայի հյուպատոսը հենց որ կանցնի իր պաշտոնի կատարմանը, պարտավորվում է ընտրել Կաֆայի ութ ավագներից բաղկացած խորհուրդ ստորև բերվող կարգով։
Նրանցից չորսը պետք է լինեն ջենովական քաղաքացիներ, իսկ չորսը Կաֆայի քաղաքացիներ, հետևելով, որպեսզի կեսը լինեն ազնվականներ»¹։

Վերը ասածից անխուսափելիորեն հետևում է, որ Կաֆայի բնակչության մեջ մեծամասնություն կազմող հայերի ձեռքում էր կենտրոնացվել քաղաքի և նրան մերձակա տարածքների կառավարման զգալի մասը։

Ջենովական իշխանություններին ենթարկվելուն զուգընթաց հայերն իրենց ներքին կյանքը կարգավորելու խնդիրներում օգտվում էին որոշակի ինքնավարությունից։ Պիտի նկատի ունենալ նաև այն, որ ջենովական օրենքներից և կանոններից դուրս էր զրիմահայություն զգալի զանգվածը. թերակղզու թաթարական շրջաններում հաստատված հայ գաղթօջախների բնակչությունը, բնականաբար, էլ էր ենթարկվում ջենովական վարչակարգին։ Բայց բուն Կաֆայում և նրան շրջակա տարածքներում էլ ջենովացիներն հաճախ աշխատում էին չմիջամտել հայոց ներքին գործերին՝ նրանց մոտ դժգոհություն ծագման առիթներ չտալու համար։ 1449 թ. կանոնադրությունն, օրինակ, հասուկ հոգևածով պաշտպանում էր հայերին, հույներին և ոչ կաթոլիկ այլ ժողովուրդներին Կաֆայի ջենովական եպիսկոպոսի ոտնձգություններից², իսկ դեռևս 1316 թ. ընդունված կանոնադրությունը արգելում էր չեղել հայերի եպիսկոպոսի անցկացրած ջրմուղի ջրի ուղղությունը³։ Առաջին փաստաթուղթը, որը ուներ «Կաֆայի եպիսկոպոսի կողմից հույների, հայերի, հրեաների և մյուս այլակրոնների նկատմամբ գործադրվող հալածանքների վերացման մասին» վերնագիրը, ոչ միայն արգելում էր հռոմեական եպիս-

1 Նույն տեղում, էջ 40։

2 «Հայ-իտալական առնչություններ», էջ 66-67, ЗООИД, т. V, сс. 730—731։

3 Նույն տեղում, էջ 28-29, "Monumenta historiae patriae", т. II, р. 380.

կոպոսի այդօրինակ արարքները, այլև չհշտում դրանց վտանգավորութիւնը քաղաքի պաշտպանութեան գործին:

Այդ փաստաթղթին դեռ կանդորադառնանք: Իսկ 1316 թ. կանոնադրութեան մեջ հիշյալ որոշումն ունեւ հետևյալ ձևակերպումը.

«Օրենք է շարադրվում և հրապարակվում, ըստ որի, որևէ քաղաքացի կամ քաղաքացու իրավունքից օգտվող կամ Կաֆայի բնակիչ չպետք է հանդգնի կամ ձեռնարկի որևէ ձևով կամ պատճառով որևէ բացահայտ կամ թաքուն մտադրութեամբ շեղելու ջուրը՝ մասամբ կամ ամբողջութեամբ, որը ջրմուղի միջոցով հայերի մեծարգո եպիսկոպոսը իր հոգու փրկութեան համար պատվիրել է անցկացնել Կաֆայում, արգելվում է նաև այդ ջրմուղից ջուր վերցնել տալ որևէ ձևով. այդ ջուրը պետք է օգտագործվի Կաֆայում և այն տեղերում, որոնք օրենքով ենթարկվում են Կաֆային, այլապես տույժ է նախատեսվում այս օրենքը որևէ ձևով խախտող ամեն ոքի համար՝ 3000 բալիքատ ասպերի չափով և, բացի դրանից, նախատեսվում է, որ ջրմուղի ուղղութիւնը խախտողը պետք է վերականգնի այն և այն վերադարձնի իր սովորական տեղը. դանձված այդ տույժը պետք է դրվի Կաֆայի հյուպատոսի տրամադրութեան տակ, որպեսզի տույժի գումարը նա պարտավոր լինի ծախսել օգտակար կառուցումների և գործերի համար միայն Կաֆայում»:

Նույն՝ 1316 թ. կանոնադրութիւնը սահմանափակում էր Կաֆայի հյուպատոսի իրավունքները բուն քաղաքի տարածքում՝ այլազգիների հաշվին հողային ընդարձակումներ կատարելու իմաստով: «Կաֆայի հյուպատոսը, — ասված է այդ հոդվածում, որի մասին հիշատակել ենք 1-ին գլխում, — չի կարող տնօրինութիւն անել այն հողին, որի վրա հնուց ի վեր գտնվում են հույները, հայերի և ռուսների (Rossarium) եկեղեցիները և այդ եկեղեցիների վանքերը:

...Կաֆայի հյուպատոսը կարող է հայերին, հույներին և մյուս քրիստոնյաներին, որոնք ջննդագրիներ չեն և չեն համարվում ջննդագրիներ, վարձակալութեան տալ այն հողը, որն ընկած է Սաղոնի պալատից մինչև ծովը և ապա

սբ. Մարիամ եկեղեցու ուղղությամբ մինչև Կաֆայի պարսպից դուրս գտնվող փոսը...»¹:

Հայերը մեծ և տեական մասնակցություն ունեին Կաֆայում կարգուկանոնի հաստատմանը՝ նպաստելով քաղաքում տնտեսական կյանքի անխափան ընթացքին: Այս առումով կրկին անդրադառնանք 1455 թ. Զենովա ուղարկված նամակին, որով նրանք խնդրում էին Կաֆայի ոստիկանապետ Բուանավենտուրայի պաշտոնավարության ժամկետը ևս մեկ տարով երկարաձգել: Համանման բովանդակությամբ խնդրանք էին ուղարկել նաև հուլյները և հրեաները: Խնդրադրում ցավ էր հայտնվում, որ թեև մինչև Բուանավենտուրայի նշանակումը իրենք զգալի գումար էին ծախսում ցերեկային ու գիշերային պահակախմբի պահպանության վրա, այնուամենայնիվ, իրենց ապրանքները հափշտակվում էին. «Այս նամակի,— ասված էր հրեաների խնդրանք-նամակում,— հավասարապես նաև ձեր քաղաք Կաֆայի հայ համայնքի նամակի նպատակը ձեզ տեղեկացնելն ու խնդրելն է այն մասին, որպեսզի դուք ձեր բարեհաճ ցանկությամբ թույլ տաք ևս մի ժամկետով շուկայի և քաղաքի կապիտանի պաշտոնում թողնելու պարոն Նիկոլոզո Բուանավենտուրային: Մենք այսու կարող ենք Հայերի հետ միասին վկայել և հայտնել վերը նշված Նիկոլոզի լավ հոգու և ազնվության մասին ... Ի ապացույց նրա բարեխիղճ ծառայության՝ մենք հայտնում ենք Ձեր պայծառությանը այն մասին, որ մենք նախկին կապիտանների ժամանակ կրել ենք այնքան հաճախակի վիրավորանքներ և բռնություններ, որ դրանք բոլորը դրավոր անհնարին է թվարկել, և որ մեր նախորդ սերունդների ժամանակ, որոնք ապրել են ձեր քաղաքում, միշտ ձեր ազդին վերաբերվել են ատելությամբ և թշնամանքով»²: Հայերը իրենց նամակում ջանքովաճան կառավարիչների ուշադրությունն էին հրավիրում դրամական այն կորուստների վրա, որ իրենք ունեցել

1 «Հայ-իտալական առնչություններ», էջ 29-30, "Monumenta historiae patriae", t. II, p. 407-408.

2 Л. К. Колаи. Каффера в период владения Юо банком св. Георгия. Симферополь, 1911, с. 15.

են նախկին խառը տարիներին: Հայերի խնդրագրում խստիվս ցավ էր հայտնվում իրենց կորցրած տոկոսների առթիվ, նաև այն մասին, թե որքան տուժել են նրանք զիշերային և ցերեկային պահակների պահպանության և կերակրման պատճառով, թե ինչպես ամեն օր իրենք հարկադրված էին լինում իրենց ապրանքները երեկոները կրպակներից տուն տանել, իսկ առավոտյան ամեն ինչ նորից բերել շուկա¹:

Նամակները հայերը, հույները և հրեաները Զենովա էին ուղարկել 1455 թ., այսինքն՝ 1449 թ. կանոնադրությունից վեց տարի հետո, կանոնադրություն, որի 30-րդ գլուխը «Շուկայի վաճառքին հետևող վերակացուի եկամուտների և պարտականությունների մասին» հոդվածով, կոչված էր կանոնակարգելու առևտուրը բուն Կաֆայում և վերացնելու այնտեղ գոյություն ունեցող ապօրինի վիճակը: Այդ գլխում ասված էր.

«Ցանկանալով զբաղվել Կաֆայում վաճառքին հետևող վերակացուի համար կանոնադրության և կանոնների մշակմամբ, որոշում, սահմանում և կանխատեսում ենք, որ նա կարող է գանձել և ստանալ ներքոհիշյալ քանակությունը հետևյալ առարկաներից, այն է՝

քառանիվ մի սայլ որևիցե կանաչեղենի համար՝ 7
ասպր.

նաև՝ քառանիվ մի սայլ ձմերուկի համար՝ 10
ասպր.

նաև՝ քառանիվ ամեն մի սայլ վարունգի համար՝ 18
ասպր.

նաև՝ որևիցե բարկայով, այսինքն մեծ կամ փոքր սախար վարունգի համար՝ 45 ասպր.

նաև՝ քառանիվ ամեն մի սայլ՝ սեխի համար՝ 3
ասպր.

¹ Նույն տեղում, էջ 34:

* Սախար — սովորաբար միշարքանի թիանով:

նաև ամեն մի քառանիվ կամ երկանիվ սայլակ շա-
գանակի համար 15 ասպր, իսկ քառանիվ
սայլ շագանակի համար 30 ասպր.

... նաև մսի կրպակ ունեցող յուրաքանչյուր մսա-
վաճառից ամեն մի շաքարթվա համար 6
ասպր.

նաև ցերեկը վաճառվող ամեն մի բարկա ոստրեի
համար 3 ասպր.

նաև մեծ պսխին վաճառվող ամեն մի բարկա ոստ-
րեի համար 4 ասպր.

նաև ամեն մի գինեվաճառից, յուրաքանչյուր 3 ա-
միսը մեկ 1 ասպր.

նաև ամեն մի հացավաճառից, յուրաքանչյուր ե-
րեք ամիսը մեկ 12 ասպր.

նաև ամեն մի սայլակ մրգեղենի համար 2 ասպր.

նաև ամեն մի սայլակ սոխի համար 10 ասպր.

նաև ամեն մի սայլակ կաղամբի համար 9 ասպր.

... նաև ամեն մի սայլակ խաղողի համար 2 ասպր.

նաև ամեն մի բարկա տափակաձկան համար 16
ասպր.

նաև ամեն մի սախար տափակաձկան համար 28
ասպր.

նաև ամեն մի բարկա մուգուրի համար 20 ասպր.

նաև ամեն մի բարկա ստերլեդի համար 28 ասպր.

Ընդամին, որոշում ենք, որ նշված վերակացուն կամ
թե նրա փոխարեն որևէ մեկը իրավունք չունի և չպետք է
համարձակվի որևէ պատրվակով ուղղակի, թե անուղակի
կերպով գանձել կամ ստանալ (դրամ), բացի վերը ցույց
տրված ու նշանակված քանակի դրամից՝ երկյուղ ունենա-
լով ամեն անգամվա (խախտման – Վ. Մ.) համար վճարել

* Musuri — ձկան այս տեսակը իր անունը ստացել էր իտալերեն
(դունչ, ռեխ, մուռթ, բերան) բառից: Վ. Յյուրգեկիչը, ենթադրում է, թե
հավանաբար այդպես էին կոչվում մանր ծովաձկները լայն բերան ունե-
նալու համար (ЗООИД, т. V, с. 826).

** Ստերլեդ — ձկան տեսակ, չուքա:

50-500 ասպր տուգանք, որը գանձում են սինդիկները՝ իրենց հայեցողությամբ:

Քանի որ դարձել է հիմար սովորություն և չարաչափություն, որ եկեղեցու նշանակած օրերին հիշյալ վերակացուն թույլ է տալիս խանութպաններին, այսինքն՝ նրանց միջից նրանց, ովքեր փող են տալիս (վերակացուն — Վ. Մ.) կրպակները բաց պահել, որը գտնում ենք անպարկեշտ և քրիստոնեական հավատը ստորացնող, որոշում և հրամայում ենք, որպեսզի այսուհետև չհամարձակվի թույլ տալ հիշյալ խանութպաններին կամ նրանցից որևէ մեկին կրպակները բաց պահելու հիշյալ (եկեղեցական — Վ. Մ.) տոներին՝ երկյուղ ունենալով յուրաքանչյուրից և ամեն անգամվա համար վճարելու 100 ասպր տուգանք, որը ենթակա է սինդիկների գանձմանը և որի երրորդ մասը պատկանում է մեղադրողին: Սակայն սեփական տանը կարելի է աշխատել որքան ցանկալի է»¹:

Այսպիսով, չնայած այս սաստմանը, վիճակը 1449 թ. հետո էլ չէր շտկվել, չարաչափությունն ու կաշառակերությունը շարունակել էին մնալ շուկայի վերակացուի գործունեությունը ուղեկցող հատկանիշներ, որի համար էլ 1455 թ. հայ, հուլյն և հրեա համայնքների ներկայացուցիչները միասնաբար Սբ. Գևորգ բանկ վարչությունից պահանջում էին իրավական անհրաժեշտ կարգի պահպանման համար երկարացնել շուկայի կապիտան Բուանավենտուրայի պաշտոնավարության ժամկետը՝ իբրև ազնիվ վերակացուի:

Կաֆայի հայ և մյուս համայնքների՝ հետագա տարիներին Ջենովա ուղարկած մշտական բողոքներից երևում է, որ կաշառակերությունը տեղի ջենովական վարչակարգի շատ պաշտոնյաների գործունեության բնորոշ կողմերից էր: Հավանաբար, այդ չարիքը միջնադարյան այն օրերին ևս ուղեկցել է պաշտոնեությունը շուկայական հարաբերու-

¹ «Հայ-խալափական առնչություններ», էջ 59-61, ЗООИД, т. V, сс. 720—723.

թյունների կազմավորման սկզբից ևեթ՝ իբրև դրանց անխուսափելի հատկանիշ:

Հայ-ջենովական համագործակցությունը իր դրսևորումն էր գտել Կաֆայի պաշտպանական կառույցների ստեղծման մեջ, և դա հասկանալի էր. չէ որ քաղաքը «գլխավորապես բնակեցված էր հայերով, որոնք մեր ճանաչված հենարանն են», — ասված էր մեր կողմից արդեն մասամբ հիշատակված 1455 թ. գեկուցագրում, որի հեղինակները Կաֆայի բարձրաստիճան պաշտոնյաներն էին՝ հյուպատոսն ու սինդիկները: Առհասարակ արժե այդ փաստաթուղթը փոքր-ինչ ընդարձակ մեջբերել, որովհետև նրանում արտացոլված են Կաֆայում հայերի և ջենովացիների բազմակողմ շփումները՝ եկեղեցական, հարկատվական և այլ կարգի: Պահանջելով լատին եպիսկոպոսների հեռացումը՝ հյուպատոսն ու մասսարները 1455 թ. սեպտեմբերի 6-ի թվակիր նամակում գրում էին.

«Դուք գիտեք, որ այս երկիրը (Կաֆան — Վ. Մ.) գլխավորապես բնակեցված է հայերով, որոնք մեր ճանաչված հենարանն են (ընդգծում — Վ. Մ.) և լավագույն վաճառականները և քաղաքին մեծ եկամուտ են բերում: Իսկ նա (եպիսկոպոս Զիակոմո Կամպորին — Վ. Մ.) ամեն օր հետապնդում է նրանց և (հնարում է) նրանց համար նորամուծություններ, որոնց նրանք անսովոր են: Այդպես է նա վարվում նաև մյուս ազգությունների հետ: Այդ բանը մենք ոչ մի դեպքում չենք կարող թույլ տալ:

Վերջին երկու ամիսների ընթացքում մենք հարկեր ենք դրել: Բայց մեզ թվում է, որ այժմ ժամանակը չէ այն (դրանք) վերցնել հայերից, հույներից և մյուս ժողովուրդներից: Մենք չգիտենք որտեղից դտնել հարկատուներ, քանի որ այստեղ դրամ ունեցող մարդիկ չկան»¹:

Անդրադառնանք, սակայն, քաղաքի պաշտպանության, մասնավորապես նրա պարսպապատման մեջ հայերի ունեցած մասնակցությանը: Այս առումով ուշագրավ է Զենովայի Սբ. Գևորգ բանկի խնամատարների 1464 թ.

¹ Atti, VI, p. 365, «Հայ-իտալական առնչություններ», էջ 80:

Հունվարի 31-ի Հոսսադրական նամակը Կաֆայի Հայ եպիսկոպոսին, որտեղ հատուկ ընդգծված է Հայերի դերը քաղաքի պարիսպների շինարարության մեջ: Այս նամակը հետաքրքիր է նաև Հայերի եպիսկոպոսի և առհասարակ նրանց իրավունքները ճանաչելը որոշակի սահմաններում պահելու տեսակետից: Չմոռանա՞նք նաև այն կարևոր հանգամանքը, որ նամակը գրված էր մի ժամանակ, երբ թուրքերի կողմից նեղուցների գրավումը արդեն սկսել էր քաղաքական և տնտեսական ծանր վիճակ ստեղծել Ղրիմում, և Հայերի դերը քաղաքի պաշտպանության գործում ավելի քան կրկնապատկվել էր: Ահա թե ինչու Սբ. Գևորգ բանկի խնամատարները, շոյելով Հայերին, մտաբերում էին նրանց բարի գործերը քաղաքի բարօրության ասպարեղում: Նրանք գրում էին (նամակը բերում ենք որոշ կրճատումներով).

«Որքան մենք ուշադրություն ենք դարձնում Ձեր առաքինությանը և մտաբերում ենք Ձեր բարի գործերը՝ կատարված Հանուն այս սքանչելի քաղաքի բարօրության և մեծության, հատկապես պարիսպների շինարարության մեջ (ընդգծումը — Վ. Մ.), այնքան ավելի ենք համոզվում, որ Դուք ցանկանում եք մեր իշխանության հարատևությունը և ունեք լավագույն հույսեր, որ կտեսնեք համընդհանուր գոհունակություն ու բերկրանք: Հետևաբար, մենք Ձեզ տեղեկացնում ենք, որ Դուք երբեք այնքան մոտ չեք եղել տեսնելու մեր գործերի կայունությունը և ապահովությունը, ինչպես այժմ, մեր հույսերի իրականացումը շարունակաբար մոտենում է...

Մենք, ինչպես գիտեք մեր նամակների և հրահանգների միջոցով, մշտապես հոգում ենք այս քաղաքի լավ կառավարման համար և ձգտում ենք առաջին հերթին այնպես անել, որ ոչ միայն դո՛հ լինեն նրանում ապրող բոլոր ժողովուրդները, այլև որպեսզի օտար երկրներից ժողովուրդներ ցանկանան գալ ապրելու այս ազնիվ քաղաքում: Ինչ վերաբերում է մնացածին, ապա մեր վերադանցությանը, վայել չի լինի, որ արդարադատության գործերին միջամտեն այլ անձինք, քան մեր պաշտոնյաները: Թող Ձեզ

զարմանալի չլծվա, որ մեր հրահանգներում, որոնք բոլորն էլ այս քաղաքի և այս ժողովուրդների բարօրության համար են, մենք արգելել ենք, որ ոչ դուք, ոչ էլ հույների մեծապատիվ եպիսկոպոսը չխառնվեք արդարադատության գործերի վարման մեջ: Միայն (զբաղվեք) ամուսնական և հոգևոր գործերով: Այս բնագավառները մենք ուզում ենք, որ վերապահվեն Ձեր իրավասությանը միշտ և լավ ու պատվավոր կատարվեն (Ձեր կողմից) ... եթե որևէ բան պատահի, որն արժանի է մեր իմացությանը, մեզ տեղեկացրեք և ամեն ինչի մասին հոգ կտարվի...»¹:

Փաստաթղթերին ուշադիր հետևելիս պարզ է դառնում, որ իտալական այս գաղութ-քաղաքում տնտեսական կյանքի գերազանցությունը ստանձնած հայ բնակչության կյանքը շատ կողմերով կապված է եղել ջենովական վարչակարգի հետ և իր վրա կրել է կապիտալիստական ազատ զարգացման որոշակի ազդեցությունը, որն, անշուշտ, ներմուծվում էր բուն Ջենովայից:

1464 թ. փետրվարի 3-ի կարգադրությամբ Սբ. Գևորգ բանկի խնամատարները Կաֆայի հայ երեւելի հարուստ Կուլթուլսային (Քուլթուլ բեյին) ազատում են հողային տուրքից այն բանի համար, որ վերջինս վերակառուցել և նորոգել է հրդեհից վառված տունը՝ «մեծ գեղեցկություն հաղորդելով Կաֆա քաղաքին»: Այս փաստաթղթի բովանդակությունը ցույց է տալիս, որ հայերը, իրոք, ներգարվել էին վերը նշված իրավահարաբերություններում: «Խնամատարները և ուրիշները, — կարդում ենք նշված որոշման մեջ, — ցանկանալով իրենց երախտադրությունը հատուցել ծառայություն մատուցած անձանց, որպեսզի նրանք տեսնեն, որ լավ գործերը իրենց օգուտ են բերել, գիտենալով, որ Կաֆայի հայ Կուլթուլսայն վերակառուցել և նորոգել է հրդեհից վառված տունը, մեծ գեղեցկություն հաղորդելով Կաֆա քաղաքին, այս նամակի հեղինակությունը վերը նշված Կուլթուլսային անձնունմխելի և

¹ «Հայ-իտալական առնչություններ», էջ 81-82, Atti, VII, I, p. 277-278:

աղատ ենք համարում և ցանկանում ենք, որ այդպես լինի իր ողջ կյանքի ընթացքում նշված տան դիմաց Կաֆային տրվող հողային տուրքից: Հանձնարարում ենք և պարզապես պարտադրում կատարման համար ներկա և ապագա հարգարժան հյուպատոսին և բարձրաստիճան մարդկանց, մասսարներին և Կաֆայի դրամատանը, որպեսզի այս աղատ կացուցանումը անխախտորեն կիրառվի նշված Կուլթուրայի վերաբերյալ նրա ողջ կյանքի ընթացքում»¹:

Վարչաիրավական նշված կառույցները և մանավանդ նրանց գործունեությունը բնորոշող նորմերը, իրոք, նոր, աղատ հարաբերությունների առկայության արգասիք էին, հարաբերություններ, որոնք լիովին տարածվում էին նաև հայ հոծ զանգվածի վրա՝ նրան դարձնելով ժամանակի առաջընթացի մասնակիցը: Ժամանակի համար բոլորովին նոր երևույթ հայ իրականության մեջ, և հինգ դա էր զրիմահայ կյանքի զարգացմանը հաղորդում առաջադիմական մղում:

Կաֆայում հայերը ունեին զորք², որը, հարկավ, պահում էին ջենովական վարչակարգի գիտությունը, հավանաբար նաև ցանկությունը: Ասածի, ինչպես նաև Ղրիմում հայկական զինված ուժերի գոյության օգտին է խոսում այն փաստը, որ Կաֆայի հյուպատոսը Մուղայենց թեոդոր անունով հայ իշխանին նշանակել էր կուսակալ-հրամանատար «ի վերայ ջրոյն Կազարաթի»³, բերդապահ զուտ հայկական քաղաքատիպ մի ավան, որը ջենովացիների կողմից վարձատվության պայմանով Կաֆան պաշտպանում էր հյուսիսի թաթարական հարձակումներից:

Ղրիմահայոց ինքնավար վիճակը տարածվում էր թե ջենովացիներին ենթակա (13-15-րդ դդ.) թերակղզու հարավ-արևելյան առափնյա ծովաչերտի և թե թաթարական շրջաններում գտնվող հայ համայնքների վրա՝ ստեղծելով տարբեր իշխանություններին ենթակա, բայց և ազդային

1 «Հայ-խառական առնչություններ», էջ 83, Atti, VII, I, pp. 290-291.

2 Հ. վ. Ք ու շ ն եր յ ա ն, նշվ. աշխ., էջ 120:

3 Երեանի մատենադարան, ձեռ. 7442, Թ. 282բ:

միևնույն կանոններով ու սովորություններով կառավարվող ամփոփ մի դադուլթ: Ներքին ինքնավար վիճակի պահանջով է, որ լեհահայերն ու ղրիմահայերը դիմում են Մխիթար Գոշի դատաստանագրքի թարգմանությունը իրականացնելու քայլին: 1519 թ. Լեհաստանի թագավոր Սիգիզմունդը հաստատում է իրեն ներկայացրած օրենսգրքի լատիներեն օրինակը, որը թարգմանված է եղել նաև թաթարերեն: Վ. Բաստամյանի հիմնավորմամբ այս վերջինը գլուխ է բերվել ղրիմահայոց պահանջով և հենց նրանց իսկ համար¹: Թաթարական խանության մեջ ապրելը, իրոք, կարող էր պատճառ հանդիսանալ օրենսգիրքը թաթարերեն թարգմանել տալու համար, քանի որ միայն դա թույլ կտար այն ներկայացնելու խանի հաստատմանը: Բացի այդ, բացառված չէ նաև, որ ղրիմահայերը օրենսգիրքը թարգմանել են տվել թաթարերեն, որպեսզի այն մատչելի լիներ թերակղզու վրա ապրող և այդ լեզուն իմացող նաև մյուս ժողովուրդների ներկայացուցիչների՝ հույների և կարաիմների համար: Միայն դա այս վերջիններին հնարավորություն կտար հասկանալ և հարգել հայերի օրենքներն ու սովորությունները՝ նրանց հետ շփվելիս: Դատաստանագրքի՝ Ղրիմի հայերի համար թաթարերենով թարգմանված լինելը, ասում է Վ. Բաստամյանը, հաստատվում է նաև նրանով, որ այն ունի «հատկապես Ղրիմու և ոչ թե Աստրախանի կամ ուրիշ տեղերի թաթարական լեզվի ոճը»²: Փարիզի Ազգային գրադարանում պահպանվող օրինակի հիման վրա Վ. Բաստամյանը ցույց է տալիս, որ Դատաստանագրքի ամբողջ ձեռագիրը ստեղծված է Ղրիմի թաթարերենով՝ աղավաղված ոճով³:

Ձեռագիրը՝ «Դատաստանագիրք Հայոց Լեմբերգի» վերնագրով, ավարտվել է 1568 թ. Լվովում: «Թաթարերեն թարգմանությունը, — ասում է Վ. Բաստամյանը, — հարկավոր էր ավելի Ղրիմու, քան թե Լեհաստանի հայերի համար,

1 Վ. Բաստամյան, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 48:

2 Նույն տեղում, էջ 49:

3 Նույն տեղում:

իսկ թարգմանությունը կարող էին կատարել և Լեմբերգում լատիներեն իմացողները Ղրիմու հայերի համար, որոնց մեջ թերևս չկար այդ լեզուն իմացող, իսկ լատիներեն բնագիրը կարող էին ավելի վավերական համարել, քան թե հայերեն բնագիրը, իբրև թագավորի կողմից հաստատված»¹:

Ղրիմահայերի համար դատաստանագիրքը Լվովում թարգմանելու փաստը լիովին բացատրելի է այն հարատև, անընդմեջ կապերով, որոնք կային լեհահայոց և ղրիմահայոց միջև, ինչպես նաև բուն Լվովում և արևմտաուկրաինական հարակից տարածքներում կաֆահայերի նշանակալից զանգվածի ներկայության փաստով, զանգված, որն ավելի բազմաճյուղավ 1475 թ. Ղրիմում տեղի ունեցած արյունալի անցքերից հետո:

Հավանաբար, լվովահայերը, թարմ կապերի մեջ գտնվելով Կաֆայի (և առհասարակ Ղրիմի) իրենց հայրենականիցների հետ, վերջիններիս համար կամ նրանց իսկ խնդրանքով գլուխ էին բերել այդ թարգմանությունը: Այս առումով կարևորվում է այն հարցադրումը, թե ինչով էր ղրիմահայ գաղութը, մանավանդ 16-18-րդ դարերում, կարգավորում իր ներքին կյանքը, իրավական և բարոյական ինչ նորմեր էին իշխում ստվարաթիվ բնակչություն ունեցող ղրիմահայ գաղթօջախներում: Բնականաբար, հայերը չէին կարող իրենց ներքին կյանքի հարցերը կարգավորել թաթարական օրենքներով, թեև իբրև խանության բնակիչներ ենթարկվում էին դրանց: Եթե մի կողմ թողնենք թաթարական ասպատակությունները և խանությանը տրվող հարկերն ու տուրքերը, ապա կտեսնենք, որ թաթար պաշտոնյաներն ու ֆեոդալական ավագանին որպես կանոն հազվադեպ էին միջամտում հայերի ներքին կյանքին, նրանց հնարավորություն տալով պաշտպանելու ազգային կարգն ու սովորութային նորմերը, եթե, իհարկե, դրանք չէին խոչընդոտում իրենց ձեռնարկումներին: Իրենց կյանքը ազգային օրենքներով տնօրինելու ավանդական կարգը ղրիմահայերի մոտ այնքան կայուն արմատներ էր

¹ Նույն տեղում, էջ 50:

գցել, որ նրանք 1778-1779 թթ., Ռուսաստան տեղաշարժվելու շրջանում, ձգտում էին այն պահպանել և այդ առթիվ ռուսական կառավարությանը շարունակ դիմումներ էին ներկայացնում, խնդրելով թույլ տալ ունենալ իրենց «դատն ու դատաստանը»¹:

Մոտիկ կապեր ունենալով խանական պալատի հետ և օգտվելով թաթարական ավագանու՝ դեպի հայերն ունեցած լոյալ վերաբերմունքից, ղրիմահայ առաջնորդների համար դժվար չէր հաստատել տալ նշված դատաստանագիրքը, մանավանդ որ կարելի էր մատնացույց անել խանի ախոյան լեհական թագավորի կողմից հայերին նման արտոնություն չնորհելը: Գիրեյների համար նման արտոնաշնորհումը մի ծանր բեռ չէր, որովհետև դրանով նրանք ոչնչում չէին պարտավորվում և, ինչպես ընդունված էր իրենց մոտ, ցանկացած պահի կարող էին ոտնահարել այն, եթե դա պահանջեին քաղաքական իրադրությունները:

* * *

Սույն գլխի լիակատար լուսաբանումը անպայմանորեն կապված է Ղրիմում հայ-կաթոլիկ առնչությունների հարցի քննության հետ²: 1449 թ. կանոնադրությունը, ելնելով հենց ջենովական գաղութային իշխանությունների շահերից, երաշխավորում էր Ղրիմում քրիստոնյա բնակչության մեջ նկատելի մեծամասնություն կազմող հայերի ապահովությունը՝ նրանց ներքին կյանքին, ազգային սովորույթներին և կրոնական կարգ ու կանոնին չմիջամտելու իմաստով: Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե ջենովական օրենքները արգելում էին կաթոլիկական պրոպագանդը և այդ դավանանքի տարածումը տեղի քրիստոնյաների մեջ: Ծիշտ հակառակը՝ նրանք նեցուկ էին նրա

¹ Центральный гос. исторический архив России, ф. 800, оп. 1, д. 19.

² Այս հարցի առթիվ տես նաև մեր «Հայ-կաթոլիկ առնչությունները Ղրիմում (XIV-XV դդ.)» հոդվածը. — «Լրագրեր» հաս. գիտ., 1993, № 4, էջ 49-58:

տարածմանը, միայն թե դեմ էին բռնի տարածմանը, պրակտիկայից համոզված լինելով, որ բռնության մեթոդները հակառակ արդյունք են տալիս: Ղրիմում եղան նաև ժամանակներ, երբ ռազմաքաղաքական խնդիրների թելադրանքով տեղի գաղութային իշխանությունները ուղղակի հակադրվեցին հայերի նկատմամբ լատին եպիսկոպոսների ոտնձգություններին:

Այնուամենայնիվ, 14-րդ դարի սկզբներից Ղրիմահայ մի հատված ընկրկեց կաթոլիկ քարոզիչների ունիթոռական (միարարական) պրոպագանդի առաջ՝ ճանաչելով Հռոմի պապի գերիշխանությունը, սակայն հայ եկեղեցու կարգուկանոնը, այսինքն՝ դավանանքը, ամբողջ ծեսը խստիվս պահպանելու վերապահումով՝ ընդունելով ոչ թե առհասարակ կաթոլիկներ, այլ հայ-կաթոլիկներ անվանումը, այսինքն՝ հայ մնալու շեշտադրումը:

Ղրիմում և առհասարակ բովանդակ թաթարական աշխարհում, ներառյալ Ոսկե Հորդան և Միջին Ասիան, կաթոլիկություն տարածելու խնդրում Հռոմը լուրջ հույսեր էր կապում Կաֆայի եպիսկոպոսության հետ, որը հիմնվել էր 1318 թ. Իոհան 22-րդ պապի կոնդակով: Կրոնական այդ հաստատության առաջին եպիսկոպոսը դարձավ Հերոնիմոսը, որը, հարադատ մնալով Հռոմից ստացած առաջադրանքին, իր գործունեությունը սկզբից ևեթ հաղորդեց քարոզչական ընթացք: Շուտով Ղրիմ են գալիս նաև հայ դոմինիկյան եղբայրները և 1333 թ. Կաֆայում հիմնում իրենց վանքը: Սրանց քարոզիչներից էր Թադեոս եպիսկոպոսը: Միաբանների կարգից էին Փրա Անդրեասը, Փրա Հակոբը և այլք¹:

Ձենովական հոգևոր և աշխարհիկ՝ իշխանությունները լուրջ նեցուկ էին նաև հայ միաբարների համար, որոնց գործունեությունը շարունակվեց մինչև 15-րդ դարը (1475 թվականը): 1421 թ. Կաֆայում արտագրված ձեռագրերից մեկի գրիչն էր Փրա Հովասափ Ապարանցին, որը նույն ձեռագրի հիշատակարանում հիշում է նաև իր առա-

¹ ԺՊ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 371 և 408:

ըին վարպետ Ֆրա Օգոստինոսին: Իսկ նույն միաբաններից Ֆրա Թադեոսը 1450 թ. Կաֆայում արտագրում է «Ժամագիրք»¹:

Ժամանակին Կաֆան դառնում է կաթոլիկ պրոպագանդի հենակետ և կենտրոն ոչ միայն Ղրիմի, այլև Համայն Արևելքի համար: Հռոմի պապի հանձնարարականով, հորդորով և օրհնանքով Կաֆա ժամանած քարոզիչները երկու-երեք տարի այստեղ կատարելագործվում էին արևելյան լեզուների (հատկապես թաթարերենի) իմացության մեջ, ապա թևի տակ Ավետարանը, իսկ ձեռքին սբ խաչը, սև գոտիով պատած սպիտակ զգեստը հագին մեկնում էին հեռավոր մոնղոլական տարածքներ՝ խնդիր ունենալով խաչնարած ու քոչվոր մոնղոլներին ներքաշելու Քրիստոսի ուսմունքը դավանողների շարքը:

Հռոմի և Կաֆայի ջենովական վարչակարգի հետ ղրիմահայերի ունեցած առնչությունների առումով կարևորություն է ստանում 1438 թ. տիեզերաժողովին ղրիմահայերի մասնակցության հարցի արծարծումը: Կաֆայի ջենովական հյուպատոսարանը տեղի հայությունը տիեզերաժողովին մասնակից դարձնելով՝ ձգտում էր ամրապնդել իր դիրքերը ղրիմահայություն շրջանում, հանգամանք, որը ինքնին վկայում է վերջինիս կարևոր նշանակությունը ջենովական գաղութային իշխանությունների համար: Տիեզերաժողովին տեղացի հայերի ներկայացուցիչներին մասնակից դարձնելու ուղղությամբ Կաֆայի հյուպատոսը շոշափելի գործ էր կատարել: Հիշենք, որ այն ժամանակ Կաֆայի հայոց առաջնորդը Մաղաքիան էր, իսկ կաթոլիկոսական աթոռակալը՝ Սարգիս վարդապետը:

1438 թ. հյուպատոս Պաոլո Իմպերիալեն Եվգենիոս 4-րդ պապին հայտնել էր առաջիկա տիեզերաժողովին կաֆահայերից հատուկ պատվիրակություն հրավիրելու անհրաժեշտության մասին²: 1438 թ. նման առաջադրանքով Կաֆա են գալիս սլավական նվիրականներ Ֆրանչեսկո Բոլո-

1 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 649, 669-670:

2 «Հանդես ամսօրյա», 1935, № 1-2, էջ 37:

նացի կրտսերը, Լյուդգովիկոս վանականը և Հակոբ դը Պրիմացիտիսը: Դեռևս մինչև նրանց ժամանումը մայիսի 12-ին կաֆաՀայերի ներկայացուցիչները ջննդական Հյուպատոսի մոտ գումարված ժողովում տալիս են իրենց Համաձայնությունը տիեզերաժողովին իրենց պատվիրակությունը ուղարկելու մասին, միաժամանակ Հյուպատոսից խնդրելով երեք ամիս ժամանակ՝ Սսի կաթողիկոսի մոտ պատվիրակներ ուղարկելու և նրա Համաձայնությունը ստանալու Համար¹:

1438 թ. մայիսի 12-ին Կաֆայում Հրավիրված հիշյալ ժողով-խորհրդակցությունում Հայոց ներկայացուցիչների, Հայ հոգևոր առաջնորդների և Հյուպատոս Պաոլո Իմպերիալի միջև կնքվում է Համաձայնագիր, որն Հայտնի է «Գիր Հրամանի դեսպանաց Հայոց» անվամբ: Դա յուրատեսակ մի Հանձնարարական էր կաթողիկոսի մոտ գործողվող պատգամավորներին՝ պապի կողմից Հրավիրելիք տիեզերաժողովին մասնակցելու առթիվ նրա Համաձայնությունը ստանալու Համար: Ելնելով փաստաթղթի կարևորությունից, ստորև այն բերում ենք ամբողջութամբ:

Կաֆայի երեւելի Հայերի և Հայ հոգևորականների 1438 թ. ժողովի Հանձնարարականը կաթողիկոսի մոտ ուղարկվող պատգամավորներին՝ պապի կողմից Հրավիրվող տիեզերաժողովին մասնակցելու վերաբերյալ.

«Կաֆա, 1438 թ., 12 մայիսի

Հանձնարարագիր պատգամավորաց Հայոց.

Հանուն Աստծո, ամեն. Հարգո ի Քրիստոս Հայր մեր Մաղաքիա եպիսկոպոս Հայոց, Ստեփանոս երեց Ս. Երրորդության ավագերեց Հայոց, Ավետիք երեց Ս. Նիկողայոսի, Մկրտիչ երեց Ս. Հակոբա, Մովսես երեց Ս. Առաքելոց, Վարդան երեց Ս. Գևորգա, Ղազար երեց Ս. Գրիգորի Calolerius / ° /, Calolerius Ավետիք երեց Ս. Օգոստենի, Աստվածատուր երեց Ս. Սարգսի, Սիմեոն երեց Ս. Սարգսի, Սիմոն երեց Ս. Ստեփանոսի, Հովհաննես երեց եկեղեցու Ս.

1 «Հայ-խալական առնչություններ», էջ 32-35, «Հանդես ամսօրյա», 1911, № 6-8, էջ 461:

Սիմեոնի, Հակոբ երեց եկեղեցու Ս. Կարապետի, Թովմաս երեց Ս. Նիկողայոսի, Հովհաննես երեց Ս. Մարթա, Հակոբ երեց Ս. Քառասնից, Թադեոս երեց եկեղեցու Ս. Համբարձման, Զորապետ երեց Սուրդադա, Մելիքսեթ երեց Ս. Ստեփանոսի, Սիմոն երեց Ս. Մարեմա, Աբրահամ երեց Ս. Մարեմա, Սարգիս երեց Ս. Օգոսենտի, Աստվածատուր երեց Ս. Մարեմա: Օլպեյ սանչա, ղոճա Թավաքալ Սեմիս, Ամիդ պեյ Ս. Կատարինեի, ավագ պարոն Պաթիֆալ, պարոն խոյճ Թորակալ, Հարություն Գախազ, Պարսամ Ճրագյան (Candele-rius), Խոճա Յոսուֆ վաճառական, Ամիր պեյ Ս. Փրանկիսիոսի, Անդրեաս Կարապետ, Գոդոլ պեյ, Սարը պեյ, Թոքալ պեյ Մանզա, Էնրի պեյ Ակոբյան և Ակոբճան մորթագործ (peliparius), միաբանեցան հետեյալ միաբանության՝ ընդ մեծարո և ազնվական տյառն Պաոլոսի Իմպերիալեի, մեծարո Հյուպատոսի Կաֆայի, ինչպես նաև ընդ ազնվական տյառն Լուչիո տե Գաչիո, և ընդ ազնվական տյառն Կալեդո տե Կրիմալտի գործակալաց և հոգաբարձվաց Կաֆայի: Այսինքն՝ ի վաղուց խոստացված էր իրենց, որ Զենովա կամ առ ամենասուրբ տերն՝ տերն մեր քահանայապետ և կամ առ սյունհոգոսն պատգամավոր մը ղրկե, իբրև տեսպան անոնց՝ հօգուտ ամենայն քրիստոնեից: Կը խնդրեն, որ նույն մեծարո տեր Հյուպատոս շնորհե իրենց երեք ամիս միջոց, որպեսզի կարենան իրանց պատգամավորը ղրկել իրենց կաթողիկոսին՝ անոր հավանությունն առնելու համար:

Մեծարո տեր Հյուպատոս հավանեցավ և կհավանե տալ իրենց խնդրած ժամանակամիջոցը, պայմանով, որ եթե ինքն սրբազան կաթողիկոսը, մերժե իրենց խնդրածը ղրկել կամ թույլ տալ, և եթե հիշյալ պատգամավորն երեք ամսո մեջ չվերադառնա սրբազան կաթողիկոսեն, այն ատեն հանձն կառնուն, կպարտավորին և կհավանին սույն պարագային հակառակ ղրկե առ ամենասուրբ տերն մեր քահանայապետ կամ ի ճենովա և կամ առ սյունհոգոսն, ինչպես որ պատշաճ կերևա հիշյալ Հյուպատոսին, վարդապետ մը ընդարձակ իշխանությամբ, լայն և ընդհանրական խոստմամբ, որ պիտի վճարեն ասոր և ասոր ուղեկիցներուն

ինչ ծախք որ կընեն և ամեն վնասները զոր կրնա ունենալ իր ուղեկիցներուն հետ երթալու և դառնալու ատեն. և հիմակվանն կընտրեն և ընտրած նկատել կուզեն նույն վարդապետը իբրև իրավունք ունեցող երեք ամսեն ետև իրենց պատգամավորության և դեսպանության ի վերադրյալ գործ՝ լի և ընդհանուր գործակալությամբ ըստ վերոգրելոյն. սակայն սույն արձանագրության գորությամբ Հի հասկացվիր ուրիշ նվիրակ մը կամ պատգամավոր մը որոշում ընդունելու բայց եթե համաձայնելով հիշյալ վարդապետին հետ, նույն իսկ իրենցմե կարգված մեկը»¹:

Հյուսպատոսի մոտ մայիսի 12-ին գումարված ժողովին, բացի Մաղաքիա եպիսկոպոսից, ներկա էին 21 քահանաներ և 14 աշխարհականներ, որոնք և իրենց ստորագրությունն են դնում համաձայնագրի տակ²:

Ղրիմահայ հոգևորականությունն ու աշխարհիկ երևելիները իրենց հերթին շատ մեծ կարևորություն էին տալիս տիեզերաժողով հայերի ներկայացուցիչներ ուղարկելուն, այնքան կարևոր համարում, որ ինչպես նշված էր վերը բերված փաստաթղթում, նրանք որոշում են հայոց կաթողիկոսի կողմից մերժում ստանալու կամ նրա մոտ ուղարկված պատգամավորների չվերադառնալու դեպքում էլ տիեզերաժողով (որտեղ էլ որ այն գումարվեր) ուղարկել, ինչպես որ դա պատշաճ լինի հյուսպատոսին, «վարդապետ մը ընդարձակ իշխանությամբ, լայն և ընդհանրական խոստմամբ»: Եվ այդ մտադրության համաձայն, այժմ ևեթ ընտրում են պատվիրակ վարդապետ «լի ընդհանուր գործակալությամբ»:

Ժամանակի արտաքին քաղաքական կացության լույսի տակ միանգամայն ըմբռնելի է, թե ինչու կաֆահայոց առաջնորդները, իրենց լուսավորչական եպիսկոպոս

1 «Հանդես ամսօրյա», 1911, № 6-8, էջ 460-462; «Հայ-խալական առնչություններ», էջ 32-35: Փաստաթղթի լատիներեն բնագիրը պահպանվում է Ֆլորենցիայի Մեսիչե Լատինոյան մատենադարանում: Տես նաև Ա. Պ ա լ ճ յ ա ն, Պատմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի հայս և միութիւնն ուցա ընդ հռովմէական եկեղեցւոյ ի Փլորենտեան սինհոդոսի, Վիեննա, 1878, էջ 299-300:

2 «Բազմավեպ», 1940, № 8-12, էջ 146:

Մաղաքիայի գլխավորությամբ, միանշանակորեն կարևորում էին ընդհանրական տիեզերաժողովին մասնակցելու անհրաժեշտությունը և պատրաստ էին կատարել այդ քայլը, եթե անգամ լինեի կաթողիկոսի բացասական վերաբերմունքը: Բոլորովին սխալ և անհիմն կլինեի նրանց այդ դիրքորոշումը բացատրել լատինացիների հետ գործարքող ղրիմահայ վերնախավի նյութական շահագրգռությամբ, թեև ինչ-որ չափով դա կար, բայց դա չէր որոշիչը, այլ առաջին պլան ելած արտաքին քաղաքական խնդիրները: Թուրք-թաթարական հասունացող ագրեսիան ղրիմահայերից պահանջում էր կառչել Հռոմի պապից, իսկ վերջինիս միջոցով՝ Արևմուտքից ակնկալվող զինական օգնություն: Մանավանդ Ղրիմի հարավ-արևելյան ծովափնյա շերտի քրիստոնյա հիմնական բնակչության համար, որպիսին հայերն էին, թուրք-թաթարական-մահմեդական ագրեսիային դիմակայելը այն ժամանակ օրվա խնդիր էր և, բնականաբար, այդ հայերը պետք է ինչ-որ նախադեպերով քայլեր կատարեին: Հենց պահի ճիշտ գիտակցումն էր 1438 թ. մայիսի 12-ի ժողովում միավորել Կաֆայի հայ լուսավորչական և հայ-կաթոլիկ համայնքների հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչներին, որոնց մեջ նաև՝ Սուրխաթից ժամանած Զորապետ երեցին:

Ղրիմահայ պատվիրակները նախ ժամանում են Կ. Պոլիս, իսկ այնտեղից, Հովհաննես եպիսկոպոսի գլխավորությամբ, անցնում Կիլիկիա¹: Սաի կաթողիկոս Կոստանդինը, չնայած առանձին հայ հոգևորականների դժգոհությանը, համաձայնվում է առաջիկա տիեզերաժողովին ուղարկել հայոց պատվիրակություն: Բրիայի Հովակիմ եպիսկոպոսը, Կաֆայում կաթողիկոսական աթոռակալ Սարգիս վարդապետը, ինչպես նաև Մարկոս և Թովմա վարդապետները, որպես կաթողիկոսական պատվիրակներ, պետք է մասնակցեին տիեզերաժողովին՝ ձեռքին ունենալով կաթո-

1 «Հանդես ամսօրյա», 1935, № 1-2, էջ 37:

ղիկոսի տված պատգամավորական թուղթը (լիազորութունը)¹:

1438 թ. ամռանը Սիս Հասած և այնտեղից Կաֆա ետ դարձող պատգամավորներին կաթողիկոսը հուլիսի 26-ին օժտում է երկու գրությամբ՝ մեկը Սարգիս վարդապետի և Կաֆայի Հայության, մյուսը՝ Կաֆայի Հյուպատոս Պաուլո Իմպերիալեի անունով: Քաղվածաբար բերում ենք այդ գրությունները: Առաջին փաստաթղթում ասված էր.

«Կոստանդին ծառայ ծառայից Տէառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որդւոյ իմում (Սարգիս) վարդապետի, ժողովրդեանն և կղերիկոսաց Հայոց ի Կաֆայ.

Շնորհօքն Աստուծոյ կարգեալ կաթողիկոս Վաղարշապատու, գրեմ զթուղթս Հոյակապ քաղաքիդ Կաֆայ, առաքեմ զօրհնութիւն իմ ամենայն ժողովրդեան, որ բնակեալդ էք ի Կաֆայ: Որդեակք իմ հաւատարիմք պարծանօք գրեմ Ձեզ. այսինքն է՝ որդւոյ իմում Սարգսի վարդապետի, որ նստի յաթոռս անձին իմոյ ի Կաֆայ, եւ արքեպիսկոպոս որդւոյ իմում անդրանկի (Մաղաքիայ) և ամենայն քահանայից սրբոց՝ Ստեփանոսի, Մովսիսի եւ այլոց ամենեցուն և ազնուական քաղաքապետաց Կաֆանցւոց..., զօրութեամբ Հոգւոյն սրբոց գրեմ զթուղթս զայս և տամ ձեզ զօրութիւն զողջոյն...

Գիտասցիք, որդեակք իմ սիրելիք, այս ինքն է որդի իմ Սարգիս վարդապետ եւ դուք քահանայքդ և քաղաքացիքդ ծաներուք զի եկն առ մեզ Յովհաննէս եպիսկոպոս եւ մատոյց զթուղթ ձեր ի Կաֆայ հանդերձ զթղթովք փոխանորդի մեծի Քահանայապետին և Տեառն Հյուպատոսի. ընթերցաք և ուրախ եղաք ընդ գրեալսդ զմիութենէ ընդ Հռոմէայեցւոց եկեղեցւոյ: Ձայս իբրեւ լուայ, շնորհս եւ գուհութիւնս մատուցի Աստուծոյ. շնորհք Հոգւոյն սրբոյ են, զի սկիզբն եղև գործոցս այսորիկ: Պարտ եւ պատշաճ է քրիպտոնէից ի Միութեան եւ ի միաբանութեան կեալ (ընդգծումը Վ. Մ.): Ես իմով լի և կատարեալ ճոխութեամբ ետու իշխանութիւն Սարգսի վարդապետի, որ է եւ հղիցի

¹ Ա. Պ ա լ ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 87:

փոխանակ անձին միոյ, ընդ նմին և Մարկոսի և Թովմայի վարդապետաց եւ Յովակիմայ եպիսկոպոսի Պերայ, զի երթիցեն ի ժողովն եւ լուսատու լիցի նոցա Հոգին Սուրբ...»¹:

Կաֆայի հյուպատոս Պաոլո Իմպերիալին ուղղված նամակում կաթողիկոսը, նշելով որ իր փոխարեն տիեզերածղովին նշանակել է երեսփոխաններ, գրում էր.

«Հոգեւոր որդւոյ իմոյ Տեառն Պօղոսի կայսերական հիւպատոսի ի Թէոդոսիա.

Կոստանդին ծառա ծառայից տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, պատուով և աւագութեամբ եւ կամաւ, կաթողիկոս Վաղարշապատու, եւ գրեմ զայս թուղթ քաղաքիդ օրհնելոյ. աստուածապա՛հ պերճ աթոռ արքունական, մայր քաղաք Թեոդոսիա՛ հաւատացեալ ի Քրիստոս եւ տիրասէր որպէս սիրէ ոք զոգի իւր, ցանկանալով փառաց ազնուական որդւոյ իմում Տեառն Պօղոսի կայսերական բղեշխ, Աթոռակալի, հոգաբարձուաց եւ այլոց տերաց: Հարցանեմ զողջունէ՛ ձերմէ, խնդրեմ զԱստուած եւ ի սրբոյն Գրիգորէ, զի որ պահեացն զձեզ եւ ի խաղաղութեան, պահեսցէ ի նմին մինչեւ ի սպառ. ամէն:

...Յայտ առնեմ ձեզ, մեծանուն տէր Հիւպատոս, եթէ մատուցաւ մեզ թուղթն տուեալ ի ձենջ միաբան հաւանութեամբ արանցդ ընտրելոյ ի Թեոդոսիա ընթերցաք զայն ցնծուացանք, եւ օրհնեցաք զձեզ... Դարձեալ յայտ առնեմ Տեառնդ բղեշխի եւ այլոց տերաց խորհրդականաց քոյ, եթէ լրիւ իշխանութեամբ մերով կարգեցաք փոխանակ անձին մերոյ զորդի իմ զՍարգիս վարդապետ, զՄարկոս վարդապետ եւ զԹովմա վարդապետ եւ զՀովակիմ եպիսկոպոս Բերիա, զի երթիցին Սիւնհոգոսն յայն օրհնեալ, եւ զոր աւրինակ, լուսաւորեսցէ զմիտս նոցա հոգի սուրբ՝ այնպէս արասցեն զի սէր եւ Միութիւն եւ շնորհք լիցի ի մէջ քրիստոնէից. յօրհնութիւն Տեառն եղիցի ի վերա ձեր:

Գրեցաւ զթուղթս ին ամսեանն Յուլեայ ՌՆԼԸ (1438)»²:

1 «Հանդես ամսօրյա», 1935, №1-2, էջ 37-38:

2 Ա. Պալճյան, նշվ. աշխ., էջ 88-89:

Այն, որ հայոց կաթողիկոս Կոստանդինը գտնում էր, թե քրիստոնյաները պետք է միավորվեն, միություն կազմեն, դա ամենևին էլ չէր նշանակում հրաժարում ազգային դավանանքից: Այդ ակտը ըստ էության քաղաքական միտում ուներ: Ինչպես տեսանք, Կաֆայի հոգևոր դասին և ազնվականությանն ուղղված իր դրուժյան մեջ նա ուղղակի դրում էր, թե «պարտ և պատշաճ է քրիստոնէից ի Միութեան և ի միաբանութեան կեալ»¹:

Կոստանդին կաթողիկոսի համաձայնությունը ամենևին չպիտի աղերսել կաթողիկական պրոպագանդի ազդեցությանը: Որոշ դեր կարող էին խաղալ բուն Կաֆայից նրա մոտ ժամանած պատվիրակները, որոնք արտահայտելով ջննովացիներին համահավասար իրավունքների ձգտող Կաֆայի հայ վերնախավի շահերը, ինչպես նաև տագնապը թուրք-թաթարական ագրեսիայի հանդեպ, անշուշտ, խնդիր ունեին ցանկացած գնով ձեռք բերել կաթողիկոսի համաձայնությունը: Գլխավորը, սակայն, դա էլ էր, այլ այն, որ կաթողիկոսը պատվիրակություն ուղարկելուն համաձայնվում էր բոլոր քրիստոնյաների միասնության և դաշինքի քաղաքական խնդրից ելնելով: Դրանով Կոստանդին կաթողիկոսը հայտնվում էր ժամանակի եվրոպական այն հեռատես գործիչների շարքում, որոնք գիտակցելով քրիստոնյա աշխարհի գլխին կախված վտանգի հետևանքները, ջանում էին համախմբել քրիստոնյա ժողովուրդներին ընդդեմ թուրք-մահմեդական նվաճողների: Ցավոք, թե այն ժամանակ և թե այսօր դա չի ստացվում:

Միավորման «պարտ և պատշաճությունը» առարկայական էր դարձել այն պահից, երբ թուրքերը մտել էին Բալկաններ և ծովից ու ցամաքից սկսել էին բախել Կ. Պոլսի դռները: Ուրեմն, Ֆլորենցիայի տիեզերաժողովին հայոց պատվիրակության մասնակցությունը պիտի բացատրել թուրքական վտանգի դեմն առնելու ընդհանուր մտայնությամբ, ասել է թե քրիստոնյա աշխարհի քաղաքական մտահոգություններին ընդառաջելու հանգամանքով:

¹ «Հանդես ամսօրյա», 1935, № 1-2, էջ 38:

Հայոց պատվիրակութիւնը, Սարգիս վարդապետի գլխավորութեամբ, Սսից Կաֆա վերադարձավ և այնտեղից Ֆլորենցիա հասավ միայն 1439 թ. հուլիսին, երբ տիեզերածողովն ավարտված էր։ Բայց քանի որ տիեզերածողովի պատվիրակները տակավին Ֆլորենցիայում էին, Եվգենիոս 4-րդ պապը հատուկ նիստեր գումարեց, որոնք զբաղվեցին Հայոց և Հռոմի միութեան հարցերով։

Հայ-լատինական բանակցութիւնները Ֆլորենցիայում տևեցին երկու ամիս՝ 1439 թ. սեպտեմբերից մինչև նոյեմբերի 8-ը։ Թարգմանիչն էր Ներսեսը։ Բանակցութիւններում քննարկման հարցեր էին Ս. Գրքի, լատին և հայ եկեղեցիների ժողովների և հայերի վկայութիւնները հավատի, դավանանքի և եկեղեցու խորհուրդների վերաբերյալ։ Նոյեմբերի 22-ին պաշտոնապես հաստատվում է Հայ և լատին եկեղեցիների Միութեան կոնդակը, որը ստորագրեցին Հռոմի պապ Եվգենիոս 4-րդը, ութը կարդինալներ, հինգ արքեպիսկոպոսներ, 36 եպիսկոպոսներ, 25 արքաներ՝ 76 մարդ¹։

Հայերի կողմից դաշինքը ստորագրեցին Կաֆայի Հայ վարդապետներ Սարգիսը և Թովմասը։ Ն. Ակինյանը Սարգիս վարդապետին նվիրված իր նշանավոր հոգևածում բերում է այդ երկու վարդապետների ստորագրութիւնները։ Ահա դրանք. «Արդ, ես, Սարգիս վարդապետս, որ եմ դեսպան Հայոց կաթողիկոսին և աթոռակալ Կաֆային. այս սահմանս գրեցաւ ձեռամբ իմով»։ «Ես Թովմա վարդապետս վկայեմ. Եւ դեսպան այս բանիս. ձեռամբ իմով գրեցի»²։

Նշենք, որ երկու կաֆահայ վարդապետները, իրենց ստորագրութեամբ արտոնված լինելով ներկայացնելու ամբողջ Հայ եկեղեցուն, դրանով իսկ վկայում էին 15-րդ դարում ղրիմահայութեան խաղաղած էական դերը հանուր հայութեան կյանքում, ինչպես նաև նրա կարևոր նշանակութիւնը Հռոմի պապի և ջենովական իշխանութիւնների աչքում։ Ասածի վկան է նաև այն, որ ունկնդրելով Հայ

1 «Բաղմավեպ», 1940, №8-12, էջ 150, 152։

2 «Հանդես ամսօրյա», 1935, №1-2, էջ 39։

պատվիրակները բողոքին, Հռոմի պապը հատուկ կոնդակ է իջեցնում Կաֆայի լատին եպիսկոպոսի անունով՝ կարգադրելով վերջ տալ հայերի ազգային-եկեղեցական արարողություններին միջամտելուն, առհասարակ նրանց ազգային դավանանքին ընդդիմանալուն: 1439 թ. դեկտեմբերի 15-ին, այսինքն՝ հայ և հռոմեական եկեղեցու դաշինքը Ֆլորենցիայի ժողովում ստորագրելուց հետո, Եվդենիոս 4-րդը ստորագրում է հիշյալ կոնդակը՝ Կաֆայի լատին եպիսկոպոսի անունով, որն ավարտվում էր հետևյալ հանձնարարականով. «Եւ քանզի ցանկամք ես, զի եպիսկոպոսս հայոց ի քաղաքի անդ անկաւորն պատուով զիւր պաշտոնն վարիցէ, եւ զժողովուրդ իւր սեպհական ըստ պատշաճի արդարութեամբ խնամիցէ, կամիմք և հրամայեմք նովին ճոխութեամբ եւ օրինակաւ, զի մի ոք եկեղեցականաց կամ յաշխարհականաց, եւ ոչ իսկ եպիսկոպոսն (լատին — Վ. Մ.) Թեոդոսիա, իւրք իրօք արգելուցուն զնա առնել իրաւունս և վարել զեկեղեցական իրաւասութիւն զպատշաճականն ատենի եպիսկոպոսաց, այնպէս զի կամիցէ նա յամենայնի և վասն ամենայն իրաց ի կիր արկանել զայն իրաւասութիւն ի մէջ հայոց բնակելոց ի քաղաքի և ի վիճակի Թէոդոսիայ, որպէս այլք յեպիսկոպոսաց ի կիր արկանեն ի վիճակին իւրեանց ի սովորութենէ կամ իրաւանց: Ապա՛ ոչ ումեք եւ այլն»¹:

Վերջին անգամ հրաժեշտ տալիս պապը հայ պատգամավորներին բաժանեց սուրբ նշաններ, իսկ Սարգիս վարդապետին տվեց խաչ, որը պարունակում էր խաչափայտ: Այդ խաչը Սարգիս վարդապետը հետագայում՝ 1443 թ., նվիրեց Կաֆա եկած Մկրտիչ Նաղաշին, որ այն տարավ Տիգրանակերտ և դրեց իր հովվության տակ գտնվող Սբ. Թեոդորոս կաթողիկոս եկեղեցու մեջ՝

Կրկնենք, որ այդ դաշինքը ամենևին չէր նշանակում դավանափոխություն, մանավանդ, որ Ֆլորենցիայի տիեզերաժողովն առհասարակ նման նպատակներ չէր էլ

¹ Ա. Պ ա լ ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 146:

² «Բաղմավեպ», 1940, հ. 8-12, էջ 152:

հետապնդում: Նշենք նաև մի կարևոր հանգամանք, այն, որ տիեզերաժողովին մասնակցում էին նաև հունական, ռուսական և քրիստոնյա այլ եկեղեցիների ներկայացուցիչները: Հայերի և հույների՝ Ֆլորենցիայի եկեղեցաժողովին մասնակցելը իրականում կապված էր «թուրքերի դեմ Արևմուտքի օգնությունը ապահովելու» հույսերի հետ¹: Եկեղեցիների միության գաղափարը, սակայն, հայ և հույն ժողովրդական զանգվածների շրջանում, հավանաբար լայն ընդունելություն և ժողովրդականություն չգտավ: Դրա գլխավոր պատճառը թերևս ոչ թե հռոմեական քարոզիչների գործունեությունն էր, այլ հիասթափությունը Արևմուտքից ակնկալվելիք օգնության հանդեպ: Թերևս դա էր նաև պատճառը, որ հայ մի շարք նշանավոր հոգևորականներ, որոնց թվում և Ամիրի եպիսկոպոս Մկրտիչ Նաղաշը, դեմ էին Ֆլորենցիայի տիեզերաժողովին պատվիրակություն ուղարկելուն², թեև, մեզ թվում է, քաղաքական առումով նրանց «պատրիոտիկ կեցվածքը» այնքան էլ ճիշտ չէր, քանի որ նրանք հիմնականում ունկնդրում էին հակա-կաթոլիկական ավանդական մղումների ձայնին, անտեսելով քրիստոնյա եկեղեցիների միության գաղափարը, որ, ինչպես քանիցս շեշտվեց, թելադրվում էր թուրքերի առաջխաղացման հարկադրանքով:

15-րդ դարում կաթոլիկ քարոզիչները Ղրիմում մշտատե ու համառ ջանքեր էին թափում կաթոլիկությունը համաձայնություն տված ղրիմահայոց մեջ դավանանք ամրապնդելու համար: Խնդիրն այն է, որ քաղաքական ու տնտեսական հաշիվների համեմատ ճանաչելով Հռոմի պապի գերակայությունը և փաստորեն այսքանով միայն իրենց անվանելով հայ-կաթոլիկներ, ղրիմահայ և առհասարակ հայ-կաթոլիկները մնացյալ ամեն ինչում՝ եկեղեցական արարողության լեզու, եկեղեցական ծեսեր, մշակույթ, սովորություններ և այլն, իրենց համարում էին թունդ հայեր: Դա շատ լավ գիտեին Հռոմի քարոզիչները, և

1 Ա. շ. Ն ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երևան, 1959, էջ 8:

2 Ա. Պ ա լ ճ յ ա ն, նշվ. աշխ., էջ 87:

այդ գիտակցությամբ էլ նրանց պրոպագանդը ըստ մեծի մասին նրբին էր՝ հայերի ազգային-կրոնական ծեսերի ու սովորույթների հաշվառմամբ:

1446 թ. նոր նշանակում ստացած կաթոլիկ առաջնորդին Կաֆա ճանապարհորդելուց առաջ Եվգենիոս Գրդպապը նրան խորհուրդ էր տալիս զգուշավոր լինել ղրիմահայ կաթոլիկների հետ, որոնք ցանկացած պահի կարող են հրաժարվել նոր դավանանքից. «Ամենից ավելի քեզ է հայտնի, — հանձնարարում էր պապը, — թե որպեսզի աշխատություն թափեցինք մենք կաթոլիկություն ընդունած հայերին իրենց հավատի մեջ պահելու համար, որին կարողացանք հասնել ծախքերի գնով (ընդգծումը — Վ. Մ.) ... չպետք է մոռանալ, որ քեզ Հովիվ ենք նշանակել միայն նրա համար, որ խոսքով ու գործով մեծ արդյունք ցույց տաս Կաֆային, մի քաղաքի, որ բոլոր քաղաքներից դրա կարիքն ավելի է զգում»¹:

Եվգենիոս պապի այս հանձնարարական-նամակը թույլ է տալիս անելու առնվազն հետևյալ երեք հետևություններ.

ա. Հռոմից մեծ ջանքեր էր խլել ղրիմահայերի միջից իրեն հետևորդների հավաքագրումը:

բ. Դրան նա հասել էր նաև «ծախքերի գնով», որ կարելի է հասկանալ նաև ուղղակի՝ առանձին երևելի հայերի նյութապես շահագրգռելու իմաստով:

գ. Կաֆայի լատին եպիսկոպոսից պահանջվում էր «խոսքով ու գրչով» ամեն ինչի դիմել քաղաքի հայ-կաթոլիկներին այդ դավանանքում պահելու համար: Ուրեմն՝ տեղի կաթոլիկ հայության մեջ նրա հիմքերը շատ երերուն էին, և այդ առումով նման աշխատանքի կարիքը այնտեղ բոլոր քաղաքներից ավելի էր զգացվում:

Հայերի ընդդիմադիր վերաբերմունքը հարկադրում էր Հռոմի քարոզիչներին իրենց գործունեության մեջ ավելի շատ տեղ հատկացնել նրանց նյութապես շահագրգռելու, շոյելու և համոզելու մեթոդներին: «Անհրաժեշտ է խիստ

¹ Atti, VII, II, p. 697; «Հայ-իտալական առնչություններ», էջ 35:

ուշագիր և բարեկամ լինել հայոց կաթողիկոսի, վարդապետների և քահանաների հետ, — կարդում ենք քարոզիչներին իջեցրած մեկ այլ հրահանգում, — որովհետև տեսնելով բարեկամությունը իրենց հոգևոր առաջնորդների հետ, հայերը առանց կասկածի և վստահությամբ կլսեն միսիոներների քարոզները: Որովհետև հայերը շատ են կապված իրենց սովորութիւններին և ծեսերին, կաթողիկ կրօնի հաջողության համար պետք է բավականանալ միայն նրանով, որ հայերը ընդունեն (իմա՝ ճանաչեն — Վ. Մ.) հռոմեական եկեղեցու դավանանքը, իսկ հայ եկեղեցական ծեսերն ու ավանդութիւնները պետք է թողնել անվթար (ընդգծումը — Վ. Մ.): Եվ վերջապես, հայերից շատերը չգիտեն, թե ի՞նչ բան է հերձվածը: Միսիոների ճարակութիւնը նրա համար է, որ նրանց կաթողիկ դարձնեն, առանց որ նրանք նկատեն իրենց հերձվածող կամ հերետիկոս լինելը»¹:

Ղրիմում կաթողիկոսությանը հարած հայերն էլ ունեին իրենց հաշիվները՝ ձեռնարկներն ընդունել կաթողիկ դավանանք և օգտվել բոլոր այն արտոնութիւններից, որոնցից օգտվում էին ջենովացիները Ղրիմում 13-15-րդ դարերում, երբ թերակղզու հարավ-արևելյան ծովափնյա շերտում հաստատվել էր Ջենովայի հանրապետության, իսկ 1454-1475 թթ.՝ Ջենովայի Սբ. Գևորգ բանկի վարչության տիրապետութիւնը:

Սակայն առանձին լատին եպիսկոպոսներ, այնուամենայնիվ, դիմում էին հարկադրանքի և միջամտում հայոց հոգևոր-եկեղեցական գործերին: Դա էր, որ, ինչպես ակնարկեցինք, առաջ բերեց Սարգիս վարդապետի բողոքը Եվգենիոս 4-րդ պապին: Նա, մասնավորապես, հայտնեց պապին, որ հռոմեական եպիսկոպոսը հայ եպիսկոպոսին արգելում է եկեղեցական հանդեսների ժամանակ հայրապետական զգեստով շրջել և օրհնել իր համայնքը, որ կաթողիկ «միաբանող եղբայրները» կրկնակի մկրտութիւններ, ձեռնադրութիւններ և նման տիպի այլ արարքներ են կա-

¹ «Հայրենիք», 1933, № 4, էջ 114:

տարում¹: Նկատի ունենալով, որ «բնակէ անդ (Կաֆայում — Վ. Մ.) բազմութիւն մեծ հայութիւն», պապը 1439 թ. դեկտեմբերին իջեցրեց վերը բերված կոնդակը՝ հայ հոգևորականներին արտոնելով ազատորեն կատարելու իրենց եկեղեցական արարողությունները:

Կաթոլիկ հայերը, որպես կանոն, իրենց եկեղեցական գործերին ամենափոքր իսկ միջամտության դեպքում երեսը չուռ էին տալիս Հռոմից և միանում իրենց ազգակիցներին, որոշակի հակակրանք տածելով առհասարակ ջենովացիներին հանդեպ: Այս հանգամանքը, օրըստօրե ահագնացող թուրք-թաթարական սպառնալիքի պայմաններում, ջենովական իշխանություններին ստիպում էր «նեցուկ կանգնել» հայոց բողոքներին և անգամ օրենսդրորեն ամրապնդել նրանց իրավունքները: Ահա, օրինակ, Ջենովայի սեծովյան դադ-թավայրերի 1449 թ. կանոնադրության խնդրո առարկա հարցին վերաբերող համապատասխան հոդվածը, որի մասին մի փոքր առաջ հիշատակել ենք. «Քանի որ Կաֆայի եպիսկոպոսը, ասում են, երբեմն անհանգստացնում է այլա-կրոններին, նեղում և կողոպտում է նրանց, որ կարող է պատճառ դառնալ բնակչության նվազեցմանը քաղաքում և արվարձաններում և ծառայել Կաֆային բացահայտորեն վտանգելու և վնասելու օգտին (ընդգծումը — Վ. Մ.), ապա ջանադրաբար քննելով գործը և հետևելով հին որոշման ձևին, որոշում և օրինականացնում ենք, որ Կաֆա քաղաքի ներկայիս և ապագա բոլոր եպիսկոպոսները չստորագրեն օտար թեմին պատկանող գործեր և ունեցություններ չանեն ուրիշ ժողովրդի հոսնձքի վրա ... Իսկ եթե հիշյալ եպիսկոպոսը և կամ նրա հաջորդներից որևէ մեկը չցանկանան ունենդրել հյուպատոսի խնդրանքներին ու որոշումներին, ապա պարոն հյուպատոսը և Ավագների խորհուրդը պարտավոր են հոգ տանել քննելու, որոշելու և իրենց հայեցողությամբ ձև ու միջոց ընդունելու, որպեսզի նվաճեցնեն եպիսկոպոսին վերջնականապես չեղն նման չարաչափումներից և որպեսզի հիշյալ հույները, հայերը, հրեաներն ու մյուս

1 «Բազմավեպ», 1940, № 8-12, էջ 152:

այլակրոնները վտանգագերծվեն ամեն տեսակի կողոպուտից, ոտնձգությունից իրենց կալվածքի նկատմամբ»¹:

Սակայն միշտ էլ, որ լատին եպիսկոպոսները ենթարկվում էին այսօրինակ օրենքներին, թեև դրանք ընդունվել էին քաղաքական որոշակի նկատառումների պահանջով և մանավանդ Կաֆայից Հայերի ու հույների զանգվածաբար հեռանալը և հուզումները կանխելու և առհասարակ քաղաքի անվտանգութունը ապահովելու նպատակով: Քաղաքական հանգամանքները ոտնահարող լատին եպիսկոպոսներից էր, օրինակ, Ջիակոմո Կամպորին, որի գործունեության հակահայկական ընթացքը 1454-1455 թթ. սրեց հարաբերությունները ոչ միայն Հայերի ու կաթոլիկ հոգևորականության, այլև վերջինիս և քաղաքի ջենովական վարչության ներկայացուցիչների միջև: Կամպորին հետապնդում էր Հայերին, նրանց եկեղեցականներին պարտադրում էր կատարել անսովոր արարողություններ, հայերին համարում էր հերետիկոսներ, առաջարկում էր ընդունել կաթոլիկություն: Կաֆայի ջենովական վարչությունը և նրա գլխին կանգնած հյուպատոսը, նկատի ունենալով սրա այսօրինակ գործելակերպի վտանգավոր և անգամ կործանարար հետևանքները քաղաքի համար, արգելում են նրան միջամտելու հայերի գործերին: Ի պատասխան դրա, եպիսկոպոսը բողոք-բողոքի հետևից հղում է Ջենովա, Սբ. Գևորգ բանկի վարչությանը՝ նրա կառավարիչներին համարելով կաշառակերներ, որոնք, իբր, անընդունակ են կառավարելու գաղութը: Հանդիպելով հյուպատոսներ Վիվալդիի և ապա Դոմոկուլտայի վճռական դիմադրությանը, Կամպորին 1455 թ. հուլիսի 8-ին Սբ. Գևորգ բանկի վարչությանը բողոքով առկեցուն մի նամակ է ուղարկում, սպառնալով նաև, թե «հրաժեշտ է տալիս թեմին և Ջենովա է մեկնում գործի բացատրության համար»²: Դրան հետևում է հյուպատոս Դոմոկուլտայի հիմնավոր

¹ «Հայ-իտալական առնչություններ», էջ 66; ЗООИД, т. V, сс. 730—731.

² Н. Н. Мурзакевич. Четыре года г. Каффы. — ЗООИД, т. VIII, 1872, с. 129.

բողոքը բանկի վարչությանը Կամպորիի* որպես «հասարակական կարգի խառնակչի» դեմ¹:

Եպիսկոպոս Կամպորիի գործունեությունը հարուցել էր հասարակական կարգի հուզումներ հայերի և հուլյների շրջանում, հանգամանք, որը ստիպել էր հյուպատոսին և նրա օգնական մասարներին դիմադիր կանգնելու սեփական եպիսկոպոսի նկրտումներին: Իրավացի էր հյուպատոս Դոմակուտան Ջենովա հղած իր այն պահանջում, թե հոգևոր հովիվը պարտավոր է հարմարվելու այն միջավայրին, որտեղ նա գտնվում է, ուստի* «մեր եպիսկոպոսը չպետք է մոռանա, որ մենք այստեղ ապրում ենք ոչ թե կաթոլիկական երկրում, այլ թաթարական ցեղերի մեջ»²:

Ջենովայից ուղարկված պաշտոնյային մտահոգում էին ոչ այնքան հուզումներն ու դժգոհությունները ըստ էության, որքան դրանցով պայմանավորված վտանգավոր կացություն ստեղծումը ոչ իտալացի քրիստոնյա բնակչության շրջանում* թաթարական ցեղերով շրջապատված միջավայրում, հանգամանք, որը ինքնին խոսում է քաղաքի պաշտպանության գործում նրա բնակչության մեծամասնությունը կազմող հայերի վճռական դերի մասին:

Ինչպես արդեն նշել ենք, 1455 թ. սեպտեմբերի 6-ին հյուպատոսն ու մասարները Սբ. Գևորգ բանկի վարչությանը ուղարկած համատեղ բողոքում, Կաֆայի անվտանգության շահերից ելնելով, պահանջում էին հոգևոր այդ պետին հեռացնել քաղաքից* հայերի նկատմամբ նրա վարած քաղաքականությունը համարելով անթույլատրելի³:

Նման ձևով գործող եպիսկոպոսները հազվադեպ էին, քանի որ, թե պապի և թե աշխարհիկ առաջնորդների ցուցումները գերազանցապես առավելությունը տալիս էին համոզման մեթոդներին: Կամպորիի նման մի եպիսկոպոսի Կաֆայում հանդիպում ենք մի փոքր ավելի ուշ* 60-ական թվականների կեսերին, և նրա գործունեությունը առիթ

1 Նույն տեղում:

2 Л. П. К о л л и. Указ. соч., с. 15.

3 Atti, VII, II, p. 364-365; «Հայ-իտալական առնչություններ», էջ 80-81:

տվեց տեւական դժգոհություններ ի հայութեան շրջանում՝ առաջ բերելով սուր բախում նրա և ջենովական աշխարհիկ իշխանությունների միջև: Մի անգամ ևս նշենք, որ Կաֆայի հյուպատոսները և մյուս պաշտոնյաները աշխատում էին ամեն ինչով խրախուսել հայերին, հիշեցնել նրանց օգտակար գործերը ի շահ Կաֆայի: 1464 թ. հունվարի 31-ի նամակում՝ ուղղված Կաֆայի հայ եպիսկոպոսին, նամակ, որին արդեն դիմել ենք, Սբ. Գևորգ բանկի կառավարիչները հատկապես ընդգծում էին հայերի և նրանց հոգևոր առաջնորդի բարի գիտրածերը՝ կատարված հանուն Կաֆայի բարօրութեան և մեծութեան¹:

Հայերին շոյելու և նրանց համակրանքը նվաճելու իմաստով վերին աստիճանի հետաքրքիր է նաև նույն Սբ. Գևորգ բանկի խնամատարների՝ հայ եպիսկոպոսի անունով իջեցված 1465 թ. հուլիսի 28-ի նամակը: Այն գրվել է Կաֆայի ջենովական կառավարիչների խորհրդով՝ որպես վերին պաշտոնյաների կողմից հայերին ուղղված սիրաշահող մի ուղերձ: Ահա մի քաղվածք այդ ուղերձից. «Ձեր առաքիւնութիւնը, հարգարժան հայր եպիսկոպոս, Ձեր բարեպաշտութիւնն ու ճշտապահութիւնը և արագ գործելակերպը այս քաղաքի, միաժամանակ ձեր քաղաքի բարօրութեան ամրապնդման և պարենավորման համար մեզ հայտնի են հյուպատոսի և մասարների կողմից Ձեզ տրված գովասանքից: ... Ձեզ հորդորում և հուսադրում ենք, որպեսզի ոչ միայն հարատեւենք Ձեր կատարած լավ գործերում, այլև Ձեր ջանքերը ավելացնենք այս քաղաքի բարօրութեան համար, հանուն որի Դուք առավել չափով կշահենք և կուրախանաք ... նախապես Ձեզ տեղեկացնում ենք, որ Ձեր բարօրութեանը և լավ համբավին վերաբերող որևէ հարցում քաջ պատրաստ ենք և սիրով կանենք այն, ինչ Ձեզ հաճելի կլինի և սիրահոգար կերպով կընդունենք այն, ինչ արժանի կգտնենք մեզ հանձնելու գրավոր ձևով»²:

1 Նույն տեղում, համապատասխանաբար էջ 277-278 և 81-82:

2 «Հայ-իտալական առնչություններ», էջ 84; Atti, VII, II, p. 347-

Որքան թուրք-թաթարական վտանգը իրական կերպարանք էր ընդունում, այնքան Կաֆայի ջենովացի կառավարիչները ավելի «հայասեր» էին դառնում և ջանում էին ինչ գնով էլ լինի չեզոքացնել դոգմատիկ և անուղղելի առանձին եպիսկոպոսների վնասաբեր քայլերը: 60-ական թվականների կեսերին, օրինակ, նրանք վճռականորեն դիմադրեցին Կաֆայի լատին եպիսկոպոս Պանիսարիի ոտնձգություններին տեղացի հայերի դեմ: Գործին միջամտում են Սբ. Գևորգ բանկի խնամատարները, որոնք 1467 թ. հունվարի 15-ին իջեցրած գրությամբ սաստում են Պանիսարիին՝ քաղաքի արևելյան քրիստոնյաների եկեղեցական գործերին միջամտելու համար: Այդ փաստաթուղթը ուշագրավ է շատ կողմերով, ուստի տեղին է գրեթե ամբողջությամբ այն մեջբերել. «Ոչ առանց զարմանքի իմացանք, ի Քրիստոս հարգարժան հայր, որ Ձեր հայրապետությունը փորձել է միջամտել ինչ-որ ամուսնական գործի, որն ասում են, թե կայացել է մի ոմն քաղաքացու (բուրգենդեսի)՝ Դե Ֆացիոյի և մի հուլյն աղջկա միջև, որի եղբայրը և ազգականները տեղյակ չեն եղել և չեն մասնակցել այդ գործին: Այս իրողությունը մենք ընդունեցինք ղեկավարությամբ, հատկապես այն պատճառով, որ ոչ միայն Կաֆայի օրենքներով է Ձեզ արգելվում որևէ բան անել, կամ կարգադրել այս քաղաքում բնակվող հայերին, հուլյներին կամ այլ հերետիկոսներին կամ աղանդավորներին վերաբերող ամուսնական նույնանման գործերում, այլ նաև նրանով, որ Ձեր այստեղից մեկնելու ժամանակ մեր նախորդները Ձեզանից խնդրել են և Ձեզ պատվիրել, որպեսզի Դուք նման ամուսնական գործերին չմիջամտեք: Ինչպես հայտնի է Ձեր շրջահայեցությանը, տեղի են ունեցել ոչ միայն վերը նշված Դե Ֆացիոյի գործը, այլև այլ սկանդալներ, այնքան վտանգավոր, որ ըստ մեզ, եթե անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնվեին մեր աշխարհիկ պաշտոնյաների կողմից, դրանք պատճառ կդառնային այս քաղաքի և մեր այլ տիրույթների կործանմանը (ընդգծումը — Վ. Մ.): Աստված մի արասցե: Հետևաբար, Ձեզ կոչ ենք անում, խնդրում ենք և, ինչքան իրավասու ենք, պարտավորեցնում ենք Ձեր հայրապետու-

թյանը, որ վերը նշված գործերին չմիջամտեք ոչ մի ձևով, ինչպես այդ մասին կարգադրված է Կաֆայի օրենքներով և ինչպես դա հարմար է մեր պատվին և այս քաղաքի բարօրությանը»¹:

Ամենահիմնական հետևությունը, որ բխում է սույն փաստաթղթից, այն է, որ Կաֆայի արևելյան քրիստոնյաների և առաջին հերթին հայերի գործերին միջամտելն ու խառնվելը, եթե չկանխվեն, կարող էին հասցնել քաղաքի կործանմանը: Դա նշանակում է, որ վճռական խոսքը քաղաքի պաշտպանության գործում, ջենովական բարձրաստիճան պաշտոնեությունների իսկ խոստովանությամբ, պատկանում էր տեղացիներին: Մյուս կողմից, պիտի ընդունել նաև այն իրողությունը, որ նույնիսկ կաթոլիկությունը համաձայնություն տված հայերը ամենաանշան միջամտություն դեպքում ցույց էին տալիս բացահայտ անհնազանդություն:

Ղրիմահայության մի մասի կողմից կաթոլիկության ընդունումը այնպիսին չէր, որ բավարարեր հոռմեական եկեղեցուն, բայց վերջինս այլ ելք չուներ, եթե չէր ուղղում առհասարակ զրկվել նրանցից: Խնդիրն այն է, որ առիթը ծագած դեպքում հայերը հրաժարվում էին «նոր դավանանքից», և այդ քայլը նրանց համար դժվար չէր կատարել, քանի որ հայ կաթոլիկների մոտ, ինչպես նշեցինք, ազգային եկեղեցական ծեսը լիովին պահպանվում էր:

Քրիստոնյա եկեղեցիների միությունը ցեմենտելու փորձ արած Ֆլորենցիայի տիեզերաժողովից հետո էլ հայ կաթոլիկները շարունակում էին պահպանել իրենց ազգային-կրոնական ինքնությունը և հակահարված տալ լատին առանձին եպիսկոպոսների ամենափոքր իսկ փորձերին՝ միջամտելու իրենց ազգային գործերին: Որքան ջենովացիների դիրքերը Ղրիմում թուլանում էին, այնքանով կաթոլիկական պրոպագանդը այնտեղ կորցնում էր իր ուժքի

¹ «Հայ-իտալական առնչություններ», էջ 85-86; Atti, t. VII, I, p. 468-469:

² Г. Айвазовский. Заметки о происхождении новороссийских армян. — ЗООИД, т. VI, 1867, с. 550 — 551.

տակի հողը: 1475 թ. թուրքական ներխուժման պատճառով Ղրիմում ջենովական գաղթավայրերի վերացումը եղավ կաթոլիկության կարապի երգը թերակղզու վրա: Կաֆայի և նրան մոտակա ջենովական ծովափնյա շերտի այս կամ այն չափով կաթոլիկությանը մերձեցած հայերի մի մասն էլ հեշտությանմբ հեռացավ նրանից¹: Եվ պատահական չէր, որ 17-րդ դարի տաղասաց Վարդան Կաֆայեցին դոհունականությանը շեշտում էր Կաֆայի հայության լուսավորչական լինելու փաստը.

Աստուած քաղցրացու Կաֆա երկրի,

Իւր ժողովրդեանն Սբ. Լուսաւորչի.

Միաբան եկեալ մեծէ ի փոքրի,

Եւ դարդարեցին տաճար գովելի²:

Նույնն է հետևում նաև 17-րդ դարի Ղրիմահայ կյանքին քաջատեղյակ Խաչատուր Կաֆայեցու (Խաչգուռղի) տարեգրությունից: 1656 թ. էջմիածնից Ղրիմ եկած նվիրակ Դավիթ վարդապետի մասին նա գրում է. «Դաւիթ վարդապէտն նըւիրակ եկաւ մեզի էջմիածնէն, նորընծայ տէր Յակոբ կաթողիկոսէն, լուսաբուղ մեռոնաւն»³: Ղրիմահայոց անունից Խաչգուռղը վարդապետի բերած մեռոնը համարում է «լուսաբուղ», որը ընդհանուր կոնստանստուլ հավաստում է Ղրիմահայոց ազգային դավանանքին մնալու իրողությունը:

Ամփոփելով կրկին նշենք, որ թե Ղրիմում, և թե այլուր այս կամ այն քաղաքական ու տնտեսական դրդապատճառներով կաթոլիկությանը հարած հայերը, ճանաչելով Հռոմի պապի գերակայությունը, որպես հոգևոր պետի, ըստ էության չէին հեռանում ազգային-եկեղեցական ծեսից և արարողություններից, և պատահական չէ, որ ի տարբերություն մյուս կաթոլիկ ազգերի (ֆրանսիացիներ, լեհեր, իսպանացիներ և այլն), կրում էին հայ-կաթոլիկ անվանումը, որ նշանակում էր ոչ այլ ինչ, քան ազգապատկանելու-

1 Նույն տեղում:

2 Երևանի մատենադարան, ձեռագիր № 3504, թ. 228:

3 Վ. Հ ա կ ո բ յ ա ն, Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 227:

Թյուն: 14-15-րդ դարերում հայ կաթոլիկ գրիչները Ղրիմում արտագրում են կրոնական, փիլիսոփայական և այլ բնույթի մի շարք ձեռագրեր, ստեղծում հայերեն ինքնուրույն գործեր, որոնք հաստատում են վերը նշած դրույթի իրողությունը, այն է՝ կաթոլիկ դավանանքին հարելը ամենևին չէր նշանակում հայ ազգային ինքնության կորուստ:

Սակայն 17-19-րդ դարերում նույնպես ղրիմահայ համայնքներում, մասնավորապես Ղարասուբազարում և Կաֆայում, կային հայ կաթոլիկ համայնքներ, որոնց նշանակալից մասը, հավանաբար, ոչ միայն 14-15-րդ դարերում կաթոլիկությանը հարած ղրիմահայերի հաջորդական շարունակությունն էր, այլև ավելի ուշ շրջանում այլ վայրերից, այդ թվում բուն Հայաստանից, Լվովից և արևմտաուկրաինական այլ տարածքներից այստեղ տեղափոխված, մասամբ էլ 17-18-րդ դարերին թերակղզու վրա ծավալված ճիզվիտական պրոպագանդի ազդեցությանը ենթարկված հայ ընտանիքներ էին¹:

Խնդիրն այն է, որ այս շրջանում Ղրիմի քրիստոնյաների, այդ թվում նաև հայերի մեջ, կաթոլիկության տարածման համար ստեղծվել էր բավական նպաստավոր մթնոլորտ: Կաթոլիկության պաշտպան և հակառեֆորմիզմի պարագլուխ Պրոսկիայի կայսր Ֆերդինանդ 2-ի բարյացակամությունը շահելու համար Ղրիմի խան Ջանիբեկ-Գիրեյը 1625 թ. թույլատրում է կաթոլիկ քարոզիչներին (դոմինիկյան միաբանությունից) ազատորեն գործելու Տավրիկիայում²: Խանի կողմից կայսեր մոտ ուղարկված ջենովացի երկու բանագնացները վերադառնում են՝ իրենց հետ բերելով դոմինիկյան քարոզիչներ³: Այդ ուղղությամբ հատուկ առաջադրանք էր կատարում նույն ժամանակ Կաֆայում նստած դոմինիկյան միաբան դը Ասկոլին՝ Կաֆայի և Թա-

1 "Новороссийский календарь", 1850, с. 375.

2 Anton von Padua Johannes Zerr. Tauriens Vergangenheit und Gegenwart in Wort und Bild. Odessa, 1912, S. 175.

3 Նույն տեղում:

Թարստանի կաթողիկ պրեֆեկտը¹: Հաջորդ, 18-րդ դարի սկզբներին (1704-1706 թվականներին) Ղրիմի քրիստոնյաների միջավայրում քարոզչական աշխատանք էին տանում ճիզվիտ Բոնը և նրան փոխարինած Կորբուլոնը, որոնք Բախչիսարայում հիմնում են «ճիզվիտական կոլեգիա»²: Դրան մի զգալի չափով նպաստել էր Ֆրանսիական դեսպան Ֆերնալը³: Խանին մեծ նվերներ տալով՝ միաբանները Բախչիսարայում կառուցում են եկեղեցի՝ զանգակատնով, մի բան, որ գրեթե բացառվում էր խանական կենտրոնում⁴: Դոմինիկյան միաբաններն իրենց այնքան ամուր են զգում, որ ձգտում են նույնիսկ որոշ քաղաքական առանձնաշնորհումներ ստանալ: Այդ նպատակով 1713 թ. Բոնը Ֆրանսիական նույն դեսպանի միջոցով, որպես Ղրիմում հոգևոր պրոպագանդի պետ, ձեռք է բերում հյուպատոսի կարգավիճակ⁵:

Նկատենք մի հանգամանք. կաթողիկ պրոպագանդան անհնարին էր մղել մահմեդականների շրջանում: Կաթողիկոսության տարածումը այս տարիներին սահմանափակվեց փոքրաթիվ հայերով և լութերականներով, իսկ հուլյաների մեջ այն ոչ մի հաղողություն չունեցավ⁶: Եվ իրոք, 1778 թ. Ղրիմից արտագաղթեցման ժամանակ կաթողիկ դավանանքի ոչ մի հուլյն չկար:

Ծիզվիտների պրոպագանդան, որն ընդգրկել էր Բախչիսարայ, Ղարասուբաղար, Հին Ղրիմ և Եվպատորիա (Կեոդեկ) քաղաքների հայերին, երկար չտևեց. 1715 թ. այն սկսում է թուլանալ, իսկ 1736 թ. Մինիխի արշավանքը Ղրիմ իսպառ վերջ դրեց նրանց գործունեությանը⁷:

1 ЗООИД, т. XXIV, II, 1902, с. 91.

2 Նույն տեղում, т. IV, 1858, с. 466.

3 "Таврический церковно-общественный вестник". Симферополь, 1911, № 12-13, с. 535.

4 ЗООИД, т. IV, с. 467.

5 Նույն տեղում, էջ 466:

6 "Таврический церковно-общественный вестник", 1911, № 12-13, с. 535.

7 Նույն տեղում:

Резюме

Одной из примечательных сторон истории средневековой армянской колонии в Крыму являлись обширные связи, которые армянские общины во всех важных центрах полуострова — в Каффе (Феодосии), Сурхате (Старом Крыму), Судаке (Сурожь), Карасубазаре (Белогорске), Евпатории (Кеозлеве), Акмечети (Симферополе) и др. — в XIII—XVIII вв. поддерживали со странами Востока и Запада. Невозможно представлять многовековую историю крымских армян вне освещения их связей со странами Европы, Ближнего Востока и славянского мира.

В то же время освещение истории многосторонних взаимоотношений и сотрудничества между Востоком и Западом во многих отношениях не будет полным, если оставить за рамками этой истории проблему участия в ней крымских армян, которое на определенных этапах приобретало воистину заметное значение. В XIII—XV вв. в руках крымских армян находилось торгово-экономическое первенство на полуострове, да и в дальнейшем, в XVI—XVIII вв., они продолжали играть заметную роль в экономической жизни Крыма, в его связях с внешним миром, в особенности со странами черноморского и восточносредиземноморского бассейнов, с Польшей и Россией.

В XIII—XVIII вв. деятельность крымских армян, их связующая роль в сотрудничестве Восток — Запад осуществлялись неравномерно, переживая периоды интенсивного подъема, а временами и упадка. Однако очевидно одно: эта деятельность охватывала торговую, иногда и политическую сферы, составляла неразрывную часть их общественно-хозяйственной жизни, принесла им общее признание и славу как у народов самого Крыма, так и стран внешнего мира.

Проблема "Армянская колония Крыма в сфере взаимоотношений Восток — Запад (XIII—XVIII вв.)", в ка-

кой-то мере, по тому или иному поводу затрагивалась в наших работах по истории крымских армян, однако ее специальное исследование оставалось открытым, хотя проблема сама как таковая и по сей день сохраняет свое научное и актуальное значение.

Автор настоящего небольшого труда, имеющего обобщающий характер, ставит перед собой конкретную задачу устранить указанный пробел; работа написана с сознанием важности разработки проблемы и выполнена на основании анализа богатого и разноязычного фактического материала.

S u m m a r y

One of the significant aspects of the medieval Armenian colony in the Crimea was the vast circle of contacts that the Armenian colonies in all important centers [Kaffa (Theodosia), Sourkhat (the Old Crimea), Soudak (Souroj), Karasoubazar (Belogorsk), Eupatoria (Keozlev), Akmecheti (Simferopole) etc.] of the peninsula in the 13th-18th centuries, kept up with the countries of both East and West. It is impossible to present the centuries-old history of the Crimean Armenians without elucidating their relations with the countries of Europe, the Near East and the Slavonic world.

At the same time, elucidation of the history of the many-sided relations and cooperation between East and West will not be complete in many respects if the problem of participation (which at certain stages was of great significance) of the Crimean Armenians is left out of the framework of that history. In the 13th-15th centuries the commercial and economic primacy of the peninsula was in the hands of the Crimean Armenians; subsequently, in the 16th-18th centuries they continued to play a significant role in the economic life of the Crimea, in its relations with the outside world, especially with the countries of the Black Sea and Mediterranean basins, as well as with Poland and Russia.

In the 13th-18th centuries the Armenians' activities, their linking role in East-West cooperation was carried out unevenly, and was marked by periods of both intensive rise and sometimes decline. But it is certain that these activities embraced both commercial and sometimes political spheres and constituted an inseparable part of their socio-economic life, bringing them general fame among the peoples of the Crimea, as well as the countries of the outside world.

The problem of "The Armenian colony of the Crimea in the sphere of East-West relations (13th-18th centuries)" was touched on in some way or another in our works about the history of the Crimean Armenians, but its further research was left open, though the problem still preserves its scientific and practical importance.

The author of the present work, which is of a general character, has put before himself the task of removing this gap. The work is written with an awareness of the importance of an elaboration of the problem and is based on research drawn from a rich heritage of multilingual sources.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Համառոտ ակնարկ Ղրիմի հայկական գաղթօջախների
սկզբնավորման և պատմության5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ղրիմահայերը Արևելք-Արևմուտք առևտրատնտեսական
առնչություններում68

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Արևելք-Արևմուտք հասարակական-քաղաքական և կրո-
նական անդրադարձերը Ղրիմահայ գաղթօջախներում ...146

[60077]

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ
ОТДЕЛ ИСТОРИИ АРМЯНСКИХ КОЛОНИЙ

ВАРДГЕС МИКАЕЛЯН
АРМЯНСКАЯ КОЛОНИЯ КРЫМА В СФЕРЕ
ВЗАИМООТНОШЕНИЙ ВОСТОК – ЗАПАД (13 – 18 вв.)

ՎԱՐԴԵՍ ՄԻԿԱՅԵԼՅԱՆ
ՂՐԻՍԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԱՐԵՎԵԼԸ – ԱՐԵՎՍՈՒՏԸ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ (13-18-րդ դարեր)

Հրատարակչական խմբագիր՝ ՄԵԼԱՆԻԱ ՄԻԿԱՅԵԼՅԱՆ
Համակարգչային շարվածքը
և ձևավորումը ՇՈՒՇԱՆ ԲԱՍԵՆՅՅԱՆԻ

«Գիտություն» հրատարակչություն
Երևան, Մարշալ Բաղրամյան 24:

Ծավալը 12,5 տպագրական մամուլ
Տպագրությունը՝ «ՀԱՅԿ» տպարան
Հասցե՝ ՀՀ 375019, Երևան, 19, Մարշալ Բաղրամյան, 24դ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0066680

$$A \frac{\pi}{86152}$$